

7-35



Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԳԱՅ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ

ԾԱՐԺՈՒՄՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ



ՆԱԽԿԱՅԵՐԸ



В. А. ПАРСАМЯН

ИЗ ИСТОРИИ
АРМЯНСКОГО
ОСВОБОДИТЕЛЬНОГО
ДВИЖЕНИЯ

Исследование и документы



ЕРЕВАН - АЙ ПЕТРАТ - 1958




Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՀԱՅ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ուսումնասիրության և փաստաթղթեր



ԵՐԵՎԱՆ - ՀԱՅՊԵՏՏՐԱՏ - 1958



(48) 49

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունը հարուստ է և ուսանելի:

Արևելքի ու Արևմուտքի նվաճողների դեմ հայ ժողովուրդը դարեր շարունակ հերոսական պայքար է մղել իր ազատության ու անկախության համար: Այդ պայքարը վճռական նշանակություն է ունեցել մեր հայրենիքի պատմական բախտի համար: Իր գոյությունը, իր հայրենիքն ու կուլտուրան մեր ժողովուրդը պահպանել է ոչ միայն ստեղծագործ աշխատանքի, այլև ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղած հերոսական պայքարի շնորհիվ: Չլինեք այդ պայքարը, ներկայումս չէր լինի նաև մեր ժողովուրդը, նա վաղուց կուլ գնացած կլինեք օտարերկրյա նվաճողներին: Եվ պատահական չէ, որ հայ ժողովրդի մղած փնչպես սոցիալական, այնպես էլ ազատագրական պայքարը կարմիր թելի պես անցնում է մեր բազմադարյան պատմության մեջ:

Անցյալում մեր գրականության մեջ շատ է գրվել ազատագրական շարժումների մասին: Տարբեր հեղինակներ լուսաբանել են այդ շարժման առանձին դրվագները, բայց հարցի ամբողջական պատմությունը մինչև օրս էլ մենք չունենք: Բացի այդ, հեղինակներից շատերը իրենց ուշադրությունը գերազանցապես կենտրոնացրել են հանրահայտ փաստերի վրա, իսկ շատ դեպքեր ու դեմքեր մընացել են պատմության փոշիների տակ և սպասում են իրենց ուսումնասիրողներին: Կասկածից վեր է, որ հայ ազատագրական շարժումների ամբողջական պատմությունը գրելու համար անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել այդ շարժման բոլոր դրվագները:

Մեր ներկա ուսումնասիրությունը հիմնականում վերաբերում է XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ուշա-

գրավ գրվագներից մեկին՝ Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) 1869 թվականին և Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական) 1874 թվականին կազմակերպված գաղտնի խմբակների գործունեությունը: Այդ խմբակները Արևելյան Հայաստանում հիմնված ազատագրական առաջին խմբակներն էին, որտեղ համախմբվել էին Միքայել Նալբանդյանի հետևորդները:

Աշխատությունը գրված է արխիվային նոր փաստաթղթերի հիման վրա, որ մենք հայտարարել ենք Մոսկվայի և Լենինգրադի արխիվներում: Բացի այդ, օգտագործել ենք նաև Երևանի և Թբիլիսիի արխիվները, պարբերական մամուլի և ժամանակակիցներից տարիներ առաջ մեր հավաքած նյութերը: Բոլոր փաստաթղթերը, որպես սկզբնաղբյուրներ, կցվում են աշխատությունը:

Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գաղտնի խմբակների առաջացումը և նրանց գործունեությունը սերտորեն կապված է հայ իրականության մեջ խմորվող ազգային-ազատագրական շարժումների հետ, կազմում է դրանց օրգանական մասը: Ուստի, այդ խմբակների գործունեությունը ճիշտ ըմբռնելու և զնահատելու համար, հարկ համարեցինք, ընդհանուր գծերով, ընթերցողին ծանոթացնել հայ ազատագրական շարժումների անցած էտապների և գլխավոր ուղղությունների հետ:

ԳՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ԷՏԱՊՆԵՐԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ազատագրական շարժումները սոցիալ-տնտեսական խոր արձատներ տնեցող շարժումներ էին: Դրանք, որպես կանոն, եղել են օտարերկրյա զավթիչների դեմ մեր ժողովրդի ազատության ու անկախության համար մղված մասսայական շարժումներ, կրել են արդարացի բնույթ, սգեշնչել են ժամանակակիցներին ու ապագա սերունդներին, իրենց անջնջելի կնիքը դրել մեր պատմության վրա:

Հայ ազատագրական շարժումները անցել են զարգացման մի շարք էտապներ: Դրանցից ամեն մեկը արտահայտել է իր ժամանակի պահանջները, տնեցել է իր առանձնահատկությունները, իր ուղղությունը, իր կոնկրետ խնդիրներն ու նպատակները:

Վերջին մի քանի հարյուրամյակներում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը գերազանցապես ուղղված է եղել թուրք-պարսկական զավթիչների դեմ: XVI դարից սկսած օսմանյան Թուրքիան և շահական Պարսկաստանը երկարատև ու ավերիչ պատերազմներ էին մղում Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի նվաճման համար: 1639 թվականին կնքված հաշտության պայմանագրով, Նրսնք Հայաստանը բաժան-բաժան արեցին, ընդ որում Արևմտյան մասը ընկավ Թուրքիայի լծի տակ, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանի:

Մի քանի դար շարունակ հայ ժողովուրդը ծանր ու չարքաշ կյանք էր անցկացնում թուրք փաշաների ու պարսիկ խաների բարբարոսական լծի տակ: Սոցիալական ու ազգային դաժան ճնշումներն ու հալածանքները ժողովրդին հասցրել էին կործանման եզրին: Ժողովրդի ապրած այդօրինակ ծանր վիճակն էլ հենց նրան մղում էր ազատագրական պայքարի:

Հայ ազատագրական շարժման զարթոնքը և առաջին քայլերը թուրք-պարսկական զավթիչների դեմ տեղի ունեցան տակավին XVI դարի կեսերին, Ստեփանոս Սալմաստեցու և Միքայել Սեբաստացու ղեկավարությամբ: XVII դարի երկրորդ կեսին այդ ուղղությամբ նոր քայլեր կատարվեցին Հակոբ Զուլալացի կաթողիկոսի ղլխավորությամբ: Ազատագրական շարժման սկզբնավորման ու ձևավորման այդ առաջին շրջանին շոտով հաջորդում է նոր, ավելի կազմակերպված ու հասուն շրջան:

XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին հայ ազատագրական շարժման կարկառուն դեմքերից մեկը՝ Իսրայել Օրին մշակում է նոր ծրագիր՝ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու ծրագիրը: Արևմտաեվրոպական պետությունների կեղծ խոստովանությունից հրաժարված, Օրին 1701 թվականին Լեհաստանի վրայով դաշին է Մոսկվա և բանակցություններ սկսում ռուսական արքունիքի հետ: Պետրոս I-ը հավանություն տալով Օրու ծրագրին, հուսադրում է նրան և խոստանում Հյուսիսային պատերազմից հետո օգնել հայերին: Այսպիսով, հաստատուն հիմքերի վրա են դրվում հայ-ռուսական բաղաձայն հարաբերությունները, Հայաստանի ազատագրությունը մեկընդմիջտ կապվում է Ռուսաստանի օգնության հետ: Օրին, որ հայ ազատագրական շարժման առաջին խոշոր գործիչներից ու գաղափարախոսներից էր, հանդիսանում է նաև ռուսական օրիենտալիստի հիմնադիրներից ու ջատագովներից մեկը:

Այս շրջանից սկսած, ավելի քան մեկ դար հայ ժողովուրդը հերոսաբար մաքառում է թուրքական ու պարսկական զավթիչների դեմ, իր հաղթանակի հույսերը կապելով Ռուսաստանի օգնության հետ: XVIII դարի 20-ական թվականներին Սյունիքի և Ղարաբաղի քաջարի հայերը, Դավիթ Բեկի ղլխավորությամբ, առաջին անգամ ղիճված պայքարի են դուրս գալիս պարսկական ու թուրքական լուծը թոթափելու համար: Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի տված նրանք մի շարք փայլուն հաղթանակներ են տանում: Այդ հաղթանակները ոգեշնչում էին Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող բոլոր հայերին: Բայց թշնամուն հաջողվում է իր գեղազանց տվերով ճնշել Դավիթ Բեկի ապստամբությունը, որը հայ ազատագրական շարժման փառավոր գրվագներից մեկն էր:

XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարը նոր թափ ու ավելի լայն ծավալ է ստանում: 1760—70-ական թր-

վականներին հանդես են գալիս ազատագրական շարժման նոր գործիչներ, ստեղծվում են պայքարի նոր օջախներ: Արարատյան երկրում, Մշո դաշտում, հեռավոր Ջուղիստանի Մադրաս քաղաքում, Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում և այլ վայրերում ապրող հայ հայրենասերների մեջ ամենուրեք վառվում էր Հայաստանի ազատագրության կրակը:

Հայ ազատագրական շարժման ու գաղափարախոսության երկրորդ սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը՝ Հովսեփ Էմինը իր հայրենակիցներին ապստամբության կոչելով թուրք-պարսկական բռնակալության դեմ, գրում էր, թե մարդկությանը հառկացված բոլոր բախիճներից մեծագույնն ազատությունն է և որ ասիական բռնակալությունը այդ ազատության ամենամեծ թշնամին է:

Էմինի գաղափարակից, XVIII դարի հայ ազատագրական մտքի մանիֆեստի՝ «Նոր տեսակի որ կոչի հորդորակ» գրքի բոցաշունչ հեղինակ Մովսես Բաղրամյանը հայ երիտասարդությանը կոչ էր անում սթափվել «վեհերոտեալ և հեղգացեալ թմրութիւնե քնոյ ծուլութեան» և դենքի դիմել հայրենիքը օտարի լծից ազատագրելու համար:

Բաղրամյանի, Շահամիրյանի և մյուսների միացյալ ուժերով, Մադրասում տպագրվում են նաև նշանավոր «Ռոզայր փառաց»-ը, «Նշավակ»-ը և ուրիշ գործեր: 1794 թվականին Մադրասում լույս է տեսնում հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարա»-ը: XVIII դարի երկրորդ կեսին Մադրասի հայ գաղութը դառնում է հայ ազատագրական շարժման ամենաառաջավոր մրտֆի կենտրոն: Էմինի, Բաղրամյանի, Շահամիրյանի և մյուսների հայրենասիրական գործունեությունը, նրանց ազատագրական պրոպագանդան լայն արձագանք է գտնում հայ ժողովրդի զանազան հատվածներում: 1777 թվականին Մոսկվայից Մադրաս՝ Շահամիրյանին գրած մի նամակում կազարյանը խրախուսելով նրա հայրենասիրական գործունեությունը, ասում է. «Նրանի թէ հաջողեցի մեր ազգին այնպիսի բարեբախտություն և վիճակ, յորում զերծեալ ազատեցին ի վեհերոտեալ թմրութեան ծուլութեան իւրեանց և յտն կացցեն ի սիրա երկրի իւրեանց և ի ազատութեան»¹:

¹ Центральный государственный исторический архив СССР в Ленинграде, ф. 880, д. 610, л. 27.

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ Մադրասի խումբը առաջինն էր, որ հանդես եկավ բուրժուական-լուսավորական գաղափարների պրոպագանդայով և մշակեց Հայաստանում բուրժուական ռեսպուբլիկա, կոնստիտուցիոն կարգեր հաստատելու ծրագիրը:

Այսպիսով, ի հակակշիռ կղերա-ֆեոդալական տիրող ուղղության, սկիզբ դրվեց հայ հասարակական մտքի մի նոր ուղղության՝ բուրժուական-լուսավորական ուղղությանը:

Տակավին նեղ էր XVIII դարի հայ լուսավորիչների շրջանը, նրանք հեռու էին կանգնած ժողովրդից, բայց նրանց գաղափարախոսությունը տվյալ ժամանակաշրջանում ամենաառաջավոր գաղափարախոսությունն էր: Այս շրջանից սկսած հայ ազատագրական շարժումները թևակոխեցին իրենց զարգացման նոր ու ավելի բարձր էտապը:

Ազատագրական պայքարի հնդկահայ կենտրոնին զուգընթաց գործում էր նաև ռուսահայ կենտրոնը: Մոսկվայի, Պետերբուրգի, Աստրախանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայկական այլ բնակավայրերում եռանդուն աշխատանք էր կատարվում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու տղզուխամբ: Ռուսաստանում այդ գործը գլխավորում էին կազարյանները, Հովսեփ Արղուսթյանը և ուրիշներ: Նրանք հնդկահայերի, էջմիածնի հոգևորականության, Ղարաբաղի մելիքների և հայկական մի շարք այլ կենտրոնների ու ամբողջ հայ ազգի անունից պաշտոնական բանակցություններ էին վարում ցարական արքունիքի հետ: 1783 թվականին Արղուսթյանը կազմում է Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության և հայկական թագավորության վերականգնման մի նախագիծ: Հստ այդ նախագծի Եկատերինա II կայսրուհուն, որի հետ Արղուսթյանը մոտիկ կապեր ուներ, իրավունք էր վերապահվում Հայաստանի թագավոր նշանակել հայ կամ ռուս բարձրաստիճան անձնավորություններից մեկին: Ի տարբերություն հնդկահայ գործիչների կազմած բուրժուական սահմանադրական կարգերի նախագծի, Արղուսթյանի նախագծի համաձայն Հայաստանում պետք է հաստատվեին ֆեոդալական-միապետական կարգեր: Այս ծրագիրը արտահայտում էր կղերա-ֆեոդալական խավերի շահերը և ամենից ավելի էր համապատասխանում ցարական միապետության քաղաքականությանը: Հայտնի է, որ Արղուսթյանից առաջ, 1769 թվականին, Հայաստանի ազատագրության և

անկախության վերականգնման մասին ռուսական արքունիքին մի նախագիծ էլ ներկայացրել էր Աստրախանի հայ վաճառական Մովսես Սարաֆյանը: Բայց, քանի որ այս բոլոր նախագծերի կենսագործումը կապվում էր Ռուսաստանի օգնությամբ թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրության հետ, իսկ այդ XVIII դարի երկրորդ կեսին տեղի չտնեցավ, ուստի այդ նախագիծերն էլ մընացին չիրագործված:

* * *

XIX դարի առաջին կեսին Ռուսաստանը երկու անգամ պատերազմ մղեց Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ: Այդ պատերազմները ազատագրության նոր հույսեր արթնացրին պարսիկ խաների ու թուրք փաշաների բարբարոսական լծի տակ հեծող հայ ժողովրդի մեջ: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների տարիներին նորից բարբոքվեց հայերի ազատագրական պայքարը: Հույս դրած Ռուսաստանի օգնության վրա, նրանք ամենուրեք ոտքի կանգնեցին իրենց դավար կեղեքիչների լուծը թոթափելու համար: Սկսվեց զինված պայքարի մի նոր շրջան, որի նմանը Անդրկովկասում չէր եղել Դավիթ Թեկի փառավոր ապստամբությունից հետո:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական այս պատերազմների տարիներին հազարավոր հայեր մտնում էին կամավորական ջոկատների շարքերը և ռուս զորքերի հետ միասին մարտնչում ընդդեմ թշնամու դեմ: Երևանի, Նախիջևանի, Սարգարաբաղի, Կարսի, Արդահանի, Ախլցխայի, Էրզրումի, Մուշի և Բայբուրթի համար ռուս զորքերի հետ միասին մղած կռիվներում, հայերից շատերը աչքի ընկան իրենց արիությանը ու քաջությանը և պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի շնորհիվ Արևելյան Հայաստանն ազատագրվեց պարսկական բռնակալության դարավոր լծից և անցավ Ռուսաստանի տիրապետության՝ տակ: Դա մի վճռական շրջադարձ էր հայ ժողովրդի պատմության մեջ, որը նոր ու ավելի բարձր տղիներ էր վրա դրեց Հայաստանի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի զարգացումը: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ ոչ միայն արևելահայերի, այլև ամբողջ

հայ ժողովրդի համար: Մեր բազմատանջ ժողովրդի ազատագրու-
թյան բախտը առհասարակ կապվեց ուստի մեծ ժողովրդի հետ, միան-
գամայն ճիշտ ու ռեալ ուղիների վրա դրվեց նրա վերջնական ազա-
տագրության հարցը:

Այս շրջանից սկսած միանգամայն աննպաստ ընթացք ստա-
ցավ արևմտահայերի ազատագրության հարցը: Արևմտակալական
տերութունները, հատկապես Անգլիան և Ֆրանսիան, Մերձա-
վոր Արևելքը իրենց գաղութային տիրապետության տակ գցելու նը-
պատակով, օգնում էին Ռուսիային ու Պարսկաստանին, նրանց
օգտագործում Ռուսաստանի դեմ: Այդ պատճառով էլ նրանք թշնա-
մական դիրք էին բռնում նաև հայերի ազատագրական շարժում-
ների նկատմամբ: Արևմտակալական մեծ տերութունների սպառ-
նալիքի տակ էր, որ Ռուսաստանը հարկադրված եղավ 1829 թ.
փետրվարի 19-ին Ադրիանապոլսում կնքված պայմանագրի համա-
ձայն թուրքերին վերադարձնել 1828—1829 թվականների պատե-
րվածի ժամանակ գրաված տերիտորիաների մեծ մասը՝ Կարսը,
Արդահանը, Բայազետը, Էրզրումը, Մուշը, Բայբուրթը և այլն:
Արևմտյան Հայաստանը մնաց թուրքական լծի տակ, հայերի գրո-
թյունը գնալով ավելի ծանրացավ:

Այսպիսով, չիրականացավ թուրքական ու պարսկական դա-
ժան լծից ազատագրվելու և Ռուսաստանի հովանավորության տակ
համախմբվելու, մի միասնական Հայաստան ստեղծելու հայերի
ցանկությունը: Եթե նկատի չունենանք պատմական Հայաստանից
Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հողերը, ապա կա-
րող ենք ասել, որ Հայաստանը 1828 թ. թուրքմենշայի պայմանա-
գրից հետո հիմնականում բաժանվեց Ռուսաստանի և թուրքայի
միջև:

Ինչպես XVIII դարի, այնպես էլ XIX դարի ուսու-թուրքական
ու ուսու-պարսկական պատերազմներն, անկասկած, նվաճողական
պատերազմներ էին և ոչ թե ազատագրական: Բայց, շնայած փրենց
նվաճողական բնույթին, այդ պատերազմներն օբյեկտիվորեն նը-
պատում էին թուրքական ու պարսկական լծի տակ գտնվող հայե-
րի ազատագրական պայքարին: Ռուսական զորքերի մուտքը Ան-
դրբիովկաս, ընդհանուր թշնամու դեմ նրանց տարած հաղթանակ-
ները նոր թափ էին հաղորդում հայ ազատագրական պայքարին: Այդ
հաղթանակների հետ էր կապված ոչ միայն Ռուսաստանի ու Ան-
դրբիովկասի, թուրքայի ու Պարսկաստանի, այլև հեռավոր Հնդկ-

կաստանի հայերի մեջ առաջ եկած ազատագրական շարժման նոր
ալիքը: Այստեղից, իհարկե, չի հետևում և բնավ չի կարելի հետև-
ցրել, թե ցարական Ռուսաստանը Անդրկովկասում «ազատա-
գրական միսիա» էր կատարում: Յարիզմի կատարած ազատա-
գրական միսիայի կոնցեպցիան, ուսական ազնվականական և
բուրժուական պատմագրության կոնցեպցիան է: Գիտական կո-
մունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իր ժամանակին
խիստ կերպով ծաղրել են այդ հակապատմական կոնցեպցիան:
Մարքսիստ պատմաբանի համար դա միանգամայն խորթ և ան-
ընդունելի տեսակետ է:

Հայ ազատագրական շարժման այս էտապում ավելի են ընդ-
լայնվում ու ամրապնդվում հայ-ուսական հարաբերությունները:
Բացի պաշտոնական-քաղաքական հարաբերություններից, ուստի և
հայ բազմաթիվ գործիչների միջև ստեղծվում են անձնական մտտիկ
ժանտեսություններ ու կապեր: Հայաստան են գալիս ռուս ժողովրդ-
րի մեծ գրողներ ու առաջավոր մտածողներ Պետլիխին ու Գրիբոյե-
րովը, ծանոթանում մեր երկրին ու ժողովրդին:

Ռուս-պարսկական և ուս-թուրքական պատերազմների տարի-
ներին Հայաստանում լինում են նաև դեկաբրիստներից շատերը՝
Պուշկինը, Բեստյուժևը, Օրժիցկին, Լաչինովը, Կոնովնիցինը, Ակու-
լովը, Գանգելովը, Դոբրինսկին, Յերրիկովը, Վալսուովկին, Բուրցո-
վը, Միկլաշևսկին, Վեդենյայպինը, Ֆոկը և շատ ուրիշներ: Նրանք
աչքի ընկնող մասնակցություն են ունենում նրանի, Սարդարաբա-
դի, Կարսի, Ախլցխայի և այլ վայրերի գրավման համար մղված
մարտերին, անձնական կապեր հաստատում հայ գործիչների հետ:
Հայ-ուսական քաղաքական, ռազմական, ինչպես և անտեսական
ու կուլտուրական հարաբերությունների ամրապնդումը, հատկա-
պես առաջավոր գործիչների կապերը, բարերար ազդեցություն են
ոճենում մեր ազատագրական շարժումների վրա:

Հայ ազատագրական շարժման այս էտապի ուշագրավ փաս-
տերից մեկը մի խումբ գործիչների (որոնք իրենց անվանում էին
«հայ պատրիստներ») մշակած Հայաստանի ավտոնոմիայի նախա-
գիծն է: Հետևելով 1780-ական թվականներին Շահամիրյանի և
Լիբովյանի մշակած նախագծերին, օգտագործելով թե՛ մեկը և թե՛

¹ Այդ նախագիծը, իր մի քանի վարիանտներով, հրատարակել ենք 1947
թվականին «Գրիբոյեզովը և հայ-ուսական հարաբերությունները» գրքում. տե՛ս
էջ 134—168, 245—261:

մշուար, հայ հայրենասերները 1827 թ. դեկտեմբերին կազմում և ցարական կառավարությանն ձև ներկայացնում Ռուսաստանի հովանավորության տակ Հայաստանի ինքնավարություն ստեղծելու իրենց նախագիծը: Սակայն, ցարական կառավարությունը հավանություն չի տալիս շատ կողմերով հետաքրքրական քաղաքական այդ ծրագրին: Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց հետո, նիկողայ I-ը, Հայաստանի ավտոնոմիայի փոխարեն, 1828 թ. մարտին, հրամայում է Ռուսաստանի տիրապետության տակ անցած Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից կազմել Հայկական մարզ (Армянская область) և այն մտցնել իր թագավորական տիրուղոսի մեջ:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների շրջանում հայերի մղած ազատագրական պայքարը, պարսկական ռուս-թուրքական դաժան լծից ազատագրվելու և Ռուսաստանին միանալու ժողովրդական լայն մասսաների ձգտումը իրենց արտահայտությունը գտան ժամանակակից պրոգրեսիվ գործիչների՝ Հ. Ալամ-դարյանի, Խ. Աբովյանի, Մ. Թաղիադյանի և ուրիշների մոտ: Կենտրոն ջերմ հայրենասերներ, ժողովրդի ազատության ու առաջադիմության մեծ զաղափարին նվիրված գործիչներ, Կրամբ անհաշտ պայքար էին մղում խաների ու փաշաների հետամնաց, բարբարոսական իշխանության դեմ, զրկատում էին Ռուսաստանի կատարած պրոգրեսիվ դերը:

Հ. Ալամդարյանը, որը նշանավոր գրող էր և մանկավարժ, ակտիվ մասնակցություն էր ունեցել Հայաստանի ազատագրման համար մղված պայքարին, մշակել էր հայ կամավորական ջոկատների կանոնադրությունը և այլն, Երևանի ազատագրությունից անմիջապես հետո, 1827 թ. հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից Երևան Երեսեւ Աշտարակեցուն ուղղած իր մի նամակում գրում է.

«Հազատությունն ամենասիրելի հայրենեաց մերոց յընդ լծոյ տառապանաց սպառում բռնաւորաց... դելից զամենեցուն զսիրտս անպատում ուրախութեամբ... շնորհաւորեմ զփրկութիւն Հայաստան: աշխարհի երկաթի հնոցէ անագորոյն Պարսից»¹:

Հայաստանի ազատագրությունը պարսկական լծից մեծ խանդավառությամբ է ընդդռնում նաև անվանի գրող Մեսրոպ Թաղիադյանը: 1828 թվականին Հնդկաստանի Կալկաթա քաղաքից Երևան

իր հայրենակիցներին ուղարկած նամակում նա գրում է. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն շարժարանքիցն ազատվեց, քրիստոնի տերություններք ընկավ...»

Իմ լավ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի տր դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագավորության ժամանակումն էլ շէին պատահել...»

Վերջապես, երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատագրությունն, սիրտս ուրախությամբ վառվեց»²:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, նրա հերոսական մաքառումներն ու հաղթանակները օտարերկրյա կեղեքիչների դեմ, ավելի խոր ու բազմակողմանի են արտահայտվել մեծ դեմոկրատ-րուսավորիչ և Աբովյանի մոտ: Նրա գրուի գործոց «Վերք Հայաստանի» պատմական վեպը դրա փայլուն ապացույցն է: Աբովյանը ամենից ավելի մոտ էր կանգնած ժողովրդին, ուստի և կարողացավ ամենից ավելի հարազատորեն արտահայտել ժողովրդի մտորումներն ու ցանկությունները:

Աբովյանն առաջիններից էր, որ ձիշտ ըմբռնեց Արևելյան Հայաստանի պարսկական լծից ազատագրվելու և Ռուսաստանին միանալու պատմական պրոգրեսիվ նշանակությունը: 1832 թվականին գրած իր նամակներից մեկում նա ասում է, որ դրանով նոր էսպոխա է սկսվում մեր ազգի պատմության մեջ³:

Բարձր զնահատելով հայ-ռուսական բարեկամությունը, Աբովյանն իմաստուն կերպով եզրակացնում է՝ «Այս կապ անխզուն, այս սեր սրբազան մնացե ի մեջ մեր ի կեանս յախտեան»³:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը, ինչպես ասվեց, պատմական պրոգրեսիվ երևույթ էր, նոր փոփոխություն մտցրեց նաև հայ ազատագրական շարժման ընթացքի մեջ: Եթե մինչ այդ ազատագրական պայքարն ուղղված էր ինչպես պարսկական, այնպես էլ թուրքական լծի դեմ, այժմ արդեն գլխավոր հարվածն ուղղվում էր վերջինիս դեմ, որովհետև հայ ժողովրդի համար դա ամենաժանրն էր ու ամենավտանգավորը: Պարսկական լուծը բոքափելուց հետո, հայ ազատագրական պայ-

¹ Գենսագրութիւն Մեսրոպայ Դավթեան Թաղիադեանց Երևանցւոյ, հավաքեց և խմբագրեց Տ. Հովհաննես Կ. Մկրտչեան, Թիֆլիս, 1886, էջ 133—134:

² Տե՛ս Դիվան Խաչատուր Աբովյանի, կազմեց և ծանոթագրեց Ծրվանդ Շահգիզ, էջ 37, 1940:

³ Խ. Աբովյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 3, էջ 199:

¹ Հայկական ՍՍՌ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55. փ. 208,

բարի գլխավոր խնդիրն էր՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել նաև քուբական լծից և ստեղծել մի ամբողջական Հայաստան:

Ռուսաստանի հետ Հայաստանի միացման հետևանքով ստեղծված նոր իրադրության պայմաններում, XIX դարի 30—40-ական թվականներին, ձևավորվում է հայ հասարակական մտքի դեմոկրատական-լուսավորական ուղղությունը: Այս ուղղության ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներն էին Նաչատուր Աբովյանը և Մեսրոպ Թաղիադյանը:

Աբովյանի և Թաղիադյանի գլխավորած ուղղության հիմնական հարցը՝ հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության հարցն էր: Այդ վեհ գաղափարները նրանք անդուլ կերպով պաշտպանում ու պրոպագանդում էին իրենց փեղարվեստական գործերում, գիտական աշխատություններում, հրապարակախոսական հոդվածներում, դասագրքերում, նամակներում, ինչպես և պրակտիկ գործունեության մեջ:

Թե՛ Աբովյանը և թե՛ Թաղիադյանը պայքարում էին հին, ֆեոդալական-ճորտատիրական կարգերի դեմ, պաշտպանում էին գյուղացիության շահերը:

1830—40-ական թվականներին Հայաստանի մի շարք շրջաններում (Փամբակ-Շորագյալ, Սևան, Զանգեզուր, Գարալագյազ, Ախտա և այլն) գյուղացիական ելույթներ են տեղի ունենում կալվածատերերի և ցարական կառավարության հարկային ու ազդարային քաղաքականության դեմ: Աբովյանը իրազեկ էր գյուղացիության ծանր վիճակին և նրա պայքարին: 1838 թ. մայիս-հունիս ամիսներին սենատոր Գանի հետ Հայաստանում կատարած իր շրջազայության ժամանակ նա լինում է Փամբակում և Շորագյալում, որտեղ մի քանի ամիս առաջ միայն տեղի էր ունեցել ներգաղթած և տեղացի բնակիչների ելույթը ցարական կառավարության հարկային քաղաքականության և տեղական պաշտոնյաների ճնշումների դեմ: Աբովյանն իր ձեռքով գրում է Շորագյալի շրջանի Աստախանի (Ղաղարապատ) գյուղացիների բողոքը՝ գյուղի կառավարչի բռնությունների ու կամայականությունների դեմ:

Սենատոր Գանի հետ միասին Աբովյանը լինում է նաև Նոր Բայազետում, որտեղ այդ նույն տարում 30 գյուղեր ապստամբել և հրաժարվել էին կառավարությանը հարկ վճարելուց: Կառավարությունը գործի օգնությամբ, 1838 թ. մարտին, ձեռք էր գյուղացիների ելույթը, իսկ ղեկավարներից մի քանիսին (Բարսեղ Արծ-

րոնի, Գալուստ Շահումյան, Նահապետ Բուրալյան) բանտարկել Երևանի բերդում:

Աբովյանի օրագրերից երևում է, որ նա մտախիչ ծանոթ է եղել այս շարժումներին: Քարվանսարայից, գրում է նա, բարոնի հետ զնայվեք Գեոֆչա կամ ի հին քաղաքն Գեղարքունի, ուր բնակվում էին բաշաղեսուցի հայ գաղթականները, որոնց ղեկավարները տերության հարկապահանջության դեմ ապստամբելու համար բանտարկվել էին Երևանի բերդում, շունենալով փրկության ոչ մի հույս... Երբ մենք քաղաք մտանք, մեզ ընդառաջ էլան խեղճ բանտարկյալների ծնողներն ու ազգականները, լացուկոծով և արտասովելով խնդրելով փրկել նրանց»¹:

Նկարագրելով Գեոքչալի մահալի գաղթականների ծանր դրությունները, Աբովյանը նշում է, որ «Տեղի խեղճ բնակիչները ընկած են վերջին շքավորության մեջ»: Խոսելով Չբխու գյուղի մասին, որտեղ իրենք գիշերում են, գրում է. «Տեղի բնակիչները գաղթականներ են, ամեն տեսակ վայելությունից զուրկ և անգամ հացի կարոտ»²:

Ուշագրավ է, որ այս շարժման ղեկավար Բարսեղ Արծրունցն և նրա ընկերներին Աբովյանը դրվատում է ոչ միայն նշված օրագրում, այլև «Վեբք Հայաստանի» վեպում³ և «Բարեկամի մոտ» պատմվածքում⁴:

Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատները արձակ էջերում և այլ գործերում մեծ դեմոկրատը բողոքում է ստրկական ու ճորտական իրավունքի դեմ, փրկեց ճորտերի, ծառաների նկատմամբ աղաների գործադրած ճնշումների ու անմարդավայել արարքների դեմ: Իր հերոսներից մեկի բերանով Աբովյանն ասում է. «Միթե ճորտը հայվանից վատ է: Նա էլ էնպես մարդ ա, ինչպես ես»: Մի այլ տեղ նա գրում է. Երևանի խանության գյուղացիները զիտի բեգլարի տակին շորացել՝ չոփ են դառել»:


Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ, «Ազգասեր» թերթում և այլ գործերում Թաղիադյանը նույնպես խիստ կերպով քննադատում է ճորտատիրական իրավունքը:

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 60—61 (քաղվածքները բերված են աշխարհագրաբար):

² Նույն տեղում, էջ 61:

³ Տե՛ս հատոր 3, էջ 123:

⁴ Տե՛ս հատոր 4, էջ 33:



Աբովյանը, ինչպես և Թաղիադյանը դեմ էին գյուղացիներին ֆեոդալական և ամեն տեսակ ճնշման ու շահագործման: Նրանք ջերմորեն պաշտպանում էին աշխատավոր ժողովրդի, այդ թվում և նրա ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիների շահերը: Բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը շահասան դասակարգային պայքարի գաղափարին և գյուղացիությունը ակտիվ պայքարի շեղանցին շահագործողների դեմ:

1830—1840-ական թվականների հայ դեմոկրատ-լուսավորիչների համար բնորոշ էր նաև ազգի լուսավորության գաղափարը: Իրենց նախորդների՝ XVIII դարի հայ լուսավորիչներ Բաղդամյանի, Շահամիրյանի և մյուսների օրինակով, Թաղիադյանը և Աբովյանը ամենալին սրովյաժք դնում էին պարսկական ու թուրքական հետամնաց կարգերում դարերով խավարի մեջ խարխափած ժողովրդի լուսավորության, նրա կուլտուրական վերածննդի հարցը:

Դեռևս 1828 թվականին նրանցիներին ուղարկած իր հայտնի նամակում Մ. Թաղիադյանը գրում էր. «Ախ իմ լավ քաղաքացիք, ախ, հոգիս հարայ ա կանչում, հին խմորն թղեֆ, նոր ազգի լուսավորության և պայծառության հետևեցեք»¹:

1832 թվականին Գորպատից Հովհաննես Կարբեցի կաթողիկոսին գրած նամակում Աբովյանը տակավին որոշ հույսեր կապելով նրա հետ, առաջադրում էր լուսավորական, հայրենասիրական գործունեության մի ամբողջ ծրագիր: Անհրաժեշտ է, ասում է նա, մեր ազգին տգիտության աշխարհից լույս աշխարհ հանել, ընձեռել նոր հոգի ազատության, նոր հոգի բարեբախտության, նոր հոգի հայրենասիրության²: «Ի լուսավորութենէ կանգնի ազգ ինչ, ի լուսավորութենէ ելանեն ամենայն բարեբախտութիւնք»³:

Աբովյանի լուսավորական հայացքները ցայտուն կերպով արտահայտված են նրա հռչակավոր «Վերք Հայաստանի» պատմական վեպում և այլ աշխատություններում: «Ճաշոց ազգի ջանին դուրբան, — ասում է Աբովյանը, — մեկ նրա երեսին տատմն տուր, նրա վն լուսաթաթախ հոգին կրթիր... տեսնիմ՝ թե ջան կտա քեզ, թե չէ»⁴:

XIX դարի առաջին կեսին հայ մտավորականներից ոչ ոք այն-

պիսի բեղմնավոր գործունեություն չծավալեց լուսավորության, կրթության ու դաստիարակության տարածման համար, ինչպես Աբովյանն ու Թաղիադյանը: Հատկաճանաչական է, որ նրանք ոչ միայն լուսավորություն էին տարածում, այլև համարձակ կերպով մերկացնում միջնադարյան խավարի մոլի պաշտպաններին, առաջին հերթին հոգևորականներին, որոնք մեծապես մնասում էին ժողովրդի լուսավորության գործին: Առաջադիմական և հետադիմական տղղությունների միջև այդ շրջանում սուր պայքար էր գնում նաև լեզվի հարցում՝ գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև:

Մեծ է Աբովյանի, ինչպես և Թաղիադյանի դերը հայկական կուլտուրայի, հայ նոր գրականության և աշխարհաբար լեզվի դարձման գործում: Նրանք նորարարներ էին, այդ բառի բուն իմաստով, XIX դարի առաջին կեսի հայ հասարակական մտքի ամենախոշոր դեմքերը: Բայց, չնայած այդ ամենին, չի կարելի չնկատել, որ նրանց գաղափարախոսության մեջ կային թույլ կողմեր. նրանք սխալվում էին, երբ ժողովրդի ազատությունն ու առաջադիմությունը, նրա ներկան ու ապագան կապում էին միայն և միայն լուսավորության տարածման հետ:

Աբովյանի, Թաղիադյանի և նրանց համախոհների որդեգրած ուղղության բնորոշ գծերից մեկն էլ հայրենասիրությունն էր: Թե՛ Աբովյանը և թե՛ Թաղիադյանը տոգորված էին հայրենասիրական ջերմ, ազնիվ զգացմունքներով: «Ապրել և մեռնել հայրենիքի համար, ահա այն խնդիրը, որ ես բնաբել եմ պատանեկան տարիներից ի վեր», — գրում է Աբովյանը: «Շունչդ տուր, կյանքդ, բայց քո հայրենիք ոչ ոքի մի տուր», — ասում է մեծ հայրենասերը: Աբովյանի հայրենասիրությունը լեռնային գետի պես հորդում է հատկապես նրա «Վերք Հայաստանի» մեջ:

Հայրենասիրության պրոպագանդան լայն տեղ էր գրավում նաև Թաղիադյանի գործերում: «Մեր արմատն մեր հայրենիքն ա, — ասում է նա, — և եթե չջանամք մի կամ մյուս եղանակով մեր հայրենյաց երջանկությունը հաստատել, կարելի չէ որ մենք երջանիկ ապրիմք... Ուրեմն ով կամի երջանիկ կալ, նախ պիտի իր հայրենյաց երջանկության միտ գնի»¹:

¹ Կենսագրություն Մեսրոպյան Թաղիադյանից, էջ 136:

² Գիվան Խաչատուր Աբովյանի, կազմեց և ծանոթագրեց Երվանդ Շահազիզ, հ. 1, էջ 36, 1940:

³ Նույն տեղում, էջ 38:

⁴ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 61:

¹ Ազգասեր, օրագիր Արարատյան ընկերության, քաղաքական, բարոյական և բանասիրական գիտելյաց, էջ 139, Կալիաթա, 1845:

Հայրենասիրությունը կարմիր թելի պես անցնում է ինչպես Աբովյանի, այնպես էլ Թաղիադյանի ստեղծագործություն մեջ: Ինքնանպատակ չէր, հարկավ, նրանց հայրենասիրությունը: Թե՛ մեզի և թե՛ մյուսի համար պարզ էր, որ ով հայրենասեր էր, նա շեք կարող չլինել ազատասեր ու ժողովրդասեր, չէր կարող չպայքարել իր հայրենիքի և ժողովրդի ազատության ու անկախության համար: Այնպես որ նրանց հայրենասիրական պրոպագանդան նպատակ ուներ ժողովրդի մեջ միշտ վառ պահել հայրենիքի ազատության ու առաջադիմության վե՛հ գաղափարը:

XIX դարի առաջին կեսի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ Աբովյանն առաջինն էր, որ բարձրացրեց ազգի ինֆանտանյալան, համախմբման ու ազգային գիտակցության զարգացման հարցերը: XVIII դարի հայ առաջավոր մտածողներից, առանձնապես Մովսես Բաղրամյանից հետո, այդ հարցի վրա ոչ ոք այնպիսի ուշադրություն չէր դարձրել, ինչպես Աբովյանը: Ազգության գաղափարի պրոպագանդան Աբովյանի մոտ ավելի պարզ ու հստակ էր, քան իր բոլոր նախորդների մոտ, սերտորեն շաղիապվում էր ժողովրդի ազատության ու առաջադիմության, նրա ազգային ինքնաձանաչման գաղափարի հետ:

Ինչպես նկատեցինք, ազգության գաղափարը նոր չէր: Դրա արմատները թաղված էին հայոց պատմության խորքերում: Սակայն, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումից հետո, XIX դարի առաջին կեսին, ստեղծված նոր պայմանները նոր մղում տվեցին հայ ազգի կազմավորման պատմական պրոցեսին, որն իր ամենացայտուն արտահայտությունը գտավ Աբովյանի մոտ:

Ժողովրդի մեջ ազգային ինքնագիտակցությանը զարկ տալու նպատակով մեծ հայրենասերը դիմում էր հեռու և մոտիկ անցյալի պատմության փորձին, նրան սղեղնում էր օտարերկրյա նվաճողների դեմ մղված հերոսական պայքարի օրինակներով: «Աշխարհումն ով ուր բարձրացրեց», — ասում է Աբովյանը, — Հայաստանու վրով պետք էր լոք տառ, հայոց ազգին պետք էր տանտակ տար»: «Էն ջրհեղեղը՝ որ մեր աշխարհը մտավ, այսինքն էն գաղան ազգերը, որ մեր աշխարհով անց կացան, սար ըլեր, նրանց ոտի տակին կհավասարվեր, ծով ըլեր, կցամաքեր»: «Հայոց ազգը

արարած աշխարհին հավիտյանս հավիտենից կարող է համարձակ ցույց տալ, թե ինչքան հոգի ուներ, ինչքան կամաց զորություն, սրտի հաստատություն, որ իրան շորս կողմի էն հզոր ազգերը կորան, փշացան, անուները չկա, հայոց ազգը անուն էլ ունի, ու իրան հավասար ու լեզուն մինչև էսօր իր արնի գետով պահեց»¹:

Բարձր գնահատելով հայ ժողովրդի անցյալի ազդային արժանիքները, երբեմն էլ ծայրահեղությունների մեջ ընկնելով և իրենալիականացնելով պատմական անցյալը, Աբովյանը ձգտում էր ազգային գիտակցության, ազգային ինքնաձանաչության ոգով դաստիարակել իր ժամանակակիցներին: Հենց այդ շնչով ու այդ նպատակով էլ գրված է նրա հուշակալոր վեպը: Ճիշտ է նկատել մեծ սեռայնություն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որ «Վերք Հայաստանի» մեջ «սարմին է անել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»²:

Որպես ճնշված ազգի գավակներ Աբովյանը և Թաղիադյանը անողոր պայքար էին մղում հայ ժողովրդի հարստահարիչների դեմ: Պայքարելով իրենց ժողովրդի ազատության համար, բնական է, նրանք չէին կարող կողմ լինել ուրիշ ազգերի ճնշման: Թե՛ Աբովյանը և թե՛ Թաղիադյանը առհասարակ դեմ էին ազգային-գաղութային ճնշումներին, պաշտպանում էին ժողովուրդների ազատության ու եղբայրության գաղափարը: Անդրկովկասի ժողովուրդների, հայ-ռուսական և հայ-հնդկական բարեկամության վերաբերյալ նրանց արտահայտած մտքերը վերին աստիճանի ուսանելի են և բարձր գնահատության արժանի: Հայտնի է, թե ինչպիսի խստություն էին Թաղիադյանն ու Աբովյանը քննադատում գաղութարար սերունդներին, նրանց գաղութային թաղանի ու ճնշման, հարցուր միլիոնավոր մարդկանց ստրկական լծի տակ պահելու գիշատիչ քաղաքականությունը: Աբովյանի ու Թաղիադյանի գաղափարները՝ ժողովուրդների բարեկամության և ճնշված ազգերի ազատության մասին, լուսավոր գաղափարներ էին, XIX դարի առաջին կեսի հայ դեմոկրատական մտքի ամենախոշոր նվաճումներից մեկը:

Հասարակական-քաղաքական բեղմնավոր գործունեության հետ մեկտեղ, ինչպես հայտնի է, Աբովյանն ու Թաղիադյանը խոշոր ծառայություններ են մատուցել մեր գրականության, լեզվի, ման-

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 93:

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 177:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 279:

կամ արժույթյան ու գիտութեան զարգացման գործում: Աբովյանի անվան հետ է կապված մեր նոր գրականութեան և աշխարհաբար գրական լեզվի, նոր մանկավարժութեան հիմնադրման պատմութիւնը: Հանդես գալով հայ հասարակական-քաղաքական կյանքի բեկման, հայ ժողովրդի նոր պատմութեան սկզբնավորման շրջանում, Աբովյանն ու Թաղիադյանը սկիզբ դրին նոր, գեմոկրատական-լուսավորական ուղղութեան: Հայ հասարակական-քաղաքական, այդ թվում և ազատագրական մտքի պատմութեան մեջ սկսվեց նոր էտապ: Այդ նոր էտապի ու նոր ուղղութեան բոլոր հիմնական, ժր-րագրային հարցերը իրենց արտահայտութիւնը գտան «Վերք Հայաստանի» մեջ: «Վերք» հանդիսացավ այդ նոր ուղղութեան մանր-ֆետը:

Աբովյանի և Թաղիադյանի կյանքն ու գործունեութիւնը ընթացան այնպիսի մի շրջանում, երբ հայ հասարակական կյանքի ու մտքի վրա տակավին իշխող էր կղերա-ֆեոդալական ունակցիոն գաղափարախոսութիւնը, երբ անողոք կերպով հալածվում ու հետապնդվում էին լուսավոր գաղափարները, նոր խոսքն ու նոր միտքը: Բայց ոչ մի դժվարութիւն, ոչ մի զրկանք ու հալածանք նրանց չընդեց իրենց ճանապարհից: «Մաքառելով հազարավոր դժվարութիւնների դեմ, — գրում է Աբովյանը 1834 թվականին, — միայն հայրենիքի սիրով զորացած, ազգի վիճակն աչքի առաջ ունեցած աշխատեցի... այլևս ոչ մի դժվարութիւն չի կարող վախեցնել քնն և շեղել իմ նպատակից, ես ուխտ եմ անում մինչև շունչս փչելը լինել ազգի հավատարիմ օրդի, ապրել և մեռնել ինչպես հայկազուն՝ Հայաստանի համար»¹: Եվ իրոք, հազարավոր դժվարութիւններ հաղթահարելով, Աբովյանը վառեց լուսավորութեան, ազատասիրութեան ու հայրենասիրութեան ջահը և լուսավորեց իր ժամանակակիցների ու հաջորդ սերունդների ճանապարհը: Նա նախադրյալներ ստեղծեց և ուղի հարթեց հայ ժողովրդի ազատութեան ու առաջադիմութեան համար մարտնչողների մի ամբողջ սերնդի և առաջին հերթին 1860-ական թվականների մեծ ռեուլյուցիոն-գեմոկրատ Միքայել Նալբանդյանի համար:

¹ Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. 2, կազմեց և ծանոթագրեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահազիզ, էջ 23, 1948:

Հայ հասարակական մտքի պատմութեան մեջ XIX դարի 30—40-ական թվականները նշանակալից տարիներ էին: Մեր ժողովուրդը, ազատագրվելով պարսկական հետամնաց կարգերի կապանքներից, կարճ ժամանակամիջոցում առաջադիմական խոշոր քայլ կատարեց իր հասարակական-քաղաքական և մտավոր զարգացման ճանապարհին: Միայն Աբովյանի հանդես գալը բավական էր, որպեսզի այդ տարիները մեր փոքր ժողովրդի մեծ պատմութեան մեջ մտնեին որպես արժանահիշատակ տարիներ:

Սակայն, ավելի նշանակալից եղան 1850—1860-ական թվականները: Այդ տարիներին նոր թափ ու լայն ծավալ ստացավ հայ հասարակական մտքի, կուլտուրայի, լեզվի, գրականութեան ու արվեստի զարգացումը: Աննախընթաց չափով սրվեց պայքարը հետադիմական ու առաջադիմական ուղղութիւնների միջև: 1830—1840-ական թվականներին Աբովյանի գլխավորած դեմոկրատական-լուսավորական շարժումը 1850—1860-ական թվականներին ավելի տարածվեց, թևակոխելով փր զարգացման նոր, բարձր էտապը՝ ռեուլյուցիոն-գեմոկրատական էտապը: Սա մի խոշոր թիփշ էր հայ հասարակական մտքի պատմութեան մեջ, որը, ինչպես կտեսնենք, կապված էր մեծ ռեուլյուցիոն-գեմոկրատ Միքայել Նալբանդյանի անվան հետ:

Հայ հասարակական-քաղաքական և մտավոր կյանքում տեղի ունեցած այս փոփոխությունները պայմանավորված էին ներքին և արտաքին մի շարք հանգամանքներով:

XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքում նոր տեղաշարժեր են կատարվում: Գարեբոյվ տիրապետող ֆեոդալական հարաբերությունները հիմնականում տեղի են տալիս կապիտալիստական հարաբերություններին, երկիրը մտնում է իր կապիտալիստական զարգացման փուլը:

Կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում արդյունք էր մի կողմից երկրի ներքին սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման, իսկ մյուս կողմից ռուսական կապիտալիզմի ազդեցութեան: Հետաքննարկման շրջանում, ինչպես նշում է Վ. Ի. Կենինը, «...ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառութեան մեջ, համահարթում էր հինավուրց նա-

հայետական ինքնամփոփովածութեան մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկութիւնները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»¹:

Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում վճռական նշանակութիւն ունեցավ նաև Անդրկովկասի կապիտալիստական զարգացման համար: Եթե Ռուսաստանում կապիտալիզմը շարգանար, Անդրկովկասը կմնար ֆեոդալական ֆորմացիայում: Տվյալ ժամանակաշրջանում առանց Ռուսաստանի, հետամնաց Թուրքիայի, Պարսկաստանի ու Գաղստանի շրջապատում նա չէր կարող ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնել: 1861 թվականի գյուղացիական ռեֆորմից հետո, 1864—1865 թվականներին Վրաստանում և 1870 թվականին Հայաստանում ու Ադրբեջանում անցկացված ռեֆորմները ցույց էին տալիս, որ Ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անդրկովկասը բուն էին կապիտալիզմի ուղին: Կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում ավելի ամրապնդեց հայ բուրժուազիայի դիրքերը, որը մինչ այդ տիրապետող էր առևտրի բնազավտում, իսկ 1870—1880-ական թվականներից սկսած տիրապետող դիրքեր նվաճեց նաև արդյունաբերութեան ասպարեզում: Հայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիան, Անդրկովկասի մյուս ազգութիւնների բուրժուազիայի հետ համեմատած ամենաուժեղն էր: Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի և ամբողջ երկրի առևտրի ու արդյունաբերութեան մեծ մասը կենտրոնացած էր նրա ձեռքում:

Այլ էր դրութիւնը Արևմտյան Հայաստանում: Գտնվելով հետամնաց ֆեոդալական Թուրքիայի լծի տակ, Արևմտյան Հայաստանը մնացել էր տնտեսական զարգացման շափազանց ցածր մակարդակի վրա: Կապիտալիստական հարաբերութիւններն ինչպես ամբողջ Թուրքիայում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում շատ դանդաղ էին զարգանում: Թուրքիայում տիրող արևելյան դեսպոտիզմը, ինչպես Ֆ. Էնգելսն է նկատում, «անհամատեղելի էր կապիտալիստական կարգի հետ»²: XIX դարի կեսերին, Կ. Մարքսի խոսքերով ասած, Թուրքիան դեռևս գտնվում էր «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական ստադիայում»³:

Արևելյան և Արևմտյան Հայաստանում գոյութիւն ունեցող

սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները իրենց կնիքն էին դնում հայ հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման վրա խիստ բացասաբար էր անդրադառնում հատկապես նրա մասնատվածութիւնը:

Մի բուն, փոքր ժողովուրդ դարեր շարունակ բաժան-բաժան էր արված Թուրքիայի ու Պարսկաստանի միջև: Պարսկական լծից ազատագրվելուց հետո նա կրկին մնաց բաժանված վիճակում, այս անգամ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև: Ինչպես Պարսկաստանն ու Թուրքիան, այնպես Ռուսաստանն ու Թուրքիան միշտ պայքարի մեջ էին գտնվում և հաճախակի պատերազմներ էին մղում միմյանց դեմ: Պարզ է, թե ինչ կարող էր լինել նման հակառակորդների միջև բաժան-բաժան արված ժողովրդի վիճակը: Հին ցավ էր դա. մեր ժողովուրդը մեծ ձիգեր էր գործադրել դրա բուժման համար, բայց ավա՜ղ, ցավը զորեղ էր, դեղն անզոր...

Օգտվելով հայ ժողովրդի ծանր վիճակից, Արևմտասելրոպական գաղութարար տերութիւնները, Արևելքում բորենու պես վիտացող անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան միախններները, բողոքական ու կաթոլիկ համայնքներ ստեղծելով հայերի մեջ, ավելի էին ջլատում նրա տառնց այդ էլ ջլատված ու թուլ տւժերը: Բայց, շնայած այդ ամենին, շնայած օտարերկրյա գիշատիչների կողմից սպառնացող ահալոր վտանգներին, հայ ժողովուրդը կարողացավ պահպանել իր գոյութիւնը, իր հայրենասիրական սրբին, իր մայրենի լեզուն, իր ազգային կուլտուրան, իր մայր հայրենիքի՝ ամբողջական Հայաստանի գաղափարը: Ավելին. նա ոչ միայն պահպանում, այլև մշտապես առաջ էր մղում իր հայրենիքի ազատութեան ու առաջադիմութեան գաղափարը, իր ազգային կուլտուրան: 1850—1860-ական թվականների մեր ազատագրական շարժման և կուլտուրական վերածննդի պատմութիւնը դրա լավագույն ասպացույցն է:

1853—1856 թթ. Ղրիմի պատերազմի տարիներին հայերը, ինչպես նախորդ ուս-թուրքական պատերազմների ժամանակ, հույս դրած Ռուսաստանի օգնութեան վրա, փորձեցին ազատագրել իրենց հայրենի հողերը թուրքական լծից: Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական զորքերի հետ մեկտեղ, նրանք ակտիվ մասնակցութիւն ունեցան թշնամու դեմ մղվող մարտերին: Բաշկազրքարի ու Քուրուկ-դարայի նշանավոր ճակատամարտերում, Կարսի գրավ-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 771:

² К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. 2, стр. 22.

³ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 374.

ման ժամանակ հայերից շատերն աչքի ընկան իրենց քաջագործություններով և պարզևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Ղրիմի պատերազմի տարիներին սեալ հնարավորություններ էին ստեղծվել հայկական հողերի վերամիավորման համար: Մեկայն, Անգլիայի և Ֆրանսիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, Ռուսաստանը պարտություն կրեց: Հայաստանում գրավված տերիտորիաները վերագրվեցին Ռուսթիային, հայերի ազատագրական ձգտումները դարձյալ մնացին անկատար:

Ղրիմի պատերազմը բեկում ստեղծեց ուսա ժողովրդի և Ռուսաստանի մյուս ժողովուրդների մեջ: Ժողովրդի պայքարը ցարական ճորտատիրական նեխած ու փտած կարգերի դեմ, պատերազմից հետո մեծ թափ ստացավ: 1850-ական թվականներին վերջերին և 1860-ական թվականների սկզբներին Ռուսաստանում ստեղծվեց ուսուցիչի սիստեմացիա: Յարական կառավարությունը վախեցած ճորտերի ուսուցիչից, շտապեց վերելից «ազատագրել» նրանց: 1861 թ. փետրվարի 19-ին դեղատնային ռեֆորմ անցկացվեց, որը, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում, «ճորտատիրական ռեֆորմ էր և չէր էլ կարող այլ բան լինել, քանի որ ճորտատերերն էին անցկացրել»¹:

Ռուսաստանում ստեղծված ուսուցիչի սիստեմացիայի, ուսա մեծ ուսուցիչի ղեմավարաներ Չերնիշևսկու ու Գերցենի գլխավորած ուսուցիչի շարժումների վերելքի պայմաններում ձևավորվեց հայ ազատագրական մտքի ուսուցիչի ղեմավարը հայ դուրքունը: Այս նոր ուղղության հիմնադիրն ու ղեկավարը հայ մեծ ուսուցիչի ղեմավարտ Միքայել Նալբանդյանն էր:

Մ. Նալբանդյանի հասարակական-քաղաքական հայացքները ձևավորվեցին, ինչպես ասացինք, Արևմտյանի ու Թաղիադյանի ազատագրական, հայրենասիրական ու լուսավորական գործունեությունների հիմքի վրա: Նրա համար կարևոր նշանակություն ունեցան նաև Ստ. Նալբանդյանի և արևմտահայ ղեմավարանների գործն ու գաղափարները:

Ստ. Նալբանդյանը 1840—50—60-ական թվականների հայ լուսավորական շարժման աչքի ընկնող ղեմավարից էր: Նալբանդյանը Արևմտյանի մտերիմ դասընկերն էր, Դորպատի համալսարանն աշխատած, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, արևելագիտության դոկտոր, Կազանի համալսարանի պրոֆեսոր, իր ժամանակի կրթված ու լուսամիտ մարդկանցից մեկը: Նա խոշոր դեր է

կատարել հայ ժողովրդի լուսավորության, հայոց լեզվի, գրականության, դիտության ու արվեստի զարգացման գործում: Նալբանդյանի հետ միասին, 1858 թվականին նա Մոսկվայում հիմք դրեց իր ժամանակի ամենապրոգրեսիվ ամսագրի՝ «Հյուսիսափայլ»-ի հրատարակությունը, որի առաջին երեսի վրա գրոշմված էին նրա հետևյալ նշանավոր խոսքերը. «Այսուհետև ոչինչ եփպտուսյան խորամանկ ֆուրմե, որ կամեին լինել գիտության միայնակ պահպանք. այսուհետև ոչինչ Չինեական պարիսպ, որ պիտո է փակել լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և նշմարտություն և ազատություն խավարի բարեխոնջան գերությունից»¹:

Արևմտյանի ու Թաղիադյանի նման, Նալբանդյանը նույնպես խիստ քննադատում էր ասիական ֆեոդալական բռնակալությունը և դրական երևույթ էր համարում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

«Հայերը, գրում է նա, ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարդական ստրկությունից և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»:

Նալբանդյանն այն տեսակետն էր պաշտպանում, որ Ռուսաստանի տիրապետության տակ հայերը կարող են և պետք է ձգտեն եվրոպական լուսավորության, համընթաց քայլեն առաջավոր ազգերի հետ: Հանգես գալով հայ ժողովրդի ազգային իրավունքները ստանահարողների, խավար դարերի խավար մնացորդների դեմ, 1860 թվականին Նալբանդյանը գրում էր. «Հյուսիսափայլը համարձակ բերանով ասել է և միշտ ասելու է հայոց ժողովրդին, թե սաևս որպես մի առանձին ազգ ազգերի մեջ—արդարև մի ազգ առանց քաղաքական ինքնիշխանությունից — ունի յուր բարոյապես անխղիչ իրավունքը, որ չէ պիտո տմարդաբար ոտնակոխ անել... Հյուսիսափայլը ասել է և պիտի ասե, թե հայոց ազգը պարտ է հառաջ խաղալ լուսավորության և կրթության ասպարեզի մեջ, ոչ որպես նորա արեղաչքը կցանկանային, այլ որպես պահանջում է մարդկության կոչումը: Արեղաներին գործ չկա այսուհետև ազգային խնդիրների մեջ»²:

¹ «Հյուսիսափայլ», Օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության, ամսաստորակ 1, Մոսկվա, 1858:

² Ստ. Նալբանդյան, Երկեր, հ. 1, էջ 134, 1913, Թիֆլիս:

Ստ. Նազարյանը քննադատում էր հայ մեծատուններին, հարուստներին, որոնք, ինչպես նա է ասում, «կուրացած անձնասիրական և փառասիրական աստերով, շկամին ևս դիտել, թե աշխարհիս երեսին հայ ազգ կա, ազգային հառաջադիմության կարիք, այդպիսիների ազգը և ազգային օգուտը չորեանց անձն է, չորեանց փառքը և վայելչությունը, չորեանց քաղցր և դյուր կեցությունը չորեանց համար միայն»¹:

Այնուհետև նշելով, որ «ազգի հարստականը միշտ հեռի են մնացած ազգային լուսավորության գործից և միշտ սանասիրտ կամ անսիրտ դեպի այդ խնդիրը», Նազարյանը հեռուցվելով ջերմ խոսքերով է բնութագրում հասարակ ժողովրդին:

«Մի ազգի ղեկավոր ուժը և զորությունը հասարակի մեջ է, որովհետև հասարակի բազմությունը հարյուր հազարավոր, իսկ մեծատունների թիվը տասն ու քսան է. բացի դորանից, աշխարհիս բոլոր ականավոր գործերը խմաստության և ճարտարության մեջ, հառաջացած են ժողովրդի միջակ և չքավոր դասակարգերից. աշխարհաշեն՝ գյուտերը և հայտնագործությունները արած են ժողովրդողական կարգի մարդերի ձեռքով, որովհետև զոցա մեջ են ամփոփված մի ազգի երևելի քանքարքար և շնորհները: Այսքանս թող բավական լինի, պարզ և բացահայտ հասկացնելու մեր հայոց հասարակին յուր իրավունքը, յուր կշիռը, յուր խորհրդավոր կոչումը ազգի մտավորական և բարոյական վերաշինության համար... «հայկազյան ժողովրդի լուսավորությունը պիտո մե լինի յուր հատուկ ձեռքի վաստակած վաստակը»²:

Արթուրյանի և ժամանակակից մյուս հայ լուսավորիչների նման Ստ. Նազարյանը առաջ էր քաշում աշխարհաբար լեզվի, դպրոցի, թատրոնի զարգացման հարցերը, կապելով դրանք կյանքի պահանջների հետ: «Հայոց ազգի տունը պիտո է և կարող է միայն շինվել նորա լեզվի շինությունները», — ասում է Նազարյանը: «Հայրենական լեզվի տեսումն պիտո մե բազկացնե գլխավոր հիմքը ազգային դաստիարակության: Ժողովուրդը պարտական է կատարելապես ուսանել խոսել, զգալ, հասկանալ և մտածել յուր մայրենի լեզվով»: Նազարյանցի խոսքը, այստեղ և ամենուրեք վերաբերում էր աշխարհաբար լեզվին: «Հայոց լեզու ասելով, այստեղ հասկանում ենք մեր

հայ ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խոսքը, այն լեզուն և ձևերը, որով մեր ժամանակի հայերը լավ ու վատ հասկացնում են միմյանց յուրեանց միտքը, դատողությունը և զգացողությունը: Հայոց լեզու ասելով, իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որ կյանք ունի մեք ժամանակավոր, և ոչ թե ուսումնական, գրոց ասած լեզուն, որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել դիտնական հային»: Այնուհետև. քննադատելով գրաբարի պաշտպաններին, Նազարյանը գրում է. «Շատ ավելի դյուրին է հարուցանել մեռելներին գերեզմաններից, քան թե հին լեզվի միջնորդությունը նոր ժողովուրդը լուսավորել. խավարը լուսով է փարատվում և ոչ խավարով. կյանքը կենդանությունից է աղբյուրանում և ոչ մեռելությունից»:

Իր վաղ շրջանի նամակներից մեկում Նազարյանը, Արթուրյանի նման, գրում է, որ իրեն նպատակ է դրել «ապրել և մեռնել հայրենիքի համար»: Ռուսաստանի իր հայրենակիցների նյութական և կուլտուրական կյանքը բարեկամելու նպատակով նա առաջարկում էր Հայկական ընկերություն հիմնել: Այդ ընկերության առաջին դործը պետք է լիներ «ազգի չքավոր զավակներին Ռուսաստանի մեջ պատվավոր հացի և ապրուստի ճանապարհ բանալ», որովհետև «մարդս նախ շնչավոր է, ապա հոգևոր և հոգին աճել ու զորանալ կարող է, եթե նյութական պայմանքը պակաս են»: Այնուհետև, Հայկական ընկերությունը, ասում է Նազարյանը, «պիտի դաստիարակե ազգի չքավոր զավակները, որ այսօր հազար տեսակ նեղությունների հետ պատերազմելով կամ հաղթում են զոցա—որ շատ փոքր է պատահում—կամ թե հաղթվելով զոցանից, կորչում են ազգի համար»³: «Շն ունելով իմ աչքի առաջ և մեր հայկական ժողովրդի միակ բարին, նորա նյութական և բարոյական կյանքի բարեկարգությունը, կարծում եմ, այո, վկայում է սիրտս, որ եթե մի ճանապարհ կար, որչափ և իցե դարձան մատուցանելու մեր հայ ժողովրդի ծաղոցացած թշվառությունը, հապա այդ միակ ճանապարհն է կազմել մի ընդհանուր հայկական ընկերություն, որ ժողովրդի ցան ու ցրիվ ընկած, մեծ ու փոքր նյութական կարողություններ ժողովելով ու ամփոփելով դենը յուր լուսավոր հայրենասիրական հարաբերություն տակ և դործ կատարեր, միտ դնելով մեր ժամանակի պիտույքին և հայկական ժողովրդի ճշմարիտ օգտին»⁴:

¹ Ստ. Նազարյան, Երկեր, հ. 1, էջ 281:

² Նույն տեղում, էջ 282:

³ Ստ. Նազարյան, Երկեր, հ. 1, էջ 272—273:

⁴ Նույն տեղում, էջ 279:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ ազգային լուսավորութեան, կրթութեան, դաստիարակութեան, աշխարհաբար լեզվի, հասարակ ժողովրդի նշովական ու բարոյական վիճակը բարելավելու և մի շարք այլ հարցերում Ստ. Նազարյանը տններ առաջադիմական հայացքներ, ինչպես Արտվյանն ու Նալբանդյանը, նա ևս պայքարում էր կղերա-ֆետրալական ռեակցիոն հոսանքի դեմ:

Բարձր գնահատելով Ստ. Նազարյանի լուսավորական գործունեությունը, նրա մղած պայքարը կղերա-ֆետրալական ռեակցիայի դեմ, չի կարելի սակայն շեշել, որ հայ ժողովրդի ազատագրությունը և առհասարակ հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական հարցերում նա մնաց լիբերալ-ոեֆորմիստական դիրքերում, դարձավ հայ լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխը:

Նազարյանը վերին աստիճանի անտարբեր էր թուրքական լծի դեմ ուղղված արևմտահայ ազատագրական շարժումների նկատմամբ և շարձագանքեց դրանց անգամ Հյուսիսասիայի շրջանում: Նրա այդ գիծը շարունակեցին ոտուհայ լիբերալներից շատերը: Արևելահայերին էլ նա խորհուրդ էր տալիս ոտուհայ կայսեր հյուսնագանդ, բարի հպատակներ լինել: «Հայերս,— գրում է նա,— քաղաքական մտքով ոտու հենք, այսինքն ոտուհայ կայսեր հպատակք և անդամք այդ տերութենական մարմնի, և ունիմք նույն օգուտքը և վնասքը, ինչ որ ունի թագավորությունը ներքուստ և արտաքուստ»¹: Որպես լիբերալ-ոեֆորմիստ, նա ժողովրդին ազատագրական ակտիվ պայքարի շէր կոչում, դեմ էր ապստամբական, ռեալուցիոն շարժումներին:

Նազարյանի և Նալբանդյանի անձնական ու զաղափարական կոպերը, միացյալ ուժերով «Հյուսիսասիայը»-ը հրատարակելը դեռևս մեզ իրավունք չեն տալիս անտեսելու նրանց հասարակական-քաղաքական հայացքների տարբերությունը: 1850—1860-ական թվականներին Նազարյանն ու Նալբանդյանը գլխավորում էին երկու տարբեր հասարակական հոսանքներ:

* * *

Մինչև ռեալուցիոն-դեմոկրատական հոսանքին անցնելը, մենք կկամենայինք մի քանի խոսք ասել նաև 1850—1860-ական թվականների արևմտահայ ազատագրական շարժումների և հոսանքների մասին:

Հայ ազատագրական շարժումները 1850—1860-ական թվականներին ամենից ավելի բուռն թափով արտահայտվեցին արևմտահայերի մոտ: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ հայ ժողովրդի բոլոր հատվածներից ամենից ավելի վատթար վիճակում գտնվում էր արևմտահայությունը, սուլթանական Թուրքիայի լուծը ամենից ավելի ծանր ու կորստաբեր լուծն էր հայ ժողովրդի համար:

Թուրքական սուլթանները, որոնք ամբողջ աշխարհին հայտնի էին որպես բիրտ ու դաժան բռնակալներ, բարբարոսաբար ճնշում ու կեղեքում էին ոչ միայն հայերին, այլև իրենց լծի տակ գտնվող վրացիներին, հույներին, սերբերին, բուլղարներին և ուրիշներին: Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերը զրկված էին ամենատարրական իրավունքներից, ապահովված չէր նրանց կյանքն ու գույքը, ամեն քայլափոխին տանահարվում էր նրանց ազգային արժանապատվությունը, կրոնը:

Սուլթանական Թուրքիան հպատակ ժողովուրդների համար մի կոտորակ բանտ էր: Ինչպես բալկանյան աբալոն ժողովուրդները, այնպես էլ հայերը ազգային և սոցիալական դաժան ճնշման էին ենթարկվում: Շատ ավելի ծանր էր արևմտահայ գաղառների գյուղացիության վիճակը, որտեղ սանձարձակ կերպով իշխում էին թուրք փաշաներն ու քուրդ բեկերը:

Արևմտահայերի անտեսական և իրավական այդօրինակ ծանր դրությունը նրանց պայքարի էր մղում թուրքական լծի դեմ: Ճիշտ չեն այն հեղինակները, որոնք թուրքական բռնակալության դեմ XIX դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազատագրական շարժումները կապում են կապիտալիզմի զարգացման և բուրժուական ազգի կազմավորման հետ: Արևմտյան Հայաստանում ոչ միայն XIX դարի սկզբներին, այլև հետագա տասնամյակներին նման պրոցես տեղի չի ունեցել: Արևմտահայերի ազատագրական շարժումները բուրժուական կառավարության ազգային և սոցիալական ներման դեմ ուղղված շարժումներ էին, որոնք սկիզբ էին առել կապիտալիզմի ու բուրժուական ազգի հանդես գալուց շատ առաջ: Արևմտահայերի ազատագրական շարժումները ինքնաբուխ, սոցիալ-տնտեսական խոր արմատներ և կոնկրետ խնդիրներ ու նպատակներ ունեցող պրոգրեսիվ շարժումներ էին: Դա ներշնչող ժողովրդի բողոքի ու ցասման տարեալին մի բռնկում էր ներշնչող դեմ: Եվ որքան ուժեղ էր լինում ճնշումը, այնքան ցասումնալից էր թինում բողոքը: Արևմտ-

¹ Ստ. Նազարյան, Երկեր, հ. 1, էջ 334:

տահայերի ճնշումն ավելի տեժեղ էր, այդ պատճառով էլ նրանց մոտ ազատագրական պայքարն ավելի սուր բնույթն ստացավ: Արևելահայերի մոտ, մասնավորեց ցարիզմի տիրապետության սկզբնական շրջանում, ճնշումը համեմատաբար թույլ էր, այդ պատճառով էլ պայքարն տեժեղ չէր: Արևմտահայ և արևելահայ վայնքի այս և մի շարք այլ առանձնահատուկ դժերը իրենց կնիքն էին դնում ոչ միայն նրանց ազգային-ազատագրական շարժման, այլև ողջ հասարակական դարգացման վրա:

Արևմտահայերի, փնչպես և արևելահայերի ազատագրական շարժումները մեկուսացած, նեղ ազգային կեղևի մեջ պարիակված շարժումներ չէին: Գրանք այս ու այն չափով կապված էին թուրքական լծի տակ հեծող հույների, բուլղարների, վրացիների և մյուս ժողովուրդների ազատագրական շարժումների հետ: Ընդհանուր թշնամու՝ սուլթանական բռնակալության դեմ մղվող ծանր ու դժվարին պայքարում ճնշված ժողովուրդների շահերը համընկնում էին, նրանք փոխադարձաբար օգնում ու օժանդակում էին միմյանց:

XIX դարի 50—60-ական թվականներին արևմտահայ հասարակական-քաղաքական շարժումները նկատելիորեն աշխուժանում են: Մինչ այդ, 1830—1840-ական թվականներին, գլխավորապես Պոլսի ու Զմյուռնիայի հայերի մեջ սկսված լուսավորական շարժումը, դպրոցի, լեզվի, թատրոնի շուրջը էանաֆնների ու ամիրանների առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև տեղի ունեցող պայքարը թևակոխում է նոր շրջան: Մտավոր և քաղաքական կյանքի աշխուժացումը ցայտուն կերպով արտահայտվում էր առանձնապես ազգային զանազան ընկերությունների կազմակերպման, տպագրության և մամուլի բնագավառում: 1830-ական թվականներին Պոլսում և Զմյուռնիայում հրատարակվում էր 2 անոթն պարբերական, 1840-ական թվականներին՝ 7, 1850-ական թվականներին՝ 15, փակ 1860-ական թվականներին՝ 38: 1850—60-ական թվականներին տնտեսականներ վեճ հիմնվում և թերթեր հրատարակվում նաև Վանում, Նիկոմեդիայում, Մոսկովում և Սեբաստիայում:

Արևմտահայերի լուսավորական և ազգային-ազատագրական շարժումը նոր թափ է ստանում, երբ այդ շարժման գրովս է կանգնում ղեմնորդական ինտելիգենցիան: 1850—1860-ական թվականներին հանդես է գալիս արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչների մի ամբողջ պլեադա՝ Նիկողայոս Զորայան, Նահապետ Ռուսինյան, Նտեֆան Ոսկանյան (Ոսկան), Հարություն Սը-

վաճյան, Մաթևոս Մամուրյան, Գաբուստ Կոստանդյան, Մկրտիչ Պեշիկթաշյան, Հովսեփ Երզնանյան (Մերենց), Գրիգոր Զիլինկիրյան, Արմենակ Հայկունի (Ճիզմեճյան) և ուրիշներ: Այս գործիչների մեծ մասը կրթություն էին ստացել Արևմտյան Եվրոպայում, մոտիկից ծանոթացել Եվրոպայի հասարակական-քաղաքական կարգերին ու կուլտուրային, ուսմանք էլ անմիջական մասնակցություն ունեցել 1848 թվականի ֆրանսիական ռեյոլյուցիային: Եվրոպական կրթություն ստացած, ֆրանսիական լուսավորիչների ու 1848 թվականի ռեյոլյուցիայի գաղափարներով համակված երիտասարդ այդ գործիչները, բնական է, չէին կարող հաշտվել թուրքական հետամնաց կարգերի և հայ կղերա-ամիրայական ռեակցիոն տարրերի հետ:

Մինչև 1850-ական թվականները արևմտահայ կյանքում կղերա-ամիրայական վերնախավը դեռևս տիրապետող դիրք էր զբաղում: Կոստանդնուպոլսում, որտեղ ավելի քան 200 հազար հայ կար և արևմտահայ կուլտուրայի ամենախոշոր կենտրոնն էր, ազգային գործերի անօրինությունը դեռևս շարունակում էին իրենց ձեռքում պահել սուլթանական կառավարությունը հյու հնազանդ կղերա-ամիրայական տարրերը: Ծիշտ է, Պոլսի հայ արհեստավորների (էսնաֆների) և ղեմնորդատական մյուս խավերի համառ պայքարի շնորհիվ ամիրանները հետզհետե կորցրել էին իրենց երբեմնի ազդեցությունը, բայց պայքարը դեռ շարունակվում էր: Առաջադիմական ու ռեակցիոն ուժերի միջև պայքարը գնում էր հայ կյանքի հուզող հասարակական-քաղաքական, կուլտուր-կրթական ու եկեղեցական մի շարք հարցերի շուրջը:

1850—1860-ական թվականներին պայքարն առանձնապես սրվեց այսպես կոչված «Ազգային սահմանադրության» շուրջը, որը մշակել և 1857 թվականին Պոլսի հայոց ազգային ժողովին էին ներկայացրել ն. Ռուսինյանը, Ս. Վիչենյանը, Գ. Օսյանը և ուրիշներ: Ազգային սահմանադրությունը ուղղված էր կղերա-ամիրայական վերնախավի դեմ: Նրա նպատակն էր կղերա-ամիրայական ռեակցիոն տարրերին գրկել ազգային գործերի կառավարման մեծաշունչ իրավունքներից, ինչպես Միքայել Նալբանդյանն է ասում, ազատելով ազգը մի քանի բռնակալ բշվառականների լծից: Ազգային սահմանադրությունը կոչված էր նաև արևմտահայերի իրավունքները պաշտպանելու բուրժուական իշխանությունների ու պաշտոնյաների կամայականություններից:

Աղգաչին սահմանադրութեան դեմ վատադի պայքար սկսեցին կղերա-ամիրայական ռեակցիոն տարրերը: Արեւմտահայ ռեակցիա- յի պարագլուխ Հովհաննէս Չամուռեանը (Տերտենց) և նրա «Ներ- վակ» թերթը ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում Աղգաչին սահ- մանադրութեանը տապալելու համար: Սահմանադրութեան կողմնա- կիցները և հակառակորդները, սահմանադրականները ու հակասահ- մանադրականները, երկու բանակի բաժանված, տարիներ շարու- նակ անհաշտ պայքար էին մղում միմյանց դեմ: Սուլթանական կա- ոսավարութեանը, ինչպէս միշտ, պաշտպանում էր կղերա-ամիրայա- կան ռեակցիոն տարրերին:

«Աղգաչին թշվառութեան» հողվածում Մ. Նալբանդյանը խոսե- լով արեւմտահայերի սահմանադրական պայքարի մասին, գրում է. «Ծանր և համարաշարժ էր աղգաչին լուսավորութեան ընթացքը Տաճկաստանի մեջ և այդ ընթացքն ևս անհիմն և սայթաքելի. հայտ- նի է, թե այն թշվառ հանգամանաց մեջ տարիշ կերպ չէր ևս կարող լինել: Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ո՛հ քաշելով եկան գնացին, շատ իրավունք տանակոխ ևեղան, շատ գանձեր հա- փըշտակվեցան, շատ տուներ քարոքանդ եղան, մինչև որ ստրանից մի քանի տարի առաջ «Սահմանադրութեան» բարը մեր աղգաչինք արտասանեցին:

Սահմանադրութիւն, կրկնեց հարստահարված և կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրութիւն, լավեցավ եզրիպտական բուրգե- րից մինչև վերագա սարը, Սահմանադրութիւն, աղաղակեցին և հրճվեցան կենդանի երիտասարդները...

Սահմանը դրվեցավ: «Կեցցե՛ Սահմանադրութեան բե-

րանից»,— ասում է Նալբանդյանը,— երբ «յուրեանց խավարային որջերից» դուրս սողացին ազգի արշուճով յուրեանց քիթ տ պոռնու- կը ներկած բռնակալները և աղաղակեցին՝ «Ի՛նչ ասել է Սահմա- նադրութեան, տերութեան մեջ տերութեան կանգնեցնելը», «ազգը սպր անհավատ ընել... տերութեան դեմ ապստամբեցնել»: «Ազգի դավաճանների համար ամեն հնար սուրբ էր և շուն կարելի էր մա- տաղ առնել, միայն թե Սահմանադրութեանը կործանվեր»¹: Այնուհե- տև նկարագրելով Աղգաչին Սահմանադրութեան շուրջը ծավալված սուր պայքարը, Նալբանդյանը գրում է. «Երևեցան կուսակցութեանք,

Սահմանադրութեան պաշտպանք և թշնամիք հառաչընթացք և հետ- ընթացք, լուսավորչալ և խավարչալ»¹:

1860 թվականին Սահմանադրութեան կողմնակիցները, համառ ու տեսական պայքարից հետո, հաղթանակ տարան: Պոլսի հայոց ազգային ժողովը հաստատեց Սահմանադրութեանը: Դա մեծ իրա- բանցում առաջ բերեց Սահմանադրութեան թշնամիների մեջ: Նրանք դործի անցան պատրիարքարանի ու կառավարութեան միացյալ ջանքերով Սահմանադրութեանը խափանելու համար: Ի պատաս- խան դրա, Սահմանադրութեան կողմնակիցները 1861 թ. հուլիսին Պոլսի փողոցներում մեծ ցույց են կազմակերպում, ներխուժում են Գում-Գափու թաղամասի հայկական եկեղեցին, սրտեղ կատաղի ընդհարումներ են տեղի տնենում սահմանադրականների և հակա- սահմանադրականների միջև: Երկրորդ խոշոր ցույցը Պոլսում սահ- մանադրականները կազմակերպում են 1862 թ. օգոստոսի 1-ին՝ ներխուժում են պատրիարքարան, պահանջում են անհապաղ գոր- ծադրել Սահմանադրութեանը: Պոլսահայ դեմոկրատիայի այս ցույ- ցերը, երկու դեպքում էլ, ցրվում են ոստիկանութեան ու զորքի միջամտութեամբ: Պոլսահայ սահմանադրականների բողոքի այս ցույցերը նկատի ունի Մ. Նալբանդյանը, երբ գրում է. «Աղաղակեց հասարակ ժողովուրդը, հեղեղի պես վազեց նորա հոսանքը դեպի պատրիարքարան, ուր հակառակ ազգի կամբին և ընդդեմ Սահմա- նադրութեան, ազգի թշվառութեան պարտավորքը վերստին հավաք- վել էին յուրեանց սովորական խաղը խաղալու և ազգն ևս խաղալիք շինելու, ազգը ցրվեց այդ ավազակաց ժողովը և զլաթոսս աղանե- վաճառացն և զսեղանս հատավաճառացն կործանեաց»²:

Սահմանադրական պայքարին ակտիվ կերպով մասնակցում էին նաև արեւմտահայ դեմոկրատները: Հ. Սվաճյանի «Մեղու»-ն, Կ. Փանոսյանի «Մյուստի»-ն, Զմյուռնիայի դեմոկրատների օրգան «Մաղիկ»-ը տոն էին տալիս հակասահմանադրական ռեակցիոն ուժերի դեմ սահմանադրականների մղած պայքարին: Պաշտպանե- լով Աղգաչին Սահմանադրութեանը, Սվաճյանը գրում էր. «Ժողո- վուրդը արդեն շատուց ձանձրացած է շատ տեղ փրեկնց վրա միմիայն իրենց հարստութեան տեժովը իշխանութեան բանեցնելու ելնող ան- ձերտն վարմունքին. և չէ թե միայն ձանձրացած՝ այլ և անոնց հա-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 104:

² Նույն տեղում, էջ 105:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 103—104:

ըրտահարություններն ու անիրավություններն հոգին ալ բերանն է եկած»¹: Չէր սխալվում Նալբանդյանը, երբ ասում էր, թե. «Մեզուն ի բնն անտի Մասմանադրության պաշտպան և Սասմանագրական վարչության շատագույլ լինելով, չէր կարող երբեք ընդդեմ վարվել բուն Սասմանադրության»²:

Արևմտահայերի Ազգային Սահմանագրությանը կողմնակից էին և սահմանադրական շարժումը շարժումն էին պաշտպանում էին արևելահայ և արևմտահայ բոլոր պրոգրեսիվ ուժերը: Սասմանադրության դեմ էին հայ փրակառուցյան մեջ գործող բոլոր ռեակցիոն տարրերը: Իր ժամանակի պատմական կոնկրետ պայմաններում, արևմտահայերի սահմանադրական շարժումը պրոգրեսիվ շարժում էր, նա ուղղված էր ռեակցիոն ուժերի, ազգային և օտար բռնակալների դեմ: Պատահական չէ, որ ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանը, քննադատելով հանդերձ լիբերալ սասմանադրական-նեոֆին, պաշտպանում էր Սասմանադրությունը: «Այսօր գրեթե մի տարի է, — գրում է 1864 թվականին Նալբանդյանը, — որ Սասմանադրությունը վավերացավ տերություն հրովարտակով³. ստույգ է, թվատված, ստույգ է այս և այն մասնով խեղացած, այնուամենայնիվ մի Սասմանադրություն, որ ազգի կառավարությունը տալիս է հասարակաց ազգի ձեռքը, ազատելով նորան մի քանի բռնակալ թշվառականների լծից:

Հյուսիսափայլը հանդիսաբար հայտնում է յուր առ ի սրտն շնորհակալությունը Սասմանադրության օգտի համար հայտնի և անհայտ կերպով աշխատողներին⁴ (Հյուսիսափայլին թվում է, թե անհայտ աշխատողքը ոչ պակաս դոմինանց յուրեանց արդյունավորություններ, քան թե հայտնիքը), Հյուսիսափայլը շնորհակալ է լինում ազգի ընդհանրության առաջն մեծարու Աերվիչենից»⁵:

Այս բոլորից հետո, իհարկե, չի կարելի համաձայնվել այն հեղինակներին հետ, որոնք վերանայում պատմական փրակառուցյունից,

թերագնահատում են արևմտահայերի Ազգային Սասմանադրությունը, համարելով այդ «ազգային-եկեղեցական կարկատան», «ազգային-եկեղեցական կանոնադրության պոչից կպցրած մի պիտակ» և կամ «սոցիալ-քաղաքական ոչ մի լուրջ հարց չշոշափող», «աննշան հարցերի վերաբերող թղթի կտոր»:

Արևմտահայերի սասմանադրական շարժումը 1850—1860-ական թվականներին ազգային-դեմոկրատական շարժման խոշոր արտահայտություններից է: Այդ շարժումը լայն արձագանք դրավ ոչ միայն արևմտահայերի, այլև մեր ժողովրդի մյուս հատվածների մեջ: Մեր պրոգրեսիվ մամուլը, հրատարակատուներն ու գրողները ակտիվ մասնակցություն են ունեցել այդ շարժմանը, յուրաքանչյուր չէր լինի այդ ամենը դիտել տրպես պարսպ վախտի խաղալիք, ռեակցիոն երևույթ, լուկ պատրանք կամ թղթի կտոր:

Մենք որևէ չափով հակված չենք գերագնահատելու արևմտահայերի Ազգային Սասմանադրության դեմն ու նշանակությունը և առհասարակ դեմ ենք պատմական դեպքերի ու դեմքերի միակողմանի, տենդենցիոզ գնահատությանը: Պատմաբանը պետք է լինի անաչառ և արդարամիտ: Տակավին 1944 թվականին գնահատելով արևմտահայ սասմանադրական շարժման դրական, պրոգրեսիվ նըշանակությունը, մենք քննադատել ենք այդ շարժման ինչպես թերագնահատման, այնպես էլ գերագնահատման տենդենցները: Մենք այն համոզմանն ենք եղել, որ արևմտահայերի ազգային Սասմանադրությունը իսկական պետական Սասմանադրություն-կոնստիտուցիա չէր, և չէր էլ կարող միապետական Թուրքիայի լծի տակ գտնվող իրավագուրկ ժողովուրդը կոնստիտուցիա ունենալ: Դա արևմտահայերի ազգային ներքին գործերին վերաբերող մի կանոնադրություն էր, որին ազգային սասմանադրություն կոչեցին և այդպես էլ մտել է պատմության մեջ: Ուսումնասիրողներից տմանք այս երկու հասկացողությունները հաճախ շփոթում են, ուստի և չեն կարողանում ճիշտ գնահատել պատմական փաստերը:

Արևմտահայերի սասմանադրական շարժումը միատարր շարժում չէր: Այդ շարժմանը մասնակցում էին կղերա-ամիրայական վերնախավից ու սովթանական կառավարությունից դժգոհ գանադան սոցիալական խավեր, տարբեր հասարակական-քաղաքական հայացքներ ունեցող մարդիկ: Շարժման մասնակիցների մեջ կային չափավոր ու արմատական, լիբերալ ու դեմոկրատական տարրեր:

¹ «Մեղու», 1860, № 97, էջ 102:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 110:

³ Ազգային Սասմանադրությունը բարձրագույն դուրս վավերացնում է 1863 թ. մարտի 17-ին, երկար ձգձգումներից ու խիստ կրճատումներից հետո:

⁴ Մեզ թվում է, որ Նալբանդյանն այստեղ նկատի ունի արևմտահայ դեմոկրատներին, հատկապես Հ. Սվաճյանի ու նրա «Մեղվին», որոնք, ինչպես նա էլ ասում, «մահու չափ ճգնեցան Սասմանադրությունը պաշտպանելու»:

⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 106:

1850-ական թվականներին, պայքարի առաջին էտապում, լիբերալ-բուրժուական սահմանադրականներն ու դեմոկրատները ընդհանուր ճակատ էին կազմել գլխավոր թշնամու՝ Սահմանադրության հակառակորդների դեմ: Պայքարի երկրորդ էտապում, 1860-ական թվականներին, երբ լիբերալ-սահմանադրականները փաստորեն իրենց ձեռքն էին վերցրել ազգային մարմինների ղեկավարությունը, վախեցած դեմոկրատական շարժումների ծավալումից և դեմոկրատ գործիչների ազդեցության տարածումից, թեքվեցին ավելի աջ և նույնիսկ սկսեցին ձևավորել գործադրել իրենց երեկվա զինակիցների վրա:

Լիբերալ-սահմանադրականների քաղաքական այս նոր կուրսն է ահա, որ խստությամբ քննադատում էր Նալբանդյանը, իր պաշտպանության տակ առնելով մարտնչող սահմանադրական Սվաճյանին և արևմտահայ մյուս դեմոկրատներին: Խոսելով Սահմանադրությամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրված Սերվիլչենի գործունեության մասին, Նալբանդյանը գրում է. «Հյուսիսափայլը... ամենևին միտք չունի դատապարտել այն պարոնաչքը, որ նստած էին այնտեղ, որպես սահմանադրասեր: Հյուսիսափայլը անարդարություն է համարում ուրանալ պ. Սերվիլչենի աշխատությունը. Հյուսիսափայլը մինչև անգամ հակամիտ է կարծել, որ առանց այդ արգո պարոնին, Սահմանադրության վտանգը կարող էր գուցե ավելի ծանրանալ. բայց Հյուսիսափայլը չէ կարող գովել այն թուլությունները և զիջողությունները, որ արգո պարոնը շնորհում էր խավարյալների կողմին. Հյուսիսափայլը չէ կարող ուրախություններ հիշել, երբ պ. Սերվիլչենը, որպես միակ հույս սահմանադրասիրաց, չկամեր գործ դնել յուր բոլոր ազդեցությունը լիամասն կերպով»¹:

Այնուհետև քննադատելով Ազգային վարչության անտարբեր վերաբերմունքը գավառների բնակչության նկատմամբ, Նալբանդյանը դրվատում է Սվաճյանի «Մեղվին», որը, ինչպես նա է ասում, «գավառ շթողեց, քաղաք շթողեց, գեղ շթողեց, թաղ շթողեց, ամեն ծակ ու ծով մտալ ելալ», ազգի վիճակը նկարագրեց, իսկ Ազգային վարչությունը փոխանակ նրան պաշտպանելու, հալածում է: «Երիտասարդները և Մեղուն, որ մահու շափ ձգնեցան Սահմանադրությունը պաշտպանելու, պիտի տեսնեն այսօր, որ նոցա պաշտպանած Սահմանադրության գործադիրը Սահմանադրության թըշ-

նամինների վաղեմի ցանկությունը կատարելու համար արտասանման բուսակալությամբ վարվում են Մեղվի հետ, որ է երիտասարդների և կենդանի ժողովրդի մալուր բերանը, ազգի ցավերի և ուրախությունյան ճշմարտապես հայտարարը»¹:

Միանգամայն օբյեկտիվորեն գնահատելով սահմանադրական գործիչների կատարած դերը, Նալբանդյանը նրանց քննադատում էր Սահմանադրությունը դերագնահատելու, այն եվրոպական ժողովուրդների պետական Սահմանադրությունների հետ համեմատելու տենդենցները: Նալբանդյանի համար պարզ էր, որ սուլթանական միահեծան կարգերում, որտեղ թուրք ժողովուրդն ինքը գտրվ էր սահմանադրությունից, չէր կարող լծի տակ գտնվող իրավագույրի, ձնշված ժողովուրդը սահմանադրություն ունենալ, այդ բառի բուն իմաստով: Հենց դրա համար էլ նա գտնում էր, որ ճիշտ չէ Ազգային կանոնադրությունը «Կոնստիտուցիա» կոչել՝ «մի անուն, որ անիմաստ է թե՛ հայ ազգի և թե՛ այս կանոնադրության իսկ վերաբերմամբ»²:

Այդպիսին էր, ահա, Նալբանդյանի դիրքը արևմտահայերի Ազգային Սահմանադրության նկատմամբ: Նա արևմտահայ դեմոկրատների հետ միասին պաշտպանում էր Սահմանադրությունը, որպես մի միջոց՝ ազգը կղերա-ամիրայական և սուլթանական բռնակալների լծից ազատելու, ժողովրդի ծանր դրությունը թեթևացնելու համար: Նա, արևմտահայ դեմոկրատների հետ միասին, քրոնադատում էր լիբերալ-սահմանադրականներին, նրանց երկդիմի, անվճռական և հակադեմոկրատական վարքագիծը, պահանջում էր պայքարի գնով ձեռք բերված, թեկուզ և սուլթանական կառավարության կողմից թլպատված ու խեղացված, Սահմանադրությունը գործադրվի ոչ թե ազգի մի փոքր մասի, այլ ժողովրդական լայն զանգվածների օգտին: Նալբանդյանի այդ դիրքորոշումը բխում էր նրա ուսույցիտն-դեմոկրատական հայացքներից, արևմտահայ դեմոկրատիայի սոցիալական և ազգային-ազատագրության շահերից: Պուսի և Զմյուռնիայի հայ կյանքում խմորվող բուսակալական ու ազգային-ազատագրական շարժումները լայն արձագանք էին գտնում հայ ժողովրդի գրեթե բոլոր հատվածներում, առաջին հերթին արևմտահայ գավառներում: Սահմանադրական շարժումը, ինչ-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 107:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 353:

պես նալբանդյանն է նկատում, հասել էր մինչև Վարազա սարը, «հասարակաց ազգի բոլորը մինչև երկինք»։ 1840—1860-ական թրվակհանների լուսավորչների ու դեմոկրատների հայրենասիրական ու ազատագրական պրոպագանդան արթնացրել էր ժողովրդին։ Զեյթունում, Սասունում, Վանում, էրզրումում, Չարսանջակում, Սեբաստիայում և այլուր ծայր էր առել ազգային-ազատագրական շարժումը դարավոր կեղեքիչների դեմ։

Այս շրջանի հայ ազատագրական շարժումներից ամենանշանակալիցը 1862 թվականի Զեյթունի ապստամբությունն էր։ Զկարողանալով տանել թուրքական կառավարության և Մարաշի փաշաների վայրագ ճնշումներն ու հալածանքները, զեյթունցի մի բուն հայ քաջերը զենքի են դիմում և խայտառակ պարտության մատնում Զեյթունի վրա արշաված Ազիզ փաշայի ավելի քան 10 հազարանոց բանակին։ Զեյթունի հերոսական ապստամբության լուրը մեծ ոգևորություն է առաջ բերում հայ ժողովրդի մեջ։ Դեմոկրատական մամուլը, առաջավոր գրողներն ու հասարակական գործիչները բարձր են գնահատում զեյթունցիների սխրագործությունը։ Ս. Շահազիզը և Մ. Պեշիկիշյանը բանաստեղծություններ են ներվիրում Զեյթունի ապստամբությանը։ Ս. Շահազիզը այդ ապստամբությունը համարում է «նայկական քաջասրտության փառավոր ապացույց»։ Ժողովրդա-ազատագրական այդ առաջին խոշոր զինված ելույթը թուրքական լծի դեմ, ոչ միայն ժամանակակիցների, այլև հետագա սերունդների համար դառնում է ազատասիրության ու հայրենասիրության մի վառ, ոգեշնչող օրինակ։

1850—1860-ական թվականներին կղերա-ֆեոդալական ռեակցիոն տեղումնայն դեմ մղված պայքարում աճում ու ձևավորվում է արևմտահայ դեմոկրատական ուղղությունը։ Այդ ուղղության աչքի ընկնող ներկայացուցիչներից էին՝ Ստ. Ոսկանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Գ. Զիլինկիրյանը, Ա. Հայկունին, Կ. Փանոսյանը և ուրիշներ։ Դեմոկրատական-պրոգրեսիվ տեղումնայն օրգաններն էին՝ «Մեղու», «Արևելք», «Արևմուտք», «Ծաղիկ» և ուրիշ պարբերականներ։

Արևմտահայ դեմոկրատներից Ստեփան Ոսկանն (1825—1901) առաջիններից էր, որ պայքարի դրոշ բարձրացրեց հայ կղերա-ֆեոդալական ռեակցիայի դեմ և ժողովրդին լուսավորության ու ազատության կոչ արեց։ Փարիզի Սորբոնի համալսարանի ուսանողական տարիներին Ոսկանը մոտիկից ծանոթանալով XVIII դարի

Ֆրանսիական լուսավորչների և իր ժամանակի ռևոլյուցիոն գաղափարների հետ, համակվում է այդ գաղափարներով ու ակտիվ մասնակցություն ունենում 1848 թ. փետրվարյան ռևոլյուցիային։

«Փետրվարի ազատության առաջին տրոտումը, — ասում է նա, — մեր վրայն արևելյան քերական մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզի մեջ նետեց։ Այո՛, Լուի Ֆրիպիին դեմ ապստամբողներու հետ էինք, այո՛, ըրինք ազատության համար, ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թյուլլրի մտնելու պատիվը ունեցանք»¹։ Մի այլ տեղ նա գրում է. «Այո՛, ապստամբ ենք, այսինքն 89 վեհ թվականը կսիրենք հոգով և մարմնով... Մարդու խիղճը, միտքը, իրավունքը ապստամբությունով ազատություն գտեր և աշխարհք մտեր են. ընդհանուր պատմություն կվկայե զայս»²։ 1849 թվականի Փարիզի հունիսյան ցույցերի ժամանակ նա ընթանում էր հաղարավոր բազմության առջևից, դրոշակը ձեռքին, որի համար 6—7 ամիս բանտ է նստում։

1855—1856 թվականներին Փարիզում Ոսկանը հրատարակում է «Արևելք», իսկ 1859—1865 թվականներին «Արևմուտք» պարբերականները, որոնք ունեին առաջադիմական տեղումնայն և աչքի ընկնող դեր կատարեցին հայ ժողովրդի լուսավորական ու ազատագրական շարժման զարգացման գործում։

Ֆրանսիական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի և Իտալիայի ազգային-ազատագրական շարժումների ազդեցության տակ, Ստ. Ոսկանը համարձակ կերպով քննադատում էր հայ ժողովրդի ներքին և արտաքին թշնամիներին, պաշտպանում նրա, ինչպես և բոլոր ազգերի, ազատության ու անկախության իրավունքը։ «Ուր և գտնվինք, ազատության հետ պիտի մնանք և բնությունը չպիտի սիրենք երբեք, թե Հայերուն և թե Օտարներուն մեջ»։ «Մենք որ ազգերու իրավունքը և անկախությունը կը սիրենք, մենք որ ազգերու հավասարությունը կը պաշտպանենք մարդկության մեջ, կատենք Մեթեթնիկի դրությունը իբրև անհիմն և անիրավ քաղաքավորություն, և, կարծենք, պարտավորություն իսկ ոմնինք ատելու վասն զի ողորմելի և կիսամեռ ազգի մը անդամ կը գտնվինք այս

¹ «Արևմուտք», 1859, № 17, էջ 131—132. «Քանչորս ստություն» հոդվածը։

² «Արևմուտք», 1859, № 20, էջ 159։

երկրի վրա»¹: Մի տրիշ տեղ նա գրում է. «Մարդկային ազատությունը կենթարկեալ ամեն ժողովուրդներու ինքնիշխանությունը, և այսօր եվրոպայի տոհմերը կաշխատին օտարոտի լուծեքը խզել...: Մեծ ապստամբության ոգին և տեսիլները շմեռան ուրեմն, իրենց հեղինակները միայն ինկան...»²:

Խոսելով Իտալիայի ազգային ազատագրական շարժման մասին, Ոսկանը գրում է. «Զիտալիա կսիրեինք, միշտ սիրեք ենք. Իտալիա իր արչունաթաթավ ճակատով միշտ երևած է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու: Այս սերը և ազատության ավյունը զմեզ թշվառության մեջ գլորեցին... Հայաստանի ավերակայաց վիճակը իր զավակներու վրա պարտք կրնե թշվառ ժողովուրդներու կարեկցիլ: Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությանը միայն կրնան վերականգնիլ: Ո՛վ գիտե, գուցե օր մը Իտալիայի զավակ մը մեր գերության և թշվառության դեմ բողոքե, Կնչպես մենք իրեն համար բողոքելու գորությունը ունեցանք...»³: «Իտալացի՛ք, աշխարհիս ցույց կուտաք,— գրում է նա 1859 թվականին,— որ մի և անկախ հայրենիքի արժանի եք. պիտի հիշվիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բժշկե: Փառք ձեզի»:

Ստ. Ոսկանը անողոք կերպով մերկացնում է կղերա-ֆեոդալական ռեակցիոն ուղղության պարագլուխներ Այվազովսկուն, Չամուռճյանին և մեր ժողովրդի մյուս բոլոր ներքին թշնամիներին: Պաշտպանելով այն ճիշտ տեսակետը, որ «ազգի թշվառության պատճառը միշտ օտարականները չեն», նա գրում է. «Մեր ազգի արտաքին թշնամիները բազմաթիվ և ահարկու են արդարև, այլ ներքին թշնամիները ավելի վնաս կուտան և մեր էությունը ուղակի կսպառնան հիմա և եթե դարման չի տարվի հայ անունը լիաջինջ պիտի բառնան երկրի երեսե»: Խոսելով Խ. Աբովյանի «Կերբ Հայաստանի» վեպի մասին, որտեղ ուսմիկ ժողովրդի կյանքը, քաջությունն ու վրեժխնայունն է արտացոլված, Ոսկանը մեծ դեմոկրատի անմիջական ազդեցության տակ գրում է. «Աբովյանին այս ընտրությունը իր անձը կատարելապես կը հայտնե և մեր համակրությունը բոլորովին կզբաղե: Ժամանակը եկավ, որ հայ ռամիկն ալ զգա, որ իր սամկությունովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողո-

վուրդներն վար շմնար թե՛ ազգային և թե՛ օտարազգի բռնավորներու դեմ դինելու ատեն»¹:

Ստ. Ոսկանը ատում էր սուլթանական և ցարական միահեծան կարգերը, ժողովրդին զենքի էր կոչում այդ կարգերի դեմ: «Ողորմելի՛ հայեր, շաքաճներու բերան ինկեր եք և ձեր հայրենակիցք Այվազներու խնկաման շնորհելու ետեև են տակավին: Վառողի ամառ պետք է, խնկաման կպատրաստեն: Վա՛յ Հայկին թոռերը, վա՛յ»²: Խոսելով Թուրքիայում տիրող բռնությունների ու հարստահարությունների մասին, նա գրում է. «հայ բազմությունը որս կը սեպվի օսմանյան պաշտոնավորն մը... ողբամ զքեզ թուրքաց աշխարհ»:

Ոսկանը ձգտում էր հայ ժողովրդի մեջ վառել ազատասիրության, հայրենասիրության և լուսավորության ջահը, բարձրացնել նրա ազգային ինքնագիտակցությունը: Մեր ազգը պետք է ճանաչի ու պաշտպանի իր պատիվը, ասում էր նա: «Ազգը կրոնի տակ դրնել, նշանակում է սուրանալ այն», «ստրկության մեջ լուսավորություն չի կարող լինել», «Հայաստանեն դուրս հայերուն լուսավորություն չկա» և այլն, ահա այն առաջավոր դադափարները, որ նա անդուլ կերպով սերմանում էր ժողովրդի մեջ: Ոսկանը պաշտպանում էր մեր ժողովրդի ու մեր լեզվի միասնության գաղափարը: Կեզվի միությունը ազգի խարխուհն է, ասում էր նա:

Ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, Ոսկանը XIX դարի կեսերի հայ հասարակական-քաղաքական առաջավոր մտքի աշխի բնկնող ներկայացուցիչներից էր և խոշոր դեր կատարեց հայ լուսավորական ու ազատագրական շարժումների զարգացման գործում: Նա իր արժանի տեղն ունի այդ շարժումների պատմության մեջ: Պատահական չէ, որ Մ. Նալբանդյանը նրան անվանել է «ազատախոս հեղինակ», «մեծ հայ» և այլն: Սակայն, Ոսկանը միշտ շմնաց այդ բարձրության վրա: Իր կյանքի ու գործունեության երկրորդ շրջանում նա գաղափարական կրախ ապրեց և կանգնեց լիբերալ դիրքերի վրա:

Արևմտահայ դեմոկրատիայի ամենահետևողական և փայլուն դեմքերից էր Հարություն Սվանյանը (1831—1874): Նա Պոլսի Խասպուլի աղքատ ընտանիքի զավակ էր. իր մանկությունն անց

¹ «Արևմուտք», 1859, № 13, էջ 101:

² «Արևմուտք», 1859, № 20, էջ 159:

³ «Արևմուտք», 1859, № 17, էջ 132:

¹ «Արևմուտք», 1859, № 7, էջ 55:

² «Արևմուտք», 1859, № 14, էջ 109:

էր կացրել «հասարակ մարդկանց» շրջապատում, մտտիկից ծանոթացել նրանց շարքաշ վիճակին: Տակավին երիտասարդ հասակում մտնելով հասարակական կյանքի ասպարեզ, Սվաճյանն Կրենն նվիրում է հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությանը: 1856—1872 թթ. նա խմբագրում է «Մեղոս» թերթը, որը արևմտահայ ամենադեմոկրատական թերթն էր, ինչպես Մ. Նալբանդյանն է ասում՝ «երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազդի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»:

Սվաճյանի «Մեղոսն» նկարագրում էր հայ ժողովրդի ծանր դրությունը, համարձակ կերպով քննադատում ու մերկացնում ազգային և օտար կեղեքիչներին: «Մեղոսն» անխնայ կերպով խայթում էր կղերա-ֆեոդալական հոսանքի պարագլուխներ Չամբուճյանին, Ալվազովսկուն, պատռում Պողոս վարդապետի, Իգնատևոսի և նըմանների դիմակը: Սվաճյանը մարտնչող հրապարակախոս էր, դեմոկրատիայի շահերի հավատարիմ պաշտպան: «Հայոց Դեմոկրիտն ես,— գրում է նրա մասին արևմտահայ նշանավոր դեմոկրատ Մ. Մամուրջանը:— Բայց չէ թե անզգա, մարդատյաց Դեմոկրիտն, այլ հրահանգիչ, մարդասեր անձ մ'որո հողին հայերու վշտաց վրա լալու ատեն՝ շրթունքն անոնց թերությունց վրա կծիծաղին, գրիչը մոլություններ կհարվածն և մոլիները տարտարոս կղրկեն... Ժողովրդյան զավակ և աղետիցը թարգման, բռնության թշնամի և ազատության լուսամիտ և անվեհեր կուսակից, դու շատ ծանրակրճի, դառն ու փափուկ ժամանակներ խնդալով, խոսելով՝ Սահմանադրության դրոշակներն ես եղեր, կնձոտո խնդիրներն ես լուծեր, երկշտ սիրտերու քաջալեր ես տվեր, ազգային հառաջադիմության նոր թոխք մը, վարչության հրահանգ ու սարսափ»¹:

1850-ական թվականներին Սվաճյանը, Ռուսիայի և Օտյանի հետ միասին, ակտիվ մասնակցում վր սահմանադրական շարժմանը: Նա պահանջում էր սահմանադրական սկզբունքով, գաղտնի, ընդհանուր քվեարկությանը, ազատ ու անկախ ընտրություններով, ազգային մարմիններ ատեղծել և դրանով իսկ վերջ դնել կղերա-ամիրայական վերնախավի բռնություններին ու կամայականություններին: Սվաճյանը, մասնավոր սկզբնական շրջանում, մեծ հույսեր էր կապում Ազգային Սահմանադրության հետ: Սահմանա-

դրությունը նա համարում էր ազգային ամենայն բարօրության աղբյուր: «Սահմանադրության համար եվրոպայի մեծ ազգերը արյուններ թափեցին, մեծամեծ կորուստներ ըրին, տարիներով աշխատեցան և հազիվ ամոնցմե մեկ քանին այսօր հաջողած են անոր արդյունքն ու շնորհները վայելելու: Անպղիա, Պեճիգա և Զվիցերիա կատարյալ կերպով ունին շատ նեղություններն ետև այսօր՝ ազգային սահմանադրություն մը և Ֆրանսա տակավին չը կրցավ ձեռք բերել ասի՝ թեպետ քանի-քանի աշխարհ թնդացնող հեղափոխություններով ստացավ առժամանակյա վայելչությունն անոր: Հայեքը այսօր ահա առանց արդյունահեղության կընդունին դանի»¹:

Ոգևորված Ազգային Սահմանադրությամբ և սահմանադրական պայքարի հաջողություններով, Սվաճյանը, ինչ խոսք, գերազանցատում էր նրա դերը: Այդ համոզումն էր, որ նրան համառ ու հետևողական պայքարի էր հանել Սահմանադրության հակառակորդների դեմ: Թեևս ոչ ոք այնքան եռանդուն չէր պաշտպանում Սահմանադրությունը, որքան Սվաճյանն ու նրա «Մեղոսն»: Բայց այդ, ինչպես նշել ենք, երկար չտևեց: Լիբերալ սահմանադրականների շրջադարձից, դեմոկրատների և մասնավորապես Սվաճյանի ու «Մեղովի» դեմ գործադրած նրանց բռնություններից հետո դրությունը հիմնովին փոխվեց: Սվաճյանը և մյուս արմատական դեմոկրատները համոզես եկան լիբերալ սահմանադրականների կոմպրոմիսներին ու հակադեմոկրատական քայլերի դեմ, պահանջելով Սահմանադրությունը գործադրել իր բուն նպատակի՝ ազդի կարիքների օգտին:

Կրնելով ջերմ հայրենասեր ու ժողովրդասեր, Սվաճյանը «Մեղովի» էջերում պաշտպանում ու պրոպագանդում էր Հայաստանի ազատության, միավորման ու առաջադիմության գաղափարը: Նա խիստ կերպով դատապարտում էր հայ լուսավորչականների, կաթոլիկների ու բողոքականների «կրոնական անմիտ ու ազգապործան» վեճերը և ազգային միասնության կոչ էր անում: Ողջունելով Մ. Նալբանդյանի գալուստը Կ.Պոլիս, Սվաճյանը գրում է. «Ուշախ նեք դարձյալ մենք ալ, դի պ. Նալբանդյան մեր մեջը Ռուսիտ լուսավորչալ ազգայնոց ներկայացուցիչն է և անշուշտ իր դարձին պիտի պատմե իր հայրենակցացը, թե ինչպես Հայերը հոս անքուն կմնան. մեր իղձերն ու ջանքերը անոնց հասկցնելով զանոնք ալ մե-

¹ Հայկական նամակների, գրեց Վրույր (Մ. Մամուրջան), Զմյուռնիա, 1872, էջ 260:

¹ «Մեղոս», 1860, մայիսի 30, № 99, էջ 113:

զի գործակից ընկելու պիտի աշխատի, սրպեսզի միևնույն հողի վրա եթե չը կրնանք միանալ, դո՛նե միանանք սրտով ու տենչանոք, երկրով ու կրօնքով վարատական հայքս, և օր մը աշխարհ տեսնե, թե հայ ազգ մը կա, որ թեև ցրված ու աստանդական՝ այլ մի է բարոյապես և անրածանելի»¹:

Մի այլ տեղ խոսելով ազգի արհեստականորեն բաժան-բաժան արված հատվածների միավորման մասին, Սվաճյանը գրում է. «Իսրրս ազգաց վերակենդանության դարն է, և այս դարուս, այս տարիներուս մեջ ինք զինք չը հոգացող ազգը կերթա՞ ի կորուստ անգրտանելի և ի կործանում անկանգնելի... Միանանք ազգայնության փառավոր դրոշակին տակ, ի մի սիրտ և մի հողի հողչալ ամբացնենք, ստվարացնենք Ազգին արմատը, անանկ, որ ոչ հյուսիսի ցրտաշունչ ու թուփախիլ հովերը կարող ըլլան զանի ներկիր կործանելով անսր ճյուղերն ու տերեւները և պտուղները ցամփեցնելու, ցրվելու, ոտից կոխան ընկելու և ոչ հասարակածին վրայի կիզող արեւը կարող ըլլա զանի շորցնելով փոշի դարձնելու և զեփյտուններու անգամ խաղալիք ընկելու»²:

Սվաճյանը պայքարում էր օտարերկրյա բռնակալների՝ ցարիզմի ու սուլթանիզմի դեմ, երազում էր հայ ժողովրդին ազատ տեսնել ազգային ու սոցիալական ճնշումից: 1850-ական թվականներին նա հանդես եկավ իր ազգային-դեմոկրատական հայացքներով, սահմանադրական շարժման և ընդհանրապես հայ ազատագրական շարժման վերելքի շրջանում կանգնեց արմատական-դեմոկրատական դիրքերում, Նալբանդյանի հետ անձնական ու գաղափարական սերտ կապեր հաստատելուց հետո և նրա անմիջական ազդեցությամբ, Սվաճյանը մի շարք հիմնական հարցերում բռնեց իր ուսուցչի ուղին, դարձավ մեծ ուսուցիչին-դեմոկրատի հավատարիմ զինակիցը: Այսպիսին էր ահա Սվաճյանի շուրջ երկու տասնամյակ ընդգրկող հասարակական-քաղաքական գործունեության էվոլյուցիան:

Արևմտահայ դեմոկրատիայի աչքի ընկնող և փնթնատիպ ներկայացուցիչներից էր Մաքեա Մամուրյանը (1830—1901): Բազմակողմանի զարգացած և մեծ էրուրիցիայի տեր մարդ էր նա, փայլուն հրապարակախոս, գրչի վարպետ: Ստ. Ոսկանի, Հ. Մը-

վաճյանի և մյուս դեմոկրատ լուսավորիչների նման, նա իրեն նըվիրեց ժողովրդի ազատության ու առաջադիմության գործին և իր արժանի տեղը գրավեց նրանց համաստեղության մեջ:

1860—1870-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական հոսանքների միջև մղվող սուր պայքարում Մ. Մամուրյանը հանդես էր գալիս որպես դեմոկրատ, ժողովրդի շահերի պաշտպան: Հետևելով Ստ. Ոսկանին, տակավին երիտասարդ հասակում նա սուր պայքարի մեջ մտավ կղերա-ամիրայական հոսանքի դեմ: Իր կրակոտ լեզվով ու պատկերավոր ոճով նա ջախջախիչ քննադատության է ենթարկում Չամուռճյանին, Պալատադարյանին ու նրանց շուրջը համախմբված խավարամուլներին: «Կան նոր մարդիկ, որ դիակներու հետ կապեն, — գրում է նա, — ասոնք գիշերասեր կենդանյաց ցեղեն են: Առ մեկ ձեռքդ Արևելք և մյուս ձեռքդ Երևակ կամ Արշալույս: Չես փնտրեր թե պ. Ոսկանը քանի՞ տարեկան է, կամ պ. Չամուռճին և պ. Պալատադարը քանի՞ ճերմակ մազ ունին իրենց գլխին վրա: Գիտես արդեն, որ ամենքն ալ ժամանակակից են: Սակայն բաղդատե անոնց գովածքը, հանձարի, գրչի, սկզբունքի ինչ ահագին անջրպետ կգտնես մեկ կողմեն Արևելքին և մյուս կողմեն Երևակին և Արշալույսին մեջ: Ոսկանը քանի մը դար դեպ առաջ կապրի, Չամուռճին միջին դարու մեջ, Պալատադարը քանամյա հնություն կապրի: Արդ՝ արդի ժամանակը կամ պատմությունն այս տարբեր ժամանակի մարդիկն ի՞նչպես պիտի համաձայնեցնեն»³:

Մի այլ տեղ բնութագրելով Չամուռճյանին, նա գրում է. «Փլուխը սև-սև խորհուրդներու պահարան մը... Ահա Երևակի նշանով մոլորական հրեշն ալ, որուն միակ պաշտոնն է զրպարտել ու դարձյալ զրպարտել... իր լեզուն իժ մէ՛, գրիչը՝ պիծակ մը, իր տիրական կիրքը՝ կրոնք մը՝ որուն վարձկանն է... հավատաքննության խալուկներու մոխիրը կխառնե, որ կայծ մը գտնե և բոլոր աշխարհը կրակի տա...»⁴:

Մամուրյանը անողոք կերպով քննադատում էր հայ մեծատուններին, ազգային կեղեքիչներին և պաշտպանում էր հասարակ ժողովրդին: Նա բավականաչափ հստակ պատկերացում ուներ հայ

¹ «Մեղու», 1860, նոյեմբերի 30, № 117, էջ 259:

² «Մեղու», 1860, հունիսի 30, № 102, էջ 139:

³ Հայկական նամականի, գրեց Վրույր (Մ. Մամուրյան), Չմունիա, 1872, էջ 25:

⁴ Նույն տեղում, էջ 175—176:

Հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի, շահագործողների ու շահագործվողների փոխհարաբերությունների մասին: «Մեկ կողմին սարսուկ հայն արյուն քրտինքով վաստակած շոր հացն ու ալն իր գերեզմանին մոտ կուտե, գետնախշտի կապրի, գազաններու հետ կկենակցի, փափագ ուրախություն, հույս շունի, մյուս կողմին հայրենական զգացումն զուրկ հայ փոշվող երիտասարդություն մը՝ թիթեռների պես եվրոպական քաղաքակրթության ճրագին շորս դին կթռթի, ամբարտաձև մեծատուններ՝ մարմարյա պալատներու և սուկեզօծ ամրոններու մեջ կխրոխտան և կօրօրին»¹:

Հայրենասեր հեղինակը անարգանքի սյունին է գամում ազգի ազատության թշնամիներին. «Աչքը շորս բայց տւ լավ դիտե, ըսավ. նկատե անգամ մը թե ազատությունն ինչ անհաշտ և անողորմ թըշնամիներ, հրեշներ ունի իրեն դեմ մարդու դիմակով... Այս հրեշներն արդարոյան և իրավանց նշույլն անգամ չունին. քաղեր են ազգային շահն ու ապագան իրենց կրից մեջ, դատապարտե են ժողովուրդը պիտոյան և քվառոյան, մատենե են զանի գայլերու բերանն... անդադար կծծեն ողորմելի ժողովրդի արյունն... ջուրի տեղ արյուն կխմեն, հացի տեղ մարդու միս կուտեն...»²: Կոնկրետացնելով իր խոսքը ամիրաների մասին, Մամուրյանը գրում է. «Պոլսի մեծատուններն, որ ամիրա կկոչվին, տաճիկ փաշաներու հետ, որոնց սեղանավորներն են, Հայաստանը կկեղեքին, իրենց շահուն համար»³: Մի այլ տեղ նա ուղղակի ասում է. «մեծատուններ և վաճառականներ կբարձրանան, քանի որ հասարակ ժողովուրդը նյութապես վար կիջնե»:

Մամուրյանը դեմ էր սոցիալական և ազգային ճնշմանը, նա ժողովրդին պայքարի կոչ էր անում ինչպես ազգային, այնպես էլ օտար հարստահարողների դեմ: Նա ասում էր սուլթանական ու ցարական միահեծան կարգերը, որտեղ ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, զրկված էին ազատությունից ու անկախությունից: Թուրքիայում, ասում է Մամուրյանը, «Շատ հայեր սովամահ կտրան... բունավորներու որս ընկան, ստրկության լեղի բաժակն ըմպելին և դեռ կըմպեն... Հայրենյաց և դիտության կարոտ մեռան և

¹ Հայկական նամականի, էջ 90:

² Նույն տեղում, էջ 174. Ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

³ Մ. Մամուրյան, Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Ջնյուտին, 1881, էջ 266:

գեռ կմեռնին»⁴: «Քաղաքական ազատության նշույլ չկա այստեղ և ոչ իսկ քաղաքային ու անհատական: «Մեծ ձուկը պզտիկը կկլլե» առածն այստեղ իր ամբողջ իմաստով կգործածվի... Հայք արցունքը յուրյայն կուլ կուտան»⁵:

Մարերիով Թուրքիայում գոյություն ունեցող մամուլի «ազատությունը», նա գրում է. «Ազգին մեջ երկպառակություն հարուցանելու համար գրելու ազատություն կա, բայց որևէ ճշմարտություն պարզորեն գրելու ազատություն չկա: Ո՞վ կարգիլե այս ազատությունն.— Անոնք որոց վրա խոսելու ազատություն չունիմ... վասն զի Թուրքաստան կգտնվիմ»⁶: «Գահերու վրա չէ ազատությունն, այլ գերեզմանի մեջ»⁷,— գայրույթով բացականչում է ազատասեր հեղինակը: Խոսելով արևմտահայ գյուղացիների դրություն մասին, Մամուրյանը գրում է. «Հայ գյուղացին կհարստահարի ներսն ու դրսն, կհեծծե, կլա, բայց որմն՝ խնդրե արդարոյուն: Իր դատավորն է հարստահարիչն, որու փաստաբան կկանգնի իր ապաշնորհ հայրենակիցն, որպեսզի փոխ տված դրամին տոկոսը չկորուսե»⁸:

Արևմտահայ մյուս դեմոկրատների նման, Մամուրյանը դրվատում էր Եվրոպայի ու Ամերիկայի ժողովուրդների լուսավորական ու ազատագրական շարժումը, բարձր գնահատում Վոլտերի, Ռուսոյի, Մոնտեսքիոյի, Գանտոնի, Մարատի, Ռոբեսպիերի, Ֆրանկլինի, Վաշինգտոնի, Գարիբալդիի, Մաձձինիի և առաջավոր մտքի ու գործի մյուս մունետիկների պատմական դերը: Նա քաջ ծանոթ էր հին ու նոր ժամանակների պատմությանը և հաճախ ուսանելի օրինակներ էր բերում ինչպես հայոց, այնպես էլ ընդհանուր պատմությունից: Նա իր ժամանակի հմուտ պատմաբաններից էր: «Երիտասարդության առույգ հասակիս մե՞տն էի,— գրում է Մամուրյանը անգլիական համականիում:— Կախի ազատություն, կատեի իշխանական քաղ ու գավազան: Շարունակ միտքս կհուզեին ընկերական խնդիրներ: Ռուսո, Հյուս, Պենթհամ, Ս. Միմոն, Ֆուրիե և ուրիշ ընկերահայտական հեղինակներու գործերը կարդացեր, լափեր էի...ինչպես ամեն տւսանող, ևս ու ժողովրդոց անկախության,

¹ Հայկական նամականի, էջ 30:

² Անկլիական նամականի, էջ 194:

³ Հայկական նամականի, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 155:

⁵ Անկլիական նամականի, էջ 267:

բարօրության, արդարության հաղթանակը կերպագրեի: Կգիտեի, որ Եվրոպայի ֆաղափարություն կոչվածն, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կը վայելեն, իսկ մյուսները թշվառ ստրուկներ են, որ ոչ միայն կրթությամբ, այլ ապստամբությամբ պիտի վերածնինեն և իրենց շղթաները փակելու պիտի հաջողին: Կզրմայելի Մաժժինիի ու Կարիպալտիի վրա, որ արդեն ոչ միայն Իտալիո մանր մունր բռնավորներու, այլ բոլոր Եվրոպայի գահակալներու դեմ պատերազմ հրատարակեք էին ու զգալունի ընկերություններ կազմելով ազատության ու անկախության ոգին գործավորներու մեջ սփռելու կջանային: Այս ազատական սկզբունք հարած էի... և անոնց մեջ ազգերու փրկությունը կտեսնեի: Անտարակույս բյուրավոր մարդիկ կային Եվրոպայի մեջ, որ ինձի պես դառնացած՝ գինած էին հաստատյալ անիրավ օրինաց դեմ, կղերին փառամոլության ու տիրապետության դեմ, բռնապետական իշխանությանց դեմ, ազնվականաց լրբության դեմ, դրամագլխի անիրավության դեմ... և այս դարավոր շարիքը ջնջելու համար զամենազան միջոցներ կխորհեի: Ֆրանսիայի մեծ հեղափոխությունն մասնական արդյունք մ'ունեցէր էր, հիդրային մեկ գլուխը միայն կտրեք էր: Եվրոպայի ժողովրդոց համախումբ դաշնակցություն մը, ապստամբություն մը միայն կարող էին այդ հրեշտ սատակել: Արդեն այդ շարժման նշանները կերեւեին. Եվրոպայի բոլոր ժողովուրդները մեծ հուզման մեջ էին: Հրաբուխը ներսեն կրորորեք, կեռար և ընդհանուր ցնցում մը, պայթում մը կսպառնար»¹:

Մամուրյանի այս և նման խիղախ մտքերը պարզ ցույց են տալիս, որ նա համակված է եղել Եվրոպայի ժողովուրդների ազատագրական-ռևոլյուցիոն պայքարի գաղափարներով, պաշտպանել է ժողովրդական սպստամբության միջոցով հիդրայի բոլոր գլուխները կտրելու, բազ ու գավազան խորտակելու արմատական տեսակետը:

Մամուրյանը ընդունելով հանդերձ կապիտալիզմի պրոգրեսիվ գերը, միաժամանակ քննադատում էր նրա բացասական կողմերը, դատապարտում աղքատություն, թշվառություն և դանազան այլ շարիքներ ծնող կապիտալիստական շահագործումը և զաղուլթային ճնշումը: «...Արդի գործավորն միջին դարու ստրուկն է,— գրում է նա,— որ քաղաքակրթության անապատին մեջ տեսակ մը վայրենի՝

¹ Անկլիական նամականի, էջ 117—119. ընդգծումներն իմն են.— Վ. Պ.,

ոչ տուն, ոչ իրավունք, ոչ քվե, ոչ արև տունի, և երկրի վրա թիզ մը տեղ չգտնելով՝ կիջնեն անոր անդնդային հաստակն ու շատ անգամ ածխահանքին իր հացը մուրալու ատեն կայլի, կխղզվի և դիակն անգամ անհետ կլինի: Այս է մեր քաղաքակրթության ստեղծած մարդն»¹: «Բանվորին քրտինքը հարուստին, դրամատերին աշյունն է, որով կկենդանանա»²,— գրում է նա:

Ուշագրավ են Մամուրյանի մտքերը Ազգային Սահմանադրության մասին: Նա սահմանադրական շարժման ակտիվ մասնակիցներին էր և անհաշտ պայքար էր մղում Սահմանադրության թրջնամիներթի դեմ: «Պոլսաբնակ հայերը,— գրում է նա,— քանի մը դարե ի վեր կենդանության նշան մը տվին, այս նշանն եղավ Ազգային Սահմանադրության հաստատությունը»³: «Առաջադիմական օրինաց պտուղն էր նաև Ազգային Սահմանադրությունն»: «Աստվածապետություն, միապետություն, Սահմանադրություն: Այս երեք բառերուն մեջ դարեր կան»,— ասում է Մամուրյանը: Նա կողմնակից էր սահմանադրական-դեմոկրատական կարգերին, որտեղ, ինչպես ինքն է ասում, օրենքները պետք է հաստատվեն արդարության ու բարոյականության հիմքի վրա, մարդկանց և ազգերի իրավունքներին ու պարտականությունների, ժողովուրդների օգուտ, վարք ու բարքի համապատասխան:

Խոսելով արևմտահայերի Ազգային Սահմանադրության շուրջը տարբեր հասարակական խավերի միջև մղված պայքարի մասին, Մամուրյանը դիպուկ կերպով բնութագրում է նրանցից չուրաքանչյուրի դիրքը: «Վեղարն ամբարշտության նշան մը տեսավ անոր մեջ, ամիրան՝ ապստամբության, տղջամիտն՝ արդարության և օրինավորության երաշխավորություն մը, ռամիկն՝ արքայության դուռն...»⁴: Կղերականների ու ամիրանների դասի բերանն էր «աստվածաբան երևակն և ծանծաղամիտ Արևելյան դարը», ասում է Մամուրյանը, իսկ ողջամիտներինը՝ Մասիսը, Մեղուն, Մյունաաին, Սերը և Ծաղիկը:

Մամուրյանը սուր կերպով ծաղրում էր հատկապես Չամուռնյանին, որը Սահմանադրության ամենակատաղի թշնամին էր: «Ժողովրդյան մեջ սահմանադրական կռիվներ սկսեք էին,— գրում է

¹ Անկլիական նամականի, էջ 151:

² Նույն տեղում, էջ 255:

³ Չայկական նամականի, էջ 30:

⁴ Նույն տեղում, էջ 157:

նա, — և զորավոր կուսակցություն մ'որոն պարագլուխներն մին Ստենտոր էր (Չամուռճյանին նկատի ունի. — Վ. Պ.) կտքներ անդու որ Սահմանադրությունը կործանեն¹: Մի այլ տեղ նա ասում է, որ կղերք գաղտնի և ակնհայտ աշխատում են «մուր քսել Սահմանադրության վրա»:

Սահմանադրական պայքարը ներքին հակասություններով լի պայքար էր և, բնական է, վաղ թե ուշ զրանք պետք է արտահայտվեին: Պայքարի երկրորդ էտապում, երբ ինչպես Մամուրջանն է ասում «ազգովին հաստատված Սահմանադրությունը կործանելու գաղտնի շարժառիթն եղավ», երբ պաշտոնական մարմինները «մեծագույն մաս կազմելով՝ ներսեն սկսան քանդել Սահմանադրությունը, մոտանալով իրենց բարոյական պատասխանատվությունն ու երդումը, իրենց խիղճը», երբ «ազն ու եկեղեցին վտարի մեջ է ընկելով՝ միտպետական դրություն բարեկամներն և կրոնական դասը՝ նորեն միացան հրապարակով» և ի վերջո «Սահմանադրությունը թակարդն ընկավ», արևմտահայ դեմոկրատներն այս անգամ իրենց հարվածներն ուղղեցին նաև լիբերալ սահմանադրականներին դեմ: «Սահմանադրության հեղինակներն իրենց պաշտոնական դիրքը փոխելով՝ փոխած են նաև իրենց համոզումն ու հայրենասեր ոգին», — գրում է Մամուրջանը: Դառնալով ժողովրդին՝ նա ասում է. «Հայ ժողովուրդը Սահմանադրություն մը հաստատելու արիությունն ունեցավ, սակայն զայն պաշտպանելու արիությանը մեջ չհարատեկց»²: Նա բթամիտ է անվանում այն հային, որը կրոնակիր դարձնելով ասում է՝ «Ես այս Սահմանադրությունն բան մը չհասկցա»: Նա դատապարտում է այն հայ երիտասարդներին, որոնք սահմանադրական սկզբունքը կսիրեն, իսկ գործադրության համար «ստակ մը վճարելե տասը մղոն հեռու կփախչին»: «Երբ սահմանադրասեր հայը կտեսնիմ այժմ, — գրում է Մամուրջանը, — կհիշեմ այն մուրացկանն որ մեղրի գոց ամանին վրա հացը կքսեր կուտեր և կկարծեր թե մեղր է կերածն»³: Նա դժգոհ էր, որ Սահմանադրությունը հաստատելու արիություն հանդես բերած ժողովուրդը վճռականություն ու հետևողականություն հանդես չէր բերում փր սկսած գործը մինչև վերջ հասցնելու: Նա ժողովրդին կոչ

էր անում չհետևել լիբերալ-սահմանադրականներին, շարունակել պայքարը ազգի իրավունքներն ընդարձակելու, ազգի շահերը պաշտպանող քիչ թե շատ օրինավոր մարմիններ ստեղծելու համար: Արևմտահայ դեմոկրատների մեջ Մամուրջանը և Սվաճյանը առաջիններն էին, որ, Մ. Նալբանդյանի օրինակով, հանդես եկան լիբերալ-բուրժուական սահմանադրական գործիչների դեմ, քննադատեցին նրանց հակադեմոկրատական վարքագիծը, մերկացրին նրանց գործարքը հակասահմանադրական ուժերի հետ և զրանով իսկ ճիշտ ուղղություն տվեցին դեմոկրատիայի պայքարին:

Մամուրջանը ճիշտ դիրքերի վրա էր կանգնած նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրության հարցում: Ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրությունը նա շատերի նման չէր կապում արտաքին ուժերի հետ, դա համարում էր իրեն՝ ժողովրդի գործը:

«Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի բրած հրաշքը պիտի գործե... ցնորք է, — գրում է Մամուրջանը: — Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդյան սև պատանքը փակեն՝ հիմարություն է: Հե՛ք և ստույկ ժողովրդյան մ'առաջին և միակ ազատարարը ինքն է, իր աշխատությունն է, իր ներքին ուժն է, իր լույսն, միությունն ու հաստատ կամքն է»¹:

Որպես ժողովրդական ապստամբություններին իրազեկ, հմուտ պատմաբան, նա բարձր էր գնահատում ժողովրդի ուժը, նրա ունեցվածքներն դերը: «Ժողովուրդը բաժո՞ղ այն գետերուն կնմանի, որուն ջրերն մեր կղաշտանան և հանդարտ երես մը կառնուն, մերք աներևույթ կլինին և գետնափոր անձավներե անտես անցնելով՝ հանկարծ կպայքին, հեղեղատի պես լեռներեն կգահավիժին որոտընդստ և ֆար ու ժայռ քավազոր կբերեն»²:

Գիտակցելով ժողովրդի ուժն ու կարողությունը, Մամուրջանը միաժամանակ խիստ դատապարտում էր նրա անտարբերությունն ու պասսիվությունը, բռնակալների լծի տակ լուռ ու մոռնչ մնալը: «Միրապո՛՛ Ֆրանսայի առաջին հեղափոխության առաջին գործոն հեղինակն և բռնակալության անհաշտ և ճարտասան թշնամին, — գրում է նա, — կզոչե թե՛ գերության շղթաները լզող և պաշտող ժողովուրդն ամբի՛ր կատե քան զանոնք դարբնող բռնավորներն: Այս արհամարհական վճիռն, որ մարդկային ազգի պատմության

¹ Մ. Մամուրջան, Հայկական նամակների, էջ 207:

² Նույն տեղում, էջ 161:

³ Նույն տեղում, էջ 145:

¹ «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 5. ընդգծումն իմն է. — Վ. Պ.:

² Հայկական նամակների, էջ 206. ընդգծումն իմն է. — Վ. Պ.:

խորունկ գիտակցութեան մը կենթադրեմ, շատ ժողովրդոց քաղաքական կենաց դատակնիքն է և մասնավորապէս հայոց»¹:

Շարունակութեան մեջ նա գրում է. «Արդարեւ հայը դարավոր ծեր տղա մ'է, որ Մասիս լեռան վրա քանի մը օր ազատ օդ շնչելէն ետեւ վար փոսը կիջնեմ, բռնութեան և տգիտութեան լուծն իր վիզն կկտրեմ և Արտավազդա կապանքն անդադար կհորդոգեմ: «Անդ կացցես և դուրս մի տեսցես»: Արտաշիսի այս սոսկալի անեծքը կարծես թէ հայուն ճակատին վրա երկաթի նշանավ կտրված է...»

Միրապոյին հետ ատեն², թե Խորենացիին հետ ողբալ պետք է այն ժողովուրդն՝ որուն ճակատագիրը կկրեմ և ես, և սե աշտը սրբելու համար կքրտնիմ»²:

Գծվար չէ նկատել, թե ինչպէս Մամուրջանը, Միրաբոյի նման, պտտում էր բռնակալների լուծը և ցանկանում, որպէսզի ժողովուրդները ոտքի ելնեն և փշրեն գերութեան շղթաները: Նա, ճիշտ է, ոչ հետևողական կերպով, բայց հայ ժողովրդին ազատագրական պայքարի, ապստամբութեան կող էր անում, խորհուրդ էր տալիս համախմբել ազգի ցրված ուժերը և միասնաբար գործել, հույս չդնել վերևից եկած ազատութեան վրա: Իր խմբագրած «Արևելյան մամուլ»-ում ապագրելով իր վաղեմի դաստիարակ Մերենցի նամակը, որտեղ նա քննադատելով Բաֆֆու և Արծրունու ապստամբական կողերը, ասում էր թե «Անեմ կուգեմ, որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն», Մամուրջանը առարկելով Մերենցի այս ակֆորմիստական տեսակետի դեմ, գրում է. «Ներվի մեզ ըսել, որ այս մասին Մեծ նամակագրին հետ տարակարծիք կգտնվին: Այդ դրությունն ամեն տեղի ու պարագայի չկրնար հատկանայ»³:

Մամուրջանը քննադատում էր մեծ տերութուններին ու նրանց նենգ դիվանագիտությունը, պաշտպանում էր ճնշված ժողովուրդների իրավունքը:

«Մեծ պետությանց մեջ ազգերը դեռ իրենց նախապատիւն տերը չեն և կենդանու քաղաքականության մը ծուղակն ընկած են: Այս քաղաքականությունը՝ հանրազգային իրավանց, ճնշյալ ժողովրդոց պաշտպանության և ազատության հարստահարությանց բարձման խոշոր բառերով ասպարեզ կիջնե... մեկ ձեռնով խաղաղու-

թեան ձիթենիի ոստ բռնած է, մյուս ձեռնով դշուրավառ խնդիրներու վրա վառոտ կցանե... Այստեղ կարճակէ ստրուկը, այնտեղ զանի կկապե ու կկեղեքե, տեղ մը ազատութուն կբաշխե, ուրիշ տեղ շղթաներ կզարբնե, վասնզի ժողովուրդները դեռ իրենց նշմարիտ շահուց անտեղյակ են, քույլ կտան, որ կառավարությունները զիրենք պատրեն և իրենց անվամբ անիրավություն և բռնություն գործեն: Եվրոպա իր բնական կայանը դեռ չգտավ...»

Մինչև որ քաղաքական հավասարակշռություն ըսվածը ժողովրդոց մտային, բարոյական, տնտեսական դաշնավարության վրա չնիմնվի, մինչև որ արդարության միօրինակ բաշխման և ազատության մեջ չկայանա, մինչև որ արքուն այլ ճնշյալ, լուսավիտ այլ գերի ժողովրդոց վերակենդանության մեջ չհաստատվի, աշխարհիս խաղաղությունը հանելուկ պիտի դառնա և նենգադիր դիվանագիտության մի շինածն ազգաց անտես առնված իրավունքն ու երբեմն արդար ցասումը պիտի կործանեն ապագային մեջ»¹:

Նալբանդյանական շունչ կա Մամուրջանի այս կրակոտ տողերի մեջ: Եվ դա պատահական չէ, քանի որ արևմտահայ մյուս ականավոր դեմոկրատների հետ միասին, նա բարձր էր գնահատում Նալբանդյանի գործն ու գաղափարները, նրա զինակիցների շարքերում անհաշտ պայքար էր մղում նրա թշնամիների դեմ:

1866 թվականի հուլիսին «Մաղիկ» ճանդեսում Նալբանդյանի մահվան առթիվ տպագրած հոդվածում Մամուրջանը նրան անվանում է «մեծ մարդ», «ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործոն իմաստասեր»: Բերելով Նալբանդյանի Ազատության երգի հայտնի տողերը, Մամուրջանը գրում է. «Այս վսեմ և սպառնալից գոչումը, որ Նալբանդյանի կենաց և մահու բոլոր խորհուրդը կպարունակե, իր մահաբձանին վրա պետք է արձանագրել, ինչպես որ պետք է դրոշմվի ամեն հայ սրտի մեջ իբրև նվիրական կտակ մը, որուն գործադրությունը ապագա սերունդին հանձնելով է»²:

Հոդվածի վերջում Մամուրջանը գրում է. «Նալբանդյանցը ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանն է ետև պիտի գործե ազգին մեջ, քանի որ շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսատու գաղափարները, որ հոգետուր կանգնեցավ

¹ Հայկական նամականի, էջ 129:

² Նույն տեղում, էջ 129:

³ «Արևելյան մամուլ», 1876, հոկտեմբեր, էջ 349:

¹ «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 38. Ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

² «Մաղիկ», 1866, հուլիսի 15, № 124, էջ 490. Ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

նա և որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորոտան թագակիր բռնավորներու զլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ ու գլուխ այրին, տոշորին. վասն զի Նալբանդյանցը հավատփի մը համար, նշմարտության և ազատության հավատքին համար զոն բնկավ...

Նալբանդյանցի ազատական հայրենասիրությունն անդադար հրավեր մ' ունի կարգալու մեզ, և ազգը նվիրական պարտք մը կատարելու¹:

Այս բոլորից հետո, ինչ խոսք, շի կարելի ընդունելի համարել մեր գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, թե Մ. Մամուրջանը, ինչպես և Մերենցն ու Ջիլինկիրյանը, 1860—1870-ական թվականներին դեմ էին հայ ազատագրական-քաղաքական շարժումներին:

Մամուրջանը 1860—1870-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժման կարկառուն դեմքերից էր, Նալբանդյանի զինակիցն ու հավատարիմ պաշտպանը: Յավոք սրտի նա մինչև վերջ չմնաց իր այդ բարձրության վրա. հետագայում գաղափարական անկում ապրեց և հարեց լիբերալիզմին:

* * *

XIX դարի 50—60-ական թվականների հայ ազատագրական շարժման ամենախոշոր և կենտրոնական դեմքը Միխայել Նալբանդյանն է (1829—1866):

Նալբանդյանը հանդես եկավ մի կողմից հայ ազատագրական շարժման, իսկ մյուս կողմից Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի ռեպրեսիվ-դեմոկրատական շարժումների վերելքի ժամանակաշրջանում: Նա ավելի խորն ու համակողմանի, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը, ըմբռնեց և ավելի հարազատորեն արտահայտեց այդ շարժումների ոգին, ժողովրդի կյանքն ու պայքարը, նրա ձգտումներն ու ցանկությունները: Գուրս դալով ժողովրդի ծոցից, նա իր շողշողուն տաղանդը, իր ամբողջ կյանքը նվիրեց հասարակ ժողովրդի ազատագրության գործին:

Հասարակական կյանք մտնելու հենց առաջին իսկ օրերից Նալբանդյանը պայքարի մեջ մտավ հայ կղերական ու աղայական

պարտաբույժ տարրերի դեմ: Հետագայում տեղափոխվելով Մոսկվա և մոսկվից ծանոթանալով ռուս առաջավոր մտքի ու կուլտուրայի, ռուս ժողովրդի ազատագրական շարժման ակնհայտ գործիչների հետ, նա թևակոխեց իր կյանքի ու գործունեության նոր, ավելի հասուն շրջանը: 1850-ական թվականների վերջերին՝ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու և Գոբբոլցլեբովի գաղափարական ազդեցություն տակ վերջնականապես ձևավորվեցին նրա ռեպրեսիվ-դեմոկրատական ու մատերիալիստական հայացքները: Նալբանդյանը կանգնեց 1850—1860-ական թվականների ռուս նշանավոր ռեպրեսիվ-դեմոկրատների դիրքերի վրա, հիմք դրեց հայ հասարակական մտքի, հայ ազատագրական պայքարի մի նոր ուղղության, որն ամենադեմոկրատական և ամենատառաջավոր ուղղությունն էր հայ իրականության մեջ:

Նալբանդյանի հասարակական-քաղաքական, պատմա-փիլիսոփայական, տնտեսագիտական, էսթետիկական և լեզվագիտական հայացքները մի ամբողջ հեղաշրջում մտցրին հայ հասարակական մտքի պատմության մեջ: Նրանք վերջնականապես պատռեցին կղերա-պահպանողական խավարի թանձր քողը և լուսավորեցին ժողովրդի ազատության ու առաջադիմության ուղին: Այս էր, ահա, 1850—1860-ական թվականների հայ հասարակական մտքի ամենանշանակալից երևույթը և ոչ թե լիբերալ-լուսավորական շարժումը, ինչպես տարիներ շարունակ թմբկահարում էին հայկական լիբերալիզմի ապոլոգետները:

1850—1860-ական թվականների հայ կյանքի այրող հարցը՝ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հարցն էր, սուլթանական ու ցարական բռնակալության, ինչպես և ազգային կեղեքիչների լծից հայ աշխատավորության ազատագրության հարցը: Նալբանդյանն իր ամբողջ խորությամբ ըմբռնեց այդ հարցի կարևորությունը և, ինչպես ինքն է ասում, զինվորազրվեց այդ վեհ գաղափարին: Նա հասարակ ժողովրդի ազատությունը հռչակեց որպես իրեն դավանանք, որպես իրեն կյանքի բուն նպատակ:

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը շնվիրեցինք հարուստներին, նոքա չուրյանց արծաթի թուփերի տակ միշտ անխոցելի են նաև բռնակալների իշխանության մեջ: Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև չուր հա-

¹ «Մաղիկ», 1866, հուլիսի 15, № 124, էջ 490. Ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

րուստներից, յուր հողերներէից և կիսագրագետ ուսումնական կամ փիլիսոփա ասվածներէից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրութիւնը և նորան դարձեալ առանց և վայրկեանական երկմտութեան, նվիրեցինք մեր բոլոր կարողութիւնը: Պաշտպանել այն հայի առաջուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ արքայի առջև, ոչ միայն բանտի և գրչով այլև զենքով և արյունով, եթէ մի օր արժանի լինենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատութիւնը նվիրել և սրբել մեր արյունով:

Ահա վասիկ մեր դավանութիւնը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկութիւնը»¹:

Մեծ ռեպուցիտն-զեմոկրատի այս բոցաշունչ տողերը մի ամբողջ ծրագիր հանդիսացան: Հայ ժողովրդի ազատագրութեան բախտով մտահոգված բոլոր հայրենասերների համար:

Նալբանդյանը հայ ժողովրդին զինված պայքարի էր կոչում ցարիզմի ու սուլթանիզմի դեմ, պաշտպանում էր Հայաստանի ազատութեան և անկախութեան գաղափարը:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,
Սուր է հարկավոր կարճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին»²:

Ավելին, որպէս ճնշված ազգի զավակ, ըմբոստանալով սեփական ազգի ճնշողների դեմ, նա դատապարտում էր առհասարակ ազգային ճնշումը, պաշտպանում էր ազգերի իրավահավասարութեան ու եղբայրութեան գաղափարը: «Ոչ մի ազգութիւն, — գրում է Նալբանդյանը, — իրավունք չունի կող տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգութիւն... Մարդկային սրտի համար մի ավելի տխուր բան չկա, քան թէ տեսանել, որ մի ազգութիւն ընկնում էր և կործանվում էր ծանր հանգամանքների հարստահարութեան տակ — մի այլ ազգութեան ճնշողութենից...»

Թո՛ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգութեան կերպարանքը, թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգութեան մարդկեղեն

աշխարհի մեջ: դոքա միայն զորութիւն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատութեանը»¹:

Ժողովրդամիրութեամբ ու քննարկներնալիզմով լցված մեծ զեմոկրատի այս մտքերը մեր օրերում ևս շեն կտրցրել իրենց թարմութիւնը:

Նալբանդյանը անհաշտ պայքար էր մղում բռնակալութեան և ժողովուրդների գաղութային ճնշման դեմ: «Մենք թշնամի ենք բռնակալութեան, ուր կամ ինչ կերպով որ հայտնվի», գրում էր նա: «Ստրկութեան մեջ, ազատութեան մեջ չկա և չէ կարող լինել լուսավորութիւն»։ «ստրկութեան մեջ չէ կարող լուսավորութեան ծիլը կանաչել» և այլն: Նա անարգանքի սյունին է դամում եվրոպական գաղութարար տերութեամբներին, որոնք ճնշում ու թալանում էին միլիոնավոր մարդկանց: «Մինչև այժմ բռնակալ աշխարհակալութիւնը մի սուտ փաստ ունեին յուրյանց ձեռքում, որ այսօր չէ կարող արդարանալ և մարդկային բանականութեան դիմանալ: Ի՛նչ էր այդ փաստը: Այն, թէ հզոր կառավարութեանք տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, միմիայն վայրենութիւնը քաղաքակրթելու համար: Անձնական շահը չէ՛, ո՛չ, քա՛ղ լիցի, մարդկութեան սերն է, որ ստիպում է նորանց ստրկացնել զանազան ազգեր, որովհետև այդ ազգերը հետ են մնում և չեն քաղաքակրթվում...»

— Անգլիան ամիսը երեք շոգենավ արկիւն բռնութեամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկութեանը և այդ թուլի փոխարեն ամիսը երեք շոգենավ արծաթ է ստանում. այս անբարոյականութիւն է:

«Քաղաքակրթութիւն է տարածում»²:

Այնուհետև քննադատելով ավստրիական ու ցարական միահեծան կարգերը, նա ասում է. «Սոքա ամենքը իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթութիւն են տարածում և ոչ ոք չի հարցնում աշակերտի կամքը, կամի՞ արդոք ուսանել թէ ոչ: Մահայն չէ պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթութեան տարբերութիւնը մեր հասկացած քաղաքակրթութիւնից: Բանտերը են նոցա դպրոցները, պոլիցակներ և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 23—24.

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 97.

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 259.

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 88.

գիրքը, աքսորը՝ բարոյականութիւնը վերին աստիճանի կազդու-
րելու մարգարան, կոխադանը և գլխապարտութեան խայտառակ
սլշունը՝ «ըլուն նշմարիտ ու տանի ի կեանս հավիտեակեանս»¹...

Նոստրոլ Եվրոպայի ու Ասիայի մասին, Նալբանդյանը գրում է.
«Եվրոպան ու ծնվեցավ, բայց շատ արագ ծերանում է»: «Պիտի
գա օր, երբ այն պատավ Ասիան պիտի մանկանա և ասիական ազ-
գեբը այն վայրկեանից պիտի սկսանին յուրյանց պատմութիւնը...
Ասիո ապագան ավելի մեծ է, ավելի լայն է անտեսական խնդրի
վերաբերութեամբ, քան թէ Եվրոպիո ապագան»²:

Ազգային-ազատագրական պայքարը Նալբանդյանը կապում էր
ազգութեան դադափարի, ժողովրդի ազգային գիտակցութեան և
փնքնաճանաչութեան բարձրացման հետ: Նալբանդյանի ժամանա-
կաշրջանը ազգերի կազմավորման բուն վերելքի ժամանա-
կաշրջան էր³: Նալբանդյանն արձանագրում էր, որ «մարդկութեան
պատմութեան մեջ ոչ մի ժամանակ այնպես սաստիկ և որոշակի
երեկցած չեն ազգութիւնքը, ինչպես ներկայումս: Ազգութիւնը
ասես թէ դարձել է մի ամենօրյա հաց, առանց որին չէր կարելի
այրել. մի էլեկտրականութեան պես բան, որ փայլակի շոտու-
թեամբ տարածվում է զանազան ազգութեան անդամներին մեջ: Այս
բանի խմորը ընկնում է և մեր ազգի մեջ և մեղմում լավում են
ձայներ և մեր մեջ սկսում է բաբախել մի կենդանի սիրտ»³:

Պաշտպանելով ազգութեան գաղափարը, ազգային պատմու-
թեան, լեզվի, դրականութեան դարգացման, ժողովրդի մեջ կրթու-
թուն և լուսավորութիւն տարածելու անհրաժեշտութիւնը, Նալ-
բանդյանը երբեք չէր իդեալականացնում ազգն ու ազգութիւնը:
Ազգը նա համարում էր որպէս պատմական կատեգորիա, որն ինչ-
պէս առաջացել, այնպէս էլ կարող է վերանալ: «Այո՛, — գրում է
Նալբանդյանը, — եթէ հավասար իրավունքը այսօր խոստովանվի
բոլոր երկրագունդի վերա, եթէ ներկա եղած պետական համակար-
գութիւնքը այսօր ոչնչանան, վաղը ոչ միայն չէ մնում ազգութեան
խնդիրը, այլ հարկավոր է չէ»⁴:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 89—90:

² Նույն տեղում, էջ 81:

³ Հայ ազգի կազմավորման մասին մենք այստեղ չենք խոսում, որովհետեւ
մեր տեսակետները շարաբոված են Գ. Ա. Տեղեկագրի 1952 թ. № 4-ում «Հայ Ժո-
ղովրդի որպէս ազգ կազմավորվելու հարցի շուրջը» հոդվածում:

⁴ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 463:

⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 81:

Նալբանդյանի համար խորթ էին նացիոնալիզմն ու ազգային
ֆաշիստիզմը: Նա հավասարապէս ատում էր ազգի ինչպէս արտա-
քին, այնպէս էլ ներքին թշնամիներին:

«Մենք միշտ էլ դատապարտել ենք, — գրում է Նալբանդյանը, — երբ մի մարդ որոնում է օտարի պաշտպանութիւնը, բայց
նույնպէս դատապարտել ենք և դեռեւ պիտի դատապարտենք ազ-
գային անպիտան գործակալքը, որ յուրյանց լուծը օտարի լծից շատ
առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը օտար լծի վրա
նայել, որպէս մի երանացուցիչ քաղցր բեռի վրա: Մեր ազգի բոլոր
թշնամութեան աղբյուրը այս բանի մեջ է ահա: Անտառը ջարդող
կացնի կտթը անտառի փայտիցն է լինում միշտ»¹:

«Երկրագործութիւնը որպէս սովոր ճանապարհ» իր նշանավոր
աշխատութեան մեջ Նալբանդյանն ասում է. «Մենք ուրախ չենք, որ
մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը և յուր զենքով
սահման է դնում նորա հողի վերա... Հերիք է որչափ կույր և ֆա-
շիստիկական ազգութիւնը ոմնի յուր եսական կողմերը. հերիք է,
ասում ենք, որ մի ազգութեան յուր մի շամփուր խորովածի համար
մորթում է մյուս ազգութեան եզր»²: Մի ուրիշ տեղ նա ասում է.
«Վնասակար և անիրավ է այնպիսի ազգութիւնը, որ ամեն տրիշ
գոհում է յուր կյանքին. ազգութեան չէ այն, այլ կույր ֆաշիստիկո-
սութեան»³:

Ազգութեան գաղափարը Նալբանդյանը հակադրում էր բռնա-
կալութեան, ազգային ճնշման գաղափարին: «Այսօր ճնշված մար-
դերի համար, ազգութեան է նոցա միակ դրոշը, որ կարող է բաց-
վիլ բռնակալութեան ընդդէմ: Ազգութեան է միակ հնարը դեմ դնե-
լու նաև լուսավոր բռնակալութեան, եթէ միայն բռնակալութեանը
կարող է լուսավորվիլ կամ լուսավորվելուց հետո հարատեւել իր
բռնակալութեան, — կրկնում ենք մեր դարու երեւելի մտածողներից
միին հետ»⁴:

Նալբանդյանի համար միասնական, միատարր ազգ գոյութեան
չունենալ: Իր բոլոր ժամանակակիցներից նա ամենից ավելի լավ էր
տեսնում և հստակ պատկերացնում հայ հասարակութեան սոցիալ-
դասակարգային կառուցվածքն ու պայքարը, ազգի մեջ եղած սղ-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 112:

² Նույն տեղում, էջ 81—82:

³ Նույն տեղում, էջ 90:

⁴ Նույն տեղում:

դրությունները, հայացքները, դրոշակները: «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղությունք, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ: Օտարտի մի բան էր հերքել այս. նույնպես օտարտի էր ցանկանալ մի տեսակ միավորություն հակառակող բաժիններին: Այդ վնասակար էր մեր ազգին: Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը — կյանք է... Օրհնյալ է պատերազմը. թող լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»¹:

Ազգի ազատության հարցը Նալբանդյանը սերտորեն կապում էր նրա սոցիալական ազատագրություն հետ: Առանց սոցիալական ազատագրության, առանց տնտեսական հարցի՝ «Գորդյան հանգուցի» լուծման, չկա և չի կարող լինել ազգի ազատություն, ասում էր Նալբանդյանը: «Եթե ազգության ներքին և էական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը, անհիմն է այդ ազգությունը, սուտ է այդ ազգությունը և նա կկործանվի... Դու հազար տարի քարոզել ինձ քո վերացական ազգությունը, ես միշտ շարժելու հասկանամ»²: «Տնտեսական խնդիրը մահուտ և կյանքի խնդիր է, — գրում է նա: — Եվ անկարելի է հարց ազգի հիմքը նորոգել, ուժ և գործությունը դնել Պորա մեջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը կարող է օրական հացի, քանի որ նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում»³: «Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կյանքը և գոյությունը ապահովելու համար»⁴:

Ելնելով իր այդ սկզբունքից, Նալբանդյանը ժողովրդի ճնշող մեծամասնություն կազմող գյուղացիության ազատագրությունը ևս կապում էր տնտեսական խնդրի, հողի հետ: Առանց հողի գյուղացին չի կարող ազատ լինել, ասում էր նա: «Այն ազգը, որ շունի հող և երկիր, երբեք չհուսա, որ պիտի հարստանա»: «Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն: Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չէ կարող փրկել մարդը սարկությունից, մինչև որ այդ մարդը հողի վերա փրավունք ունեցող շինստովանվի»⁵: «Քանի որ տնտեսական խնդիրը — այն բազմակերնճի Գորդյանի կապը լուծված չէ, հասարակությունը չուր ընկերա-

կան և ընտանեկան հարաբերությանց մեջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը»¹:

Ինչպես տեսնում ենք իր հուշակալով «Երկրագործության» մեջ և «Երկու տողում», այսինքն 1861—1862 թվականներին, Նալբանդյանը հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարցերը դնում էր միանգամայն արմատական ձևով, ավելի խորե ու բազմակողմանի, քան իր մյուս գաղափարակիցներն ու վինակիցները, այդ թվում և Սվաճյանն ու Մամուրյանը: Իր առաջդրած այդ արմատական պահանջների լուծումը (որոնք ժողովրդի պահանջներն էին) Նալբանդյանը չէր կապում բունականների գլխաւորություն, վերելից եկող ազատության հետ: Նա ասում էր բունականների լուծը, բունակալության համոզված թշնամի էր: «Բունակալության արվեստի դժոխսային մեքենան հանգում է անձնասեր և եսասեր ազնվականների ուսերի վրա, — գրում է Նալբանդյանը Սվաճյանին 1860 թ. դեկտեմբերի 30-ի նամակում: — Ազնվական կացությունը այսօր անարգություն է մարդկության անունին: Ազնվականը բունաբարելով հասարակ ժողովրդի աստվածատուր ազատությունը և իրավունքը, խլում է նորան սեղանապիղծ ձեռքով, և ուրիշները աղքատացնելով, հարստանում է և տիրապետում է ազգի բանականության վերա: Այս բարոյական ավազակներին մա՛հ բարոյական»²:

Խոսելով վերելից եկած ազատության մասին «Երկրագործության» մեջ նա գրում է.

«Վա՛յ այն ծառին, վա՛յ այն բուսականին, որի արմատը անընդունակ է յուր հատակից ընդունելու և պատրաստելու յուր հյութը, յուրյան թարմությունը պահող կենսական ուժը և գործությունը: Վա՛յ այն ծառին և բուսականին, որի հույսը դրված է միմիայն, գիշերային և առավոտյան, բարձրից գալու ցողի վրա: Յողը դեռ հազիվ հազ նստում է նորա տերևների վերա, հազիվ հազ սկսանում է զովացնել նորա ծարավը, դալարացնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցավ: Յողի կաթիլները հետզհետե գոլորշանալով ցնդեցան, գնացին. իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցության նենթակա:

¹ Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 262—263:

² Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 91:

³ Նույն տեղում, էջ 73:

⁴ Նույն տեղում, էջ 51:

⁵ Նույն տեղում, էջ 61:

¹ Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 56:

² Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 83:

Մարդուն համար վերեից եկած ազատությունը այն ցողից անկելի չէ»¹:

Այնուհետև անդրադառնալով Ռուսաստանում ստեղծված ռևոլյուցիոն սիտուացիային Նալբանդյանն ասում է. «Այս ջերմաստական և լարյալ վիճակը անհնար է որ լինի երկարատև: Եթե, վաղորդ, խելք գործ չըրվի, սարուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ շքարովի, և այս կերպով այն կհնձիոք շուծվի, սարուկը կացինով կվճռե գործը:

Փամանակը շատ մոտեցած է և կարծվանից ավելի մոտեցած...»²:

Անտարակույս է, որ հեղինակի խոսքն այստեղ դործը կացնով վճռելու ժամանակի մասին է և ոչ թե վերեից եկող ազատության: Նալբանդյանը հույս չէր կապում բռնակալներից սպասվող, վերեից խաղաղ ճանապարհով եկող ազատության պատրանքի հետ: «Երկու տող»-ի հեղինակը քաջ գիտեր, որ «ճին խելքեր երբեք համաձայնելու չէին խաղաղությամբ տեղի տալ էնո գաղափարներին», որ «նոր պատերազմով պիտի կանգնեցնեն իր դրոշակը հնություն ավերակների վերա»³: Ուստի, ճիշտ չէ ասն տեսակետը, թե «Երկու տող»-ի (1861 թ.) և «Երկրագործություն» (1862 թ.) հեղինակը միայն 1863 թվականի լեհական ապստամբությունից հետո, Պետրոպոլիսյան բուհում կանգնեց գյուղացիական և ազգային ռևոլյուցիոն շարժման ուղու վրա և ամուր ֆայելու էր այդ ուղիով (ուրեմն դեռ չէր քայլել), եթե կալանքի տարիները սպառած շինեին բանտարկյալի ֆիզիկականը⁴: Այդպես գնահատել Նալբանդյանի մինչև 1863 թվականի լեհական ապստամբությունը ընկած ժամանակաշրջանի դործունեությունը, նշանակում է, փաստորեն հրաժարվել նրա ամենանշանավոր քաղաքական երկերը՝ «Երկրագործությունը» և «Երկու տող»-ը հետևողական ռևոլյուցիոն-դեմոկրատական գործեր համարելուց: Նալբանդյանին և ընդհանրապես հասարակական-քաղաքական գործիչներին գնահատելիս, պետք է ելնել նրանց գաղափարական ու պրակտիկ գործունեության ոգուց և չկապել առանձին տերմիններից ու ոճական արտահայտություններից:

¹ Մ. Նալբանդյան, հ. 3, էջ 56. Ընդգծումն իմն է. — Վ. Պ.:

² Նույն տեղում, էջ 61:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 311, Երևան, 1956:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք Նալբանդյանն իր բացառիկ տեղն ունի հայ ազատագրական շարժման պատմության մեջ: Նա առաջինն էր, որ հիմք դրեց հայ ազատագրական շարժման և առհասարակ հայ հասարակական-ֆաղափական մտքի նոր ուղղության՝ ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղության, որն իր ժամանակին ամենաառաջավոր ուղղությունն էր:

Նա առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի երկու հիմնական հատվածներին՝ արևելահայերին ու արևմտահայերին ազգային ազատագրական պայքարի միավորման, նրանց միջև սերտ կապ ստեղծելու գործին: Նա անձնական մոտիկ կապեր հաստատեց արևմտահայ նշանավոր դեմոկրատներ Ռսկանի, Սվաճյանի և ուրիշների հետ¹, գլխավորեց ինչպես արևելահայերի, այնպես էլ արևմտահայերի ազատագրական պայքարը:

Նալբանդյանն առաջինն էր, որ հայ ժողովրդի ազգային ազատագրությունը սերտորեն կապում էր նրա սոցիալական ազատագրության հետ: Քանի դեռ տնտեսական խնդիրը — բազմակնճիռ Գորգիասի կապը — լուծված չէ, հասարակ ժողովուրդը կարող է օրվա հացի, ազատություն լինել չի կարող, ասում էր նա:

Նալբանդյանը սոցիալական և ցարական միահեծան կարգերի անհաշտ թշնամի էր: Նա կոչ էր անում ժողովրդին ապստամբել. «Ռևոլյուցիոն զինված պայքարի միջոցով ազատագրվել սոցիալական ու ցարական դեպոտիզմի լծից»:

Նալբանդյանն առաջինն էր, որ հայ ժողովրդի ազատագրությունը կապեց ողա մեծ ժողովրդի ազատագրական շարժման հետ: Ի տարբերություն փր բոլոր նախորդների, նա պարզ ու հստակ տեսնում էր երկու Ռուսաստան՝ ցարական-ռեակցիոն և դեմոկրատական-ռևոլյուցիոն: Անձնական ու գաղափարական սերտ կապեր հաստատելով ողա ականավոր ռևոլյուցիոն դեմոկրատներ Չերնիշևսկու, Գերցենի, Օգարյովի և ուրիշների հետ, Նալբանդյանը կարողացավ ճիշտ ըմբռնել ու գնահատել ողաական ռևոլյուցիայի դերը ճնշված ազգերի ու ամբողջ մարդկության ազատության համար: «Ռուսիոն ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի», — գրում է նա: Ինչպես Լե-

¹ Արևմտահայ դեմոկրատների հետ Նալբանդյանի ունեցած կապերը լուսարանված են Ա. Գ. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության մեջ, Ա. Մակարյանի «Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան» գրքում, Ս. Բազյանի, Գ. Ստեփանյանի և Գ. Գասպարյանի հոդվածներում:

հաստանի, Ֆինլանդիայի, Ուկրաինայի և Վրաստանի, այնպես էլ Հայաստանի ազատությունն ու անկախությունը նախանշանը կապում էր ոտակալան ռեալիզմի հաղթանակի, ցարիզմի տապալման հետ:

Նախաճառը դեմ էր ազգերի ճնշմանն ու ասիմիլացիային, ջերմորեն պաշտպանում էր ժողովուրդների բարեկամության ու եղբայրության գաղափարը: Նա մեծ սեր ու համակրանք էր տածում հատկապես Գարիբալդիի ու Մաձձինիի գլխավորած իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ: Գարիբալդիին նա անվանում է «իտալական հերոս»: Ծաղրելով ավստրիական բռնակալությանը քրոմ, Եվրոպայի հայտնի ռեակցիոններ Մետերնիխին, որը հայտարարել էր, թե «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է», նախաճառը բերում է հռչակավոր Ֆրանսիայի խոսքերը՝ *Autrihe c'est la damnation e'ternelle!* (Ավստրիային հավիտենական նշով) և ավելացնում՝ «սուրբ Մաձձինիի և սուրբ Գառիբալդիի բարեխոսությունը անպակաս լինեն Հաբսբուրգյան տունի գլխից... Արդյոք քաղաքանի մեջ Մետերնիկը կրկնո՞ւմ է կոմս Քավուտին յուր խոսքը»¹:

Մեծ հայրենասերը, իտալական ժողովրդի հերոսական օրինակով, բռնակալների դեմ պայքարի էր կոչում հայ ժողովրդին: «Զեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ առ ի սրտե ուրախ եմ սակայն տեսանելով նորա ազատությունը և իմ ազգի տկարությունը, կրժում է սիրտս և այրում է հոգիս...»

Էստան և Վեդուլին ծխվում են, Արարատի հին վուկանի մեջ միթե՞ կրակ կմնա իսպառ... մահաբեր մտածություն»²:

Պաշտպանելով բոլոր ննշված ազգերի ազատության ու անկախության սրբազան իրավունքը, նախաճառը դրանով իսկ հայ ժողովրդի ազատագրական պայքարը իր ազգային նեղ շրջանակներից դուրս էր բերում միջազգային արեճա, ընդլայնում ու ամրապնդում էր մեր ժողովրդի ինտերնացիոնալ կապերը:

Նախաճառն անհաշտ պայքար էր մղում հայ ժողովրդի ազատագրական շարժման ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիների դեմ: Նա անողոք կերպով մերկացնում էր կղերա-ֆեոդալական ռեակցիոն տարրերին, քննադատում էր բուրժուական լիբե-

1 Մ. նախաճառ, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 85:

2 Մ. նախաճառ, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 86:

րալներին, համախմբում էր ազգի բոլոր դեմոկրատական, պրոգրեսիվ ուժերը, ամբապնդում նրանց գաղափարական ու գործնական կապերը: Մեծ ռեալիզմով-դեմոկրատի գործի ու գաղափարների վրա դաստիարակվեց ազատասեր ու հայրենասեր գործիչների մի ամբողջ սերունդ: Նախաճառն ունեցավ իր հետևողներն ու համակիրները, որոնց համար նրա նվիրական անունը դարձավ ազատության, առաջադիմության և հայրենասիրության պայքարի դրոշ:

* * *

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, XIX դարի 50—60-ական թվականներին հայ ազատագրական միտքն ու ազատագրական շարժումը զարգանում էր հասարակական տարբեր հոսանքների սուր պայքարի պայմաններում: Պայքարը դեմ էր երեք գլխավոր սուղ-դուլյունների միջև: Հասարակական մտքի երեք հիմնական հոսանք գոյություն ունեք.

ա) Կղերա-ֆեոդալական հոսանք. որն արտահայտում էր կղերի, ֆեոդալական, աղայական պորտաբույծ, շահագործող խավերի շահերը: Այդ հոսանքը հայ կյանքի ամենառեակցիոն հոսանքն էր, հայ ժողովրդի ազատության ու առաջադիմության գլխավոր թշնամին: Կղերա-ֆեոդալական ռեակցիոն հոսանքի պարագլուխներն էին արևելահայերի մեջ՝ Գաբրիել վարդապետ Այվազովսկին, իսկ արևմտահայերի մեջ՝ Հովհաննես Չամուռճյանը:

բ) Լիբերալ-բուրժուական հոսանք. որն արտահայտում էր զարգացող բուրժուալիայի շահերը: Այդ հոսանքի ներկայացուցիչները պայքարում էին կղերա-պահպանողականների դեմ և պահանջում էին ռեֆորմների միջոցով եվրոպականացնել-բուրժուականացնել կյանքը, ֆեոդալական հարաբերությունների փոխարեն աստիճանաբար զարկ տալ կապիտալիստական հարաբերություններին: Ազգային-լուսավորության, դպրոցի, լեզվի, կրոնի և մի շարք այլ հարցերում, լիբերալները, կղերա-պահպանողականների հետ համեմատած, կանոնադրեցին առաջադիմական դիրքերում և իր ժամանակին պրոգրեսիվ դեր էին կատարում: Լիբերալները դեմ էին ռեալիզմին, ազատագրական շարժումներին, ներքևից եկող ազատությանը: Այս հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին Սա. Նազարյանը, Ն. Ռուսինյանը և ուրիշները:

գ) Ռեալիզմով-դեմոկրատական հոսանք. որն արտահայտում

էր աշխատավորական լաշն խավերի հայացքները, համդիսանում էր հասարակ ժողովրդի շահերի միակ հավատարիմ պաշտպանը: Ռևոլյուցիոն-դեմոկրատները պայքարում էին հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրութեան համար, ձգտում էին Հայաստանում ստեղծել դեմոկրատական կարգեր:

Ռևոլյուցիոն դեմոկրատները անհաշտ պայքար էին մղում կղերա-ֆեոդալական ռեակցիոն հոսանքի դեմ, ժողովրդի կրթութեան ու լուսավորութեան, աշխարհաբար լեզվի և ընդհանրապես ազգային-դեմոկրատական կուլտուրայի դարգադման համար: Այս պայքարում նրանք համագործակցում էին լիբերալ-լուսավորիչների հետ:

Ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղութեան հիմնադիրը և ճանաչված առաջնորդը Միքայել Նալբանդյանն էր, իսկ նրա ամենամոտ գաղափարակիցն ու զինակիցը՝ արևմտահայ նշանավոր դեմոկրատ Հատություն Սվաճյանը:

Հայ հասարակական կյանքի դասակարգային շերտավորումն ու պայքարը, ինչ խոսք, այս երեք հոսանքներով չէր սպառվում: Կային նաև միջանկյալ ուղղութիւններ, որոնք սակայն վճռական դեր չէին կատարում: Հասարակական-քաղաքական կյանքին տոն ավտոդներ նշված երեք գլխավոր հոսանքներն էին, նրանց պայքարն էր վճռում ազգային գործերի բախար:

Հասարակական այս երեք հոսանքների պայքարը հայ փրակա-նութեան մեջ շարունակվեց նաև հետագա տասնամյակներին, քր վրա կրելով երկրի սոցիալ-տնտեսական կյանքում առաջացած նոր փոփոխութիւնների կնիքը:

Կղերա-ֆեոդալական հոսանքը, որը 1850—1860-ական թվականներին ջախջախիչ հարվածներ ստացավ ռևոլյուցիոն դեմոկրատներից և հատկապես Նալբանդյանից, կապիտալիզմի զարգացման հետևանքով ավելի ու ավելի թուլացավ, մղվեց հետին պլան և կորցրեց իր երբեմնի ազդեցութիւնը: 1870—1880-ական թվականներին այդ ուղղութեան դերը փաստորեն իրենց վրա էին վերցրել «Մեղու Հայաստանի» (խմբագիր Պետրոս Սիմոնյան) և «Նոր-Դար» (խմբագիր Սպանդար Սպանդարյան) թերթերի շուրջը համախմբված պահպանողականները և շարունակում էին պայքարը առաջադիմական ուժերի դեմ: Այստեղից չի հետևում և ճիշտ չէր լինի Պ. Սիմոնյանին կամ Ս. Սպանդարյանին նույնացնել Գ. Այ-

վազովսկու կամ Հ. Չամուռճյանի հետ: Նրանց հայացքների մեջ եղած ընդհանուր գծերի հետ մեկտեղ, կային նաև էական տարբերութիւններ: Պահպանողականները ծվարել էին հողերականութեան հովանու տակ, դեմ էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական և ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժումներին:

Լիբերալ-բուրժուական հոսանքը 1860—1870-ական թվականներին Ռուսաստանում և Անդրկովկասում անցկացված բուրժուական ռեֆորմների ու կապիտալիզմի զարգացման շնորհիվ ամրապլանդեց իր դիրքերը և, կարելի է ասել, 1870—1880-ական թվականներին դարձավ հայ իրականութեան ամենաազդեցիկ ուղղութիւնը: Այդ ուղղութեան կենտրոնական օրգանն էր «Մշակ»-ը (լույս էր տեսնում Ռիֆլիսում 1872 թ. հունվարի 1-ից), իսկ պարագլուխներից ու գաղափարախոսներից ամենաաչքի ընկնողը՝ Գրիգոր Արծրունին (1845—1892): Մշակականները Արծրունու գլխավորութեամբ պայքարում էին մեղվականների ու նոր-դարականների պահպանողական, հետադիմական հայացքների դեմ: Արծրունին շարունակում էր Նազարյանի և Հյուսիսափայլի դիժը՝ ազգային լուսավորութեան, կրթութեան, դաստիարակութեան, լեզվի, գրականութեան և մի շարք այլ հարցերում: Նա կապիտալիզմի, բուրժուական կարգերի կողմնակից էր, պայքարում էր ֆեոդալիզմի ու ճարտարագործական մնացորդների դեմ:

Արևմտահայերի ազատագրութեան հարցում Արծրունին այն տեսակետն էր պաշտպանում, որ նրանք, բալկանյան սլավոն ժողովուրդների նման, պետք է ապստամբեն, զենքի դիմեն և Ռուսաստանի օգնութեամբ թոթափեն թուրքական բռնակալութեան լուծը: Արևմտահայերի ազատագրութեան այդ տեսակետն էին պաշտպանում ու պրոպագանդում նաև ազատասեր ու հայրենասեր գրողներ Ռ. Պատկանյանն ու Ռաֆֆին, ժմենալով հանդերձ ազգային-դեմոկրատական հայացքներ:

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը նոր հույսեր էր արթնացրել հայ ժողովրդի մեջ: Ռուսական օրինատարան, ավելի քան երբևէ, դարձել էր տիրապետող: Թուրքական դաժան լծի տակ հեծող հայերը իրենց հայացքը հանել էին դեպի Ռուսաստան, նրա հաղթանակի հետ էին կապում իրենց փրկութիւնը: Վճռական այդ պահին, Արծրունին քննադատում էր եվրոպական մեծ տերութիւնների, հատկապես Անգլիայի ու Գերմանիայի խար-

դախ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, հայկական հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի օգնության հետ: Նա ռուսական օրիննտացիայի կողմնակից էր: Արևմտահայերի ազատագրության և ռուսական օրիննտացիայի հարցերում հակառակ դիրքերի վրա էին կանգնած ազդային-պահպանողականները:

Պատմական այս փաստերը անտեսելով, որոշ հեղինակներ այն միտքն էին պաշտպանում, որ իբր թե հայ ազատագրական շարժման մեջ սկզբից ևնթ գոյություն է ունեցել երկու օրիննտացիա՝ բուրժուազիան հարել է եվրոպական, իսկ դեմոկրատիան՝ ռուսական օրիննտացիային: Դա, իհարկե, ճիշտ պատմական մտանցում չէ. այդ սխեմայով պատմությունը միայն կարելի է ազավազել, բայց լուսարանել՝ երբեք:

Լիբերալ-բուրժուական հոսանքից սերվեցին, հայկական լիբերալիզմի գաղափարական ակունքներից սնվեցին, այս ու այն շափով այդ ուղղության ժառանգորդներ հանդիսացան 1880—1890-ական թվականներին հանդես եկած մանր բուրժուական և բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունները՝ արմենականներն (1885 թ.), մասամբ հնչակյանները (1887 թ.) և դաշնակցականները (1890 թ.):

Տակավին 1906 թվականին Ստեփան Շահումյանը խոսելով հայ հասարակական հոսանքների ու պարտիաների պայքարի մասին, գրում էր. «Մշակական և դրոշակական — դրանք, չնայած իրենց փոխադարձ հայհոյանքներին, միևնույն մեղալի երկու կողմերն են, միևնույն բուրժուազիայի հարագատ զավակները, այն միակ տարրերով թերևս, որ նրանց մի մասը սիրահար է քնքուշ ժպիտների, մյուսը՝ բռունցքի ու վառողի:

10—15 տարիների ընթացքում Դրոշակը* եղել է Մշակի արտասահմանյան հրատարակությունը: Առանց խանգարելու միմյանց, նրանք ծառայել են միևնույն բուրժուական գործին, աշխատել են խեղդել կովկասահայերի մեջ ամեն մի ռևոլյուցիոն ինքնագործունեություն և թոմսավորել են հայ բանվորության հոգին օգիտակցությունը»¹:

* «Դրոշակ»-ը դաշնակցության կենտրոնական օրգանն էր, որը 1891 թ. մայիսից լույս էր տեսնում Քիֆլիսում, իսկ 1895 թ. փոխադրվեց Ժնև:

¹ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 250—251, 1955, Երևան, բնագծում իմն է.—Վ. Պ.:

Ինչ վերաբերում է ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքին, ապա պետք է ասել, որ Նալբանդյանի մահից հետո այդ հոսանքի գործունեությունը զգալի կերպով թուլացավ: Յարական և սովյանական դաժան կարգերում ռևոլյուցիոն դեմոկրատները փաստորեն գուրկ էին լեզավ գործելու հնարավորությունից: Ծանր էր նրանց աշխատանքի ու պայքարի պայմանները, զորեղ էին նրանց ներքին ու արտաքին թշնամիները: Նալբանդյանի կորուստը մեծ եղավ ամբողջ հայ ժողովրդի համար. դա խիստ բացասաբար անդրադարձավ նաև ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի գործունեության վրա:

Նալբանդյանից հետո շփվեց նրա նման մարտնչող ռևոլյուցիոն-դեմոկրատ, փիլիսոփա-մտածող: «Երկու տողն» ու «Երկրագործությունը» մնացին որպես ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքի շգերագնացված գործեր: Նալբանդյանը հանդիսացավ մինչ մարքսիստական շրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի ամենախոշոր դեմքը:

Այս, իհարկե, չի նշանակում, թե ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքը դադարեց գոյություն ունենալուց, Նալբանդյանի հետ գերեզման իջան նաև նրա գործն ու գաղափարները:

Ճիշտ չեն նրանք, սվքեր կարծում են, թե Նալբանդյանը որպես մի լուսատու աստղ երևաց մեր երկնակամարի վրա և ապա անհետ կտրավ: Նա ծնվեց մեր ժողովրդի ծոցից, դարձավ նրա իղձերի ու ցանկությունների լավագույն արտահայտիչը, նրա ազատագրական պայքարի ռեզնանսն ու ղեկավարը: Նրա ազատասիրական ու հայրենասիրական գործն ու գաղափարները խոր արմատներ դրեցին մեր ժողովրդի մեջ, սերտնդներ դաստիարակվեցին նրա գործի ու գաղափարների վրա:

Նալբանդյանն օւնեցավ իր հետևորդները, որոնք չնայած ցարական ու սովյանական դահիճների և հայ ռեակցիոնիստների անլուր հալածանքներին, շարունակեցին նրա գործը: Հայ ժողովուրդը միշտ վառ պահեց ազատության երզլի ու մարտիկի պայծառ հիշատակը:

Նալբանդյանի ցանած սերմերը շուտով սկսեցին ծիլեր արձակել: Նրա ազատասիրական ու հայրենասիրական գաղափարները մուտք գործեցին Հայաստանի զավառներն ու գյուղերը և ոտքի հանեցին դեմոկրատական խավերին: 1869 թվականին Ալեքսան-

դրապուրում և 1874 թվականին Մեծ Դարաքիլիսայում հիմնված գաղտնի խմբակները այդ շարժման կոնկրետ արտահայտություններից էին, հայրենասիրական ու ազատագրական առաջին խմբակները Արևելյան Հայաստանում:

* * *

Այժմ մի քանի խոսք XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումների գնահատության մասին:

Հայ ազատագրական շարժումների ճիշտ, գիտական-մարքսիստական գնահատությունը մեզ համար կարևոր նշանակություն ունի, քանի որ դրա հետ անխզելիորեն կապված են մեր հասարակական-քաղաքական մտքի, կուլտուրական ժառանգության և բազմաթիվ նշանավոր գրողների ու քաղաքական գործիչների գնահատության հարցերը:

Անցյալում գրականության մեջ արտահայտվել են երկու հակադիր, իրարամերժ տեսակետներ: Դրանցից մեկն այն էր, որ անխտիր բոլոր հայ ազգային շարժումները համարում էին ժողովրդա-ազատագրական շարժումներ: Այդ տեսակետը պաշտպանողները (Մարուխան¹ և ուրիշներ) անտեսում էին ազգային շարժման մեջ եղած սոցիալ-դասակարգային ներհակությունները, հասարակական տարբեր հոսանքները: Հայ ազատագրական շարժումը բուրժուական պատմաբանները դիտել են որպես մի միասնական շարժում: Ժողովրդա-ազատագրական շարժման քողի տակ նրանք ներկայացրել են նույնիսկ այնպիսի շարժումներ, որտեղ ժողովուրդը վճռական դեր չի խաղացել, շարժման նախաձեռնությունն ու ղեկավարությունը պատկանել է բուրժուազիային, շարժման բովանդակությունը եղել է բուրժուական: Բուրժուական հեղինակները այդպես վարվել են ժողովրդին խաբելու, իրենց գործը ամբողջ ժողովրդի գործ ներկայացնելու, ժողովրդին բուրժուազիայի գրոշխուրդը համախմբելու և օգտագործելու նպատակով:

Մյուս տեսակետն այն էր, որ առհասարակ ժխտում էին մեր ազգային-ազատագրական շարժումների պրոգրեսիվ նշանակությունը:

¹ Տե՛ս Մարուխան, Առաջին ժողովրդական շարժումը տաճկական Հայաստանում, «Գործ», 1917, № 3, Բաքու:

նր, անխտիր բոլոր շարժումները կապում էին բուրժուազիայի հետ և որովհետև բուրժուազիային ի սկզբանե համարում էին կոնտրոս-լյուցիտն, ուստի րեակցիոն էին համարում նաև այդ շարժումները: Այդ տեսակետը պաշտպանողները անտեսում էին ազգային-ազատագրական շարժման մեջ եղած ժողովրդա-դեմոկրատական շարժումը, որն ուղղված էր ազգային ու սոցիալական ճնշման դեմ և ամբողջապես պրոգրեսիվ էր:

Չի կարելի համաձայնվել այս տեսակետներից և ոչ մեկի հետ, քանի որ դրանք գիտական չեն, աղճատում, խեղաթյուրում են մեր ազգային-ազատագրական շարժումների պատմությունը:

Հայ ազատագրական շարժումները և առհասարակ մեր ժողովրդի պատմական զարգացման ամբողջ պրոցեսը միայն և միայն մարքս-լենինյան մեթոդոլոգիայով կարելի է ճիշտ կերպով լուսաբանել ու գնահատել: Մարքսիզմ-լենինիզմը մեզ սովորեցնում է՝ կոնկրետ, պատմական մտեսցում տմենալ հասարակական երեվույթներին ու գործիչներին, տեղի և ժամանակի պայմաններում քննել ու գնահատել ազգային շարժումները, բոլոր ժամանակների, բոլոր տեղերի, բոլոր շարժումները շլցնել մի տոպրակի մեջ և վերսն միատեսակ յառլիկ չկայցնել, ինչպես այդ անում են բուրժուական պատմաբանները և նրանց ապրոգետները:

«Ազգերի ինֆեռոշման իրավունքի մասին» իր հայտնի հոդվածում Վ. Ի. Լենինը գրում է. «Սոցիալական անխտիր բոլոր հարցերը վերլուծելիս մարքսիստական թեորիայի անպայմանական պահանջն է՝ այդ հարցերը դնել սրոշ պատմական շրջանակների մեջ, և ապա, եթե խոսքը վերաբերում է մի երկրի... կատարել այն կոնկրետ առանձնահատկությունների հաշվառումը, որոնցով այդ երկիրը միևնույն պատմաշրջանի սահմաններում տարբերվում է մյուսներից... անհրաժեշտ է խիստ կերպով բաժանել ազգային շարժումների տեսակետից արմատապես իրարից տարբերվող կապիտալիզմի երկու էպոխաները: Մի կողմից՝ դա ֆեոդալիզմի ու աքստլյուտաիզմի կրախի դարաշրջանն է, բուրժուա-դեմոկրատական հասարակության և պետության կազմավորման էպոխան, երբ ազգային շարժումներն, առաջին անգամ մասսայական են դառնում... Մյուս կողմից՝ մեր առաջ է լիովին կազմավորված կապիտալիստական պետությունների դարաշրջանը, վաղուց հաստատված կոնստիտուցիոն կարգերով, պրուլետարիատի և բուրժուազիայի խիստ

զարգացած հակամարտութեամբ,— մի դարաշրջան, որը կարելի է կապիտալիզմի փլուզման նախօրջակ անվանել»¹։

Նշելով այդ էպոխաների պատմական ժամանակագրական սահմանները, Վ. Ի. Լենինն ասում է. «Առաջին դարաշրջանը, ֆրանսիական մեծ ռևոլյուցիայից մինչև ֆրանկո-պրուսական պատերազմը, բուրժուազիայի վերելքի, նրա լիակատար հաղթանակի դարաշրջանն է։ Դա բուրժուազիայի վերընթաց դիմն է, ընդհանրապես բուրժուա-դեմոկրատական շարժումների, մասնավորապես, ազգային-բուրժուական շարժումների դարաշրջանն է, իրենց դարն ապրած ֆեոդալական-աբսոլյուտիստական հիմնարկների արագ խորտակման դարաշրջանն է։ Երկրորդ դարաշրջանը բուրժուազիայի լիակատար տիրապետության և անկման դարաշրջանն է, պրոպրետարի բուրժուազիայից ռեակցիոն և ամենառեակցիոն ֆինանսական կապիտալի անցման դարաշրջանը»²։

Քննադատելով Ա. Պոտրենովին, Վ. Ի. Լենինը գրում է. «Մարքսիստները երբեք չեն բացասել ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ մղվող բուրժուական-ազգային ազատագրական շարժումների պրոպրետարիզմը»։ բայց երկրորդ դարաշրջանում «Ծիծաղելի կլինեք նույնիսկ մտածել պրոպրետարի բուրժուազիայի մասին, պրոպրետարի բուրժուական շարժման մասին»³։

Կոնկրետացնելով իր խոսքը առանձին երկրների ու շարժումների վերաբերյալ, Լենինը գրում է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ թուրքիայի պատերազմի և հայկական հուլումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակություն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»... Գլխավոր դասակարգը, որն այն ժամանակ, այդ պատերազմների ժամանակ և մասնակցելով այդ պատերազմներին, գնում է վերընթաց գծով և որը միայն ինքը կարող էր ճնշող ուժով դուրս գալ ֆեոդալական-աբսոլյուտիստական հիմ-

նարկությունների դեմ,— բուրժուազիան էր... դարաշրջանի ընդհանուր գիծը հենց բուրժուազիայի պրոպրետարիզմը»¹։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի այս դրույթներով, համարձակ կարելի է ասել, որ վերը նշված հայ ազգային-ազատագրական շարժումները և պրոպրետարիզմը շարժումներ էին²։ Այդ շարժումներն ուղղված էին թուրքական հետամնաց ֆեոդալական բռնակալության և ցարական աբսոլյուտիզմի դեմ։ Բուրժուազիան և դեմոկրատական լայն խավերը, ձիշտ է, տարբեր ձևով ու տարբեր դիրքերից, պայքար էին մղում նաև ներքին թշնամու՝ կղերա-ֆեոդալական ռեակցիայի, ճորտատիրության ու միջնադարի մնացորդների դեմ։ Այս պայքարում բուրժուազիան պրոպրետարիզմը դեր էր կատարում։

Կ. Մարքսը «Կոմունիստական մանիֆեստ»-ում, Վ. Ի. Լենինը «Ուրիշի դրոշակի տակ» և այլ աշխատություններում քանիցս նշել են, որ պատմության մեջ բուրժուազիան կատարել է պրոպրետարիզմ և որոշ տեղերում նույնիսկ ռևոլյուցիոն դեր։ Հայ բուրժուազիան մեր պատմության մեջ ռևոլյուցիոն դեր զբեղե չի կատարել։ Նրա կեցությունը, սոցիալ-տնտեսական պայմանները հնարավորություն չեն տվել նման դեր կատարելու։ Նա եղել է վախկոտ, անհետևողական, էգոիստ ու շահամոլ։ Գտնվելով ցարիզմի ու սուլթանիզմի տիրապետության տակ, զրկված լինելով տնտեսական ու քաղաքական ինքնուրույն գործունեությունից, նեղվելով ներսից ու դերսից, հայ բուրժուազիան հաճախ դիմում էր կոմպրոմիսներին, ժողովրդի ու հայրենիքի շահերը զոհաբերում էր իր նեղ դասակարգային շահերին, դեմ էր ներքեից եկող մասսայական ռևոլյուցիոն շարժումներին և այլն։

Ինչպես տեսանք, հայ լիբերալ-բուրժուազիայի առաջին դասակարգայիններից մեկը՝ Մտ. Նազարյանը, ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանի հետ միացած, պայքարում էր կղերա-ֆեոդալական ռեակցիայի, միջնադարի մնացորդների դեմ։ Այդ պայքարն անկասկած պրոպրետարիզմ էր, նպաստում էր ժողովրդի ազատության ու առաջադիմության դործին։

Կղերա-պաշպանողական ուղղության, ֆեոդալիզմի ու ճորտատիրության մնացորդների դեմ էր ուղղված նաև բուրժուական մր-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 498—499։

² Վ. Ի. Լենին, Երկեր հ. 21, էջ 173—174։

³ Նույն տեղում, էջ 167։

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 175։

² Այս մասին տե՛ս մեր հոդվածը Գ. Ա. Տեղեկագիր, 1946, № 11—12, էջ 52—53։

տածող Գր. Արծրունու և «Մշակ»-ի պայքարը: Չի կարելի ժխտել, որ «Հյուսիսսփայլ»-ը և «Մշակ»-ը «Երևակ»-ի, «Մասյաց աղավնու», «Մեղու Հայաստանի» և «Նոր-դար»-ի հետ համեմատած առաջադիմական օրգաններ էին: Փոխաբերելով Վ. Ի. Լենինի միտքը, կարող ենք ասել, որ տվյալ կոնկրետ պատմական էպոխայում հայ բուրժուազիայի վերընթաց գիծը՝ նրա պրոգրեսիվությունն էր:

Այստեղ չպետք է անտեսել մի կարևոր հանգամանք. այդ այն է, որ ինչպես հայ դեմոկրատիան, այնպես էլ հայ բուրժուազիան, անխտիր բոլոր հարցերում չէ, որ միասնական էին: Ելնելով իրենց կյանքի ու գործունեության տարբեր պայմաններից, ազգաբնի շարժման մեջ նրանք տարբեր հայացքներ ու գործելակերպ էին գրասերում: Այսպես, օրինակ, Գր. Արծրունին և նրա համախոհները հայերին կոչ էին անում ղեկի գիմել, ապստամբել թուրքական բռնակալության դեմ, բայց մյուս կողմից արևմտահայերի ազատագրությունը կապում էին ցարական Ռուսաստանի օգնության հետ: Գրան հակառակ, արևմտահայ բուրժուազիայի ներկայացուցիչները հանդես էին գալիս ցարիզմի դեմ, հույսեր կապում և կոմպրոմիսներ կնքում թուրքական կառավարության հետ: Այս և նման փաստերը մի անգամ ևս ցույց են տալիս, որ հայ բուրժուազիան և նրա տարբեր թևերը, իրենց պրոգրեսիվության շրջանում իսկ, ավելի շատ և ավելի շուտ մտածում էին իրենց նեղ դասակարգային շահերի, քան ժողովրդի ու հայրենիքի մասին:

Մեր ազգային-ազատագրական շարժման պատմության կարեվոր հարցերից մեկն էլ ազգային և սոցիալական-դասակարգային պայքարի կապի հարցն է: Որոշ հեղինակներ հաճախ շփոթում են այդ երկու հարցերը: Ֆեոդալիզմի, կալվածատեր-ճորտատերերի դեմ մղված գյուղացիական շարժումները չի կարելի հույնացնել ազգային-ազատագրական շարժումների հետ: Գրանք տարբեր բնույթի, տարբեր բովանդակություն ունեցող և տարբեր նպատակներ հետապնդող շարժումներ են: Գյուղացիական շարժման հիմնական խնդիրը՝ գյուղացիների ազատագրումն է ֆեոդալ-կալվածատերերի իրավական ու տնտեսական ճնշումներից ու հարստահարումներից, պայքարն այստեղ գնում է հիմնականում հողի ու ազատության համար: Իսկ ազգաբնի-ազատագրական շարժման հիմնական խնդիրը՝ ազգի ազատության ու անկախության հարցն է, պայքարն այստեղ գնում է հիմնականում ազգային ճնշման դեմ: Այս շարժումներն, ինչպես ասել ենք, սերտորեն կապված էին միմ-

յանց հետ, բայց նույնը չէին: Եթե գյուղացիական շարժման մեջ գլխավոր շարժիչ ուժը գյուղացիությունն է, այդ դեռ չի նշանակում, թե ազգային-ազատագրական շարժումների մեջ էլ միայն գյուղացիությունը կարող էր լինել գլխավոր շարժիչ ուժը:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Անդրկովկասում և Հայաստանում բանվոր դասակարգի կազմավորման ու բանվորական շարժման առաջացման, մարքսիզմի տարածման ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման էպոխայում, բուրժուական դադարեց պրոգրեսիվ դեր կատարելուց և վերջնականապես կանգնեց ռեակցիոն դիրքերի վրա: Հայ բուրժուազիան ուղ ծնվեց և շուտ ծերացավ: Նրա կարճատև վերելքին հաջորդեց վայրէջքի շրջանը, պրոգրեսիվ դերին՝ ռեակցիոն դերը: Այս շրջանում հասարակության գլխավոր պրոգրեսիվ ուժը բանվոր դասակարգն էր՝ նրա բնական դաշնակիցը՝ աշխատավոր գյուղացիությունը, բանվորների ու գյուղացիների շահերի միակ հավատարիմ ու հետևողական պաշտպանը՝ Կոմունիստական պարտիան:

Բուրժուական և մանրբուրժուական մտածողները չկարողացան և չէին էլ կարող, եիշտ ուղի նշել Հայաստանի ազատագրության համար: Հայ բազմաշառ ժողովրդի ազատագրության միակ եիշտ ուղին առաջին անգամ ցույց տվեցին կոմունիստները, մարքսիստ-լենինիստները: Հայտնի է, որ տակավին 1894 թվականին, «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանիչ Հովսեփ Աթարբեկյանին գրած նամակում, Ֆ. Էնգելսը իր համակրանքն արտահայտելով հայ ժողովրդի նկատմամբ, «մի ճնշված ժողովուրդ, որը դժբախտություն ունի գտնվելու թուրքական բռնակալության Սցիլլայի և ոտակական բռնակալության խորիքայի արանքում», ասում է. «Իմ անհատական կարծիքն այն է, որ Հայաստանի ազատությունը... կարող է տեղի ունենալ միմիայն ուսական ցարիզմի տապալման օրը»¹:

Հայ մարքսիստների օրգան «Պրոլետարիատի կոլիլը» 1903 թրվականին առաջին անգամ տպագրելով գիտական կոմունիզմի հիմնադիրներից մեկի՝ Ֆ. Էնգելսի այս նամակը, և լիովին համաձայնվելով նրա հետ, ի պատասխան դաշնակցականների հերյուրանքների, գրում էր. «Ուղարկելով Տանկաստանում կովոդ եղբայրներին մեր սցիլլախական ողջույնը՝ մենք բացարձակ կերպով

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 29, стр. 341.

հայաստանում ենք մեր համակրությունը բազմաշարշար Տանկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի ուրիշ կարելի է շուտ»¹:

Մարքսիստները, որոնք դեմ էին ժողովուրդների ամեն տեսակի ճնշման, բնական է, չէին կարող չպաշտպանել նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Այդ պայքարի հաղթանակը նրանք կապում էին ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի հետ: Պատմությունը լիովին հաստատեց մարքսիստական տեսակետի ճշտությունը: Ցարիզմի տապալումից հետո, Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, հայ ժողովուրդը վերջնականապես ազատագրվեց ազգալին և սոցիալական դարավոր ճնշումից:

¹ «Պրոլետարիատի կոիլը», 1903, ապրիլ, № 2—3, էջ 19:

ՊԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՍՏՈՒՐՈՒԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԼԵՔՍԱՆԳՐԱՊՈԼՈՒՄ XIX ԳՍՐԻ ԿՆՍԵՐԻՆ

Արևելահայերի մեջ առաջացած ազգալին-ազատագրական առաջին խմբակը, ինչպես ասվեց, 1869 թվականին Ալեքսանդրապոլում հիմնված խմբակն էր: Դա ուներ իր սոցիալ-տնտեսական պատճառները և սերտորեն կապված էր Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի նախընթաց շրջանի զարգացման հետ:

Մինչև Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը, Ալեքսանդրապոլը կամ նախկին Կումայրին-Գյումրին անշնչան, հետամնաց մի փոքրիկ գյուղ էր: Գյումրին մտնում էր Շորագյալի սուլթանության մեջ, որի կենտրոնն էր Արթիկը:

Շորագյալի սուլթանությունը ֆեոդալական տիպի մասնատված մի իշխանություն էր: Տեղական սուլթանները, բեկերն ու ազալարները իրենց ձեռքը կենտրոնացնելով լավագույն հողերը, դաժան կերպով ճնշում ու հարստահարում էին գյուղացիներին: Բայց դա չարիքի մի կողմն էր: Ընկած լինելով պարսկական ու թուրքական սահմանագլխում, Շորագյալի սուլթանությունը հաճախ ենթարկվում էր պարսիկ խաների ու թուրք փաշաների ասպատակություններին:

Թուրքական ու պարսկական բռնակալներից ազատագրվելու համար, ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Շիրակի հայերը դիմում էին Ռուսաստանի օգնությանը, ձգտում էին թոթափել իրենց դարավոր կեղեքիչների դաժան լուծը և միանալ Ռուսաստանին:

1801 թվականին, երբ Արևելյան Վրաստանի հետ միասին Ռուսաստանի տիրապետության տակ է անցնում նաև Լոռի-Փամ-

բակի շրջանը, Շիրակի հայերը քանիցս դիմում են ռուսական սահմանապահ զորքերի օգնությանը: Ընդառաջ գնալով Շիրակի բնակչության ցանկությանը և ապա, տեսնելով, որ Երևանի խանը պատրաստվում է իր զորքերը մտցնել Շորագյալ, գեներալ-մայոր Նեսվետսկը 1805 թվականի մարտի 30-ին Ղարաքիլիսայից մղտնում է Շորագյալ և զրավում է Արթիկը:

Երևանի Մամադ-խանի զորքերը, մոտ 3000 հոգի, կենտրոնանալով Քալինում, սկսում են հարձակումներ գործել Արթիկի և Շորագյալի մյուս գյուղերի վրա: Մակայն հանդիպելով ռուսական զորամասերի ուժեղ դիմադրությանը, նրանք նահանջում են դեպի Երևան:

Այսպիսով, 1805 թվականի մարտից Շորագյալի սուլթանությունը անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ: 1805 թ. հոկտեմբերի 25-ին Նլիզավետպոլի բերդում գեներալ Յիգիանովը Բուդաղ-սուլթանի հետ պայմանագիր է կնքում, որի համաձայն Շորագյալը մեկընդմիջտ միանում է Ռուսաստանին¹:

Շորագյալի միացումը Ռուսաստանին խոշոր նշանակություն ունեցավ տեղական բնակչության համար: Այդ ակտով ամրապնդվեցին նաև Ռուսաստանի ռազմա-ստրատեգիական դիրքերը՝ Թուրքիայի և Պարսկաստանի սահմանազլխում: Գյումրին հետզհետե վերածվեց հուսարի մի ամրության, ոչ միայն Շորագյալի, այլև Փամբակի շրջանը թուրքերի ու պարսիկների հարձակումներից պաշտպանելու համար:

Թուրքիան ու Պարսկաստանը երբեք չէին հաշտվում կատարված փաստի հետ: Նրանք քանիցս փորձեցին ռուսներից ետ խլել Շորագյալը, բայց հաջողություն չունեցան: 1807 թ. մայիսի 30-ին թուրքական սերասկյար Յուսուֆ փաշան 10 հազար զինվորներով և 20 հրանոթով գրոհում է Գյումրու վրա: Ռուսական փոքրաթիվ զորքերը, հմուտ զորավար Նեսվետսկի հրամանատարությամբ, համառ մարտեր մղելով, հարկադրում են թշնամուն ետ քաշվել: Հունիսի 5-ին թուրքերը երկու անգամ գրոհում են Գյումրու վրա, ներխուժում են գյուղի փողոցները, բայց կովկասյան զրենագեթական զնդի քաջարի զինվորները նրանց դուրս են շարտում և ետ մղում Ախուրյանի աջ ափը²: Այս մարտերի ժամանակ Յուսուֆ-

փաշան կորցնում է իր սեփական զորոշակը և ավելի քան 200 սպանված:

Ավելի կատաղի է լինում 1807 թ. հունիսի 18-ի ճակատամարտը: Գեներալ Գուրգովիչի զորքերը, թվով 7.000 մարդ, Գյումրու մոտ, վաղ առավոտյան գրոհում են Յուսուֆ-փաշայի 20 հազարանոց բանակի վրա: Ճակատամարտը տևում է 7 ժամ: Թուրքերը չգիմանալով ռուսների հարվածներին, ավելի քան 1000 սպանված և մեծ քանակությամբ ռազմամթերք թողնելով մարտի դաշտում, խուճապահար փախչում են դեպի Կարս³:

Շորագյալը գրավելու մի շարք փորձեր են կատարվում նաև հետագա տարիներին: Էրզրոմի սերասկյարը, ինչպես մինչև Գյումրիի ճակատամարտը, այնպես էլ դրանից հետո, ամեն կերպ աշխատում էր համախմբել Երևանի խանի, Կարսի, Բայազետի Ախլայխայի փաշաների զինված ուժերը և միացյալ ճակատով հարձակվել ռուսական զորքերի վրա, նրանց դուրս քշել Շորագյալից ու Փամբակից և ամբողջ Վրաստանից:

1809 թվականի հոկտեմբերից Գյումրիից մայր Կանանովը զվարժոր հրամանատար Տորմասովին հայտնում է, որ պարսկական զորքերը Աբբաս-Միրզայի հրամանատարությամբ մտադիր են կենտրոնանալ Ապարանում, Նաղի-բեկին հրամայված է կտրել Շորագյալի ու Փամբակի ճանապարհը, Վրաստանի գահաժառանգ Ալեքսանդրը անցել է Ախլայխա և պատրաստություններ է տեսնում ռուսական զորքերի վրա միացյալ հարձակում գործելու համար²: Հուլիսի 21-ին Գյումրիի մոտ ուժեղ մարտեր են տեղի ունենում ռուսների և պարսիկների միջև, որն ավարտվում է վերջիններիս պարտությամբ:

1810 թ. օգոստոսի 12-ին Արթիկի և Գյումրու միջև եղած ճամբարից գեներալ-մայոր Պորտնյագինը Տորմասովին հայտնում է, որ Երևանի Հուսեյն-խանը 5 հազար հեծյալներով պատրաստվում է հարձակվել Շորագյալի վրա և միանալ Ախլայխայի Շերիֆ-փաշայի հետ³: Երեք օր հետո նա զեկուցում է. «Իմ Գյումրի գալուց մի ժամ անց, ես թնդանոթային կրակոցներ լսեցի Արթիկից և տեսա այրվող դաշտը: Անմիջապես մեկնեցի այնտեղ. Ար-

¹ См. Акты, собранные Кавказскою археографическою комиссиею. Т. II, стр. 577—578, 1868, Тифлис (հետագայում Акты).

² Акты, т. III, стр. 546.

¹ Акты, т. III, стр. 548—549.

² Акты, т. IV, стр. 690—691.

³ Նույն տեղում, էջ 725:

թիկի մոտ եւ իմացա, որ պարսկական հեծելազորը Հասան-խանի և Իսմայիլ-խանի գլխավորությամբ երևացել են Արթիկի դաշտում, այրել են հացահատիկի 5 դեզ, հարձակվել են զնդապետ Ուրաղովի շոկատի վրա, բայց պարտություն կրելով քաշվել են Ապարանի կողմը»¹:

1811 թ. օգոստոսի 13-ին, դեկտեմբերի 2-ին և 1812 թ. օգոստոսի 13-ին, դեկտեմբերի 2-ին Տորաբազարի շրջանի գործերի հրամանատար գեներալ-մայոր Լիսանե-վիչին հայտնում է, որ թուրքական սերասկյարը մոտ 8000 մարդուց կազմված զորք է կենտրոնացնում Կարսում և Ախլախում, առաջարկել է Երևանի Հուսեյն-Ղուլի-խանին, որպեսզի նա «պարսկական զորքերով հարձակում դործի Ղարաբախի վրա, իսկ սերասկյարը՝ իր թուրքական զորքերով Գյումրու և Արթիկի վրա»²:

1812 թ. հոկտեմբերին պարսկական զորքերը Երևանի կողմից հարձակվում են Փամբակի և Շորաբազարի վրա, Դիլիջանի կողմից մտնում են Բորչալու, կողոպտում ու գերում են տեղական բնակիչներին շատերին: Սակայն, ռուսական զորքերը հաջողությամբ ետ են մղում թշնամուն և ազատում են բնակիչներին³:

Այսպիսով, 1804—1813 թթ. ռուս-պարսկական և 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների տարիներին ո՛չ թուրքական և ո՛չ էլ պարսկական զորքերին չհաջողվեց զրավել Շորաբազար: Բուխարեստի (1812 թ.) և Գյուլիստանի (1813 թ.) պայմանագրերից հետո, Փամբակ-Շորաբազարի սահմանամերձ շրջաններում բընակչությունը մի փոքր շունչ քաշեց պարսկական ու թուրքական զավթիչների հարձակումից: Բայց այդ երկար շտեմեց:

1826 թվականի հուլիսին, առանց պատերազմ հայտարարելու, պարսկական 60 հազարանոց բանակը Աբբաս-Միրզայի հրամանատարությամբ ներխուժում է Անդրկովկաս: Նրա խնդիրն էր՝ Ղարաբաղի-Նիղապետպոլի վրայով գրավել Թիֆլիսը, իսկ Երևանի վրայով՝ Փամբակ-Շորաբազարը և դուրս մղել ռուսներին Անդրկովկասից: Չափազանց ծանր դրություն էր ստեղծվում Անդրկովկասի ժողովուրդների և ռուսական փոքրամասերի համար: Պատերազմի սկզբում պարսկական զորքերը որոշ հաջողություններ

ունեցան և զգալի կորուստներ պատճառեցին սահմանապահ զորամասերին և տեղական բնակչությանը:

Օգտվելով ստեղծված դրությունից, Երևանի սարդարի եղբայր Հասան-խանը իր զորքերով հարձակվում է Փամբակի և Շորաբազարի վրա: 1826 թ. հուլիսի 16-ին նրանք գրոհում են Միրաբի վրա և ներխուժում Շորաբազար: Ռուսական սահմանապահ զորամասերը Սավարսամիձեի հրամանատարությամբ կռվով նահանջում են դեպի Գյումրի: Խլի-Ղարաբախիսա գյուղում ռուս զինվորները և հայ գյուղացիները հերոսական դիմադրություն են ցույց տալիս խանի զորքերին: Բայց թշնամուն հաջողվում է գրավել գյուղը, որտեղ նըրանք, ինչպես ժամանակակիցներն են վկայում, սարսափելի ավերածություններ են կատարում և 150 հոգի գերի վերցնում¹:

1838 թվականին սենատոր Գանի հետ Հայաստանում կատարած իր ճանապարհորդական ուղեգրություններում Խ. Աբովյանը խոսելով Խլի-Ղարաբախիսայի հերոսամարտերի մասին, հետևյալն է գրում. «Արևսահրապոլից 9 վերստ հեռավորության վրա գտնվում է Խլաբախիսա գյուղը, ուր տները ավելի հողակույտի են նման, քան մարդկանց բնակություն... Այստեղ թափեց իր անողորմ դաժնություն թուրքը Երևանի արյունաբերու կուսակալ Հասան-խանը... Երևանցի հայերը Խլաբախիսայի բնակիչներին հայտնել էին զոտչանալ և սրանք հավաքելով իրենց բոլոր կայքը, գյուղի բնակչությանը սալից բերդ էին շինել, փրենց անձը պահպանելու համար: Մի առավոտ, նախքան արեգակի ծագելը, երբ թշնամու զորքը հարձակվեց, հայերը շտեմնված քաջությամբ պատերազմ մղեցին նըրանց դեմ և շուրջ ժամ թշնամին չհամարձակվեց մոտենալ նրանց»²:

Այնուհետև նկարագրելով պարսկական զորքերի գաղանթությունները, Աբովյանը գրում է. «Պարսիկները սրախողխող արեցին բոլոր ծեղունիներին, այրեցին բոլոր տները, ավար վերցրին նրանց ամբողջ ունեցվածքը և 200 դեռահասների գերի տարան»³:

Պարսկական զորքերի և տեղական խաների խժժությունները երկար չեն տևում: Ռուսական զորքերը համարելով և վերադասավորելով իրենց ուժերը, հարձակման են անցնում և 1826 թվականի աշնանը թշնամուն դուրս են մղում Նիղապետպոլի, Ղարաբաղի,

¹ Акты, т. IV, стр. 727.

² Նույն տեղում, էջ 775.

³ Акты, т. V, стр. 676—678.

¹ Акты, т. VI, ч. 2, стр. 355.

² Խ. Աբովյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 48, 1956, Երևան:

³ Նույն տեղում, էջ 47. քաղվածքը բերում ենք գրաբարից աշխարհաբարի փոխադրելով:

Փամբակ-Շորագյալի շրջաններից, իսկ 1827 թվականին գրավում են Երևանի և Նախիջևանի խանութխանները: 1828 թ. փետրվարի 10 (22)-ին Ռուրքմենչայում կնքվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից և Ռուրքմենչայի պայմանագրից հետո, Արևելյան Հայաստանը մեկընդմիջ ազատագրվում է պարսկական բռնակալության դաժան լծից, որով և Փամբակ-Շորագյալը ապահովվում է պարսկական զավթիչների ու Երևանի խանի կողմից սպառնացող վտանգից:

Որպես սահմանամերձ շրջան, Շորագյալի և ամբողջ Անդրկովկասի համար զխաղձոր վտանգը մնում էր Ռուրքիան: Ռուրքահան զավթիչները շարունակում էին փրենց ազդեցիվ գործողությունները և գալլի ակորթակով էին նայում Կովկասին: Կովկասի և Ռուսաստանի դեմ թուրքերին հրահրելու ուղղությամբ մեծ միջոցներ ու ջանքեր էին գործադրում հատկապես անգլո-ֆրանսիական զաղութարարները:

1828 թվականի գարնանը Ռուսաստանի և Ռուրքիայի միջև նորից պատերազմ է ծագում: Ռուսական զորքերը հարձակման են անցնում նաև Գյումրի-Կարս ուղղությամբ: Գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ ռուսական քաջարի զորքերը մեկը մյուսի հետևից գրավում են Կարսը, Արղահանը, Ախալքալաքը, Ախալցղան, Բայազետը, Էրզրումը, Մուշը, Բայբուրթը: Հայերը, ինչպես ռուս-պարսկական, այնպես էլ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ մեծ օգնություն էին ցույց տալիս ռուսական զորքերին:

Այս պատերազմների ժամանակ Գյումրիում եղան ռուս նշանավոր գեոդետներ Գրիբոյեբովն ու Պուշկինը, Կովկաս ուղարկված դեկարբիստներից Պուշչինը, Բեստյուժևը, Լաչինովը, Բուրցովը, Վալխովսկին, Մեկլաշևսկին, Ֆոկը և ուրիշներ:

Ռուս-թուրքական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով: 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքվեց հաշտության պայմանագիր, որի համաձայն գրավված տերիտորիաների մեծ մասը (Կարս, Արղահան, Բայազետ, Էրզրում և այլն) վերադարձվեց թուրքիային: Այդ վայրերի հայերին իրավունք տրվեց զաղթել Ռուսաստանի սահմանները: Մոտ 90 հազար հայեր Բայազետի, Կարսի, Էրզրումի շրջաններից զաղթեցին և բնակու-

թյուն հաստատեցին Նոր-Բայազետում, Գյումրիում, Ախալքալաքում, Ախալքալաքում և այլ վայրերում:

Այս գաղթի ժամանակ էր, ահա, որ միանգամից փոխվեց ամբողջ Շորագյալի (Շիրակի) և հատկապես Գյումրիի բնակչության կազմը: Պաշտոնական տվյալների համաձայն Կարսից, մասամբ և Էրզրումից Փամբակ-Շորագյալի դիստանցիա զաղթեցին ավելի քան 3000 ընտանիք:

1829 թվականի կամերալ ցուցակագրության տվյալների համաձայն Փամբակ-Շորագյալի դիստանցիայում կային 1536 ընտանիք կամ 5425 շունչ (արական) տեղացիներ և 3148 ընտանիք կամ 10575 շունչ նորեկներ, ընդամենը 4684 ընտանիք կամ 16000 շունչ (արական): Բացի այս, կային հոգևոր դասին պատկանող 214 ընտանիք կամ 620 շունչ և մեկիքներ՝ 3 ընտանիք կամ 20 շունչ (արական):

Բնակչության այս ընդհանուր թվից հայ լուսավորչականներ էին 14.963 շունչ, հայ կաթողիկոսներ՝ 963, թաթարներ՝ 546, հույներ՝ 169:

1832 թ. սկզբներին և 1833 թ. վերջերին Մալասի շրջանից Փամբակ-Շորագյալի դիստանցիա տեղափոխվեցին 182 ընտանիք կամ 674 շունչ: Բնակչության ընդհանուր թիվը հասավ 5.082 ընտանիքի կամ 17.315 շնչի (արական):

Ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Փամբակ-Շորագյալի շրջանի բնակչության ճնշող մեծամասնությունը պետական գյուղացիներ էին:

1829—1830 թվականներին և հետագայում արևմտահայ գաղթականների մի զգալի մասը բնակեցվեց Գյումրիում: Գյումրին դարձավ ոչ միայն Շիրակի շրջանի, այլև Հայաստանի խոշոր կենտրոններից մեկը:

Ուշագրավ են Գյումրիի (Ալեքսանդրապոլի) և Երևանի բնակչության 1831—1831 թթ. աճին վերաբերող վիճակագրական տրվյալները, որ մենք բերում ենք համեմատելու համար:

Բ ն ա կ շ ու թ յ ա ն թ ի վ ը		
Տարեթիվ	Ալեքսանդրապոլում	Երևանում
1831	3444	11463
1850	11280	12603
1862	14935	12170
1873	19976	11938
	85	

Բ ն ա կ շ ու լ յ ա ն թ ի վ ը

Տարեթիվ	Ալեքսանդրապոլում	Երևանում
1886	24230	14738
1897	30616	29006
1908	32901	30670
1914	51316	29766
1919	51000	48000
1931	53075	88904

Ալեքսանդրապոլը Հայաստանի միակ քաղաքն էր, որտեղ գրեթե բացառապես հայեր էին բնակվում¹:

1831 թ. հուլիսի 28-ին ցարական կառավարության կողմից հաստատված պլանի համաձայն, Ախուրյան գետի հովտում սկիզբ է դրվում քաղաքի շինարարությունը: Բնակարանային շինարարության համար օգտադրծում էին Գյումրիից ոչ հեռու եղած փափուկ և դիմացկուն տուֆը:

Քաղաքի շինարարությունը արագ թափուլ առաջ էր գնում, երբ 1837 թվականին Կովկաս կատարած իր ճանապարհորդության ժամանակ Գյումրի վե գալիս Նիկոլայ I կայսրը: Հոկտեմբերի 4-ին նա լինում է Գյումրիում, 5-ին՝ էշմիաձնում, 5—6-ին՝ Երևանում, 8—11-ին՝ Թիֆլիսում:

Գյումրիում թափուլը դիտում է բերդը և կարգադրում է տեղում հիմնել ուսական եկեղեցի, իսկ Գյումրին, Ալեքսանդրա թագուհու անունով կոչել Ալեքսանդրապոլ²:

¹ Ալեքսանդրապոլում 1831 թ. եղել են հայեր՝ 3194, ալլազգիներ՝ 250, 1873 թ. հայեր՝ 19129, ալլազգիներ՝ 847, 1886 թ. հայեր՝ 22921, ալլազգիներ՝ 1309, Երևանում եղել են 1831 թ. հայեր՝ 4027, ալլազգիներ՝ 7436: 1873 թ. հայեր՝ 5959, ալլազգիներ՝ 5979: 1886 թ. հայեր՝ 7142, ալլազգիներ՝ 7596:

² Центральный государственный исторический архив (Москва), ф 728, д. 1794, лл. 28—29.

Ալեքսանդրապոլի անվանակոչության վերաբերյալ գրականության մեջ տարբեր կարծիքներ կան: Վ. Պոտտոն գրում է, թե Գյումրին Ալեքսանդրապոլ է կոչվել Ալեքսանդր առաջին թագավորի անունով, որի ժամանակ նա միացվել է Ռուսաստանին (В. Потто, Памяти старых кавказцев, 1887, стр. 4): Ալ. Նրեցյանի ասելով՝ սրբուհի Ալեքսանդրայի անունով է կոչվել (Ա. Նրեցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն և Կովկասի հայք XIX դարում, մ. II, էջ 434): Կ. Գանի կարծիքով՝ Նիկոլայ I-ի կոչը Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անունով է կոչվել:

Մեր ուսումնասիրության ենթակա շրջանում, Ալեքսանդրապոլի վարչական կյանքում ևս մի շարք փոփոխություններ են տեղի ունենում: Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո՝ 1805 թվականի մարտից, Գյումրին որպես Փամբակ-Շորադյալի դիստանցիայի աննշան մի գյուղ, մտնում էր Վրացական նահանգի մեջ: 1830—1837 թվականներին նա ձևավորվեց որպես քաղաք և դարձավ Փամբակ-Շորադյալի շրջանի կենտրոնը: 1840 թ. ապրիլին Փամբակ-Շորադյալի դիստանցիայից և Բորչալուի դիստանցիայի մի մասից կազմվեց Ալեքսանդրապոլի գավառը: Ալեքսանդրապոլը դարձավ գավառական քաղաք, ինչպիսիք էին Երևանը, Նախիջևանը, Ախլցխան և նրանց հետ միասին մտնում էր Վրացա-իմերեթական նահանգի մեջ (կենտրոնը՝ Թիֆլիս): 1849 թ. հունիսին, երբ կազմվեց Երևանի նահանգը, Ալեքսանդրապոլի գավառը մտցվեց Երևանի նահանգի մեջ և այդպես էլ մնաց մինչև ցարիզմի անկումը:

Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի, տնտեսության ու կուլտուրայի զարգացման ուղղությունը նոր քայլեր կատարվեցին, երբ նա դարձավ գավառական կենտրոն: Տեղի աշխատասեր ու ձեռնարկյալները, որոնց մեծ մասը արհեստավորներ, սովորականներ ու երկրագործներ էին, մեծ ջանքեր էին գործադրում փրենց քաղաքի բարեկարգման համար:

1830-ական թվականների սկզբին Փամբակ-Շորադյալի դիստանցիան ուսումնասիրած Ն. Ֆլորովսկին, խոսելով տեղի հայ բնակչության մասին, գրում է. «Նրանք հասկացող են և հակում տան դեպի լավ տնտեսությունը, հատկապես թուրքիայից նոր

(К. Ф. Ган, Опыт объяснения кавказских географических названий, 1909, стр. 8): Խ. Արովյանը, որը 1838 թվականին եղել է Ալեքսանդրապոլում, գրում է. «Նորին կայսերական մեծություն ի լինելն աստ... և ձեռամբ իրով դնելով զհիմնաքար եկեղեցույն՝ որ ի մեջ ամրոցին, հրամայել է կոչել զանուն քաղաքին ոչ Գյումրի, այլ Ալեքսանդրապոլ, յանուն կայսրուհույն» (Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 46):

Բերված փաստերից կարելի է եզրակացնել, որ բերված հիմնված ուսական եկեղեցին կոչվել է սրբուհի Ալեքսանդրայի անունով, իսկ քաղաքը՝ կայսրուհի Ալեքսանդրայի Երկու դեպքում էլ, ըստ իս, ճիշտ չէ, երբ գրվում կամ արտասանվում է Ալեքսանդրապոլ, պետք է լինի Ալեքսանդրապոլ: Ճիշտ չեն վարվում մասնավորապես այն հեղինակները, որոնք ընդունելով հանգերձ, որ քաղաքը կայսրուհի Ալեքսանդրայի անունով է կոչվել, գրում են Ալեքսանդրապոլ, փոխանակ՝ Ալեքսանդրապոլ:

զաղթածները: Օգտակար նորմուծութիւնը այնտեղ ամենափոքր զփշարութիւնների անգամ շի հանդիպումս¹:

Մեծ հայրենասեր Խ. Արովյանը 1838 թ. մայիսին Կովկասի կառավարչապետ Բարոն Ռոզենի հետ լինում է Ալեքսանդրապոլում և տրպես ականատես դրվատում է տեղի հայերի աշխատասիրութիւնը:

«Օսմանյան տերութեան հայերը, Արզրում և Կարս քաղաքների գրավումից հետո զաղթեցին եկան այստեղ և Ախլցխա: Նրանցից շատերը մնացին այստեղ և իրենց համար սրբատաշ քարից գեղեցիկ տներ կառուցեցին... Տերութիւնը վաղուց հրամայել էր այստեղ բերդ շինել, սրի համար հատկացրել էր մեծ գումար: Կարելի է՝ թե ամբողջ Ափսյում ոչ մի տեղ այսպիսի հոյակապ և գեղեցիկ շինվածք չլինի... Մանավանդ տեղի քարվանսարանները շատ գեղեցիկ են: Նրանք շինված են քաղաքի մեջ: Ամենուրեք երևում է Օսմանյան հայերի աշխատասիրութիւնը: Ալեքսանդրապոլն ոմնի արգավանդահոջ դաշտ և կարելի է հուսալ՝ թե ժամանակի ընթացքում այն շատ կպայծառանա»²:

Ալեքսանդրապոլի գավառը, հատկապես Շիրակի դաշտը, Հայաստանի հացառատ շրջաններից էր: Տեղացիների մեծ մասը զբաղվում էին հողագործութեամբ: Եկվորներից շատերը զբաղվում էին առևտրով և արհեստներով: Քաղաքի աշխարհագրական դիրքը՝ Ռուսաստանի և Թուրքիայի սահմանադիտում նրա ունեցած ռազմա-ստրատեգիական նշանակութիւնը, խոշոր չափով նպաստում էր նրա զարգացմանը: Թուրքիայի հետ առևտուրը կատարվում էր գերազանցապես Ալեքսանդրապոլի վրայով: Պատահական չէ, որ ցարական կառավարութիւնը Անդրկովկասի առաջին մաքսատներից մեկը հիմնեց Գյումրիում: Ալեքսանդրապոլում կային փոստի բաժանմունք, կարանտին, մեծ քանակութեամբ զորք, հոսպիտալ, սննդամթերքի ու ռազմամթերքի պահեստներ և այլ հաստատութիւններ:

1830—1840-ական թվականներից սկսած Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը գնալով ավելի ու ավելի էր աշխուժանում,

¹ Обзорение российских владений за Кавказом, ч. II, стр. 305, 1836, СПб.

² Խ. Արովյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 46: Քաղվածքը բերում ենք գրաբարից փոխադրելով աշխարհաբարի:

աճում ու զարգանում էին առևտուրն ու արհեստները: Այսպես, օրինակ, քաղաքի մաքսատան եկամուտը 1832 թ. կազմում էր 877 ռուբլի, իսկ 1833 թ.՝ 1447 ռուբլի: 1838 թ. Ալեքսանդրապոլում կար 2 քարվանսարա, իսկ 1863 թ.՝ 7: 1830-ական թվականներին կար շուրջ 40 կրպակ, իսկ 1850 թ.՝ 250: 1834 թ. կար մեկ օճառի և 3 կաշվի գործաշան, 1850 թ.՝ 14 ֆաբրիկա-գործարան, իսկ 1865 թ.՝ 36: Քաղաքային եկամուտը 1843 թ. կազմում էր 5218 ռ., իսկ 1863 թ.՝ 9747 ռ.: Քաղաքային բյուջեն 1862 թ. կազմում էր 25 105 ռ., իսկ 1872 թ.՝ 31 734 ռ.:

1840-ական թվականներին Ալեքսանդրապոլն իր քաղաքային եկամուտներով Անդրկովկասում բռնում էր 8-րդ տեղը: Նա շատ քիչ էր ետ մնում Երևանից, բարձր էր Բաքվից, Գորիից, Սոնխիից և Նախիջևանից: Ալեքսանդրապոլում 1845 թվականից բացվել էր տոնավաճառ՝ 2 շաբաթ տևողությամբ և կար ամենօրյա շուկա: Անդրկովկասի մյուս քաղաքներում տոնավաճառ կատարվում էր Անդրկովկասում՝ 1846 թվականից, Ախալքալաքում՝ 1851 թվականից, Գորիում՝ 1852 թվականից, Սոնխիում՝ 1853 թվականից:

1860—1870-ական թվականներին առևտրի ու արհեստագործութեան զարգացումն Ալեքսանդրապոլում ավելի մեծ թափ է ստանում: Անդրկովկասի տնտեսական կյանքի զարգացման պատմութեանը լավատեղյակ հեղինակներից մեկը՝ Ս. Ա. Նիլազարովը, խոսելով Ալեքսանդրապոլի ու Ախլցխայի արհեստների և համաքարութիւնների մասին, գրում է. «Արհեստագործական արդյունաբերութիւնը նույնիսկ Անդրկովկասի նահանգական քաղաքներում ընդհանրապես թույլ է զարգացած եղել և առավելապես բավարարել է տեղական պահանջները: Բացառութիւն են կազմել միայն Ալեքսանդրապոլն ու Ախլցխան: Գտնվելով Թուրքիայի սահմանի մոտ, երկու քաղաքներն էլ առևտրական և արդյունաբերական տեսակետից նպաստավոր դրութեան մեջ էին»²:

XIX դարի պարբերաբար կրկնվող ռուս-թուրքական պատերազմները և հատկապես հայերի մասսայական զաղթը էրզրումից, Կարսից ու Բալաղետից, ծանր հարվածներ հասցրին Թուրքիայի

¹ Այս ֆաբրիկա-գործարանները մասը, տնայնագործական տիպի ձևնար-կութիւններ էին:

² С. А. Егизаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, Городские цехи, стр. 60, 1891, Казань.

սահմանամերձ շրջանների տնտեսությունը: Զրկվելով արհեստավորական ու անտարական տարրից, Թուրքիայի սահմանամերձ այդ շրջանների բնակիչները մշտապես զգում էին Ալեքսանդրապոլի ու Ախլցխայի հրաշալի արհեստավորների արտադրած ապրանքների կարիքը: Այդ պատճառով էլ նրանք հետզհետե ընդարձակում էին իրենց գործունեությունը, հաշվի առնելով ոչ միայն ներքին, այլև արտաքին շտկայի պահանջները:

1860-ական թվականներին Ալեքսանդրապոլն իր բնակչության քվով, արհեստներով ու անտարով արդեն իսկ առջե էր անցել Լահանգալան կենտրոն Երևանից, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք հնագույն քաղաքներից: Որպես քաղաք Անդրկովկասում նա ամենից ուշ հանդես եկավ, բայց ամենից արագ զարգացավ:

Ալեքսանդրապոլի արհեստավորական և անտարական համքարությունների մեջ 1860-ական թվականներին ընդգրկված էր մոտ 2 931 մարդ, իսկ Երևանում՝ 2 175 մարդ: Ըստ առանձին համքարությունների պատկերը հետևյալն էր¹.

№	Համքարություններ	Ալեքսանդրապոլ			Երևան		
		վարպետ	վարպետացու	աշակերտ	վարպետ	վարպետացու	աշակերտ
1	Ալաֆներ (հացահատ. վաճ.)	—	—	—	6	42	—
2	Աթթարներ (դեղապրանք և նման ապրանքների վաճառող)	150	—	—	52	—	—
3	Բազազներ	300	—	—	233	117	—
4	Թառ պատրաստողներ	—	—	—	4	—	7
5	Բախկաններ (մրգավաճառներ)	120	—	—	42	—	—
6	Մաշիկագործներ	48	92	—	88	10	5
7	Թոփ կամ պարան պատրաստող	16	15	—	18	—	—
8	Աղյուսագործներ և բրուտագործներ (Երևանի համար)	4	8	18	11	23	19
9	Դուրանչիներ (խմիչքի տներ ունեցողներ)	100	—	—	63	45	—
10	Կտավագործներ	15	4	—	9	—	—
11	Որմնագիրներ	100	—	—	25	60	70
12	Կաշեգործներ	17	21	8	8	30	—
13	Ներկարարներ և մալարներ	8	1	—	9	—	—
14	Դարբիններ	70	80	80	20	—	45

¹ Տվյալները վերցրել ենք Եղիազարովի նշված գրքից և «Кавказский календарь»-ից:

№	Համքարություններ	Ալեքսանդրապոլ			Երևան		
		վարպետ	վարպետացու	աշակերտ	վարպետ	վարպետացու	աշակերտ
15	Պղնձագործներ և (անագագործներ Երևանում)	25	49	50	27	—	—
16	Մսագործներ	45	25	30	—	—	—
17	Զինագործներ	11	12	10	—	—	—
18	Ատաղձագործ, հյուսն և սղոցողներ	44	48	34	49	90	150
19	Պայտագործներ	40	36	38	12	—	10
20	Դերձակներ և ասեղնագործներ	75	70	65	—	—	—
21	Դերձակներ եվրոպական	—	—	—	11	25	30
22	Դերձակներ ասիական	—	—	—	18	55	20
23	Կոշկակարներ	31	32	30	60	90	150
24	Մոմագործներ	—	—	—	9	—	14
25	Արծաթագործներ և (ժամագործներ Ալեքսպոլում)	25	19	19	6	8	21
26	Փականագործներ	4	5	3	40	—	3
27	Թամբագործներ և (կապագործներ Ալեքսպոլում)	10	8	12	8	12	19
28	Միսխոտագործներ	50	18	100	18	30	50
29	Երկազգործներ (գազազներ)	89	32	97	4	—	9
30	Ջուլհակներ	50	10	30	—	—	—
31	Հայթուխներ	—	—	—	18	50	—
32	Մափրիչներ	25	18	32	12	—	25
33	Գոլակագործներ	42	—	24	40	—	10
34	Բուրդ գործներ	6	4	3	10	10	—
Ընդամենը ¹		1520	607	804	816	692	667

1850—1860-ական թվականներին Ալեքսանդրապոլն արդեն դարձել էր Անդրկովկասի աչքի ընկնող արհեստագործական և անտարական կենտրոններից մեկը: Արհեստի որոշ ճյուղերի դեմով նա ավելի բարձր էր կանգնած քան Երևանը, Նախիջևանը և մյուս քաղաքները: Ալեքսանդրապոլի որմնագիր-քարտաշ վարպետների մասին առանձին պատկառանքով է խոսում ականավոր կովկասագետ ակադեմիկոս Ն. Յա. Մառը. նրանց ձեռքով, Անիի ճարտարապետական կոթողների նմանությամբ, Ալեքսանդրապոլում կառուցվել են ս. փրկչի եկեղեցին և այլ շենքեր¹: Ալեքսանդրապոլի սրմնա-

¹ Sh'а Гумреци, Николай Фадеевич Тигранов и музыка Востока, с. VIII, 1927, Ленинград (ն. Մոսի հոդվածը):

գիր, դարբին, ժամագործ, մաշիկագործ, երիզագործ վարպետների համբավը տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանից դուրս։ Տարրեր ժամանակներում նշանավոր արհեստավոր-վարպետներից աչքի են ընկել Ռատա Պապոն, Արզար Մանուկը, Անտիկենց Ռաֆուր, Ասմարյան Գրիգորը, Հեթիմենց Սահակը և Արրահամը, Պառավինց Արմոնը, Լուկյան Գրիգորը, Թամբազյան Մնացականը և շատ սրբիշներ։

Արհեստավորական կազմակերպությունները՝ համբարությունները Ալեքսանդրապոլում ավելի զարգացած են եղել և աշխույժ դործունեություն ունեցել, քան Անդրեփոլիասի մյուս գավառական քաղաքներում։ Թերևս միայն Ախլցխան կարողանար մրցել նրա հետ, սրը նույնպես զարգացած արհեստագործությունն ինքնուրուն էր։ 1870-ական թվականներին Ալեքսանդրապոլի համբարությունների թիվը հասնում էր 35-ի¹։ Առավել աչքի ընկնող համբարություններից են եղել որմնադիրների, ժամագործների, կոշկակարների, պղնձագործների, դերձակների և դարբինների համբարությունները։ Նրանք ունեցել են իրենց առանձին կանոնադրությունը, դրոշակը, փոխադարձ օգնության դրամարկղը, ժողովներ են գումարել, ապանքների սակագներ մշակել և այլն։

Պաշտոնական տվյալների համաձայն 1865 թվականին Ալեքսանդրապոլում գործում էին 36 ֆաբրիկա-գործարան, որից օձառի 12, օդու 9, ճարպամոմի 5, կաշվի 3, ձեթհանք 5, աղյուսի 1, բրուտագործական 1։

Առևտուր անողների թիվը հասնում էր 670 հոգու, ոչոնցից 300 բազազներ՝ տարեկան մոտ 290 հազար ու շրջանառությունը, 150 աթթարներ՝ մոտ 55 հազար, 120 բախկալներ՝ մոտ 25 հազար, 100 հոգի խմիչք վաճառողներ՝ մոտ 60 հազար և այլն։ Ամբողջ առևտրի տարեկան շրջանառությունը հասնում էր մոտ 500 հազար ռուբլու։ Կային առանձին վաճառականներ, որոնք տարեկան 50—70 հազարի առևտուր էին կատարում։

Ալեքսանդրապոլի վաճառականները առևտուր էին կատարում Թուրքիայի, Պարսկաստանի, Վրաստանի, ինչպես նաև Մոսկվայի, Նիժնի-Նովգորոդի, Պետերբուրգի, Խարկովի, Վարշավայի, Մարսելի, Լայպցիգի և այլ քաղաքների հետ։ Առևտրի գլխավոր ապրանքներն էին մետաքսյա, բրդյա և բամբակյա կտորեղեններ, հացահատիկ,

տեղի, աղ, մրգեր, ծխախոտ, կաշի, դիմի, օդի, բամբակ, բրինձ, ներկեր, «լվի ծաղիկ» և այլն։

Վրաստանի հետ կատարվող առևտրի մասին ժամանակակիցներից մեկը հետևյալն է գրում. «Վրացվոց աշխարհը աղ էին կրում Ալեքսանդրապոլից, ուր մեծ թվով բերվում է Կողպա աղահանքից։ Դազախ-Բորչալուի քառախամբը եղևների վրա ձմերուկ բարձած տանում էին Ալեքսանդրապոլ ծախելու և նորա փոխանակ ալյուր կամ աղ գնելու։ Հեռվից գալիս էին նույնպես սուրտերի երկար քարավանները, որոնք վաճառականի ապրանք բերելով, աղ են տանում Թիֆլիս։ Այս բոլորը քաղաքի հյուսիսային ճանապարհիցն էր ներս գնում»¹։

Այստեղ հիշատակության արժանի են Պետերբուրգի և «լվի ծաղիկ» արտադրությունը, որ Ալեքսանդրապոլում կատարվում էր 1840—1850-ական թվականներից սկսած։

Գորոջյան եղբայրներ Դժնեկ կոչվող բուլսից, որին տեղացիները անվանում էին «այլիչայլը», պատրաստում էին տալբեր գույնի ներկեր։ Այդ գործում նրանք այնքան աչքի ընկան, որ 1850 թվականին «Вольное Экономическое Общество»-ի կողմից Սիրական Գորոջյանը պարգևատրվեց արծաթե մեծ մեդալով։

«Լվի ծաղիկ» կոչվող բուլսի օգտագործումը Անդրկովկասում, նույնպես առաջին անգամ տեղի է ունենում Ալեքսանդրապոլում՝ 1850-ական թվականներից սկսած։ Արդեն 1870-ական թվականներին այդ բուլսը հազարավոր փթեթով հավաքվում, շրայցվում, հատուկ շրայցում և արտասահման։ «Լվի ծաղիկ» առևտրով զբաղվում էին Սիմոն Թումանյանը՝ Պետերբուրգում, Սարգիս Միրզոյանցը և նրա որդի Միքայել Միրզոյանցը՝ Մոսկվայում։ Վերջիններս հետագայում «Լվի ծաղիկ» փառու (ղեղի) արտադրությունը իրենց ձեռքը կենտրոնացրին և Մարսելի միջազգային ցուցահանդեսում դրա համար ոսկե մեդալ ստացան։ «Լվի ծաղիկ» առևտուրը լայն տարածում է ստանում և այն աստիճան շահաբեր դառնում, որ առիթ է տալիս մի ամբողջ շարք կեղծիքների, «Արագած» ընկերության մարկայի շարաշահության և այլն։

Արհեստների, առևտրի ու արդյունաբերության զարգացու-

¹ «Մեղու Հայաստանի», 1869, № 21, «Պաշտոն Ալեքսանդրապոլի շրջակայքում» անստորագիր հոդվածը։

մը Ալեքսանդրապոլում, արագորեն փոխում է քաղաքի դեմքը: Գավառական այդ քաղաքը կապվում է Մոսկվայի, Պետերբուրգի, Վարշավայի, Նիժնի-Նովգորոդի, Խարկովի, Թիֆլիսի, Երևանի, հարևան Քուրբայի ու Պարսկաստանի շտեմաների հետ, հաղորդակից է դառնում միջազգային ապրանքաշրջանառությանը և ամբողջ Անդրկովկասի հետ միասին անրգրավելում կապիտալիստական զարգացման ոլորտի մեջ:

Կապիտալիզմի զարգացման հետևանքով, ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Ալեքսանդրապոլում և դավառում սոցիալաճանաչում էր գյուղացիության և քաղաքային դեմոկրատիայի ճնշումն ու շահագործումը, Ֆրանց քայքայման ու աղքատացման պրոցեսը: Տեղական, ռուսական և արտասահմանյան կապիտալիստները, առևտրականներն ու վաճառուները, օգտվելով ցարական կառավարության հովանավորությունից, տգրուկի պես ծծում էին ժողովրդի աշխատանքի հյուսիսը: Դրան ավելանում էր ցարիզմի ազգային-գաղութային ճնշումը, որը գնալով ավելի ու ավելի էր խստանում:

Ալեքսանդրապոլում, ինչպես տեսանք, առկա էին շահագործող ու շահագործվող հասարակական խավերը, սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել գասակարգային հակամարտությունների համար:

Այս բոլորից հետո, բնական է, որ Ալեքսանդրապոլի արհեստավորությունը, գյուղացիությունը և առհասարակ տեղի դեմոկրատական խավերը շէին կարող անտարբեր մնալ և շմանակցել հայ ժողովրդի մեջ խմորվող սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարին:

* * *

Ուշագրավ է նաև հասարակական մտքի ու կուլտուրայի զարգացումը Ալեքսանդրապոլում:

Ինչպես տեսանք, Ալեքսանդրապոլի բնակիչները հիմնականում կարսից և մասամբ էրզրումից գաղթած գերազանցապես արհեստավորական ու առևտրական խավերն էին, որոնք քաղաքային կյանքի ու կուլտուրայի որոշ տրագիցիաներ տանելին: Մյուս կողմից, գաղտնիք չէ, որ սոցիալական այդ խավերի մտտ մտավոր-կուլտուրական կյանքի պահանջները համեմատաբար ավելի բարձր են լինում, քան ասանք գյուղացիների: Առևտրի ու արհեստագործության զար-

գացումը, դրաի աշխարհի հետ ոճանցած կապերը ևս նպաստեցին Ալեքսանդրապոլի մտավոր-կուլտուրական կյանքի զարգացմանը:

Դա արտահայտվում էր ամենից առաջ և ամենից ավելի տարբական կրթության, դպրոցներ բացելու և երեխաներին գրագիտություն սովորեցնելու բնագավառում: Եթե ալեքսանդրապոլցիների համար երեխային արհեստ սովորեցնելը գլխավոր նպատակ էր, ապա արհամարհված կամ մոռացված չէր, ինչպես շատ տեղերում. նաև նրանց կրթության տալը: Ալեքսանդրապոլցիների մեջ եղած այս առողջ ձգտումը նկատել է տակավին 1830-ական թվականների սկզբին ռուս պաշտոնյա Ֆլորովսկին, Շորապյալի դիտարկումից առաջին տետմենասիբիրոցներից մեկը: «Բնակիչները, գրում է նա, հատկապես գյուճեցիները շատ են ցանկանում դպրոց հիմնել, իրենց երեխաներին կրթության տալու համար»:

Ալեքսանդրապոլի հիմնադրման հենց սկզբնական շրջանում քաղաքում գործում էին մի քանի խալիֆայական դպրոցներ: 1839 թվականին բացվում է ս. փրկչի հոգևոր դպրոցը (տե՛ս ծանոթ. 1), որը քաղաքի առաջին խոշոր դպրոցն էր և աչքի ընկնող դեր է կատարել մատաղ սերնդի կրթության գործում: Հետագայում այդ դպրոցն ավելի ընդարձակվեց և կոչվում էր Վիճակային ուսումնարան կամ Վիճակային դպրոց:

Վիճակային դպրոցի արխիվային դործերից երևում է, որ 1862/63 տետմենական տարում դպրոցն ունեցել է 3 դասարան, 7 սուսուցիչ և դասավանդվել է 11 առարկա:

1869 թվականին բացի 3 հիմնական դասարաններից, բացվում է 2 նախապատրաստական դասարան, 98 աշակերտներով: Սովորողների ընդհանուր թիվը հասնում է 160 հոգու, ավելանում է նաև սուսուցիչների և դասավանդվող առարկաների թիվը:

1873/74 տետմենական տարում դասարանների թիվը հասնում է 6-ի (3 հիմնական, 3 նախապատրաստական), սուսուցիչներինը՝ 14, աշակերտներինը՝ 260: Փորձեր են արվում դպրոցին կից բացել արհեստագիտական բաժին:

1875—1876 թվականներին դասատուների թիվը հասնում է 7-ի (4 հիմնական, 3 նախապատրաստական), աշակերտներինը՝ 284: Դասավանդվող առարկաներն էին՝ կրտս, պատմություն (եկեղեցական, ընդհանուր և հայոց), լեզուներ (հայերեն, ռուսերեն և գերմաներեն), աշխարհագրություն (ընդհանուր և Ռուսաստանի), մաթեմատիկա (թվաբանություն, երկրաչափություն և հանրահաշիվ):

Ֆիզիկա, բնագիտություն, վայելչագրություն (հայերեն և ռուսերեն), նկարչություն, դժագրություն և երգեցողություն:

Տարեցտարի աճում է նաև դպրոցի եկամուտը: 1863 թ. դրույրոցը մուտք է ունենում 3 199 ու. 51 կ., 1864 թ.՝ 3 314 ու. 48 կ., 1865 թ.՝ 4 273 ու., 1875 թվականին դպրոցի դրամագրուված կազմում էր 17 630 ու. 59 կ.¹:

Այսպիսով, 1860—1870-ական թվականների 10—15 տարվա ընթացքում զգալի շարժում աճում է Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցի դասարանների, ուսուցիչների և աշակերտների թիվը, ավելանում են եկամուտները:

1871 թվականի սկզբներին Ղահրաման Արղուձյանի կողմից 40 հազար դոլարով Ալեքսանդրապոլում բացվում է Արղուձյան դպրոցը (աղջիկներ): Հետագայում աղջիկների համար բացվում է նաև Սահակ-Անուշյան ձրիավարժ դպրոցը: Բացի այդ, քաղաքում գործում էր պետական Գավառական դպրոցը, որը նույնպես աչքի ընկնող կրթական մի հաստատություն էր: 1850 թ. դավառական դպրոցն ուներ 4 ուսուցիչ, 69 աշակերտ, իսկ 1861 թ.՝ 7 ուսուցիչ, 99 աշակերտ:

1863 թվականին Երևանի նահանգում կար 210 դպրոց, 282 ուսուցիչ, 4 362 աշակերտ, այդ թվում Երևանի գավառում՝ 80 ուսուցիչ, 1 223 աշակերտ, Ալեքսանդրապոլի գավառում՝ 51 ուսուցիչ, 996 աշակերտ, Նախիջևանի գավառում՝ 65 ուսուցիչ, 662 աշակերտ, Օրդուբադի գավառում՝ 40 ուսուցիչ, 711 աշակերտ, էջմիածնի գավառում՝ 34 ուսուցիչ, 546 աշակերտ, Նոր Բայազետի գավառում՝ 12 ուսուցիչ, 224 աշակերտ: Այս թվերից երևում է, որ Ալեքսանդրապոլի գավառը, բացի Երևանի գավառից, որի բնակչությունը իր կուլտուր-կրթության մակարդակով ամենից բարձրն էր, առաջին տեղն էր գրավում նահանգի մյուս գավառների հետ համեմատած:

Ալեքսանդրապոլի գավառում գործում էին Հառիճա վանքի դպրոցը և 20-ից ավելի ծխական դպրոցներ՝ Բայանդուր, Հոռոմ, Քուրմուլի, Ղոնաղոռան, Ջաջուռ, Ղանլիջա, Գահառլի, Նովանվերդի, Մուլլադյուլի, Սոնգյուրլի, Եգյանլար, Մեծ Արխավլի, Իմրխան, Ղազանլի, Խլի-Ղարաքիլիսա և այլ դպրոցներում²:

¹ Տե՛ս Արսեն Գուշյան, Համառոտ պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912), Ալ-պոլ, 1912:

² «Մեղու Հայաստանի», 1872 թ., մարտի 20, № 12, Միմյոն Գարբիլյանի (Պետրոս Հայկազունի) «Նամակ Ալեքսանդրապոլից» հոդվածը:

Ալեքսանդրապոլում, ինչպես և գավառում, 1860—1870-ական թվականներին դպրոցական գործը և ընդհանրապես մտավոր կյանքը նկատելիորեն փոխվում է: Խալիֆայական հետամնաց դպրոցների կողքին հանդես են գալիս նոր, անհամեմատ ավելի կազմակերպված ու առաջավոր մանկավարժական սիստեմով տարվող դպրոցներ: Ճիշտ է, այդ տարիներին և նույնիսկ հետագայում էլ խալիֆայական դպրոցները չվերացան: 1869 թվականին Ալեքսանդրապոլ այցելած Ս. Մարուձյանը գրում է. «Մեկ բան Ալեքսանդրապոլի մեջ իմ վերա դեշ ազդեցություն ունեցավ, այն է՝ մասնավոր դպրոցայն բազմությունը»¹: «Մշակ» թերթի թղթակիցը 1874 թրվականին մասնավոր դպրոցների թիվը Ալեքսանդրապոլում հաշվում է մոտ 13, իսկ աշակերտներին՝ 800—900 հոգի²: Սակայն, շնայած իրենց քանակին, 1860—1870-ական թվականներին այդ դպրոցներն արդեն իսկ ապրել էին փրկեց դարը:

Ալեքսանդրապոլի դպրոցական և ընդհանրապես մտավոր կյանքում նկատելի փոփոխություններ կատարվեցին 1871 թվականից սկսած, երբ այնտեղ աշխատանքի անցան մի խումբ աչքի ընկնող հայ մանկավարժներ և հասարակական գործիչներ՝ Ղազարոս Աղայանը, Սարգիս Բեգնազարյանը, բժ. Գաբրիել Հովհաննիսյանը (Քաջբերունի), Հայրապետ Ղուկասյանը, Մակար Տեր-Սարգսյանը և ուրիշներ (տե՛ս ծանոթ. 2—6):

Ղազարոս Աղայանի մասին մենք այստեղ չենք խոսի. նա հանրածանոթ դեմք է՝ որպես խոշոր գրող և մանկավարժ, որպես մեծ հայրենասեր ու ազատասեր գործիչ: Դժբախտաբար նույն բանն ասել չենք կարող մեր նշանավոր մանկավարժներից մեկին՝ Սարգիս Բեգնազարյանի մասին, որի կյանքն ու գործունեությունը գրեթե չի ուսումնասիրված: Ուստի, անհրաժեշտ ենք համարում նրա մասին մի քանի խոսք ասել:

1871 թվականին Ս. Բեգնազարյանը հրավիրվում է Ալեքսանդրապոլ և նշանակվում է վիճակային դպրոցի տեսուչ և ուսուցիչ: Նույն թվականին Արղուձյան դպրոցի տեսուչ է նշանակվում Ղ. Աղայանը:

Բեգնազարյանը փայլուն առաջադիմությամբ ավարտել էր

¹ «Արարատ», 1869, հոկտեմբեր, Ս. Մարուձյանի «Մեկ բանի խոսք Ալեքսանդրապոլի վերա» հոդվածը:

² «Մշակ», 1874, հուլիսի 6, № 22:

Շվեյցարիայի Կյուննախտ քաղաքի սուսուցչական սեմինարիան, իր ժամանակի կրթված, լավագույն մանկավարժներից էր¹:

Ստանձնելով վիճակային դպրոցի տեսչությունը, նա մի ամբողջ շարք բարենորոգումներ է մտցնում Ալեքսանդրապոլի դպրոցական կյանքում: Իր ձեռք բերած տեսական-մանկավարժական փիտիլիսիերը հաջող կերպով համադրում է ազգային կրթության պոզիտիվիստներին, գործադրում մանկավարժական պրակտիկայում: Նա առաջին իսկ օրվանից ձեռնամուխ է լինում դպրոցի կահավորման, դասերի, աշակերտների և ուսուցիչների պարապմունքների կարգավորման գործին:

1871 թ. փետրվարի 21-ին Բեզնազարյանը հոգաբարձություն քննությունն է ներկայացնում իր մշակած նոր կանոնադրությունը՝ «Ալեքսանդրապոլի հայոց ազգային հոգևոր դպրոցի կանոնադրություն» վերնագրով: Այդտեղ դպրոցի նպատակի մասին ասված է. «Ամենայն գործունեություն պետք է ունենա իր մի որոշ նպատակը. ուսումնական ազգային դպրոցած գործունեություն լինելով՝ ևս պետք է որոշ նպատակ ունենա: Ալեքսանդրապոլու ազգային հոգևոր դպրոցի նպատակն է՝ հայ ազգի արու զավակները անխտիր ընդունելով՝ դաստիարակել նոցա մտավոր, ֆիզիկական և բարոյական կարողությունները, որպեսզի նոքա բնավորությամբ բարոյական, մտքով գործունյա և քաղաքականապես պիտանի անդամք լինեն ազգություն և մարդկություն»:

Խոսելով դասավանդվող առարկաների մասին, որոնցից մի քանիսը (բնական պատմություն, երկրաչափություն, գերմաներեն, տեղագրություն, մարմնամարզություն) նրա նախաձեռնությամբ առաջին անգամ էին մտցվում դպրոցական ծրագրի մեջ, գրում է.

«Հիշյալ առարկաները կմատակարարվեն համաձայն ընդհանուր մանկավարժական օրինաց, համաձայն մարդկային առողջ դատողության, մայրենի լեզվով... պետք է մեր մանուկներու մաքելը ամենևն առաջ իրենց մայրենի խոսքով զարգացնել...»

Բացի մեր մայրենի լեզուն, եթե մեր դպրոցի մեջ մի տրեկ օտար լեզու սովորելու ցանկություն և կարևորություն լինի, հայտնի ընդունել, պետք է նախ և առաջ ընտրվի այն լեզուն, որին իրական

¹ Ս. Բեզնազարյանի կենսագրության և մանկավարժական գործունեության մասին մանրամասն տե՛ս «Նորհրդային մանկավարժ», 1941, № 3, «Մանկավարժ» ստորագրությամբ մեր հոդվածը:

կյանքի մեջ առ առավել կկարևորենք, ինչպես ուսաց լեզվի կարևորությունն է մեզ՝ ուսաբնակ հայերիս համար»¹:

Բեզնազարյանը ո՛չ միայն իբրև տեսուչ ջանք չէր խնայում բարեկարգ հիմքերի վրա դնելու Ալեքսանդրապոլի դպրոցական գործը, այլ փայլում էր ոչպես մասնագետ-մանկավարժ, որպես ուսուցիչ-դաստիարակ²: Նա իր դպրոցում մտցնում է համակենտրոնացած դասավանդում, որը Միմյոն Գարբինյան ծածկանվան տակ հանդես եկած, հայ իրականությանը լավատեղյակ Պետրոս Հայկազունու հավաստումների համաձայն, մինչ այդ չէր եղել հայկական ոչ մի դպրոցում, այդ թվում նաև Քիֆլիսի ներսիսյան զբոսաբերական դպրոցում: «Բայր հայ ուսումնարանների մեջ, գրում է Հայկազունին, Ալեքսանդրապոլու դպրոցը այս կողմից առաջինն է այժմ»³:

Ղ. Աղայանը բնութագրելով Բեզնազարյանին որպես մանկավարժ, գրում է. «Իբրև ուսուցիչ, պատկանելի և մերթ նաև երկրորդի էր աշակերտաց համար: Ուսուցանում էր որպես արվեստ, կամ ինչպես կասեն՝ արվեստի բոլոր կանոնների համեմատ»⁴:

Մեր տաղանդավոր վիպասան Բաֆֆին նույնպես միանգամայն դրականորեն է արտահայտվում Բեզնազարյանի մանկավարժական գործունեության մասին⁵:

Ս. Բեզնազարյանի, Ղ. Աղայանի, ինչպես և բժշկապետ Ավետիք Բաբայանի (տե՛ս ծանոթ. 7) ջանքերով Ալեքսանդրապոլի դպրոցներում համախմբվում են հայտնի մանկավարժներ, հասարակական-կուլտուրական աչքի ընկնող գործիչներ: Մանկավարժա-

¹ Քաղվածքները վերցրել ենք ՀՍՍՌ Պետական Կենտրոնական Պատմական արխիվի Ալեքսանդրապոլի ոստիկանական վարչության ֆոնդում եղած օրինակից:

² Ղազարոս Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, էջ 140, 1893, Քիֆլիս:

³ «Մեղու Հայաստանի», 1872, № 12:

⁴ Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 158, Երևան, 1940:

⁵ «Փորձ» հանդեսում տպագրած «Ճանապարհորդություն Քիֆլիսից մինչև Ագուլիս» հոդվածում Բաֆֆին գրում է. «Նրանում երբ օր մնալով, ես միջոց ունեցա տեսնել տեղացի Օրիորդաց և տղայոց դպրոցները. վերջինը ես տեսել էի մի քանի տարի առաջ ևս, բայց ամենաթշուառ վիճակի մեջ: Իսկ այժմ պ. Բեզնազարյանցի տեսչության օրով բավական բարեկարգվել է նա և ավելի առաջադիմության հույս է տալիս, մանավանդ երբ պ. Բեզնազարյանցը ունեցավ պ. Աղայանցի նման մի լավ պաշտոնակից: Ես ներկա գտնվեցա պ. Բեզնազարյանցի տարրական ֆիզիկայի և պ. Աղայանցի Հայ պատմության դասերին, — Ինչպես և ի գոհացուցիչ գտա»: (Տե՛ս «Փորձ», 1877—1878 թթ., № 3, էջ 229—230):

կան այդօրինակ կադրերի գործունեությունը Ալեքսանդրապոլում նոր բարձրության վրա հասցնում դպրոցական-կուլտուրական գործը, երիտասարդության մեջ սեր և ձգտում է առաջացնում դեպի կրթությունն ու դաստիարակությունը:

Ահա թե ինչ է պատմում այս մասին իր հիշողությունների մեջ ալեքսանդրապոլցի հայտնի մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը (տե՛ս ծանոթ. 8):

«Մինչև 13 տարեկան հասակս ապրեցի խալֆայական վարժատունների տաղտկալի կյանքն ու դառնությունները: Այս շրջանում աշակերտեցի նաև մի կիսախալֆայական, կիսանորոգողական վարժատան, որի մի վարժապետը տիպիկ խալֆա էր, մյուսը՝ կազարյան ձեմարանի թերավարտներից մեկը*... Այստեղ առաջին անգամ արժանացանք նստարաններին»:

Այնուհետև խոսելով 1870-ական թվականներին սկսված «քարձ հոսանքի» մասին, Տեր-Միրաքյանը գրում է. «Գլխավորապես շնորհիվ եռանդուն հոգաբարձու բժ. Ա. Բարայանի մեր քաղաքը բախտունեցավ միաժամանակ Ս. Բեգնազարյանցին, Ղ. Աղայանցին, բժ. Գ. Հովհաննիսյանին (Քաջբերունի), Հ. Ղուկասյանին, Մ. Տեր-Սարգլսյանին և այլոց հրավիրելու, որոնցից առաջին չորս ուղղակի ճեղաչեցում մտցրին աշակերտության և ուսուցչության կյանքի մեջ: Բնագիտություն, բնապատմություն, երկրաչափություն, դժագրություն, մարմնամարզություն առաջին անգամ 1872 թվականի երջանակի օրերում լսեցինք այդ թարմ առարկաները և բուռն զգացմունքներով սիրեցինք...»

Գծվար է երևակայել, թե ինչ ոգևորություն կառաջանար մեր մեջ խալֆայական խեղճող մթնոլորտից այս թարմ շնչով միջավայրը փոխադրվելիս¹:

* Իր այս հիշողությունների մեջ, որ գրի է առել 1918—1919 թվականներին, Տեր-Միրաքյանը չի նշում, թե ովքեր էին իր այդ ուսուցիչները: 1935 թվականին Լենինականում ինձ պատմած (և իմ կողմից գրի առնված) հիշողությունների մեջ նա ասում է. «Այդուրենը սովորել եմ ընտանիքում՝ կուլյաի մոտ. հետո ընդունվել եմ կազարյան ձեմարանից վերագործած Ստեփան Վեհապետյանի և Չմշկյանի հիմնած տարրական դպրոցը, այդտեղից էլ Վիճակային դպրոցը: Այսպիսով, պարզվում է, որ Տեր-Միրաքյանի «կիսախալֆայական և կիսանորոգչական վարժատան» ուսուցիչները եղել են Վեհապետյանը և Չմշկյանը:

¹ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության ժողովրդական կրթության թանգարանի արխիվ, Հովհաննես Տեր-Միրաքյանի ֆոնդ: Այդ ֆոնդը դեռևս մշակված չէ: Ուստի հնարավոր չէր նշել գործերի համարներն ու էջերը:

Մի այլ տեղ խոսելով Արղուժյան դպրոցի բացման մասին, Տեր-Միրաքյանը գրում է. «Հիանալի ղուգադիպություն էր, որ 1870-ական թվականների սկզբին Ալեքսանդրապոլ եկան Ղ. Աղայանը, որ տեսչի պաշտոն վարեց Արղուժյան դպրոցում և ուսուցչի՝ տղայոց վիճակային դպրոցում, Ս. Բեգնազարյանը Շվիցյարիայից, Հ. Ղուկասյանը, բժ. Գ. Հովհաննիսյանը... և կուլտուրական հոսանք առաջացրին այս քաղաքում»¹:

Աղայանին, Բեգնազարյանին, Քաջբերունուն և մյուսներին Տեր-Միրաքյանն անվանում է «կուլտուրական ռանվիրաններ»: Նշանավոր այդ մանկավարժների ջանքերով Պետերբուրգից (Սանասարյանի միջոցով) առաջին անգամ Ալեքսանդրապոլի տղաների ու աղջիկների դպրոցներն են մուտք գործում դիդակտիկ նյութեր՝ ֆիզիկական ապարատներ, մարդաբանական մոդելներ, համրիչ և աշխարհագրունդ (գլոբուս):

Խոսելով 1870-ական թվականների Ալեքսանդրապոլի դպրոցական կյանքի մասին, Ղ. Աղայանը գրում է. «Ամբողջ Կովկասում ոչ մի դպրոց չկար, որ Ալեքսանդրապոլի դպրոցների բարեկարգությունն ունենար: Մանկավարժական ամեն տեսակ խնդիրներ այդտեղ սկսեցին մշակվել, ամեն տեսակ հողավաճներ այդտեղ սկսեցին գրվել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջ, որ միայն գրեթե ամեն էին, այստեղ իրագործություն էին ստանում»²:

Ալեքսանդրապոլում եղած մանկավարժական հիանալի կադրերը, դպրոցների ու դասավանդման բարեկարգման հետ միաժամանակ, զբաղվում էին նաև նոր դասագրքերի մշակման ու հրատարակման հարցով³: Ղ. Աղայանն ու Հ. Ղուկասյանը մինչ այդ էլ

¹ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության ժողովրդական կրթության թանգարանի արխիվ, Հովհաննես Տեր-Միրաքյանի ֆոնդ:

² Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 150:

³ Ղ. Աղայանը նշված աշխատության մեջ այդ մասին հետևյալն է գրում. «Մասնավորապես գալով ինձ, պետք է ասեմ, որ իմ գործունեությունը՝ թե՛ գրական և թե՛ ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից ավելի բեղմնավոր եղան: Լինելով ըստ ամենայնի անկախ, գործում էի ուղածի պես և ուրիշներին էլ վարակում իմ օրինակով: Այստեղ սկսեցի մշակել իմ նորագույն մեթոդը, թե ինչպես պետք է ուսուցանել մայրենի լեզուն: Նախ ցույց տվի գործով՝ դասավանդվելու, և հետո՝ խմբի ցանկությամբ՝ արեցի և հրահանգը, թե ինչպես պետք է ուսուցանել, հետո էլ կազմեցի դասագրքերը: Առաջին անգամ մեր գրքերը ես լուծեցի արմատական տարրերի և գրել տվի տակառով: Այստեղ առաջին անգամը ես դաս տվի

հայտնի էին իրենց հրատարակած դասագրքերով: Բայց այդ ժամանակ շատ քիչ դասագրքեր կային և դրանց կարիքը հայկական դպրոցներում մեծ էր: Բնորոշ է, որ այդ կարևոր հարցը նույնպես բարձրացրեցին և մամուլի քննությունն նյութ են դարձնում տեղի ուսուցիչները:

«Ամեն մի հայի կամ հայ ուսումնարանաց հոգաբարձուաց ու ուսուցչաց քաջ հայտնի է, — գրում է Ալեքսանդրապոլից Տ. Մ.— որ մեր ուսումնարանները այժմս մեծ կարտություն են զգում դասագրքերի կողմանի, և թե մի՞նչ որ աստիճան դժբախտ ու անմխիթար է մանուկ հայ աշակերտը՝ չունենալով յուր ձեռնի ուսանելի առարկաների համար հարմարավոր դասագրքեր, այդ ևս շատ լավ գիտեն ամենքը... ինչո՞ւ արդո՞ք մենք ձեռքերս պիտի կարկառենք մինչ Վենետիկ, Փարիզ, Կ. Պոլիս, Նուեոթը, Ֆեոդոսիա և այլ տեղեր, մինչդեռ մենք շատ մոտիկ տեղ ունենք ձեռք ձգելու, ձգենք մեր ձեռքերը դեպի ս. Էջմիածին և այնտեղից պահանջենք ու ձեռք բերենք հիշյալ մատենագրությունքը, որ, ինչպես հայտնի է, տմի ընդարձակ տպարան: Մենք կարծում ենք, որ Էջմիածնին մի մեծ պարծանք չէ ճաշոց տպել և 100—150 մանկթով վաճառել աղքատ դպրոցներից վերա և այդպիսով շատերին խրտենցնել ու կեղեքել»:

Ալեքսանդրապոլի դպրոցական-կրթական գործի զարգացման հետ միամտամանակ կենդանություն է ստանում նաև ազգային թատրոնը:

Ժամանակակիցների հիշողությունները և մեղ հասած փաստե-

մի ծխական դպրոցում, «Քացատրություն բնության երևույթների» և «Տարբական ֆիզիկա բազմաբանի» Այս երկու աշխատություններն էլ են թարգմանեցի, որոնցից մեկը տպվեց «Արարատ»-ում, որից արտատպվեց հօգուտ Սահականուշյան ուսումնարանի, մյուսը՝ ֆիզիկա՝ տպագրվեց Պետերբուրգի հայ ուսանողների հաշվով: Այստեղ գրեցի բազմաթիվ հոգվածներ՝ թե՛ մանկավարժական և թե՛ ընդհանրապես: Այստեղ գրեցի և հայկական հնչյունների մասին, որով Ալվազովկուս գրգռեցի իմ դեմ, ինչպես և Պալասանյանին՝ որս «Մայրենի լեզվի քերականությունը» քննադատելու համար: Այստեղ գրեցի և իմ «Երկու բույր» (էջ 152):

1873 թ. սեպտեմբերի 20-ին մանկավարժական ժողովը՝ մասնակցությամբ Մ. Բեգնազարյանի, Մ. Արարաջյանի, Գ. Աղայանի, Ա. Պարոնիկյանի և Ա. Արշակունու, քննության է առնում Հայրապետ Դովապայանի կազմած աշխարհաբար «Փունջ» դասագրքերը և որոշում է հոգաբարձության միջոցով շտապ հրատարակության տալ:

1 «Մեղու Հայաստանի», 1875 թ. նոյեմբերի 22, № 45, Տ. Մ. — (Հավանաբար Մակար Տեր-Սարգսյանի. — Վ. Պ.) թղթակցությունն Ալեքսանդրապոլից:

ըը վկայում են, որ առհասարակ Ալեքսանդրապոլի բնակիչները բավականաչափ թատերասեր են եղել:

1860-ական թվականներին Արարաջյանի դպրոցում առաջին անգամ բեմադրվում է «Շուշանիկ» ազգային ողբերգությունը: Բնորոշ է, որ Շուշանիկի դերը կատարելու համար կին չգտնելով, այդ դերը կատարել է տղամարդ՝ կնոջ շորեր հագած և կնոջ (կեղծած) ձայնով:

1870-ական թվականների սկզբներից արդեն Ալեքսանդրապոլի վիճակալին դպրոցին կից կազմակերպվում է ուսուցչական-թատերական խումբ: Խմբի աշխատանքներին մասնակցում են նաև դպրոցի բարձր դասարանի աշակերտները, ինչպես նաև Կրիտյանի Բնկերությունն անդամներից մի քանիսը (Կ. Օհանջանյան, Ա. Աֆրիկյան, Գ. Ղասարյան, Ս. կալայան և ուրիշներ):

«Շուշանիկ», «Երվանդ Բ.», «Սամվել» և նման ազգային գործերի բեմադրությունները, նշանավոր աշուղների երգերը, իր ժամանակին ավելի են բորբոքում Ալեքսանդրապոլի բնակչության հայրենասիրական զգացմունքները:

1871 թ. Կարապետ Մատինյանն իր «Բանաստեղծ և հյուսվածք Ջիվանի» հոգվածում հետևյալն է գրում.

«Ալեքսանդրապոլը, երբ ունեցել է իր մեջ թատրոն (շնորհիվ հարգույապատիվ Մյունեցի Աղեքսանդրի Մելիք-Հայկազյան) և երբ թնդացրել է թատրոնական բեմի վրա ազգային երգերի արձագանքը, հենց այն օրից Ալեքսանդրապոլու աշուղները սկսել են երգել հայերեն, թրով հետև հասարակությունը այդ մասին ավելի սեր և համակրություն է ցույց տալի»:

Խոսելով աշուղների մասին, նա հիշում է մեր տաղանդավոր և անվանի բանաստեղծ-աշուղ Ջիվանուն, որն իր խմբով երգելիս է եղել Կարապետ Տաղոյանի սրճարանում և որի շնորհիվ էլ սրճարանը միշտ լիքն է եղել հասարակությամբ. հիշում է Ալմույանի սրճարանում երգող աշուղ Հովհաննեսին (Խըրթըզ մականունով), ուրիշ սրճարաններում երգող աշուղներ՝ Թաթոսին (Հավասի), Մալուլին և այլն (տե՛ս ծանոթ. 9—12):

Թատրոնը՝ իր ժամանակի առումով, աշուղական տարածված և սիրված ազգային և ժողովրդական երգն ու երաժշտությունը չէին

1 «Արարատ», 1871, նոյեմբեր, էջ 415:

կարող իրենց դրողմը շնորհիվ ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Վերջապես ուշագրավ է այն հանգամանքը, որ 1860—1870-ական թվականներին կովկասահայ մամուլում Ալեքսանդրապոլից հանդես են գալիս նոր թղթակիցներ, բանաստեղծներ, ֆելիետոնիստներ և առհասարակ գիտությունը ու գրականությունը զբաղվող մարդիկ, որոնց թիվը ս'չ թե մի քանի անհատների, այլ տասնյակների է հասնում:

Ալեքսանդրապոլի այգորինակ միջավայրում է կիր մանկությունն անցկացնում և սկզբնական կրթությունը ստանում մեր պեղելի մեծագույն վարպետներից մեկը՝ անմահ Ավետիք Իսահակյանը (1875—1957):

Գավառական այդ քաղաքում պատրաստվող ինտելիգենցիայի շարքերը խտացնում էին նաև Թիֆլիսում, էջմիածնում, Ռուսաստանում և Եվրոպայում ուսած ու Ալեքսանդրապոլ վերադարձած երիտասարդները:

Անդրկովկասի կյանքին իրազեկ, երկար տարիներ Ալեքսանդրապոլում ուսուցիչ եղած Հայրապետ Ղուկասյանը այդ մասին գրում է.

«Ալեքսանդրապոլի հասարակության մեջ ուսումնասիրությունն այնքան զարգացած է, որ այս կողմից նորան կարծեմ առաջինը կարելի է համարել Կովկասում: Խոսքիս ապացույց է այն, որ Ալեքսանդրապոլում մասնավոր ուսումնարանների թիվը բավականին շատ է, նորա երկսեռ ազգային ուսումնարանները չի են աշակերտներով, գավառական ուսումնարանի մեջ էլ քիչ չեն նոքա, բացի այս բոլորից, քաղաքից դուրս ալեքսանդրապոլցի ուսանողների թիվը թե Ռուսիայի և թե արտասահմանի բարձրակարգ ուսումնարաններում համեմատաբար շատ է, քան թե Կովկասի տրեք գավառական քաղաքից»¹:

Իր ժամանակի հայ պարբերական մամուլին Ալեքսանդրապոլից սչ միայն թղթակցում էին, այլև ստանում՝ կարդում: Մեր մտավոր հաշվումներով բաժանորդագրությունը ստացվել է՝ «Նույս» (Պոլիս) 5 օրինակ, «Մասիս» (Պոլիս) 3 օրինակ, «Մեղու» (Պոլիս), «Հյուսիսափայլ» (Մոսկվա), «Արարատ» (էջմիածին) ավելի քան

¹ «Մեղու Հայաստանի», 1874, նոյեմբերի 2, № 43, 2. Ղ.-ի (Հայրապետ Ղուկասյանի) հոդվածը:

50 օրինակ, «Նույս» (Արմաշ), «Վաճառական» (Թիֆլիս), «Մամուլ» (Պոլիս), «Փարոս» (Մոսկվա), «Ծաղիկ» (Զմյուռնիա), «Կոունկ Հայոց աշխարհի» (Թիֆլիս), «Արևելյան Մամուլ» (Զմյուռնիա), «Մըշակ» (Թիֆլիս), «Փորձ» (Թիֆլիս), «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), «Փարոս Հայաստանի» (Մոսկվա) 54 ուրբուր, «Դպրոց» (էջմիածին) և այլն:

Ալեքսանդրապոլում, ինչպես այդ մասին հիշվում է նաև սույն աշխատության կցված ժանդարմական վարչության գրություններին մեջ, ստացվել է նաև արևմտահայ այնպիսի գրականություն, որի ժուտըրը Ռուսաստան կառավարության կողմից արգելված է եղել:

Այս բոլորից հետո, հասկանալի է, թե ինչու ցարական ոստիկանությունը, փոքր ժողովուրդների ազգային լեզվի, կրթության և առհասարակ նրանց ազգային-կուլտուրայի զարգացման յխերիմ այդ թշնամին, պետք է իր ավերիչ գործունեությունը փոխադրեր նաև Ալեքսանդրապոլ՝ սնչացնելու տեղում աճող լուսավորության առաջին ծիլերը:

Ցարական իշխանությունը լավ էր հասկանում, որ ճնշված ժողովուրդների ազգային կրթությունն ու դաստիարակությունը մեծապես նպաստում էին նրանց ինքնագիտակցության բարձրացմանը, ազգային-ազատագրական պայքարին: Հենց դրա համար էլ վելիկոռուսական շովինիզմի, ցարիզմի ատելությունն ու հալածանքներն առանձնապես ուժեղ էին արտահայտվում ենթակա այն ժողովուրդների նկատմամբ, որոնք իրենց ազգային զարթոնքի և կոստոլիդացիայի էպոխայում մեծ ակտիվությունը առաջ էին քաշում ազգային կուլտուրայի, դպրոցների, գրականության, մամուլի, ինտելիգենցիայի զարգացման հարցերը:

Ցարական Ռուսաստանում հայերը գտնվել են այն ճնշվող ազգերի թվում, որոնց կուլտուրական հաստատությունները, դպրոցը, լեզուն, գրականությունը, մամուլը սիստեմատիկ արգելքների ու հալածանքների են ենթարկվել ուսակցիոն ուժերի կողմից: Հայկական դպրոցների հալածման պատմության մեջ սովորաբար նշվել են 1885, 1896 և 1903 թթ. դեպքերը: Իրականության մեջ ցարական ինքնակալության նմանօրինակ քաղաքականությունը սկիզբ էր առել դրանից շատ առաջ: Ալեքսանդրապոլի դեպքերը ցարիզմի ընդհանուր այդ քաղաքականությունը լուսաբանելու տեսակետից բավականաչափ հետաքրքիր նյութ են տալիս մեզ:

Ալեքսանդրապոլում հալածանքը դպրոցների դեմ շեշտված կերպով արտահայտվում է 1870-ական թվականներին, այսինքն այն շրջանում, երբ տեղում սկսվում է բարեկարգ հիմքերի վրա դրվել դպրոցական գործը: 1875 թվականին Երևանի նահանգապետի կարգադրությամբ Ալեքսանդրապոլի ոստիկանությունը ձեռնամուխ է լինում փակելու տեղի մասնավոր դպրոցները. այդ կարգադրությունը գալիս էր բարձրագույն իշխանությունից և պատճառաբանվում էր նրանով, որ մասնավոր դպրոցները կառավարությունից հատուկ թույլտվություն չունեն: Ժամանակակիցները վերկայում են, որ Ալեքսանդրապոլի ոստիկանությունն այնքան առաջ է գնում, որ նույնիսկ մասնավոր դպրոցների հետ փակում է նաև հոգևոր ծխական դպրոցները:

«Մեղու Հայաստանի» թերթում «Անանուն» ստորագրությամբ հոդվածի հեղինակը, խոսելով այդ մասին, գրում է. «Այս պատվերը (խոսքը Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցները փակելու առթիվ Երևանի նահանգապետի արած կարգադրության մասին է. — Վ. Պ.) տեղույն ոստիկանության ներկայաշուրջիչները կատարեցին ո՛չ միայն ճշտությամբ, այլ և շահազանցությամբ... Ինչ և իցե, խոսքս տեղական ոստիկանության այդ մասնավոր և ավելորդ քմահաճության մասին չէր, այլ թե ինչպես մոտ ժամանակումս քաղաքիս բոլոր մասնավոր ուսումնարանները պիտի փակվին, վասնզի նոցա պահո՞ղներն և դասատուքը չունին իրավունք և չեն էլ կարող նոր հրամանի զորությունը ստանալ այդ՝ ուսումնական շրջանի հոգաբարձուից... Այժմյան մասնավոր ուսումնարանաց մեզ բաղմաթիվ սովորողները պետք է հարկադրվին գուրկ մնալ դոնե գրագիտության սկզբունքներից և ժամանակով ավելացնեն մեր վայրաշրջիկ փողոցականների թիվը»¹:

Երկրորդ դեպքը տեղի է ունենում նույն տարվա մայիսին, երբ 1875 թ. մայիսի 16-ին Ալեքսանդրապոլ է գալիս Կովկասի փոխարքա, Ալեքսանդր II-ի փոքր եղբայր, մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը (տե՛ս ծանոթ. 13):

Հաջորդ օրը փոխարքան դիտում է Ալեքսանդրապոլի ամրոցը. Կսկ մայիսի 18-ին այցելում ս. փրկչի եկեղեցին, դպրոցը, որտեղ հարցաքննում է աշակերտներին ուսաց լեզվից և, ինչպես հաղորդում է «Մշակ»-ի թղթակիցը, անբավական է մնում այդ հարցաքնն-

նությունից: Առիթը պատրաստ էր: Սկսվում է հալածանքների ու փոփոխությունների մի ամբողջ շարք:

Նույն այդ տարվա փետրվարի 14-ին Պետերբուրգից ժանդարմերիայի շեֆը կարգադրություն էր արել տեղերին՝ ուժեղացնել հսկողությունը դպրոցների, հրապարակական դասախոսությունների, ընթերցարանների, գրավաճառության վրա և այլն. փոխարքան Ալեքսանդրապոլում փաստորեն իր վրա է վերցնում ժանդարմական այդ կարգադրության իրադրո՞ւմը:

Այս դեպքից մի քանի օր հետո Երևանի նահանգապետը հատուկ գրությամբ փոխարքայի հարցաքննության արդյունքների մասին տեղեկացնում է Երևանի թեմի հոգևոր դպրոցների տեսչին. այդտեղ նա գրում է. «Նորին կայսերական բարձրությունը մեծ իշխան Փոխարքայն Կովկասու ի 18-ն մայիս ամսուց այց ելանելով հոգևոր ուսումնարանաց Ալեքսանդրապոլ քաղաքի, բարեհաճեցաւ նկատել, թե բոլոր աշակերտքն և աշակերտուհիք ուսումնարանուք չաճոսիկ ուսումնարանս, ոչ միայն ոչ ուսանեն զլեզու ռուսաց, այլև չկարեն խօսիլ ռուսերեն, զորմէ նորին կայսերական բարձրությունն արտայայտելով հոգաբարձուաց զիրն անբավականությունն, բարեհաճեցաւ հրամայել անյապաղ հոգատար լինել պատշաճաբար կերպով առ Ս հեռացուցանել զայդ կարևոր զանցառությունն»¹:

Երևանի թեմի հոգևոր դպրոցների տեսուչն ստանալով նահանգապետի գրությունը, իր հերթին նրա բովանդակությունը հաղորդում է Ալեքսանդրապոլի դպրոցների հոգաբարձությունը, անհետև համապատասխան կարգադրություն:

Դպրոցի հոգաբարձությունը, ուսուցչությունը, այդպիսով, ընկնում են ծուղակի մեջ: Նրանցից ոմանք, հետագա հալածանքից խուսափելու նպատակով, բարձրք են համարում հեռանալ Ալեքսանդրապոլից, մի մասին ուղղակի հեռացնում են, կարգադրում են հրավիրել նոր տեսուչ, ուսաց լեզվի նոր դասատուներ: Եվ այդ ամենը կատարվում էր այն դպրոցում, որի գործերի տնօրինությունն հոգևոր իշխանությանն էր վերապահված: Ի կատարումն մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի հրամանի, Երևանի թեմի հոգևոր դպրոցների տեսուչ, կոլլեժսկի սեկրետար Գևորգ Տեր-Հա-

¹ Ձեռքի տակ չունենալով նահանգապետի գրությունը, բաղվածքն անում ենք շՄՍԻ պատմական արխիվում գտնվող, Ալեքսանդրապոլի հոգաբարձությունն ուղղված, Երևանի թեմի հոգևոր դպրոցների տեսչի գրությունից:

¹ «Մեղու Հայաստանի», 1875, հունվարի 4, № 1:

բությունյանի հրավերով և նախագահութեամբ, Ալեքսանդրապոլի հոգաբարձութիւնը 1875 թ. մայիսի 19-ին նիստ է գումարում, որտեղ և վճռուում է «Մշակ», «Մեղու Հայաստանի» և «Кавказ» լրագրերի միջոցով հրավիրել ուսաց լեզվի դասատուներ: Հատուկ դիմում է արվում նաև Կովկասի շրջանի դպրոցների հոգաբարձու նեվերովին: Այդ հայտարարութիւնը մեզ հաջողից գտնել միայն «Մշակ»-ում, որ և բերում ենք նույնութեամբ.

Նամակ խմբագրին

Ալեքսանդրապոլ, մայիս 21.

Հոգաբարձութիւնն վիճակային հողեր դպրոցի Հայոց Աղեքսանդրապոլու ցանկանալով առաւել ևս բարեկարգել զուսումնական մասն դպրոցի, մանաւանդ զդասատուութիւն ուսաց լեզուի դեռ անցեալ ամի պարբերական հրատարակութեամբ թէպէտ հրաւիրեաց զցանկացողս ուսուցչութեան ի նոյն դպրոցի, որպէս զի աւարտեալ իցեն նոքա միին ի համալսարանի և միւսն ի գիմնազիայի, սակայն չերեկեցաւ այնպիսի ոք, իսկ ի ներկայումս վառեալ գորով այդպիսի փափագանօք, և հետևաբար, պարտաւոր գոլով կատարել զբարձրագոյն կամս նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Փոխարքային Կովկասու՝ որ բարեբախտս կացոյց զերկսեռ դպրոցս իւրով այցելութեամբ ի 18-ն մայիս ամսոյ, ի մասին յառաջադիմութեան դասախօսութեան ուսաց լեզուի հրաւիրէ զերկու հայ ուսուցիչս, որք աւարտեալ իցեն զընթացս ուսման իւրեանց ի բարձր ուսումնարանս տերութեան Ռուսիոյ առ ի վարել զպաշտօն ուսուցչութեան ուսաց լեզուի երկսեռ Հողեր ուսումնարանս քաղաքիս, և եթէ հնար է և զպաշտօն տեսչի:

Ի մասին մանրամասն պայմանաց, նոյնպէս և վասն ոռնկաց նոցա խնդրի ի ցանկացողաց որքան կարելին է շուտամիտով շարունակել զգրագրութիւն ընդ հոգաբարձութեանս կամ ընդ միոյ յանդամոց նորին, որպէս զի զկնի պատշաճաւոր կարգագրութեան կարողանայցեն յառաջիկայ սեպտեմբեր ամսոյ շարունակել զյանձնելի ինքեանց պաշտօնն:

Հոգաբարձուք երկսեռ ուսումնարանաց (հինգ ստորագրութիւն)»:

Այս հայտարարութեան մեջ, ինչպէս տեսնում է ընթերցողը, հոգաբարձութիւնն անհաջող փորձ է անում արգարանալ՝ պատճա-

ռաբանելով, թե իրենք դեռ մեկ տարի առաջ են հրավիրել ուսաց լեզվի դասատուներ, բայց այդպիսիք չեն երեացել:

Նույն խնդրի կապակցութեամբ Սլիւնին «Մշակ»-ում գրում է. «Ի՞նչ անեն դպրոցաց ողորմելի հոգաբարձուները, երբ այդ մասին հարմար ուսուցիչ չեն գտնում». այդպիսիք գերադասում են պետական պաշտոն վարել 600—700 ու., քան ուսուցչութիւն անել 1000 ուսուցչով¹:

Թե՛ հոգաբարձութեան և թե՛ Սլիւնու պատճառաբանութեանները, ներկա դեպքում, այնքան էլ համոզիչ չեն, քանի որ մեզ հայտնի են ուսերեն լավ իմացող Միքայել Տեր-Ռավթյանի (Ներսիսյան դպրոց և Պետերբուրգի համալսարանավարտ) և Գրիգոր Տեր-Մելքիսեթեկյանի (տե՛ս ծանոթ. 14) դիմումները 1874 թվականին, որոնք Ալեքսանդրապոլի հոգաբարձութիւնը թողնում է անհետևանք²: Առաջարկութիւններ են եղել նաև ուս դասատուների կողմից. այնպէս որ հոգաբարձութիւնը բավարար հիմք չունենար արդարանալու, թե ուսաց լեզվի դասատուներ չեն եղել: Յարական սատարապը որոշ հիմք ուներ զժողճ լինելու: Իսկ եթէ անհավանական չհամարենք նաև այն, որ նա տեղյակ է եղել ժանդարմական վարչութեան նույն տարվա ապրիլին Ալեքսանդրապոլում հայտնաբերած «գաղտնի» խմբակների գոյութեանը, այդ խմբակների և նույն այդ դպրոցի ուսուցչութեան ու աշակերտութեան կապերին (տե՛ս հաջորդ գլխում), ապա թերևս ավելի հասկանալի կդառնա մեծ իշխանի ու նրա մանր ու մեծ կամակատարների հալածանքները Ալեքսանդրապոլի դպրոցների և ուսուցչութեան նկատմամբ:

Բնորոշ է, որ Ալեքսանդրապոլի այս դեպքերը, ճիշտ է որոշ աղճատումներով, իրենց արտահայտութիւնն են գտնում նաև արևմտահայ մամուլում: Ինչպէս արդեն ասել ենք, XIX դարի կեսերին արևելահայ և արևմտահայ հատվածների մերձեցումը գնալով ավելի ու ավելի էր ամրապնդվում: Ալեքսանդրապոլը ևս սերտ կապերի մեջ էր գտնվում արևմտահայերի հետ:

¹ «Մշակ», 1875, հունիսի 5, № 22:

² Գրիգոր Տեր-Մելքիսեթեկյանը՝ դեմոկրատական հովերով տարված հետաքրքիր այդ անձնավորութիւնը, իր դիմումի մեջ՝ ուղղված Ալեքսանդրապոլի հոգաբարձութեանը, գրում է. «Առաջարկում եմ Ձեզ ծառայել մաթեմատիկայից, այն է՝ զեմմետրիա, ալգեբրա և թվաբանութիւն, աշխարհագրութիւնից, ընդհանուր պատմութիւնից, այլև ուսաց, ֆրանսերեն և հայ լեզուներից, որք կառաջարկեք՝ կընդունենմ»:

¹ «Մշակ», 1875, հունիսի 5, № 22:

Ինչպես տեսնում ենք, ցարական ինքնակալությունը 1885, 1896, 1903 թվականների հայկական դպրոցների փակումից տարիներ առաջ, 1870-ական թվականներին ձեռնամուխ էր եղել Ալեքսանդրապոլի դպրոցների փակման և հայ ուսուցչությունը հալածելու քաղաքականությանը: Ալեքսանդրապոլում այդ հալածանքները սուր կերպարանք են ընդունում, որովհետև փոխարքայի և ժանդարմական վարչության համար պարզ էր դառնում, որ տեղում ծագող հակացարական, ազգային-դեմոկրատական շարժումը կազմակերպվում և գլխավորվում էր միաժամանակ ուսուցչաբյան կողմից, որ այդ շարժմանը դեմոկրատական խավերից բացի, գործունյա կադրեր էին մատակարարում նաև դպրոցները:

Սոցիալ-տնտեսական և կուլտուրական այսպիսի պայմաններում էր ահա, որ Ալեքսանդրապոլում ծնունդ առավ ազգային-ազատագրական շարժումը և հանդես եկավ առաջին գաղտնի ընկերությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԵՎ ՂԱՐԱՔԻՎՍՍՅՈՒՄ

Ալեքսանդրապոլը եղել է արևելահայերի սոցիալ-դասակարգային և ազգային-ազատագրական պայքարի կարևոր օջախներից մեկը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի շատ նշանավոր դրվագներ են կապված Ալեքսանդրապոլի անվան հետ, սկսած 1830-ական թվականներին ցարական շինովնիկների և տեղական կեղեքիչների դեմ ուղղված առաջին ելույթներից, 1860—1870-ական թվականների ազգային-դեմոկրատական գաղտնի ընկերություններից մինչև 1920 թվականի մայիսյան փառապանծ ապստամբությունը: Ալեքսանդրապոլի աշխատավորությունը ազգային-ազատագրական և ռևոլյուցիոն պայքարի վառ օրինակներ է գրել մեր ժողովրդի պատմության մեջ, որոնցով սերունդներ են դաստիարակվել և պիտի դաստիարակվեն:

Մինչև ազգային-ազատագրական շարժման մասնակցելը և գաղտնի խմբակների հանդես գալը, դեռևս XIX դարի առաջին կեսին, Ալեքսանդրապոլի և շրջանի աշխատավորները քանիցս պայքարի են դուրս եկել իրենց ներքին ու արտաքին ճնշողների դեմ: Տակավին 1809 թվականին Շորագլայի բնակիչները հրաժարվում են Փամբակի մոլորովին հարկ վճարել, պատճառաբանելով, որ պատերազմներից շատ են տուժել: 1811 թվականին Շորագլայի և Փամբակի հայերը բողոքում են Կովկասի կառավարչապետ մարկիզ Պաուլուչիին, Բուդաղ-սուլթանի և տեղական պաշտոնյաների ծանր ճնշումների դեմ²:

¹ Акты, т. IV, стр. 483—484

² Акты, т. V, стр. 115.

1837 թ. դեկտեմբերի 6-ին Ալեքսանդրապոլի քաղաքացիները, 20 հոգու ստորագրությամբ, խնդրագիր են ուղարկում թագավորին, որանց նկարագրելով իրենց ծանր դրությունը, գրում են.

«Թող հայտնի լինի քո կայսերական մեծությունը, որ մենք Գյումրու (այժմ՝ Ալեքսանդրապոլ) հին բնակիչներս Յիցիանովի ժամանակ միահռոգի և «ամրաբերան» ընդունել ենք քո տերություն հպատակությունը... Գյումրին մինչև օրս գյուղ էր, իսկ այժմ դարձել է քաղաք, ուստի մենք կրում ենք և՛ գյուղական, և՛ քաղաքային պարհակները: Մեր գլխավոր ցավը այն է, որ քո պետի (այսինքն՝ քո նշանակած պետի) համար հերկում ենք, հնձում, կալսում և հացահատիկը շտեմարան հասցնում: Բացի այդ, տարեկան նրան վճարում ենք 40 շեավերտ ցորեն: Հացից զատ, մենք նրան տալիս ենք տարեկան 6 փութ կտավատի ձեթ և 6 փութ կովի յուղ: Պետի համար մեր վճարած պարհակները ծանր է մնացած բոլոր պարհակներից: Նա մեզ չի թողնում մտնել նույնիսկ կառավարչատան քակր... Մենք ամբողջ «հին-գյումրաբնակ ժողովուրդս» ուստիկանություն ձեռքում գտնվում ենք ստրկական դրության մեջ: Մեր տգիտությունն պատճառով մենք «քիչ» (այսինքն՝ ոչ բոլորը) գրեցինք, բայց դու «շատ» հասկացիր»¹:

Ալեքսանդրապոլի բնակիչների այս դիմումը պարզ ու սրոշակի ցույց է տալիս նրանց խորը դժգոհությունն ու բողոքը ցարական շինովնիկների դեմ, նրանց իրավազուրկ ու ճնշված վիճակը: Իրենց դժգոհությունը նրանք հայտնել էին Նիկոլայ I-ին նաև այն ժամանակ, երբ նա եղել էր Գյումրիում:

Ավելի անմխիթար էր գավառի գյուղացիների դրությունը: Նրանք կրկնակի ճնշման էին ենթարկվում տեղական կալվածատերերի ու ցարական շինովնիկների կողմից և այդ էր պատճառը, որ 1838 թվականի հունվար-փետրվար ամիսներին գյուղացիական հուզումներ տեղի ունեցան Փամբակ-Շորագյալի դիստանցիայի մի շարք գյուղերում (Հոռոմ, Փոքր-Ղարաքիլիսա, Բայանդուր, Արխըր-Վալի, Տավշան-Ղշաղ և այլն): Ալեքսանդրապոլցիների վրա ցնցող տպավորություն է գործում, երբ 1838 թ. հունվարի 25-ին, Հոռոմ գյուղի բնակիչներից ավելի քան 50 հոգի, մահակներն ու ճիպոտները ձեռքներին ներխուժում են քաղաք, հարձակվում գլխավոր

պրիտավ Շիպկենբախի տան վրա, ջարդում լուսամտաները և փորձում դատաստան տեսնել նրա հետ: Ըմբոստացած գյուղացիներին ցրում են բերդից օգնության եկած կայազորի զինվորները և 27 հոգու բանտարկում¹:

Այս դեպքերը մեծ ազդեցություն են ունենում ոչ միայն Փամբակ-Շորագյալում, այլև Հայաստանի մյուս շրջաններում: Փամբակ-Շորագյալի դիստանցիայի գյուղացիների օրինակին հետևում են Նոր Բայազետի շրջանի (նախկին Գյուկշայի մահալի) գյուղացիները: 1838 թ. փետրվար-մարտ ամիսներին տեղի է ունենում Նոր Բայազետի շրջանի 30 գյուղերի հայերի և աղբբեջանցիների համատեղ լեռնյթը, որը նույնպես ձնշվում է զորքի օգնությամբ: Հետագայում ոտքի են կանգնում Գարալագյալի և այլ շրջանների գյուղացիները: Եվ այսպես, ցարիզմի ու հողատեր-կալվածատերերի դեմ ծայր էր առնում գյուղացիական մասսայական մի շարժում՝ հողի և ազատության համար:

Ուշագրավ է, որ նույնիսկ այս շրջանում, սոցիալական պայքարն Ալեքսանդրապոլում և գավառում արտահայտվում էր նաև աղանդավորական (թոնդրակյան) շարժման միջոցով: 1837—1838 թթ. Ալեքսանդրապոլում, Արխվալիում, Հոռոմում և այլ վայրերում արևմտահայ գաղթականներ մեջ աշխուժանում է աղանդավորական շարժումը, տարածվում է «Բանալի նշմարտության» դիրքը, որ Արևմտյան Հայաստանից բերվել էր գաղթի ժամանակ:

«Յաղագս պատնառանաց նոր մանիքեցոց և հետևողաց նորին» արխիվային մի փաստաթղթում այդ մասին ասված է, որ Արխվալի գյուղի բնակիչների մեջ դեռևս 55 տարի առաջ, ննուս գավառի Չառլամ գյուղում, մուսթ էր գործել Բանալի ճշմարտության դիրքը: 1830 թվականին, երբ նրանք եկան Արխվալի, իրենց հետ բերեցին այդ դիրքը: Մեսրոպ Բուրաղյանը այն հանձնում է Կիրակոս Ավդալյանին, սրա որդի Տանոն կարդում և հայտնում է Կրտեղին: Այնուհետև գյումրեցի թարգմանիչ Սարգիսը, տիրացու Գևորգ Սարգսյանը, թարգման Մանուկը, կաղվալանցի Գրիգորը ծանոթանում են այդ գրքին, ընդունում են նրա գաղափարները, սովորեց-

¹ С. А. Егизаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, стр. 254, 1891, Казань.

¹ ЦГИА Грузинской ССР, ф. 1105, д. 246. Տե՛ս նաև Երևանի Պետական համալսարանի դիտական աշխատություններ, հատար 62, պատմական գիտությունների սերիա, պրակ 3, մեր հոդվածը՝ «Крестьянское волнение в Бамбак-Шорагяльской дистанции».

նում են տրիշներին և այդպիսով բազում մարդիկ դառնում են աղանդավորներ¹։

1860—1870-ական թվականներին աղանդավորական և դավանափոխական (բողոքական) շարժումն ավելի է աշխուժանում։ Քաղաքից բացի, շարժումն ընդգրկում է Արևմտյան, Հոռոմ, Ղուլիջան, Դյուպրյանդ, Ղուլմնի-Ղշլազ, Եգյանլար և այլ գյուղերը։ Դավանափոխությունը ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ գյուղերում ուներ իր սոցիալ-տնտեսական արմատները։ Այդ շարժմանը հարում էին առաջին հերթին քաղաքի քայքայվող մասը ու միջին արհեստավորները և գյուղի շքավորական տարրերը։ Առհասարակ դավանափոխությունը արհեստավորների ու գյուղացիների շահագործվող մասի համար միջոց է եղել հակադրվելու շահագործող տարրերին։ Եվ պատահական չէ, որ 1860 թվականին Ալեքսանդրապոլի մի խումբ ուստաբաշիներ կազմակերպված ձևով դիմում են առաջնորդական փոխանորդ Վարդան Եպիսկոպոսին և նրա օգնությամբ աղանդավորներից բանտարկել տալիս 20 հոգու, որոնցից երկուսը կանայք²։ Ալեքսանդրապոլի և ամբողջ Կովկասի բողոքական շարժման մեջ այդ շրջանում մեծ դեր էր կատարում կրթիված ու եռանդուն քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանը (տե՛ս ծանոթ. 15)։

Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական կյանքի և ազատագրական շարժումների զարգացման համար անհետևանք չանցավ նաև 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմը։

Ինչպես հայտնի է, կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունների զլխավոր ուղղությունը Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությունն էր։ Ալեքսանդրապոլն ու Կարսը պատերազմող կողմերի առաջին հարվածի օբյեկտներն էին։ Ալեքսանդրապոլի և Շիրակի մյուս սահմանամերձ վայրերի բնակիչները, դեռ մինչև պատերազմի սկսվելը, քանիցս ենթարկվել էին թուրքական զավթիչների ավազակային հարձակումներին։ Նրանք լսեցին թուրքական հրետանու առաջին կրակոցները մոտակա Բայանդուր գյուղի վրա, սեփական աչքով տեսան ռուս զինվորների ու իրենց հայրենակիցների առաջին զոհերին։ Նրանք ականատես եղան Բաշ-

կադրքլար գյուղի մոտ գնեերալ Բեհբուլթովի հրամանատարությամբ ռուսական զորքերի տարած փայլուն հաղթանակին և մեծ բազմությունը ընդառաջ Կլան ու քաղաքից դուրս տղջոճեցին նրանց։ Առաջին անգամ էր Ալեքսանդրապոլը տեսնում այդպիսի տեսարան։

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի այդ և հետագա հաղթանակները նոր հույսեր էին արթնացնում հայ ժողովրդի մեջ։ Հայերը ամեն կերպ օգնում էին ռուսական զորքերին, նրանց հաղթանակի հետ կապելով իրենց ազատագրությունը՝ թուրքական բռնակալության ծանր լծից։

Ղրիմի պատերազմը վերջացավ ցարական Ռուսաստանի պարտությունով։ Կարսը վերագրվեց թուրքիային։ Ալեքսանդրապոլի բնակչությունը, որի ճնշող մեծամասնությունը Կարսից էր գաղթել և բազմաթիվ թեթևով կապված էր իր ծննդավայրի հետ, խիստ դժգոհ մնաց կատարված տխուր փաստից։

Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանում զնալով ավելի ու ավելի ուժեղացավ ժողովրդի պայքարը ցարական, ճորտատիրական նեխած ու փտած կարգերի դեմ։ Տարեցտարի աճող ազատագրական շարժումները, գյուղացիական բուռններն ու ապստամբությունները ամբողջ երկրում ասեղծեցին ռևոլյուցիոն փրագործություն, որն փր խոշոր ազդեցություն ունեցավ նաև հայ կյանքի վրա։

Հետաեֆորմյան շրջանում Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը ավելի սերտորեն կապվեցին Ռուսաստանի հետ։ Յարական, ճորտատիրական կարգերի դեմ ռուս ժողովրդի մղած ազատագրական պայքարը ոտքի հանեց նաև ճնշված ժողովուրդներին։ Ազգային-ազատագրական և ազդարային շարժումները Ռուսաստանի ծայրամասերում լայն ծավալ ստացան։ 1860—1870-ական թվականներին Անդրկովկասի ուսանողներից (այդ թվում և հայ) շատերը մտան Ռուսաստանի ռևոլյուցիոն կազմակերպությունների մեջ և ակտիվ մասնակցություն ունեցան ցարիզմի դեմ մղվող պայքարին։

1866 թվականին Ալեքսանդրապոլի գավառի 26 գյուղերի բնակիչները միացյալ ուժերով հանդես եկան դավառապետի ճնշումների ու կամայականությունների դեմ։ Գյուղացիների բողոքը ըստ էության միայն դավառապետի դեմ չէր, այլև ամբողջ իրավական ու սոցիալական ճնշման դեմ։

Ռուսաստանում խմորվող ռևոլյուցիոն շարժումների, ինչպես

¹ ЦГИА Грузинской ССР, ф. 1105, д. 246, л. 51.

² Հ. Դուկասյանց, Բողոքականությունը Կովկասում հայոց մեջ (պատմական նյութեր), 1886, Թիֆլիս։

և 1863 թ. լեհական ապստամբութեան, արևմտահայերի ազատագրական պայքարի, մասնավորապես 1862 թ. Զեյթունի ապստամբութեան, արձագանքները զանազան ճանապարհներով հասնում էին նաև Անդրկովկաս, հաստիպես նրա վարչական, քաղաքական և կուլտուրական կենտրոն Քիֆլիսը, որտեղ քաղաքական աշխատանք ծավալելու լուրջ քայլեր էին կատարում տեղացի և ուսւս ռևոլյուցիոններները:

Իր տեղում արդեն ցույց ենք տվել, որ XIX դարի երկրորդ կեսին Ալեքսանդրապոլն արդեն իսկ դուրս էր եկել ինքնամիտի կյանքի շրջանակներից և այս ու այն շափով կապվել էր Անդրկովկասի, Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի, Թուրքիայի ու Պարսկաստանի առևտրա-արդյունաբերական որոշ կենտրոնների ու շուկաների հետ: Տնտեսական այդ կապերը չէին կարող չազդել Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Նման կապերը գավառական այդ քաղաքը այս ու այն շափով ներգրավում էին կապիտալիստական դարգացման ոլորտի մեջ, նրան հաղորդակից դարձնում ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում առաջացող նոր երևույթներին: Այստեղից, իհարկե, չի հետևում և ճիշտ չէր լինի հետևեցնել, թե Ալեքսանդրապոլն արդեն իսկ դարձել էր կապիտալիստական տիպի մի քաղաք, ինչպիսիք հետագայում դարձան Բաքուն և Բաթումը:

Ալեքսանդրապոլը, ավելի քան Հայաստանի մյուս քաղաքները, սերտ կապեր տնեք Քիֆլիսի հետ, որտեղ մեծ թվով հայեր էին բնակվում և հասարակական մտքի ու կուլտուրայի ամենախոշոր կենտրոնն էր Կովկասում: Մինչև Երևանի նահանգի կազմվելը, 1805—1849 թթ. նա մտնում էր Քիֆլիսի նահանգի մեջ, վարչական կապերով էլ նրա հետ էր կապված:

Եթե Քիֆլիսի միջոցով Ալեքսանդրապոլը կապվում էր Անդրկովկասի համապատասխան շրջանների և Ռուսաստանի հետ, ապա Ալեքսանդրապոլի միջոցով Քիֆլիսը և կովկասահայերը կապվում էին Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի հետ:

Այսպիսի իրադրություն մեջ է ահա, որ 1860—1870-ական թրվականներին հանդես են գալիս և գործում արևելահայ ազատագրական առաջին ընկերությունները:

Ընկերություններ կազմելու գաղափարը հայ կյանքում նոր չէր: Մինչ այդ էլ Ռուսաստանի և Անդրկովկասի հայկական կենտ-

րոններում գոյություն տեսին զանազան ընկերություններ՝ կրթասիրական, ընթերցասիրական, մարդասիրական, բարեգործական, որբախնամ և այլն: Նման ընկերությունները հանդես գալը միշտ էլ ունեցել է իր կոնկրետ նախադրյալները և կոնկրետ նպատակները: Սակայն, այդ ընկերությունների գործունեությունից կարելի է նկատել, որ դրանք մեծ մասամբ պատվել են ազգային կրթության, դաստիարակության, թշվառ ու աղքատիկ ազգայիններին օգնելու, ազգային գիտակցությունը վարգացնելու շուրջը՝ որչափով այդ հրեմարավոր էր ցարիզմի ազգային-գաղտնախնային ճնշման պայմաններում:

Այդպիսի ընկերություններ 1860—1870-ական թվականներին, ինչպես և նախընթաց ու հետագա տարիներին, գործել են Բաքվում, Քիֆլիսում, Շուշիում, Երևանում, Նախիջևանում, Նոր Բայազետում և այլուր:

Պատմական փաստերը վկայում են, որ այդ ընկերություններն փրենց թուլլատրված նպատակին ծառայելուց բացի, հաճախ օգտագործվել են ազգային-գեմտկրատական, հակացարական օպորտիցիոն տարրերի կողմից: Նման դեպքեր ավելի շատ տեղի են ունեցել դպրոցներին կից կազմակերպված ընթերցասիրական, ինքնազարգացման խմբակներում հավաքված երիտասարդության մեջ:

1891 թվականին Կովկասյան դպրոցական շրջանի հոգաբարձուն Երևանի գիմնազիայի դիրեկտորին գրած իր գաղտնի մի գրություն մեջ հետևյալն է ասում.

«Բազմաթիվ օրինակներն ապացուցում են, որ ռևոլյուցիոն կազմակերպությունները ծնունդ են առնում այսպես կոչված հնք-նակրթական ու ինքնավարգացման խմբակներում, որոնք երևան են գալիս աշակերտների շրջանում, մեծ մասամբ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտության մեջ:

Սովորաբար այդպիսի խմբակները ծառայում են շարամիտ պրոպագանդիստներ աճեցնելու համար կամ առնվազն, բացասական ուղղության գործիչներ սնուցանելու: Հավաքված դրամներով կազմվում են տենդենցիոզ և արգելված դրքերից ու ժուռնալներից գրադարաններ: Ընթերցումների կապակցությամբ կազմակերպվում են հավաքություններ և ժողովներ, կարդացածի մասին ճառեր ասելու, դատողություններ անելու համար և այլն»¹:

1 ՀՄՍՌ Պետական կենտրոնական Պատմական արխիվ, գործ 1813, էջ 11:

Այս փաստաթուղթը պարզ ցույց է տալիս, թե ինչպես Կովկասում դպրոցական գործի գլուխ կանգնած ցարական չինովնիկները ամեն կերպ ջանում էին խեղդել ինքնուրույն միտքն ու ազատ խոսքը աշակերտության մեջ: Դա միայն 1890-ական թվականներին հատուկ երևույթ չէր, դա ճնշված ազգերի կուլտուրայի նկատմամբ ցարիզմի կողմից կիրառվող ընդհանուր քաղաքականությունն էր:

Ալեքսանդրապոլում առաջին ընկերությունը կազմվել է 1860-ական թվականների սկզբներին՝ ընթերցասիրական ընկերություն անվան տակ:

Ընկերությունը հիմնադրվել է մի քանի ուսումնասիր երիտասարդների ջանքերով, անդամների թիվը հասել է մոտ 25 հոգու: Ընկերությունն իր յուրաքանչյուր անդամից հավաքած տարեկան հինգ ռուբլի անդամավճարներով և ստացված նվերներով, վիճակային դպրոցին կից բաց է անում ընթերցարան, որտեղ հավաքվում կարդում էին լրագրեր, գաճապահան գրքեր և խորհրդածո՞ւմ «ազգօգուտ» խնդիրները շուրջը:

Այս ընկերությունը շատ թե քիչ ակտիվ գործունեություն ցուցաբերում է միայն առաջին տարում: Այնուհետև նա տարեցտարի հետադիմում է, ընկերության անդամներն ու նյութական միջոցները նվազում են և իր գոյությունը երկրորդ տարվա կեսին դադարում է գործելուց:

Հետագայում այս ընկերության նախկին անդամներից մի քանիսի նախաձեռնությամբ, ընթերցարանի ցիբ ու ցան եղած գրահանույթի տու գույքի բազայի վրա, ընկերությունը վերականգնվում է՝ պահպանելով հին անունը: Նոր կանոնների համաձայն, նկատի առնելով, որ անդամներից ոմանց համար դժվար կլինի տարեկան հինգ ռուբլի վճարել, մտցվում է դիֆերենցիալ անդամավճար՝ տարեկան չորս, երկու և մեկ ռուբլու սահմաններում: Անդամավճարների շափը, Վ դեպ, չի ազդում նրանց իրավունքների վրա: Մեկ, երկու կամ չորս ռուբլի մուծողներն ընկերության մեջ օգտվում են հավասար իրավունքներով:

Այսպես, վերակազմված ձևով մի տարի գործելուց հետո, այս ընկերությունն էլ արժանանում է իր նախորդի բախտին:

1865 թվականին մի խումբ երիտասարդներ ընկերություն են կազմում դպրոցական գործին օգնելու նպատակով: Այդ ընկերության անդամ Պետրոս Հայկազունին իր հիշողությունների մեջ գրում է. «Նույն 1865 թ. մենք մի խումբ երիտասարդս կազմեցինք ըն-

կերություն, որպեսզի հետևենք քաղաքի դպրոցական գործին հառաչողիմեջու համար: Եվ այդ նպատակով ամսական վճար նշանակեցինք 20 կոպեկ: Մի անգամ նշանակված տեղում ժողովի ժամանակ շրջապատեցին մեզ դարադավոյներով և ուստիկաններով և տարակելուց հետո, առան մեզանից ստորագրություն, որ այլևս իրավունք չունենանք ժողով անելու կամ փող հավաքելու»¹:

Ինչպե՞ս է կոչվել այդ ընկերությունը, ինչքա՞ն է տեղ և ի՞նչ աշխատանքներ է կատարել, մենք ոչինչ ասել չենք կարող, համապատասխան տվյալներ չունենալու պատճառով:

1868 թ. հուլիսի 1-ին վիճակային դպրոցին կից բացվում է Ռբախնամ ընկերությունը, մոտ 100 անդամից բաղկացած, շարաթական երեք կոպեկ անդամավճարով:

Ռբախնամ ընկերությունը, ինչպես ասված է նրա կանոնադրության մեջ, հիմնադրվում է հետևյալ նպատակով.

«Տալ, բերել, զգասագրեանս ուստի և արժան վ, ըստ կարելուսն դիրագնով և վաճառել ի վերայ կարող աշակերտաց մասնատր ինչ օգտի, իսկ որքոցն և շքաւորաց տալ ձրիապէս, հոգալով նաև զայլ հարկատրելիս ուսման նոցա և հաւելեալ դրամս շահեցուցանել վասն այս բարեսիրական նպատակի առ ի հաւաքումն գումարի դրամոց, որ և բանալ զկրպակ գրավաճառութեան, և ջանալ հետըհետէ գօրացուցանել զմիջոցս իւր և ընդարձակել զշրջան ազգօգուտն նպաստից իւրոց աշխատելով զաղբիւր դորին, որպէսզի մի գուցէ Վ դադարելն ընկերութեան ինչևիցէ անակնկալ ձախորդ դիպածոյ պատճառաւ, դադարեսցէ և այս նպաստ բարեսիրական, այլ հոգաբարձութիւնն յաղբիւրէ անտի մշտապէս հոգասցէ զայս պէտս աղքատիկ աշակերտաց դպրոցին»:

Ռբախնամ ընկերությունն ունենում է իր վարչությունը, հինգ անդամներից բաղկացած, գրադարանապետ (մատենապահ), որը աշակերտությանն է ժան գներով, կանխիկ և ապառիկ, վաճառում է դասագրքեր, կամ որը ու շքավոր աշակերտներին բաց է թողնում այդպիսիք՝ օգտվելու և վերադարձնելու պայմանով:

Կարճ ժամանակից հետո Ռբախնամ ընկերությանն է միացվում հոգևոր դպրոցին կից նեղած ընթերցարանը. այդ մասին ընկերության կազմակերպիչներից մեկը հետևյալն է գրում.

¹ Հայկազունու հիշողությունները, գրված 1925 թվականին, գտնվում են մեկ մտո:

«Որքախնամ ընկերության հաստատվելուց փոքր-ինչ ժամանակ հետո տեսնելով թե՛ առանձին ընթերցարան պահելը զանազան պիտոյից համար մի առանձին դժվարություն կպատճառե, ուստի հարկավոր դատվեցավ, որ երկուքը միանան, և ընկերությունը, Ընթերցասիրական անունն ևս կրելով յուր վերա՝ աշխատի յուր անդամոց թիվն բազմացնել, և ընթերցանության ցանկացողները կյուրակի օրերը դան մատենադարանի սենյակը և այնտեղ կարդան»¹։

Այսպիսով, ընկերության հիմնական նպատակին ավելանում է և ընթերցանության գործը. «Մեկ մասովն էլ լրագրներ կբերվին առաջադեմ աշակերտաց և ընկերության ընթերցասեր անդամոց կարդալու համար. ու այդ իսկ նպատակով մատենադարանի մեջ մշտնջենավոր մնալու համար կգնվին ընտիր-ընտիր մատյաններ, որով հետզհետե կարելի է մատենադարանը զարգացնելով ուսումնարանի զարգացմանը օգնել, ընթերցասեր հայ երիտասարդաց ընթերցասիրական փափազներն զոհ անել»²։

Ընկերության մեկ տարվա (1868 թ. 1/7—1869 թ. 1/7) գործունեության հաշվետվությունից երևում է, որ մուտք ունեցել է շաբաթական տուրքերից՝ 114 ռ. 41 կ. (ապոսիկ 21 ռ.), Պալասանյանից (տե՛ս ծանոթ. 16) ընծայված չորս հատ առաջին հատոր քերականության գիրնը՝ 4 ուրլի, վաճառված գրքերից օգուտ՝ 10 ռ. 49 կ. և այլն, ընդամենը՝ 136 ռ. 04 կ.։ Մախս եղել է՝ լրագրերի և ծառային՝ 13 ռ. 43 կ., որը և չքավոր աշակերտների դասագրքերին՝ 9 ռ. 64 կ., մատենադարանի համար գրքեր գնելուն՝ 9 ռ. 70 կ.։

Ինչպես դժվար չէ եզրակացնել այս հաշվետվությունից, Որբախնամ ընկերությունը, իր աղքատիկ միջոցների և մասամբ էլ ընկերության որոշ անդամների պասսիվ վերաբերմունքի պատճառով, հնարավորություն չի տեսնցել լայն աշխատանք ծավալելու։ Փոքր են եղել ընկերության միջոցները, փոքր են եղել ընկերության անդամավճարները, բայց մեծ է եղել ընկերության նպատակը։ Այսպես են ըմբռնել իր ժամանակին ընկերության կաղմակերպիչներն ու փորձող անդամները և դրանով էլ ոգևորվել։

¹ «Որբախնամ», 1869, Բ. տարի, սեպտեմբեր. Միդիտլ վարժապետ Արաբաջյանցի «Մի քանի տեղեկությունք Աղեքսանդրապոլու Հայոց Ուսումնարանի, Ընթերցարանի և Բարեգործական նպատակով կազմված Ընկերությանց վերա» հոդվածը։

² Նույն տեղում։

«Այս ընկերության տուրքը թեև փոքրիկ և աննշան է քանակության կողմանե գլխավորապես այն նպատակով, որ տվողների աչքին բան չերևա, սակայն սկզբունքի նկատմամբ խիստ շատ մեծ է և նշանավոր. վասն զի մեր հասարակությունները ըստ մեծի մասին սովոր չեն իրանց հասարակական գործերը յուրյանց աշխատություններն և սակավիկ ձեռնտվություններն առաջ տանիլ, այլ միշտ հույսերը կարող անձանց վերա դնելով յուրյանք անփութ կմնան, ուստի և գործքերը հառաջ չեն գնալ. ավելի լավ է, որ 100 մարդ մի մի կոպեկ տալով մի մանեթի հասարակական գործ կատարվի, քան թե մի մարդ մի մանեթ տալով. որովհետև առաջին նախապահը ավելի հաստատուն է և տևողական, քան թե երկուրդը»¹։

1860-ական թվականների վերջերին Որբախնամ ընկերության մեջ առաջ են գալիս շերտավորում և տարաձայնություններ։

Ընկերության մեջ եղած տևուցչություն և արհեստավորության ավելի ձախ ու արմատական տարրերը փորձում են բարեգործական, ընթերցասիրական աշխատանքի նեղ սահմաններից դուրս գալ և երիտասարդության մեջ տանել նաև ազգային-քաղաքական աշխատանք։

Շուտով ընկերության ունևոր անդամներից ոմանք հեռանում են՝ դադարելով մոտե՛կ շաբաթական տուրքերը. ավելի ձախ ու դեմոկրատական տարրերն անջատվում են այդ ընկերությունից և տեղի մասնավոր դպրոցի տևուցիչ Արսեն Կրիտյանի ղեկավարությամբ, 1869 թ. ապրիլին հիմնում են Բարենպատակ ընկերությունը։

Քննորոշ է, որ Աղեքսանդրապոլում ազգային-դեմոկրատական շարժման սաղմնավորման այս շրջանում անդամ, տեղի ունևոր տարրերը, ինչպես առհասարակ հայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիան, խստորեն սահմանադժվում են դեմոկրատական տարրերից, լքում են ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ բարձրացող պայքարի ֆրոնտը։

Բարենպատակ ընկերությունն Աղեքսանդրապոլի ազգային-դեմոկրատական ազատագրական շարժման սկզբնավորման արտահայտությունն է։ Այդ ընկերության ծագումը հետևյալ կերպ է նրկարագրում նրա կազմակերպիչ անդամներից մեկը՝ Պետրոս Հայկազունին։

¹ «Որբախնամ», 1869, սեպտեմբեր. ընդգծումն իմն է.— Վ. Պ.։

«Անցյալ ապրիլ ամսում կազմվեցավ Ալեքսանդրապոլում մի ընկերություն՝ «Քարենպատակ» անունով, որի նպատակն է ազգին ծառայելու... Ալեքսանդրապոլում սորանից ի գատ ուրիշ ընկերություններ ևս տեսնված էին, միայն կարճ միջոց տեսլեցամբ, սրունց շարքումը կհամարվի նաև պարոն Մ. Արաբաջյանցի առաջարկությունը որոյացածը անցյալ տարի, որն այժմ կաղ ի կաղ և շատ դանդաղությունը քայլ է փոխում և գրեթե հոգեվարք է, ոմանց անտարբերությունը և անխոհեմությունը, այնպես որ գանձարանում գրեթե տշինչ չկա:

Նորանով Վմ դիտավորությունն այդ ընկերությունը պարսավելը չէ, այլ դորան խրատել, որ բարի նախանձով լցված հոգացողություն և փուլթ ունենան մեր Բարենպատակ ընկերությունից պերազանցելու կամ այս փորակազմ ընկերությունը տեսնելով առաջագեծ աշխատեն իրանք ևս մեծամեծ քայլեր փոխելու, հինը վերանորոգելով և բարեկարգելով. խնդիրն այս է: Որովհետև թողու մի բարենպատակ գործ հոգեարթության մեջ, հիրավի յուրաքանչյուր սրտացավ հային ցավ լինելու է: Հույս ունիմ, որ հասկացող երիտասարդները ուշադրություն կդարձնեն մեր ասածների վրա և մեր խոսքերը չեն լինի «ձայն բարբառոյ յանպատի»: Կարող եմ ասել, որ այս Բարենպատակ ընկերությունը երկարատև և արգասավոր լինելու է, որովհետև հիմը ավագի վերա չէ: Ուրեմն այդպիսի հիմնադիր խելացի ճարտարապետին հարկավոր է սրտի գոհունակություն և շնորհակարտություն նվիրել հրապարակավ, որը խրախուսված՝ ավելի մեծամեծ գործերի ձեռնամուխ լինել աշխատի»¹:

Մկրտիչ վարժապետ Արաբաջյանցը (տե՛ս ծանոթ. 17), որը Որբախնամ ընկերության մեջ տարել է չափավոր դիծ, այդ մասին հետևյալն է գրում.

«Այս տարի մի քանի ամսով առաջ՝ մի քանի պատանիներ, ուսումնասիրական հոգովով վառված յուրյանց գործունեությունը ցույց տալու նպատակով՝ ձեռնարկեցին մի նոր ընկերություն ևս կազմել շաբաթական հինգ-հինգ կուպեկ տուրքով. այս ընկերությունը թեպետ առաջմ աննպատակ մականունը կկրե յուր վերա՝ որպես թե ապագա ժամանակի պահանջը ինչ ազգագուրտ պետք որ հառաջ բերեց, նույն պետքի համար գործադրվի ընկերության

գումարած գրամը, և այսպես ստանա յուր հատկական անունը. սակայն յուր սկզբի ձեռնարկած գործքից երևցավ՝ որ ըստ մեծի մասին համանպատակ է վերոհիշյալ Որբախնամ ընկերությանը: Երանի քե՛ ինչպես որ սոցա գլխավոր աշխատողներին առաջարկվեցավ, մեր ազգի պատմության մեջ հաճախակի հիշատակված բաժանման վնասառիք դեպքերից խրատ առնելով՝ Որբախնամ ընկերության հետ միանային պահելով և յուրյանց առանձին մասնավոր նպատակը»¹:

Նախ՝ Հայկազունու (Բարենպատակ ընկերության հիմնադիրներից) և Արաբաջյանցի (Որբախնամ ընկերության հիմնադիրներից) այս հոգվածներից պարզ երևում է, որ Որբախնամ ընկերությունը հիմնվել է 1868 թվականի հուլիսին, իսկ Բարենպատակ ընկերությունը՝ 1869 թվականի ապրիլին: Այնպես որ ժանդարմական վարչության հաղորդագրությունը (տե՛ս փաստաթուղթ 7 և 9) թե Բարենպատակ ընկերությունը հիմնվել է 1868 թվականին, թյուրիմացության արդյունք է: Դա ևս ցույց է տալիս, որ ժանդարմական վարչության շինովներին երբ չէին կարողացել ինչպես հարկն է խորանալ ընկերության գործունեության մեջ և պարզել անգամ նրա հիմնադրման ճիշտ թվականը: Նրանք պարզապես միմյանց հետ շփոթել են Որբախնամ և Բարենպատակ ընկերությունները:

Մյուս կողմից, ինչպես դժվար չէ նկատել, Արաբաջյանցի մոտ խոսում է Որբախնամ ընկերության ղեկավարի կիրքը: Նա դեմ է եղել Բարենպատակ ընկերության կազմակերպմանը, դրա համար էլ ամեն կերպ փորձում է ցույց տալ, որ նոր ընկերությունը չի տարբերվում հին ընկերությունից, նույնիսկ «աննպատակ» է անվանում նրան, չնայած վերջում հարկադրված է խոստովանել, որ նոր ընկերությունն ունեցել է իր առանձին, մասնավոր նպատակը: Արաբաջյանցը այս հոգվածում Վր տեսնողնցիտղ լինելը մատնում է նաև Պետրոս Հայկազունու մասին դրած ծանոթագրության մեջ:

Բարենպատակ ընկերությունը կազմվելով Որբախնամ ընկերությունից հեռացած արմատական տարրերից, հետագայում լրացնում է իր կազմը տեղի ուսուցիչներից, աշակերտներից ու արհեստավորներից: Ընկերությունը, ըստ ժանդարմական վարչության նյութերի, ունենում է 43 անդամ: Նույն այդ տվյալների համաձայն,

¹ «Մեզու Հայաստանի», 1869, օգոստոսի 30, № 23. ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

¹ «Արարտ», 1869, սեպտեմբեր. ընդգծումն իմն է.—Վ. Պ.:

Մեծ հեղինակությունը է օգտվել Կրիտյանը նաև Բարենպատակ ընկերության անդամների և իր աշակերտների շրջանում, որոնց նա դասավանդել է հայերեն, ռուսերեն, ազգային պատմություն, բնագիտություն և թվարանություն:

Ուսուցչական աշխատանքի հետ միաժամանակ Կրիտյանն զբաղվել է նաև գրական աշխատանքներով: 1875 թվականին լույս է տեսել նրա ռուսերենից փոխադրած «Աղավնյակ» մանկական վիպասանությունը¹: Այդ գրքուկից մի օրինակ 1935 թվականին մեզ հաջողվեց գտնել Ալեքսանդրապոլի ս. փրկչի դպրոցի գրադարանից մնացած գրքերի մեջ, որը ներկայումս պահվում է հանրային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում: «Աղավնյակը»-ը երեխաների համար գրված բարոյախոսական, դաստիարակչական մի փոքրիկ պատմվածք է, որտեղ զարգացվում է այն միտքը, թե մարդիկ պետք է լինեն աշխատասեր, ազնիվ, հեղ ու բարի:

«Նարդախոսքուն, խորամանկություն և կեղծավորություն,— ասում է մայրը իր ութամյա աղջկան, քո սրտում տեղ չպետք է ունենան»²: Մայրը իր երեխային խրատում է՝ աղավնու պես մաքուր լինել, որի սպիտակ փետուրների վրա ոչ մի բիծ չկա, նախատում է նրան, ասելով՝ «Այո՛, ամոթ կլինի քեզ համար, եթե ծուլ լինիս թռչնիցն անգամ»³:

Ավելի արժեքավոր է Կրիտյանի հայրենասիրական ու ազատասիրական մի բանաստեղծությունը, որ տպագրվել է 1872 թվականին «Լիճ» վերնագրով: Այդ բանաստեղծության մեջ Կրիտյանը գրում է.

Ախ, իմ հայրենիք,
Հայաստան քաղցրիկ,

¹ «Աղավնյակ», երեխայական վիպասանություն, աշխատություն Արսենիկ վ. Կրիտյանց, Ռոստով (Դոնի վրա), տպարան Հովհաննու Տեր-Աբրահամյան, 1875»: Գրքուկի հաջորդ թերթի վրա գրված է՝ «Ուսումնասիր օրիորդներին Ալեքսանդրապոլու նվիրում է թարգմանիչը»: Մի ուրիշ տեղ ծանոթագրության տակ ստորագրված է «Ծանոթ (ություն) թարգմ (անչի)»: Գրքի առաջին թերթի վրա գրված «աշխատություն»-ը շղեպ է մեզ շփոթության մեջ դրել: Հաճախ է պատահել, որ թարգմանիչները այդպես են վարվել, սակայն տեքստի ընթերցումը ենթադրել է տալիս, որ դա Կրիտյանի կողմից ոչ միայն թարգմանություն լինի, այլև փոխադրություն:

² «Աղավնյակ», էջ 15:

³ Նույն տեղում, էջ 9:

Ինչու՞ քեզանից
Մնամ ըզձալից:

Վահ և օհ պես-պես,
Խոսքեր աղեկեզ,
Կիրկնեմ հավետ,
Ի սեր քո ևեթ:

Օբանի այո,
Միայն այն մարդո,
Որ քո մեջ ազատ,
Ման գա հարազատ¹:

Կրիտյանը երազում էր ազատ տեսնել օտարի լծի տակ ճնշվող իր ժողովրդին, երանի էր տալիս միայն այն մարդկանց, որոնք կարող էին ազատ ապրել իրենց հայրենի երկրում:

Կրիտյանի և նրա գլխավորած ընկերությունը որոշ անդամների ազատասիրական և հայրենասիրական գաղափարները սկիզբ էին առել Աբովյանից ու Նալբանդյանից: Տվյալ պատմական շրջանում հայ իրականության մեջ տիրող ազատասիրական ու հայրենասիրական գաղափարները Աբովյանի ու Նալբանդյանի գաղափարներն էին: Չկար մի տրիշ ուղղություն, որն այնքան մոտ ու հարսվատ լիներ ժողովրդին, որքան Աբովյանի ու Նալբանդյանի անվան հետ կապված ազատասիրական ուղղությունը: Չկային ավելի խոշոր ու ավելի ազդեցիկ հայրենասերներ, որոնք իշխեին հայ հասարակական մտքի վրա, քան մեծ լուսավորիչ Աբովյանն ու ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանը:

Ավելին կարելի է ասել. Բարենպատակ ընկերության կազմակերպիչներ ու ղեկավարներ Արսեն Կրիտյանն ու Պետրոս Հայկազունին իրենց գործով ու գաղափարներով ամենից ավելի մոտ էին կանգնած Նալբանդյանին և հանդիսանում էին նրա համակիրներն ու հետևորդները: Այդ են վկայում մեզ հասած պատմական փաստերը:

Կրիտյանի ծոցատեղից և այլ աղբյուրներից երևում է, որ նա կարողացել էր ն. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը, «Հյուսիսափայլ»-ը, Նազարյանի, Նալբանդյանի ու Շահաղիզի երկերը, Խորենացու, Եղիշեի, Նարեկացու գործերը, Դավիթ Բեկի պատմու-

¹ Տարեցույց, 1872, Վաղարշապատ:

թյունը և զանազան քաղվածքներ կատարել զրանցից: Մոցատետ-
րում գրի էին առնված նաև դրարար և աշխարհաբար հայրենասիրա-
կան ոտանավորներ, ուս-հայերեն և ֆրանս-հայերեն բառարան և
այլն¹:

Ժանդարմական վարչության փաստաթղթերը, Պետրոս Հայկա-
զունու հիշողությունները և այլ աղբյուրներ ցույց են տալիս, որ
Կրիտյանը և նրա խմբակի անդամները ծանոթ են եղել Միքայել
Նալբանդյանի «Ներկագործությունը որպես ուղիղ և անապարհ» նը-
շանավոր աշխատությունը և Ճանիկ Արամյանի Փարիզի ուրիշ հրա-
տարակությունների (թերևս և «Ներկու տող»-ի) հետ: 1860—1870-
ական թվականներին Կրիտյանը, Հայկազունին և ուրիշներ սերտ
կապեր ունեին արևմտահայերի հետ, Կ.Պոլսից ստանում էին դրա-
կանություն, թերթեր և այլն: Միանգամայն հնարավոր է, որ հենց
այդ ճանապարհով էլ նրանք ստացած լինեին Նալբանդյանի «Ներկ-
ագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գիրքը, որը 1862 թ.
տպագրվել էր Փարիզում Ճանիկ Արամյանի տպարանում և Պոլսի
վրայով ու այլ ճանապարհներով գաղտնի ուղարկվում էր Կովկաս,
իսկ լեզու կերպով տարածվում էր Արևմտյան Հայաստանում:

Ահա, թե ինչ է պատմում այս մասին Պետրոս Հայկազունին
իր հիշողությունների մեջ:

«1870—1875 թթ. շարունակ ունեի նամակագրական թղթակցու-
թյուններ քաղաքի իմ ընկերների հետ, մանավանդ ուսուցիչ Արսեն
Կրիտյանի հետ: Երբ որ ժանդարմը մտնում է նորա ուսումնարանը
և տոմար խուզարկում է, բռնում է Կողբից գրած իմ նամակները
զանազան հասարակական և ազգային հարցերի շուրջը, մանավանդ
երբ հայտնել եմ նորան, որ ձեռք եմ բերել Մարկոս Աղաբեկյանի
«Ծիւն Ավարայրի» ամսագրի լիովին համարները և Նալբանդյանցի
«Ներկագործություն» բողջուրը և այդ բողջուրը իմ հատուկ հանձ-
նարարության համաձայն մեծ նեղություններով բերել է տվել Հով-
հանես Եսայանը»:

Պ. Հայկազունու այս շփազանց արժեքավոր վկայությունից



ԱՐՍԵՆ ԿՐԻՏՅԱՆ

¹ Կրիտյանի այդ ծոցատետրը և նրան վերաբերող մի շարք նյութեր գրտ-
նըվում էր բանասեր Գրիգոր Տեր-Պողոսյանի մոտ, որ հավաքել էր Լենինականում
ուսուցիչ եղած ժամանակ: 1935 թ., ցավոք սրտի, նա հրաժարվեց մեզ տրամա-
գրել այդ նյութերը, պատճառարանելով, որ ինքը մտադիր է հրատարակել: Բայց,
բոստ երևույթին, վերահաս մահը խանգարեց նրան կատարելու իր ցանկությունը:

հետո, այլևս ոչ մի կասկած չի կարող լինել, որ Մ. Նալբանդյանի «Երկրագործութունը» եղել է Կրիտյանի ու նրա ընկերների մոտ և որ խուզարկության ժամանակ հայտաբերված և փաստաթղթերում նշված «Նալբանդյանի երկերը» վերաբերում է հենց «Երկրագործութունը»:

Արսեն Կրիտյանի կիսը՝ Մարիամ Կրիտյանը, որն ինչպես Նիկողայոս Տիգրանյանն է վկայում, տեղական աղաների ու ցարական պաշտոնյաների դեմ միշտ ըմբոստացող, ազատամիտ մտք և նախան (հաջի) Զուֆալաքյանների ընտանիքից էր, իր հիշողությունների մեջ պատմում է, որ «1875 թվականին 4 ժանդարմ հանկարծակի եկան մեր տունը, մի քանի ժամ խուզարկեցին, տակն ու վրա արին ամբողջ բնակարանը, ամուսնուս գրքերի պահարանից հանեցին Նալբանդյանի և ուրիշների գրքերը, Նալբանդյանի նկարը, իրան էլ դրին սև կարետի մեջ և տարան բերդը»:

Ժամանակակիցները պատմում են, որ Կրիտյանը եղել է Նալբանդյանի ջերմ պաշտպանը և հետևորդը: Նալբանդյանի «Ազատն աստված» բանաստեղծությունը, որը ցարական կռավարության կողմից արգելված էր երգել, Կրիտյանի գլխավորությամբ հայրենասեր երիտասարդները և նրա աշակերտները գնում էին քաղաքից դուրս, Սևերակի կողմերում, երգում:

Կրիտյանն իր ընկերության անդամների ու աշակերտների մեջ տարածել է նաև Միքայել Նալբանդյանի նկարը, շրջապատված «Ազատն աստված» ոտանավորով և անզուսպ դառնություններով արտահայտվել նրա մահվան առթիվ: «Մեղու Հայաստանի» թերթն իր 1866 թ. ապրիլի 16-ի և մայիսի 21-ի համարներում մի քանի կրկնապատկերներ էր տպագրել Նալբանդյանի մահվան մասին, կենսագրական տեղեկություններով: Արևմտահայ դեմոկրատական մասուլը (Մեղու, Ծաղիկ և այլն) ավելի լայնորեն էր արձագանքել այդ համազգային մեծ կորստի առթիվ: Եթե Կրիտյանն այլ աղբյուրներից տեղեկացած չլիներ Նալբանդյանի մահվան մասին, «Մեղու Հայաստանի»-ում (որի հետ նա կապված է եղել) անպայման կարդացած կլիներ: Ինչ վերաբերում է Նալբանդյանի նկարները տարածելուն, ապա պետք է ասենք, որ նրա մահվանից հետո զբաղված լայն շարժում տարածում էին նրա հետևորդները, որոնք և իրենց վրա էին վերցրել մեծ դեմոկրատի գաղափարների ու գործի շարունակելը, թեև ոչ այն մարտական, ռևոլյուցիոն ոգով, ինչ մենք տեսնում ենք Նալբանդյանի մոտ:

նախաբանի և նկարներն ստացվում էին Թիֆլիսից և հասնում մինչև Երևան (տե՛ս ծանոթ. 18): 1874 թ. ապրիլի 9-ի № 33 գրությանը Երևանի ժանգարմական վարչության պետ մայոր Զուլտովսկին Նորին Կայսերական Մեծության Սեփական Դիվանի Երրորդ Բաժանմունքին այդ մասին հետևյալն է գրում.

«Աերջին ժամանակներն այստեղ, ինչպես ինձ տեղեկացրել են, երիտասարդ հայերը Թիֆլիսից ստանում են հայ գրող Նախաբանի լուսանկարները, որը, ինչպես ասում են, 50-ական թվականներին իր ազատամիտ ու հակահառավարական շարադրությունների համար քաղաքված է եղել Սարատովի նահանգի Կամիշինի քաղաքը, որտեղ և նորերս վախճանվել է: Նկարների շուրջը գրված են Նախաբանի ղեկավարող խոսքեր, ինչպես, օրինակ՝ «Հայրենիքի փրկարարին» կամ «Ազատն աստված»¹:

Մեզ հասած շարադրություններից մեկի մեջ Կրիտյանը բնութայնում է ազգի ճնշողների դեմ, կոչ է անում հայերին սուքի հլնել թոթափելու խավարի ու ստրկության լուծը: 1869 թ. օգոստոսի 1-ին Բարենպատակ ընկերության վերաբերյալ գրած իր շարադրության մեջ Կրիտյանն ասում է.

«Իմ սիրելի հանճարներ, դժբախտ Հայաստանը, մոռացված, տիրությունը ու ցավով լեցուն, կոչ է անում ձեզ՝ հայերիդ. սիրելի ազգակիցներ, մի՞թե կարելի է բավարար լուսին ապրել իբրև կոչը: Մի՞թե կարելի է (բազմակետեր): Թող չդրկեն ձեզ խավար գիշերներն ու թանձր ամպերը:

Իմ սիրելիք, եթե որբացած մեր հայրենիք Հայաստանը իր սիրով չի մոռացել իր սերունդներին և այժմ լայնատարած բազուկներով պատրաստ է իր գիրկն առնել ճշմարիտ հայերին ու հայաբնասերներին, ապա ո՞վ ենք մենք այսուհետև: Մի՞թե մենք հայեր չենք, մի՞թե մենք հայերի սերունդ չենք, մի՞թե մեր երակներում չի ետում «հայրենասիրական ազգային արյունը, արյուն, որով միայն կարելի է փրկել ազգը»²:

Կրիտյանի բողոքը, ինչպես այստեղ, նույնպես և իր մյուս (ու խմբակի անդամների) գործերում, ուղղված է ազգի ճնշման դեմ, իսկ այդ ճնշումը գալիս էր այն ժամանակվա տիրող կարգե-

րից, ցարական և թուրքական կառավարություններից ու շահապարծող դասակարգերից: Ռուս կամ թուրք ժողովուրդն ինքը ևս շահագործվում էր սեփական կառավարության և իշխող դասակարգերի կողմից: Նա չէր ճնշում և չէր էլ կարող ճնշել հայ ժողովրդին, հետևաբար Կրիտյանը և ընկերությունը չէին կարող արյունոտ կռիվ հայտարարել այնպիսի ժողովուրդների, որոնք իրենց ոչ միայն չէին ճնշում, այլև հաշտ էին իրեն հետ:

Ինչ վերաբերում է շարադրության վերջում լայն տարածում ստացած «ազգային հերոսներ» Հայկի, Տիգրանի կամ Արամի անուններն օգտագործելուն, ապա պետք է ասենք, որ դա սուսկ միջոց է ծառայել ազգային-ազատագրական պայքարի տվյալ պայմաններում մասսային կազմակերպելու և սուքի հանելու համար: Ինչպես հայտնի է հետագայում, անգամ 1870—1880-ական թվականներին, մենք հանդիպում ենք նման փաստերի: Դա մեր անցյալի հետամնաց, ծխական փրակախության ազդեցության ու նրա մեջ գործելու արդյունք էր:

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ, Արևելյան Հայաստանում, Նախաբանից հետո, մենք քիչ ենք հանդիպում հայ ժողովուրդը ցարական ու սուլթանական բռնակալության ճանկերից ազատագրելու նման արմատական պահանջ առաջադրող գործիչների: Այդ քիչերի մեջ, անպայմանորեն, իր պատվալից տեղը պետք է գրավի Արսեն Կրիտյանը:

Կրիտյանի ամենամոտիկ մարդկանցից և Բարենպատակ ընկերության հիմնադիր անդամներից էր Պետրոս Հայկազունին: Նա իր ժամանակի աչքի ընկնող հասարակական և կուլտուրական գործիչներից էր: 1850-ական թվականներին Հայկազունին աշխատել էր Ալեքսանդրապոլում վաճառական նախախնայների մոտ, 1860—1870-ական թվականներին Թիֆլիսում կալսյանների մոտ, կողքի աղահանքերում, Ալեքսանդրապոլում և Խլի-Ղարափիլիսյանում եղել էր ուսուցիչ, հոգաբարձու, աշխատակցել ժամանակակից մամուլին և այլն:

Հայկազունու թողած գրական ժառանգությունը ինչպես նաև ժամանակակիցների հիշողությունները միաբերան հաստատում են նրա վերին աստիճանի աշխատասեր, խիզախ և, որ ամենակարևորն է, շնորհալի կազմակերպիչ լինելը:

Նա մեկն է եղել այն արմատական մտածողներից, որոնք դժավեցին Որբախնամ ընկերության շափավոր ուղղությունից և

¹ ЦГИА (Москва), Дело III Отделения Собственной Его Императорского Величества Канцелярии, Сведения по Эриванской губернии.

² Տե՛ս փաստաթուղթ № 4. Ընդգծումն իմն է. — Վ. Պ.:

հանգնեցին Կրիտյանի հորդորած արշուճոտ պաշարի ուղու վրա:

Փամանակակիցներն իրավամբ նրան ճանաչել և վերհիշում են իբրև նոր հովերով տարված, ըմբոստ և տեմպերամենտի տեր մարդ: Հայկազունին շի եղել այն քաղցքենի ազգային գործիչներից, որոնք, ինչպես իր հոգվածներից մեկում իրավացիորեն նա նշում է՝ հետո նա փախել այն ամենից, ինչ իրենց համար օգտավետ չի եղել: Նրա ըմբոստ բնավորությունը և հասարակական ջիղը երբեմն նրան զցել են ամենաբարդ ու խճճված հարցերի մեջ, և բոլոր դեպքերում նա հանդես է եկել հասարակական շահերի պաշտպանի դերում: Այս առևանգությունից բնորոշ է 1860-ական թվականներին Արևմտյան Հայաստանում՝ Բասենի, Էրզրումի, Բաղնջի և Մուշի գավառներում ոտքով կատարած նրա շրջագայությունը, որի զրգապատճառների կամ ի՛նչ նպատակների հետ կապված լինելու մասին, դժբախտաբար, ավելին ասել չենք կարող՝ ձեռքի տակ անհրաժեշտ փաստեր չունենալով: Բայց, անհավանական չենք համարում, որ դա եղած լինի հենց ընկերություն հանձնարարությունամբ արևմտահայերի կյանքն օտոմանասիրելու, արևմտահայ շարժման հետ կապեր հաստատելու նպատակով:

1860—1870-ական թվականներին, 15 տարվա ընթացքում, Հայկազունին 6 անգամ բանտ է նստել իր ըմբոստ և ազատասիրական գործունեություն համար: Առաջին անգամ նա բանտարկվել է 1863 թվականին, 30-ից ավելի իր համաքաղաքացիների հետ միասին, բարձր հոգևորականների, հարուստների և իշխանների դեմ Ալեքսանդրապոլում տեղի ունեցած խռովությունը մասնակցելու համար: Երկրորդ անգամ 1865 թվականին՝ մի խումբ երիտասարդների հետ ընկերություն կազմելու և ժողով գումարելու պատճառով: Երրորդ անգամ 1869 թվականին՝ որպես Կողբի աղահանքերի բանվորների գործադուլի կազմակերպիչ: Չորրորդ անգամ՝ 1872 թվականին՝ Ալեքսանդրապոլի ուսուցիչների և ուստաբաշիների միացյալ գաղտնի ժողովին մասնակցելու համար: Հինգերորդ անգամ 1875 թվականին՝ Կրիտյանի և Բարենպատակ ընկերության մյուս անդամների հետ միասին և վեցերորդ անգամ 1879 թվականին՝ Արզահանի հայատյաց գավառապետի կամադականությունների դեմ բողոքելու համար:

Պետրոս Հայկազունու, ինչպես նաև Կրիտյանի և Բարենպատակ ընկերության մյուս անդամների հիմնական նպատակներից մեկը՝ ժողովրդի մեջ կրթություն և լուսավորություն տարածելն է:

Մտախիլից ծանոթ լինելով Ալեքսանդրապոլի խալիֆայական դպրոցների ուսուցման դրվածքին ու դաժան պատիժներին, Հայկազունին համարձակ կերպով քննադատում էր մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակության բնագավառում գոյություն ունեցող հին, փոսած ձևերն ու մեթոդները: Նա մեծ համակրանքով է հիշում «արժանահիշատակ լուսահոգի» Նաչատուր Աբովյանին, «Հյուսիսափայլ»-ի խմբագրին ու աշխատակիցներին: Դիմելով իր ընթերցողներին, Հայկազունին ասում է. «Իհարկ և պարծանք Հյուսիսափայլ ճշմարտաբարող օրագրի խմբագրողին և նորա աշխուժավան՝ աշխատակիցներին, որ մշտապես (անգամ այժմ և շատ ժամանակ) ընթերցանելով, դեթ կարողացա շոր ու ցամաք կերպով ճաշակ տալ ձեզ»²:

Նախորդ գլխում մենք ցույց տվեցինք, թե ինչպիսի նոր քայլեր կատարվեցին Ալեքսանդրապոլում ուսումնական գործի ասպարեզում: Բնորոշ է, որ Հայկազունին և մյուս առաջավոր ու արմատական տարրերը չէին բավարարվում ձեռք բերված նվաճումներով: Նրանք ձգտում էին ծավալել դպրոցական ցանցը, է՛լ ավելի բարելավել ուսուցման դրվածքը, մասնավանդ մայրենի լեզվի և ազգային պատմության դասավանդումը: Այս գործում Պ. Հայկազունուն մեծ օգնություն էր ցույց տալիս մեր ականավոր դեմոկրատ գրող, նշանավոր մանկավարժ Պաղարոս Աղայանը:

1872 թվականի ապրիլի 25-ին Պ. Հայկազունին հատուկ դիմում է ներկայացնում տեղի հոգաբարձությունը և խնդրում թույլ տալ իրեն, Պաղարոս Աղայանի օգնությամբ, նոր դպրոց բացել: Իր այս ձեռնարկումը նա պատճառաբանում է հետևյալ կերպ.

«Տեսնելով մեր քաղաքի ծխական դպրոցների ցավալի վիճակը և զգալով դպրոցի հարկավորությունը, մասնավանդ աչքի առաջ ունենալով նոցա անբարեկարգությունը և խոշորոտասկանությունը Ձեր հովանավորության տակ դառնված դպրոցի, կամենում եմ պաղարոս Աղայանի օգնությամբ բաց անել մի նոր ծխական ուսումնարան՝ «Նախակրթարան» անունով, որի կանոններն ահա հանձնելով սույն առաջարկությանս հետ միասին, խնդրում եմ մե-

¹ Արդյո՞ք նախնորդանին ևս նկատի չունի:

² «Մեղու Հայաստանի», 1871, № 33 և 34. Պ. Հայկազունի «Մասնաբանական կյանքից» հոդվածը, որը տպագրվել է գրաքննչական խիստ կրճատումներով:

ծախատիմ հողաբարձութեանդ քննել և Ձեր բարեհաճութիւնը հայտնել ինձ:

Ալեքսանդրապոլցի Պետրոս Հայկազունիք:

Ներկայացված կանոնադրութեան համաձայն, որն ըստ երևույթին նա մշակել էր Ղ. Աղայանի հետ միասին, նոր ուսումնարանի աշակերտների թիվը 40-ից ավել չպետք է լիներ և որ դիմավորն է, կենտրոնաբարձում աշակերտները պետք է լայ վարժակիսն մայրենի լեզվի մեջ:

Դժվար է ասել, թե Հայկազունու այս ձեռնարկում որքանով էր կապված նրա անդամակցած ընկերութեան գործունեութեան հետ: Սակայն, անհավանական չէ, որ դա լիներ ոչ միայն նոր հազմութիւն խաճարի դեմ, այլև Հայկազունու, Կրիստյանի և ընկերների համար մատաղ սերնդի մեջ անկարև և ինքնուրույն գործելու մի ասպարեկ:

Նրիտասարդ սերնդի կրթութեան և դաստիարակութեան համար Հայկազունին եռանդուն կերպով պրոպագանդա էր մղում նաև իր հրատարակախոսական հոդվածներում:

Նշանավոր մանկավարժ, աշխատանքի հերոս Հ. Տեր-Միրաքչալուք վկայում է, որ Պետրոս Հայկազունին մեծ ջանքեր էր գործադրում ոչ միայն երեխաների կրթութեան համար, այլև տեղի երիտասարդներից ուսուցչական կադրեր պատրաստելու ուղղութեամբ: Խոսելով Պետերբուրգի իր ուսանողական տարիների և իր ուսուցիչների ու Հայկազունու հետ ունեցած կապերի մասին, Տեր-Միրաքչալուք գրում է. «Տարակտանքներին ծանր օրերում կյանքին համար ճակատագրական նշանակություն ստեղծող ձեռնարկներն և հապտակական գործիչներից վերոհիշյալ Հայկազունու նամակը: Ես ի միջի աւուց գրում է՝ եթե իբրև գեներալ էլ հայրենիք մերադառնաս, արժեք չես ունենա, դու պետք է մանկավարժ դառնաս... Այլևս երկար շտատանվեցի, փետրվար թե մարտ ամսում որոշում կայացրի ծննդավայրս վերադառնալ՝ ուսուցչություն անելու»:

Կրիստյանի ու ընկերության ուղղութեան համար բնորոշ է նաև Հայկազունու պայքարը Ալեքսանդրապոլի հողեր կառավարութեան անդամ, Էջմիածնի գործակալ Հովսեփ ավագ քահանա Կոստանյանցի դեմ:

Հովսեփ ք. Կոստանյանցը երկար տարիներ շարունակ լինելով

¹ Ժողկրթութեան թանգարան, Հ. Տեր-Միրաքչալուքի ֆոնդ. ընդգծումն իմն է. — Վ. Պ.:

Ալեքսանդրապոլի հողեր կառավարութեան գործերի տեր ու տնօրէնը, Էջմիածնի մի քանի ազդեցիկ վեղարավորների հովանավորութեամբ, իր ձեռքն էր առել Ալեքսանդրապոլի թեմի հողեր և մասամբ աշխարհիկ գործերը և աչ ու ձախ թելադրում էր իր կամքը: 1860—1870-ական թվականներին նա ամենուրեք հայասնի էր դարձել իրրև շափազանց ազդեցիկ և միաժամանակ որկրամուռ ու կաշտակեր մի մարդ: Հակառակորդները նրան անվանում էին Շիրակի Բիսմարկ: Հետաքրքիրն այն է, որ Տեր-Հովսեփի բոլոր ապօրինի գործողութիւնները, ժողովրդական գումարների յուրացումներն ու ակնհայտ կաշտակերութիւնները իր ժամանակին օրինակաւացվում էին կամ ծածկվում էջմիածնի և մասնավորապես կաթողիկոսի մտերիմ ու ազդեցիկ մի կղերի՝ Վահրամ վարդապետ Մանկունու կողմից:

Մեր ձեռքի տակ եղած՝ Տեր-Հովսեփի և Մանկունու նամակագրութիւններից մարդ այն տպավորութիւնն է ստանում, որ կարծեք թե այդ երկու, իրար շատ նման բռնակալ վեղարավորները դաշինք են կնքած եղել Շիրակը կու տալու համար: Մանկունին անվերջ գրում է դրամ, սուխարի, յուղ, պանիր, սապոն և այլ մթերքներն ու ապրանքներ ուղարկելու, իսկ Տեր-Հովսեփը՝ իր ուղարկածների մասին: Այդպիսի պայմաններում, հասկանալի է, շատ դժվար էր դուրս գալ Տեր-Հովսեփի դեմ, մերկայցնել նրա արարքները: Բայց իր ժամանակին գտնվում են հանդուգն մարդիկ, և դրանցից առաջիններից էր ահա Պետրոս Հայկազունին:

Հայկազունին ամենից առաջ պայքար է տանում դպրոցների, հոգաբարձական ընտրութիւնների շուրջը՝ մարքելու ժողովրդական այդ հաստատութիւնները ժողովրդի թշնամիներից, նրա աշխատանքի վաստակը հափշտակողներից: Նա իր պայքարի սլաքն ուղղում է դեպի Հառիճո վանքի դպրոցը (տե՛ս ծանոթ. 19), որի հոգաբարձուն և ինքնիշխան տերը Հովսեփ ավագ քահանա Կոստանյանցըն էր:

«Ապացուցված բան է, որ այն դպրոցները, որոնք պատրաստում են ուսուցիչներ ու քահանաներ, — գրում է Հայկազունին, — չեն կարող իրենց իսկական նպատակին հասնել, սահմանափակվելով վանական շորս պատերի մեջ... Մեր կարծիքով ավելի օգտավետ ու նպատակավոր է ընկերութեան ունեցած դրամագրութիւնը (Հառիճո վանքի դրամագրութի մասին է խոսքը. — Վ. Պ.) միավորել Ալեքսանդրապոլի հողեր վիճակային արակաճ սեռի դպրոցի դրամագրութի

հետ և գորավոր կերպով գործ դնել, նույն դպրոցը ավելի լավ և ապահով պայմաններ տակ դնելու համար»¹:

Հայկազունին դեմ է դուրս գալիս Հառիճու վանքի դպրոցը ժառանգավորաց դարձնելուն, այդ անվան տակ ժողովրդից գումարներ հավաքելուն: Նա հասարակությանն զգուշացնում է իր գումարները չդնել Տեր-Հովսեփի կամ Տեր-Մարտիրոսի անապահով ձեռքը:

«Այժմյան դպրոցը, որ ունի Հառիճ, չի պահպանվում ըստ արժանվոյն... այդ նպատակի համար ամբողջ ազգի օգնությունը կառուցված «Գևորգյան ճեմարանն» անգամ՝ ահա քանի տարի է պետուող չունեցավ, ուր մնաց մի որևէ Հառիճ կամ մի բուռը մարդիկ»:

«Այդ ընկերության հոգաբարձու Տեր-Հովսեփն և նորա գործակից ու ընկերության հավատարմատար Տեր-Մարտիրոսն, որոնց ձեռքով պիտի անցնեն միանվագ և այլ օժանդակություններն, հայտնի են իրանց անցյալ գործերով Մեղու և Մշակ լրագրի ընթերցողներին. իսկ աղեքսանդրապոլսցիոց նույնպես քաջ ծանոթ է դոցա մերձավոր անցյալն, որոնց մասին շատ խոսեցին ու գրեցին, մասնավոր է կեղեցական և ուսումնարանական հաշիվների վերաբերությամբ»²:

Տեր-Հովսեփի և կղերա-Ֆեոդոսյան ռեակցիոն այլ տարրերի դեմ Հայկազունու մղած անհաշտ պայքարում ակամայից զգացվում է Խալիբյանի ու Այվազովսկու դեմ Նալբանդյանի մղած պայքարի շունչը:

1870-ական թվականներին անօրինակ սրություն է հասնում Տեր-Հովսեփի և համախոհների դեմ սկսված պայքարը, մի պայքար, որի նախաձեռնությունը պատկանում էր Ալեքսանդրապոլի դեմոկրատական տարրերին, իսկ հոգևոր կառավարության առաջ հարցը հարուցել էր Սուբիաս եպիսկոպոս Պարզյանը: Ժամանակակից մամուլը լցվում է հակառակորդ կողմերի հողվածներով: Հետզհետե թուլանում է Տեր-Հովսեփի իշխանությունը և այն աստիճան վտանգվում նրա դիրքը, որ Կարապետ Կոստանյանցը (տե՛ս ծանոթ. 20), Տեր-Հովսեփի որդին, ինչպես գրում է հորն ուղղած նամակներից մեկում, Պետերբուրգում ուսանող ժամանակ, Ք. Պատկանյանի, Կեղյանի և Սանասարյանի (Պ. Ն. Ս.) ստորագրությամբ ու նրանց

օժանդակությամբ, մամուլի համար հոդվածներ է թխում հոր հակառակորդների դեմ:

Ոտքի են ելնում Տեր-Հովսեփի բոլոր բարեկամները: «Մշակ»-ում, «Փորձ»-ում Տեր-Հովսեփի անձնական բարեկամ, ալեքսանդրապոլցի բժիշկ Ավետիք Բաբայանը՝ իր սուր հարվածներն ուղղում է Հայկազունու դեմ: «Փորձ»-ում տպված «Հառիճյան հոգաբարձության մասին» հողվածում նա գրում է.

«Մեղու Հայաստանին» անցյալ տարվա յուր 45 №-ի մեջ տպել է և պ. Հուր-Հերի թղթակցությունը: Սորա զլխավոր միտքն այն է, թե վանական դպրոցները, ինչպես օրթուսակ՝ էջմիածնի ճեմարանն է, ինչպես Հառիճյան ժառանգավորացը կլինի (իբրև Կերկորդական վանական դպրոց) ինչպես, կավելացնենք, Արմաշինն է, Երուսաղեմինն է, ինչպես Խրիմյան Հայրիկինն էր Վարազա վանուց մեջ և այլն, երբեք ճշանակություն չունին և չեն կարող ունենալ մեզ համար...»

Հիրավի, եթե բոլոր հայ ազգը բաղկացած լիներ ձեզ պես ծայրահեղ ազատամիտներից, գուցե այն ժամանակ վանքերի մոտ դպրոցներ մեզանում չհիմնվեին այժմ»¹: Տեր-Հովսեփի յուրայիններինց մեկը 1877 թ. ապրիլի 7-ին նրան գրած նամակներից մեկում Հայկազունուն «հեշ» է անվանում:

Հետաքրքրական է, թե ինչպես Հայկազունին Տեր-Հովսեփի և յուրայինների դեմ պայքարելիս ճկուն կերպով, ինչպես իր ժամանակին Միքայել Նալբանդյանը, օգտագործում էր հակառակորդների միջև եղած հակասությունները:

«Եթե հոգևոր վարչությունը ցանկանում է, որ չկորչի հասարակական և դպրոցական շահերը,— գրում է Հայկազունին,— թող շարունակե Սուբիաս սրբազան Պարզյանի հարուցած հարցերը. կտեսնի որքան այդպիսի շահեր կուլ են գնացել անհագ օրկորների անառժան անհատ ֆանառների. բայց չէ, ինչ որ իր օգուտը չէ, նրանից հետո են փախչում, ինչ հարցի տակից պոչեր պիտի դուրս գան մաքուր սրբազանների, ծածկում են»²:

Տեր-Հովսեփի և հակառակորդների միջև սուր պայքար է տեղի ունենում նաև հոգաբարձական ընտրությունների շուրջը: 1878 թ.

¹ «Մեղու Հայաստանի», 1878 թ., նոյեմբերի 18, № 45, Հուր-Հերի հողվածը, ընդգծումն իմն է.— Վ. Պ.:

² նույն տեղում:

¹ «Փորձ» 1879, № 1, էջ 216—218:

² «Մեղու Հայաստանի», 1878, № 47, Հուր-Հերի հողվածը, ընդգծումն իմն է.— Վ. Պ.:

Տոգարարձական ընտրությունների ժամանակ, որտեղ Հայկազունու առերևույթ մոտ 1500 մարդ էր հավաքվել, և Ալեքսանդրապոլում առաջին անգամ կանայք ևս ժողովի էին եկել, հովսեփականները դիտարկեցին այդտեսությունն և կրում²։ Հայկազունին և Քարենպատակ ընկերություն մյուս արմատական տարրերը ամեն ջանք գործադրում էին, որպեսզի դպրոցը և կուլտուրական այլ հաստատությունները շրջանան հոգևոր դասի մենաշնորհ։ Ավելին, նրանք իրենց մեծ նախորդաների՝ Արտվյանի և Նալբանդյանի օրինակով աշխատում էին սեակցիան կղերականներին դուրս մղել լուսավորություն ասպարեզից, դպրոցը և մատաղ սերնդի կրթության գործը դուրս բերել միջնադարյան խավարի ու սխոլաստիկայի կապանքներից։ Այդ էր պատճառը, որ Ալեքսանդրապոլում հայտնի, համեմատյալ դեպս ոչ հետադեմ ախպիսի հասարակական գործիչ, որպիսին էր բժ. Ավետիք Բաբաջանը, Հայկազունուն անվանում էր «ճարտաներգագատամիտ»։

¹ Մեղու Հայաստանի, 1878, սեպտեմբերի 23, № 37, Հուլ-Շերի հոդվածը։
² Տեր-Հովսեփի և յուրաքանչյուրի դեմ մղած իր պայքարի ընթացքում Հայկազունին մշակել էր իր վերաբերմունքը և մտայնումը դեպի հոգևոր առաջնորդները։ Քննարկ է, որ նա համակրանքով ու գովեստով է արտահայտվել Խորենացու նշանավոր ողբի հետևյալ տողերին.

Դու դուշակիր, թե ինչ տղես,
 Ջար հովիվներ պիտի հառնեն,
 Առաջնորդներ կույր և անպետ,
 Մեր ճանապարհ մոլորեցնեն։

Վարդապետներ ինքնահավան,
 Տխմար, անկիրթ և անպիտան,
 Առանց աստվածային կոչման՝
 Հափշտակած կարգ սրբազան։

Նոքա ընարված են արծաթով,
 Եվ սուրբ հոգու շնորհից զուրկ են,
 Գալլերի պես անհազ գլուխ,
 Իրանց հոռո հոշոտում են։

Քեմակալներ սնափառ են,
 Ճշմարտություն չեն ճանաչում,
 Սուրբ դիրք քարոզել թողել են,
 Սուրբ խորհուրդներ են վաճառում։

Հայկազունու հասարակական-քաղաքական դեմքը բնորոշելու տեսակետից հետաքրքիր է նաև նրա մի հոդվածը Ալեքսանդրապոլի ակումբի (կուլբի) մասին։ Այնտեղ նա խոսելով 12 տարի առաջ հիմնված «ազնվականների կուլբի» մասին, խիստ ծաղրի ենթարկելով, որ այդտեղ ազնվականները հավաքվում են կանաչ սեղանի շուրջը, որպեսզի շուտ-շուտ «СΥΓΚ» գոչեն, առաջարկում է հիմնել ախպիսի ակումբ, որը կրթող, լուսավորություն տարածող լինի։

«Հասարակական ամենահարկավոր և օգտավետ հաստատություններից մեկն էլ կուլբն է իր իսկական նշանակությամբ, որ հավաքվելով մի հայտնի դասակարգ՝ փոխարինում են մտքեր, զանազան դադափարներ և որից հետևում է համոզմունքների միություն, որ միջոց է առաջադիմություն։ Այստեղ տարբեր կարծիք ունեցող լրագրողների և դանազան ուղղության տեր օրագրիչների ընթերցումն մեծ դեր է խաղում, որովհետև գործնից շատ անգամ ծագում են օգտավետ բանակոխվելներ և աննշմարելի կերպով հառաչ է շարժվում մարդուս մտավոր կյանքը։ Մի խոսքով այդ հաստատությունն սլամի վրա ոտք կոխողը անկարելի է, որ գուրկ մնա քաղաքական ընկերությունից։ Սորան ապացույց կարող է համարվի Անդրիայի լուսավորության պատմությունը, որտ մեջ նշանավոր տեղ է բռնում հասարակական վերահիշյալ հիմնարկությունը։ Ուրեմն ինչո՞ւ, պատվելի՜ քաղաքացիներ, մենք էլ չհիմնենք այդպիսի կրթող, լուսավորություն տարածող հաստատություն»¹։

Պետրոս Հայկազունու հասարակական-քաղաքական դեմքը մենք լրիվ ներկայացրած չէինք լինի, եթե չխոսեինք դեպի ցարեղմն ունեցած նրա վերաբերմունքի մասին։

1860—1870-ական թվականներին դրած բազմաթիվ հոդվածների և մի քանի չափածո ստեղծագործությունների մեջ վեպի ցարեղմն տմեցած նրա բացասական վերաբերմունքը ցայտուն կերպով արտահայտվում է Կողբից «Մեղու Հայաստանի» թերթին դրած հոդվածների մեջ։

1874 թ. խոսելով այն մասին, որ Կողբի 400 տուն (3200 շունչ) բնակիչներից միայն 150 տունը հոգ ունի, 50-ը արհեստավորներ և վաճառականներ են, իսկ մնացած 200 տունը վերադրում են աղահաստությունը և յուրաքանչյուրը տարեկան ստանում է 68 ուրբի 80 կոպեկ, գրում է. «Խնդրեմ, ասացեք, այդ դամարով կբավա-

¹ «Մեղու Հայաստանի», 1878, հոկտեմբերի 7, № 39, Հուլ-Շերի հոդվածը։

կանանա՝ շորս մարդ, կես տուն, հացի տա, հագուստի, վառելիքի, բմպելիքի (տեղիս անհրաժեշտ կարիքներից միև) և այլն, թե՛ կառավարության հարկը»¹:

1875 թ. Կողբի աղահանքերի բանվորները գործադուլ են անում բանվորների մի մասը որոշ ժամանակից հետո գաղտնի համաձայնության է գալիս կապալառուի հետ և վերսկսում են աշխատանքները: Ապրիլի 21-ին գործադուլավոր բանվորները տեղեկանում են այդ մասին և նույն օրը աշխատողներին բռնում ծեծում են: Խոսկով այս դեպքերի մասին, Հայկազունին հրահրում և խորհուրդ է տալիս բանվորներին, որպեսզի նրանք գործադուլ անեն առաջիկա 1876 թվականին, որովհետև կառավարությունը այդ թվին ադի վրա մաքս է դնելու²:

Կրկնակի ցենզուրայի տակից դուրս եկած այս տողերի մեջ անգամ, դժվար չէ նկատել Հայկազունու հակահառավարական տրամադրությունը: Զույր չէ, որ ժանդարմական վարչությունը հետաքրքրվում էր Հայկազունու՝ Կողբում ունեցած գործունեությունը: Այստեղ նա մի անգամ արդեն բանտարկվել էր Երևանի նահանգապետի կողմից, մեղադրվելով գործադուլ կազմակերպելու մեջ, որը Հայաստանի առաջին բանվորական գործադուլներից էր: Հակացարական այդօրինակ տրամադրությունները միայն Կրիտյանի կամ Հայկազունու մոտ չէ, որ մենք նկատում ֆենք, դրանք այս ու այն շափով արտահայտվել են նաև ընկերության մյուս անդամների մոտ:

Հովհաննես Տեր-Միրաքյանն իր հիշողությունների մեջ պատմում է, որ Հայկազունին մոտ էր Աշուղ Զիվանու հետ, իսկ Մոսկվայի կադրյան ճեմարանից վերադարձած Ստեփան Վեհապետյանի (տե՛ս ծանոթ. 21) հետ հաճախ էին խոսում Նալբանդյանի ու Աբովյանի, ավելի շատ Նալբանդյանի մասին: Հայկազունու հիշողությունները լույս են սփռում մեզ համար այդ շատ կարևոր հանգամանքի վրա: Պարզվում է, որ Հայկազունու հանձնարարությունը, Հովհաննես Եսայանի միջոցով, «մեծ նեղություններով», Բարենդպատակ ընկերությունը ձեռք է բերել Նալբանդյանի «երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: Դրա հետ միասին Հայկազունին ստացել է նաև 1866—1867 թթ. Պոլսում լույս տեսած «Միլն Ավարայրի» ամսագրի լրիվ կոմպլեկտը: Այս փաստը,

ինչպես և ժանդարմական վարչության նյութերը ցույց են տալիս, որ «Երկրագործությունը» ստացվել է Կոստանդնուպոլսից: Արդյո՞ք այս գործի մեջ մասնակցություն չեն ունեցել Նալբանդյանի Պոլսի բարեկամները՝ Մվաճյանը, Թագվորյանը և ուրիշները: Արդյո՞ք կազմակերպության միջև: Դժվար է առաջ մտ որոշակի որևէ բան ասել, կրասների միջև: Դժվար է առաջ մտ որոշակի որևէ բան ասել, չնայած նրան, որ դա միանգամայն հնարավոր էր և քիչ ընդհանուր գծեր չկային Պոլսի Բարենդպատակ ու Ալեքսանդրապոլի Բարենդպատակ ընկերությունների միջև:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստերը, ակնհայտ էր վկայությունները, Պետրոս Հայկազունին եղել է իր ժամանակի առաջավոր գործիչներից և եռանդուն կերպով պայքարել է ժողովրդի ազատության ու առաջադիմության համար:

Բարենդպատակ ընկերության ուղղությունը բնութագրում տեսակետից հետաքրքրական է ժանտիմանալ նաև Կրիտյանին ու Հայկազունուն շատ մոտ կանգնած ալեքսանդրապոլցի երկու երիտասարդ հայրենասերների՝ Կ. Մատինյանի և Ս. Աֆրիկյանի գործունեությունը հետ:

Մատինյանն առաջիններից էր, որ ուշադրություն դարձրեց մեր նշանավոր բանաստեղծ Մմբատ Շահադիլի «Առնի վիշաբ» ազատասիրական հայտնի պոեմի վրա և հրապարակորեն նշանակալից արձագանք տվա:

Ինչպես հայտնի է, «Առնի վիշաբ» տպագրելուց հետո, 1860-ական թվականներին սուր պայքար սկսվեց նրա շուրջը հայ ոեակցիոներների և լուսավորիչների միջև: Նալբանդյանը, Նազարյանը, «Հյուսիսափայլ»-ը և հյուսիսափայլականները ջերմորեն պաշտպանում էին Շահադիլին: Այդ պայքարում Մատինյանը և ընկերները կանգնած էին առաջադիմականների դիրքերում: 1869 թվականին նա հրապարակորեն իր և իր ընկերների անունից շնորհակալություն ու հարգանք է մատուցում Ս. Շահադիլին՝ «Յուր գեղեցիկ շխատության համար, բարեմաղթելով, որ այսուհետև ևս հառաջընթաց լինի համազգային օգտին ճշմարտության ծառայելու»¹: Մատինյանը մեղադրում էր իր համաքաղաքացի Հայրը Փամբուխյանին, որը «Մեղու Հայաստանի» թերթի էջերում գովաբանելով Ռաֆայել Պատկանյանի տպարանում տպված «Աբրը կիմանաք» հե-

¹ «Մեղու Հայաստանի», 1874, դեկտեմբերի 21, № 51, Հուր-Հերի հոդվածը:

² «Մեղու Հայաստանի», 1875, մայիսի 31, № 20, Հուր-Հերի հոդվածը:

¹ «Մեղու Հայաստանի», 1869, ապրիլի 12, № 14:

դինակի «Հայոց ազգի ուսումնաստվելոյնը, ուսումնասիրանները և ուսուցիչները» (1865 թ. ՍՊԲ) և այլ գրքերը, անուշադրութեան էր մատնել Սմբատ Շահադիդյանի «Համազգային նշմարիտ օգտին և հառաջադիմորչան հվիրված, նշմարիտ գովորչան արժանի ագնիվ աշխատութեանը»¹:

Մատինյանը, ինչպես և Բարենպատակ ընկերութեան մյուս անդամները հանդես գալով «Առնի վիշտը» պոեմի պաշտպանութեամբ, հասկանաբար փտակցում էին, որ դա նախնադասի վիշտն էր, որ դա պայքար էր ազգային ազատագրութեան ու յուսավորութեան համար, և եակցիայի ու խավարի դեմ:

Կրիտիկանը, Հաչկազունին, Մատինյանը և Բարենպատակ ընկերութեան անդամներից շատերը մտտիկ կապերի մեջ են գտնվել նաև նշանավոր աշուղ-բանաստեղծ Զիվանու հետ: Իր երիտասարդական տարիներին Զիվանին անձնական և զաղափարական սերտ կապեր է ունեցել առանձնապես Պ. Հաչկազունու հետ: Հաչկազունին և Մատինյանը իր ժամանակին մեծ օգնություն են ցույց տվել Զիվանուն, խրախուսել են նրան, օժանդակել նրա բանաստեղծությունների տպագրութեանը և այլն: «Արարատ» հանդեսի 1871 թվականի նոյեմբերի և դեկտեմբերի համարներում Կ. Մատինյանը տրպագրում է «Բանաստեղծ և հյուսվածք Զիվանի» հոդվածը, որտեղ հետ միասին Զիվանու 11 երգերը՝ «Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ», «Վարդ, վարդ ասելով կյանքս գնացել է սոխակին» և այլն:

Ուշագրավ է նաև Կ. Մատինյանի 1871 թվականի ճանապարհորդութեանը Սյունիքում, որ նա կատարել է Հաչկազունու հանձնարարութեամբ: Մենք ավելորդ շենք համարում կանգ առնել, ըստ երևույթին ընկերութեան գործունեության հետ կապված, այդ ճանապարհորդության մի քանի մտմենտների վրա: Լինելով Տաթև գյուղում, Մատինյանը նկարագրում է և զրվատում հասկապես գյուղացիների հայրենասիրութունն ու քաջասրտութունը: «Գյուղացիք հայրենասեր են և նշմարախոս, հայրենյաց փառացր նախանձախնդիր... Հայկական անվեներ ոգին կենդանի ունին պահած յարյանց սրտերում, իսկ մեր Շիրակացից մեծ մասը, չեմ սխալվիլ կամ մեղանչիլ, եթե ասեմ բոլորը հրացանի բերանը ու պոչը չեն ճանաչում, աննոգութեամբ իրանց հանձնելով պահապանաց խրամուրը...»

¹ «Մեղու Հայաստանի», 1869, ապրիլի 12, № 14:

Տաթևացիներ... ճշմարտասիրութուններին, քաջութուններին և հայրենասիրութուններին կարելի է հավասարին մեր Փամբակաձորս բնակիչները»¹:

Մատինյանի տաղանթները չի վերապահում նաև էջուղի երիտասարդության կրթության գործը: «Գյուղի մեջ ուսումնասրան չունին», - գրում է նա: - Երեխայք կարդում կամ են Տաթևու վանքում, որտեղ կա մասնավոր դպրոց, և կամ իրանց քահանաների տոտ:

Եզրափակելով խոսքիս ընթացքը՝ հիշում եմ նոցա ևս, որ երանի թե բարեհաճեին ուշք դարձնելու տաթևացիք այդ ամենագրքխավոր և ամենանարկավոր առարկայի (դպրոցի) վերա, հիմնելով իրանց գյուղում մի ծխական դպրոց, որով կատարելու էին դեպի իրանց որդիք ունեցած հայրական պարտքը»²:

Մի ուրիշ կարևոր հանդամանք էս, որի վրա չի կարելի ուշադրություն չդարձնել, դա Մատինյանի պայքարն է գյուղացիների շահագործման, նրանց աշխատանքի հյուսելը ծծող տղերկների դեմ: «Ալեքսանդրապոլի վաճառականները» հոդվածում Կ. Մատինյանը խոսելով աջ մասին, որ Ալեքսանդրի վաճառականները ապրանքներ են բերում Թուրքիայից, Պարսկաստանից, Թիֆլիսից, Մոսկվայից, Մակարիայից, Կապպիդոցի, Մարսելից և վաճառում են տասին երեք, չորս և երբեմն ավելի օգուտով, գրում է. «Նրանք խեղճ գյուղացիներին առան բոլորին իրանց բոխ մեջ և շինեցին նրանց ստուկներ»³: Շարունակության մեջ Մատինյանը գրում է. «Նրանք (վաճառականները. - Վ. Պ.) միայն տգրուկի նման ծծում են խեղճ գյուղացիների արյունը»⁴:

Մի այլ տեղ Մատինյանը խոսելով Ալեքսանդրապոլում ստեղծված թանկության մասին, գրում է.

«Ալեքսանդրապոլը հազիվ է տեսած 40 տարվա շրջանում երկու կամ երեք թանգութուններ, առաջինները՝ կարելի է ասել մորեխի, պատերազմի կամ որևիցե պատահմունքներից է պատահած, իսկ այժմյան թանգութունը սշնչից չէ, եթե ոչ մերաքաղաքացի

¹ «Արարատ», 1871, օգոստոս, էջ 228—229, ընդգծումն իմն է.—Վ. Պ.: Իր այս գրվածքը Մատինյանը նվիրել է Հաչկազունուն հետևյալ մակագրութեամբ՝ «նուր անկեղծ սրտից իմ ազնիվ բարեկամ Պետրոս Հաչկազունուց»:

² «Արարատ», 1871, էջ 232:

³ «Մեղու Հայաստանի», 1874, փետրվարի 2, № 5:

⁴ Նույն տեղում:

արծաթասեր մի քանի անհատներից, որովհետև առատ ժամանակը
դիզեցին շտեմարաններում, համարյա չուրաքանչյուրին մեջ հա-
զար, Ֆրկու հազար և միևնչև անգամ հինգ հազար սոմար (ամեն մի
սոմարը 20 ռուսական փուլ) ցորյան, և այսպիսի թանգության գը-
թավոր պատճառն եղան»¹:

Մատինյանը ինչպես և Ֆրա ընկերներից շատերը, հետագա-
յում էլ չդադարեցրին իրենց հայրենասիրական գործունեությունը:

Այս տեսակետից հետաքրքրական է 1883 թվականին Թիֆլիսում
հրատարակված նրա բանաստեղծությունների գրքույկը «Հայելի»
խորագրով: Նրա ոտանավորները, ճիշտ է, արվեստի տեսակետից
այնքան էլ աչքի չեն ընկնում, բայց փրենց սոցիալական, դադա-
փարական բովանդակությամբ ուշագրավ են: Այսպես, օրինակ. «Ազ-
գասեր» բանաստեղծության մեջ նա ծաղրում է կեղծ ազգասեր-
ներին.


Հայերիս տունը այն օր քանդվեցավ,
երբ սուտ ազգասերք այսբան շատացան,
Որք իրանց օգտի կամ պատվի համար
Դատարկ խոսքերով ազգասեր դարձան²:

Մատինյանը խարազանում, անարզանքի սյունին է դամոսմ ոչ
միայն կեղծ ազգասերներին, այլև ազգային ցեցերին, ցարական
յինովնիկներին, պարագլխային տարրերին:

Մեկը դարձել է շինովնի:
Չաղ ոտճիկ է ստանում,
Մեկն էլ անխիղճ կերպով
Մեծ մեծ կաշառք է ուտում...

Մեկն էլ ավազակ գողին
Դատարանում պաշտպանում,
Ենխիղճ կերպով փող գճլում³
Սպիտակը սևցնում:

Ահա մեր գործողները,
Մեր ազգային ցեցերը,



ՊԵՏՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

¹ «Արարատ», 1870, մայիս, էջ 37:

² «Հայելի», Աշխատասիրություն Կարապետի Մատինյանց, էջ 17, 1883,
Թիֆլիս:

Մատինյանը մի շարք բանաստեղծություններ է նվիրել Արևմրտյան Հայաստանին, որտեղ նկարագրել է թուրքական բռնակալության լծի տակ հեծող հայ աշխատավորություն իրավական և տնտեսական ծանր վիճակը և ազատագրական պայքարի կոչ է արել նրանց:

«Տանկահայաստան» ոտանավորում նա գրում է.

Հայաստանը ընկած, կործան,
Զի կտրվում նորա կական,
Զկա մեկը լինի պաշտպան,
Բայց միշտ կասենք, որ մենք հայ ենք:

Քաղցից հայեր միշտ կոտորվին,
Մով է տիրում Հայաստանին,
Զուզենք օգնել խղճուկ հային,
Կավ խոսքերով կասենք՝ հայ ենք²:

«Մշեցի հոր կտակը» բնորոշ վերձնագրով բանաստեղծության մեջ նա գրում է.

Դառն, սև օր շատ եք տարել, իմ որդիք,
Աղքատ, քաղցած, սկլոր, բոկոտ մնացել,
Մեր տուն, մեր տեղ, սուրբ տաճարներ, Հայրենիք,
Անգութ տաճիկ կործան, ավեր դարձուցել:

Բավ է տաններ չս օտար կյանք, խեղճութուն,
Բավ է հուսալ ուրիշից ազատություն,
Կտարեցե՛ք իմ կտակը, ո՛վ որդիք,
Զեզմով միայն դուք կստանաք փրկություն³:

Ալեքսանդրապոլի առևտրա-վաշխառուական տարրերին անողոք կերպով մերկացնում էր նաև Կրիտյանի ընկերությունն ամենաերիտասարդ անդամներից մեկ ուրիշը՝ Ալեքսանդր Աֆրիկյանը:

¹ «Հայելի», էջ 10—11:

² «Հայելի», էջ 23—24:

³ Նույն տեղում, էջ 24—25:

1875 թվականին «Մշակ» թերթում տպագրած «Մի քանի խոսք Աղեքսանդրապոլու վաճառականների ներկա դրուվյան վրա» հոդվածում Աֆրիկյանը նկարագրում է, թե ինչպես առևտրականները մտոք են գործել շրջակա գյուղերը՝ և աղահարաք թալանում են գյուղացիներին: «Յուրաքանչյուր գյուղում, — գրում է նա, — նստած է մի մանրավաճառ ապրանք ծախող, շատ անգամ պատահում է երկուն և երեքն են ծախում մի գյուղի միջում, որոնք տգրուկի նման ծծում են գյուղացիների օգուտի այն մնացորդները, որոնք քաղաքի վաճառականները որպես թե պետք է տեսնեին: Մինչև անգամ գյուղացիներից շատերը հրապուրվելով՝ չգիտես փնչից, պարապում են այս տեսակ առևտրով, թողնելով ձեռքից երկրագործության պես ազնիվ արհեստը»¹:

Աֆրիկյանի այս տողերից, ինչպես և Հայկազունու, Մատինյանի և մյուսների հոդվածներից դժվար չէ նկատել Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության ազդեցությունը: Կրիտյանի, Հայկազունու և նրանց խմբակի մի շարք անդամների մոտ իրենց արտահայտությունն են գտել ոչ միայն Նալբանդյանի, այլև նարողնիկական որոշ գաղափարների ազդեցությունը: Ծիշտ է, նարողնիկությունը հայ իրականության մեջ իբրև ինքնուրույն, կազմակերպված հոսանք, ինչպես այդ Ռուսաստանում էր, չձևավորվեց և նարողնիկական խմբակներ չստեղծվեցին Հայաստանում: Պատմական մի շարք հանգամանքների բերումով, մեզ մոտ ավելի լայն տարածում գտան ազգային-դեմոկրատական, քան նարողնիկական գաղափարները:

Ծիշտ չէ, իհարկե, պրոֆ. Լեոն, երբ ուսուցչիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանին և նրա հետևորդներին կապում է նարողնիկության հետ, հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը դիտում է որպես նարողնիկական, բազմախոսական-անարխիստական, ինտելիգենտական մտքի արգասիք²:

Ծիշտ չէր լինի նաև ասել, թե առհասարակ նարողնիկությունը ոչ մի ազդեցություն չի տանեցել հայ հասարակական մտքի վրա: Հայտնի է, որ հայերից բազմաթիվ մարդիկ հարել են նարողնիկական շարժմանը և կրել նարողնիկական գաղափարների ազդե-

ցությունը: Հիշենք թեկուզ 1860—1870-ական թվականներին Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկովում, Օդեսայում գործող նարողնիկական խմբակներում եղած հայ ուսանողներին, «50-ի պրոցեսսով» դատվածներին, 1881 թ. Մոսկվայում հիմնված հայ «Հայրենասերների Միությունը» (տե՛ս ծանոթ. 22) և այլն:

Հայ ազատագրական շարժումը և նրա գաղափարախոսությունը կտրել ուսու-նելուցիոն դեմոկրատական ուղղությունից և կապել միայն նարողնիկության հետ, դա կնշանակեր մեղանշել պատմական նշանակություն առաջ: Սխալ կլինի նաև կրիտյանի խմբակը կտրել Նալբանդյանից և կապել նարողնիկության հետ, քանի որ պատմական տվյալ շրջանում, ինչպես ասացինք, նարողնիկությունը շատ թույլ ազդեցություն ուներ հայ հասարակական մտքի վրա և, որ ամենակարևորն է, մենք էական ոչ մի փաստ չունենք հայ ազատագրական այդ խմբակները նարողնիկական համարելու:

Կրիտյանը և նրա ընկերները ավել կամ պակաս չափով հանդես էին գալիս որպես Նալբանդյանի հետևորդներ: Ծիշտ է, նրանք, ինչպես և Նալբանդյանի հետևորդներից և տշ մեկը, չհասան մեծ դեմոկրատի մակարդակին. Նալբանդյանը մնաց որպես ուսուցչիոն-դեմոկրատական մտքի զագաթ: Սակայն, Նալբանդյանի այս հետևորդները նարողնիկներ էլ չէին, քանի որ նրանց մոտ տիրապետողը ոչ թե նարողնիկական, այլ ազգային-դեմոկրատական գաղափարներն էին: Առհասարակ Նալբանդյանից հետո, 1860—1880-ական րվականներին, մինչև մարտիզմի հանդես գալը, հայ հասարակական առաջավոր մտքի տիրող ուղղությունը ազգային-դեմոկրատական ուղղությունն էր և ոչ թե նարողնիկական: Այս կոնցեպցիան առավել ևս համընկնում է հայ ազատագրական շարժումների անբաժան մասը կազմող արևմտահայ շարժումների զարգացման օրինաչափությունների հետ, ուր նարողնիկությունը, ինչպես հայտնի է, տրե՛կ վճռական դեր չի կատարել:

Ավելին. մենք հիմք չունենք Կրիտյանին, Հայկազունուն և նրանց ընկերությունը կտրել Նալբանդյանի գլխավորած ուղղությունից և կապել ժամանակակից հայ հասարակական մյուս հոսանքների հետ: 1860-ական թվականների հայ հասարակական երեք հոսանքներից (կղերա-ֆեոդալական, լիբերալ-բուրժուական և ուսուցչիոն-դեմոկրատական) Կրիտյանը և նրա ընկերությունը ամենից ավելի մոտ էին կանգնած ուսուցչիոն-դեմոկրատական հո-

¹ «Մշակ», 1875, հունիսի 19, № 24. Ընդգծումն իմն է.— Վ. Պ.:

² Տե՛ս Անո, Քուրբահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 7. էջ 21, 25, 27 և այլն, 1934, Փարիզ:

սանքին, հանդիսանում էին ոչ թե Այվազովսկու կամ Նազարյանի, այլ Նալբանդյանի հետևորդները:

Կրիտյանի և նրա ընկերության աչքի ընկնող մի քանի անդամները¹ վերաբերյալ եղած փաստերի անաշուտ վերլուծությունը մեզ բերել է այդ եղրակացության:

Հարկավ, Բարենպատակ ընկերության բոլոր անդամների մոտ հայացքների մի ընդհանրություն դեռ չէր ստեղծվել: Ընկերության մեջ եղած ուսուցիչները, արհեստավորները, ծառայողները, երկրագործները, մանր առևտրով զբաղվողները և աշակերտները իրենց հետ բերել էին տարբեր մտայնություններ, նրանք քաղաքական դիտակցության միատեսակ մակարդակի և նույնիսկ գաղափարական ու տակտիկական միեմուլյն գիրքերի վրա չէին կանգնած: Ընկերության անդամների մեջ կային արմատական և շափավոր տարբեր: Բայց շնորհիվ այն բանի, որ ընկերության հիմնադիրն ու ղեկավարները, ընկերության աշխատանքներին տոն տվողները արմատական տարբեր էին, ուստի և նա հիմնականում կանգնած էր սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի նիշա դիրքերի վրա:

* * *

Այժմ անցնենք «Բարենպատակ» և «Կանառ հայրենյաց սիրո»² ընկերությունների վերաբերյալ եղած ժանդարմական գործի վերլուծությանը:

Ինչպես տեսանք, Բարենպատակ ընկերությունը հիմնվել էր Ալեքսանդրապոլում 1869 թվականի ապրիլին, իսկ Հայրենիքի սիրո կանտորան կամ գրասենյակը՝ Մեծ Ղարաքիլիսայում 1874 թվականի հունիսին: Թե մեկ և թե մյուս ընկերությունը հիմնվել էին առանց պետական օրդանների փիտուության ու թուլտվության: Որքան էլ

¹ Բարենպատակ ընկերության և Հայրենիքի սիրո գրասենյակի մյուս անդամների մասին մենք չենք խոսել, ձեռքի տակ բավարար չսփով փաստեր շունենալու պատճառով: Բացառված չէ այն հնարավորությունը, որ հետագայում կհայտնաբերվեն նոր փաստեր և ավելի կհարստացվի ազատագրական այդ խմբակների ու գործիչների պատմությունը:

² Այդպես կոչվել են իրենք, ընկերության հիմնադիրները, տե՛ս փաստաթուղթ № 2, իսկ ժանդարմական փաստաթղթերում գործ է ավելում «Контора любви к отечеству»:

գարմանալի թվա, այդ ընկերությունների գոյության մասին բավական ժամանակ տեղեկություն շունենին նույնիսկ ցարական կառավարության «աչքն ու ականջը» հանդիսացող ժանդարմական մարմինները:

1875 թ. ապրիլի սկզբներին Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին տեղեկանում է, որ երիտասարդ հայերը Մեծ Ղարաքիլիսայում հիմնել են Հայրենիքի սիրո գրասենյակ անունով գաղտնի կազմակերպություն: Նա անմիջապես մեկնում է Մեծ Ղարաքիլիսա, որտեղ նրան հաջողվում է ձեռք բերել Փամբակի հաշտարար բաժնի թարգման Համբարձում Բալասանյանի 1874 թ. հունիսի 29-ի մի նամակը՝ գրված Ալեքսանդրապոլի գավառական վարչության գրասենյակի ծառայող Արշակ Տեր-Ղազարյանին¹:

Այդ նամակից պարզվում է, որ մի խումբ հայ երիտասարդներ 1874 թ. հունիսի 20-ին Ղարաքիլիսայում հիմնում են մի ընկերություն և որոշում են շարաթվա մեջ երեք օր (երկուշաբթի, հինգշաբթի և կիրակի) հավաքվել լրագրեր և ազգային պատմություն կարդալ, «ամեն տեսակ ազգօգուտ գործի» մասին մտածել: Ընկերության կամ կանտորայի կառավարիչ է ընտրվում Գևորգ Խոսրովյանը, որն ալեքսանդրապոլցի էր, վերաբնակված Ախլցխայում, զբաղվում էր այգեգործությամբ, իսկ քարտուղար՝ Համբարձում Բալասանյանը, որն ավարտել էր Ալեքսանդրապոլի գավառական դրպրոցը, որպես թարգման աշխատել Կարսում և Ալեքսանդրապոլում: Բալասանյանը մինչ այդ Հայկազունու հետ միասին աշխատել էր նաև Կողբի աղահանքերում, Բարենպատակ ընկերության անդամ էր և հնարավոր է, որ հենց Հայկազունու հանձնարարությամբ էլ նա ձեռնամուխ եղած լինի Ղարաքիլիսայի խմբակի կազմակերպմանը: Բացի այդ, ժանդարմական վարչության հետաքննություններից փրկում է, որ 1872 թվականին Կրիտյանը և ընկերները Ղարաքիլիսայում հիմնել են գրադարան և այդ նպատակի համար հավաքել 44 ուրբի: Այս փաստը ցույց է տալիս, որ մինչև Հայրենիքի սիրո գրասենյակի հիմնումը, նրանք որոշ աշխատանք կատարել էին Ղարաքիլիսայում:

Ժանդարմական փաստաթղթերում, իբրև այդ խմբակի անդամներ, Ղարաքիլիսայի² բնակիչներից հիշատակվում են՝ Բաղդասար

¹ Տե՛ս փաստաթուղթ № 2:

² Մեծ Ղարաքիլիսա գյուղը 1870-ական թվականներին ուներ մոտ 2 000

Չարուխչանը, որն զբաղվել է թամբազործության արհեստով և եղել է «իր հասարակության մեջ հարգանք վայելող» մարդ, Ալեքսանդր Կաղարյանը զբաղվել է աղի առևտրով ու բրդի գնումներով և նրա եղբայր Մկրտիչ Կաղարյանը, որն զբաղվել է կոշիկահարուստությամբ:

Իր հավաքած տեղեկությունների մասին հայտնելով Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազին և ստանալով նրա համաձայնությունը, 1875 թ. մայիսի սկզբներին Զոլոտովսկին խուզարկություններ է կատարում վերոհիշյալ անձնավորությունների մոտ և լրացուցիչ նոր փաստեր հայտնաբերում: Հայրենիքի սիրո կանտորայում, Հ. Բալասանյանի մոտ, նա գտնում է Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի աշակերտ Վաղարշակ Բալասանյանի երկու նամակը և «Հայերին» խորագրով հայրենասիրական տոսանվորներ: Այդ տոսանվորների մեջ, որոնք աշակերտները գրում էին իրենց հայոց լեզվի ուսուցչի ղեկավարությամբ, ինչպես ասված է ժամդարմական գործում, «Երբևէ մի հայ ազգի անցյալ փառքը և կոչ է արվում հայ ժողովրդին՝ դիմադրել ազգի թշնամիներին»¹:

Հսկողության տակ վերցնելով Հայրենիքի սիրո կանտորայի հիմնադիր Հ. Բալասանյանին և ընկերություն անդամներին, Զոլոտովսկին շտապում է Ալեքսանդրապոլ:

Այստեղ նա իր ունեցած տվյալների և «Մատնիչ վարդապետի»²

բնակիչ, մոտավորապես այնքան, ինչքան Շուրավերը, Համալուծ և մի փոքր պակաս, քան Արթիկը: Բնակիչներն զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Արհեստներով ու առևտրով զբաղվողները փոքր թիվ էին կազմում: Ղարաբլիխայի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Գիլիջան—Ղարաբլիխա—Ալեքսանդրապոլ խճուղու կառուցումը, որն սկսվեց 1874 թ. ապրիլին և հիմնականում ավարտվեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին: Այդպիսով Ղարաբլիխան կապվեց Թիֆլիս—Գիլիջան—Երևան և Թիֆլիս—Ալեքսանդրապոլ գլխավոր ճանապարհների հետ, դառնալով կարևոր հանգուցակետերից մեկը: Այդ շրջանից սկսած Մեծ Ղարաբլիխան հնազանդ գուրս է գալիս իր ինքնամիտք վիճակից, որը հող է ստեղծվում հասարակական-քաղաքական և կուլտուրական գործունեության համար: Հայրենիքի սիրո գրասենյակի հիմնումը Մեծ Ղարաբլիխայում և նրա մոտ մեկ տարվա գործունեությունը, այդ ուղղությամբ կատարված առաջին քայլերից էր: Գծարխատարը, բացի ժանդարմական գործում եղած տվյալներից, մեզ չտալով լրացուցիչ նյութեր գտնել Ղարաբլիխայի խմբակի վերաբերյալ:

¹ Տե՛ս փաստաթուղթ № 9:

² Պոլսի «Լույս» շաբաթաթերթի 1875 թ. սեպտեմբերի 6-ի № 10-ում տպա-

տված տեղեկությունների հիման վրա խուզարկություններ է կատարում և հայտնաբերում է, ինչպես ինքն է ասում, մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպատակ ընկերություն» անունով: «Մայիսի 10-ին խուզարկումները փոխադրեցի Ալեքսանդրապոլ, — գրում է Զոլոտովսկին 3-րդ բաժանմունքին 1875 թ. մայիսի 14-ին, — ուր հայտնաբերեցի մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպատակ ընկերություն» անունով»:

Այսպիսով պարզվում է, որ Բարենպատակ ընկերությունը գոյություն է ունեցել 1869 թ. ապրիլից մինչև 1875 թվականի մայիսի 10-ը՝ սուլի 6 տարի:

Ի դեպ, այս դեպքերի կապակցությամբ 1875 թ. մայիսի 16-ին Ալեքսանդրապոլ է գալիս նաև փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը, տեղում անձամբ ծանոթանում է գործի հանգամանքներին, համա-

գրված «Ցավալի գույժ մը կամ մտտերի վարդապետ մը» (տե՛ս փաստաթուղթ № 14) Ալեքսանդրապոլից ստացված նամակի համաձայն ուսուցչի Կրիսյանին և նրա ընկերներին մասնել է ոմն վարդապետ: Զոլոտովսկու զեկուցագրերում չի նշվում, թե նա առաջին անգամ ո՞ւմ միջոցով տեղեկացավ գաղտնի ընկերությունների գոյության մասին: Մտկվայի Պետական կենտրոնական Պատմական արխիվում մենք գտանք Ալեքսանդրապոլից վարդապետ Տոնակյանի դիմումը՝ էջվում մենք գտանք Ալեքսանդրապոլից վարդապետ Տոնակյանի դիմումը՝ «Լույս»-ում տրված մի քանի կողմից իրեն հալածելու և բանտարկելու վերաբերյալ: «Լույս»-ում տրված նամակի և Տոնակյանի դիմումի մեջ հիշատակված մի շարք փաստեր համընկնում են միմյանց հետ, որից կարելի է եզրակացնել, որ մատնիչ վարդապետը հենց այդ Տոնակյանը եղած լինի: Բացի այս, մենք ունենք Բաստամյանի վկայությունը. «Ալեքսանդրապոլում կար մի Մարտիրոս վարդապետ Տոնակյանց, կարճահասակ մարդ, հեղինակ ամենայն տեսակ շարունակի և վատությունաց: Սա քանի քանի անգամ զանազան հանցանքներով ենթարկվել է սինոսի և կաթոլիկոսի պատիժներին, բայց նա ոչ միայն չի խրատվել և շարունակել է կատարել իր վրա դրած պատիժները»: Ապա, խոսելով Կրիսյանին մատնելու մատարել իր վրա դրած պատիժները: «Վարդապետի մատնությունը ժանդարմը գտնում է սին, Բաստամյանը գրում է. «Վարդապետի մատնությունը ժանդարմը գտնում է մի երիտասարդ հայ Արսեն Կրիսյանցի տանը մի տետրակ-ցուցակ գաղտնի ընկերության անդամների, որո նպատակը եղել է, ինչպես հիշած է եղել հասարակականի մեջ, ժողովել անդամներից ամսական թեթև տուրք մեծ դումար կազմելու համար սպագա գաղտնի նպատակը կատարելու համար... Արսեն Կրիսյանցին խմար սպագա գաղտնի նպատակը կատարելու համար և խուզարկություն ցուցակում հիշած մարկույն նստացնում են բերդը և սկսում են խուզարկություններում» (ՀՍՍԻ Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), ձեռագրի № 8899, էջ 122—123. «Տարեգրություն Վ. ծ. վ. Բաստամյանի»: Տե՛ս նաև Գարեգին Հովսեփյանի անձնական արխիվ № 44, թղթ. 110. վ. 40):

¹ Տե՛ս փաստաթուղթ № 3:

պատասխան կարգադրութիւններ անում և վերադառնում թիֆլիս: 1875 թ. մայիսի 11-ին Զոլոտովսկին առաջին հերթին խուզարկում է Կրիտյանի դպրոցն ու բնակարանը և ձեռքբերում է նրան: Կրիտյանի մտտից նա հայտարարում է հայերին ուղղված կոչեր, հայրենասիրական տոմսավորներ, Մ. Նալբանդյանի «Երկրադործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» աշխատութիւնը և այլ արգելված թերթեր ու գրքեր, փնջպէս նաև «Փառքի թագ» կոչվող մատչանը, որտեղ գրված էր ընկերության անդամների անունները, ընկերութիւն կանոնադրութիւնը և այլն:

Այնուհետև Զոլոտովսկին խուզարկութիւններ է կատարում «Փառքի թագ» գրքում գրանցված ընկերութիւն բոլոր անդամների և նրանց հետ կապված անձանց մտտ, մեկ առ մեկ հարցաքննում է նրանց, ոմանց բանտարկում, հսկողութիւն տակ վերցնում և կարգադրում քաղաքից չհեռանալ: Բացի Ալեքսանդրապոլից, խուզարկութիւններ ու հարցաքննութիւններ են կատարվում նաև Կողբում, Երևանում և Թիֆլիսում: Զոլոտովսկու զեկուցագրերում այդ մասին չի հիշվում: Բայց շատ արժեքավոր տեղեկութիւններ է տալիս Պ. Հայկազունին: Իր հիշողութիւններին մեջ նա գրում է.

«Կրիտյանին խիստ բանտարկելուց հետո խուզարկում են նաև Հովհաննէս Եսայանցին, ուր գտնում են մի տարիչ նամակ իմ աշխատասիրա)ժ պատմութիւն հետ¹, որի մեջ առաջարկում եմ Եսայանցին մեր նորակազմ ընկերության անդամագրվել... հայտնում եմ նույնպէս, որ կան ևս ընկերներ Երևանում: Եվ շատ լավ աշխատում է այդ մասին ընկեր Հովհաննէս Արանասյանը: Ժանդարմը կազմում է արձանագրութիւն, վերցնելով իմ նամակները և Կողբի պատմու-

¹ Իր հիշողութիւնների մեջ Հայկազունին պատմում է, որ գրել է Կողբի պաշտօնների պատմութիւնը, որի մի օրինակը ուղարկել է Հ. Եսայանին: Ինչպէս տեսանք, Հ. Եսայանի միջոցով էր նա ձեռք բերել Նալբանդյանի «Երկրադործութիւնը»: Հայկազունին Եսայանին երախտագիտութիւն էր հիշում նաև «Մեղու Հայաստանի», 1871 թ. № 34-ում տպված հոդվածում. «Այս իմ խաղ գրչի պտուղը, այդ ևս ոչ իսկպէս իմ գիտակցութեամբ, այլ մեծ. պ. Հովհաննէսի Եսայանց, Տիֆլիսից, որին էլ անշուշտ իբրև պարտական հիշում եմ անկեղծ շնորհակալութիւնս»: Այս տողերից կարելի է ենթադրել, որ Եսայանցը, որի հետ Հայկազունին գաղտնի կապեր է ունեցել, խուզարկվել է թիֆլիսում: Բացի այդ, Հայկազունու հիշողութիւններից և մի քանի այլ տվյալներից երևում է, որ Բարենպատակ ընկերութիւնը որոշ փորձեր է կատարել տարածելու իր ճշուրդերը նաև այլ վայրերում: Բայց այդ տակալին ուսումնասիրութիւն կարոտ հարց է:

թիւնը, շտապում է Երևան՝ խուզարկելու Հովհաննէս Աթանասյանցին և շտապում է գալ Կողբ, ինձ ևս խուզարկելու:

Ժանդարմի վերոհիշյալ գործութիւն (այդպէս է բնագրում. — Վ. Պ.) միջոցում, արդեն ինձ հաղորդում են ժանդարմի արարքը, ինքս զգուշանալով հեռացնում եմ Կանոնական թերթերի համարթերը, թողնելով միայն Կապիվազի տեղուական թերթերի համարթերը, իսկ հաղորդում եմ մեր տունը Ալեքսանդրապոլ, որ իմ թղթերը ու գրքերը անհետացնել մի այնպիսի բարեկամի մտտ, որ խուզարկելիս ոչինչ չգտնեն, ապա քե ոչ կլինիմ կորած: Մայրս մի անգրագետ պառավ կին, վառում է թորանը և բոլոր թղթերը մեջ ցնում վառում:

Նույն թվականի (1875.— Վ. Պ.) մայիսի 20-ին առավտոյան շատ կանուխ, որ Ես վեր էի կացել քնատեղիցս և աղահանքի հաշիվներն էի քննում, մեկ էլ հանկարծ շրջապատեցին մեր գրասենյակը ու ամբողջ տունը ձիւղոր ստրաժնիկներով, գյուղի տանուտերի (գալավա) հետ ներս մտալ Երևանի ժանդարմի զնդապետ Զոլոտովսկին, իր թարգման Մկրտիչ բեգ Տեր-Սարգսյանի հետ ու սկսեց մանրամասն խուզարկութիւն ամբողջ բնակարանում և հարկվհազ վերջացրին երեկոյան ժամու 7-ին առանց ճաշելու և խուզարկութիւն հետեւանքը եղավ ոչինչ, որովհետև ոչ մի վտանգավոր թուղթ չգտան:

Խուզարկութիւնը վերջացնելուց հետո, որ կապալառուն այդ միջոցին այնտեղ էր, հրավիրեց նրանց ճաշի: Ժանդարմը ինձ հանձնելով ձիւղոր ստրիկաններին տանեն գյուղը, գիշերս հսկեն, որ վաղը տեղափոխեն Երևան: Կապալառու Աղամյանը, լեռնային մասի նաչալնիկը (մի բառ անընթեռնելի է. — Վ. Պ.), որ միշտ հսկիչ էր հանքային գործին և Իդդիբի գավառապետ Կանապուրսկի, որ առանձին հրամանով այդ մասին եկել էր Կողբ, բոլորը իմ շատ լավ բացատրութիւն անելուց հետո, ժանդարմ Զոլոտովսկին համաձայնում է ինձ առ այժմ արձակել հինգ հազար ռուբլի կանխիկ երաշխավորութեամբ: Ահա այդպէս այդ գործը քաշքշվում է մի տարուց ավելի, մինչև որ վրա հասաւ 1877 թ. ռուս-տաճկական պատերազմը: Երաշխավորին ետ դարձրին դրամը և ինձանից առան ստորագրութիւն, որ ըստ առաջին պահանջման պարտավոր եմ ներկայանալ իշխանութիւնը»:

Արան Կրիտյանի և նրա ընկերների գործի քննութիւնը տևում է մի քանի ամիս՝ մայիսից մինչև օգոստոս: Յարական ժանդարմներն

ու ոստիկանները իրենց բռնություններով ու հալածանքներով ահ ու սարսափ են տարածում ամբողջ քաղաքում: Արմաշում (Նիկոմեդիա) հրատարակվող «Հուլա» հանդեսի Ալեքսանդրապոլի թղթակիցը հետևյալ կերպ է նկարագրում ստեղծված դրությունը:

«Տերություն լրտեսներն անդադար կատարին թե՛ տուներու և թե՛ կրպակներու մեջ, և եթե գրքեր գտնեն՝ կայրեն, նմանապես նամակներ և թղթեր. 40-ի չափ հայերու արգիլվեր է քաղաքեն ութ փարսաղ հետուն շերթալ և տամանք բանտարկվեր են, և թե խուզարկությունը կշարունակե այնպիսի հետաքրքրական կերպով, որ մինչև անգամ տուներ կիլցունեն... Բոլոր ժողովուրդը խիստ մեծ երկյուղով պաշարված է և շիրնար ազգություն վրա խոսիլ. հասարակության հավատարմությունը տերության առջև նշանակություն չունի, և կառավարությունը անողոք կնայի յուր հպատակոց վրա»¹:

Ալեքսանդրապոլցի Ն. Նիկողոսյանը իր հիշողությունների մեջ խոսեցելով Կրիտյանի ու նրա ընկերների բանտարկության մասին, գրում է. «Այս առթիվ քաղաքում ինչ լուրեր ասես շտարածվեցին: Քաղաքացիների վրա ահ ու սարսափ էր ընկել: Ասում էին, որ նա թագավորի հակառակ բաներ է գրել և արգելված պատկերներ ու գրքեր է պահել, մոտից դուրս են բերել Միք. Նալբանդյանի պատկերը, ինչ որ խիստ արգելված է և այլն, և այլն... սարիշներն էլ ասում էին թե «սև կառեթով Միքիք են տարել»²:

Չնայած գործադրված բռնություններին, տևական ու մանրակրկիտ խուզարկություններին ու քննություններին, այնուամենայնիվ Զոլոտովսկուն չի հաջողվում լրիվ կերպով բացահայտել դադանի ընկերությունների ու նրանց անդամների ամբողջ գործունեությունը: Դրա ցայտուն ապացույցը Պետրոս Հայկազունու օրինակն է: Ինչպես տեսանք, Հայկազունին, նախօրոք ձեռք առած միջոցների շնորհիվ, կարողացավ խուզարկության ժամանակ ոչ մի կոնկրետ ապացույց չտալ Զոլոտովսկու ձեռքը, քննության ընթացքում հստակ կերպով պաշտպանվեց և մոլորություն մեջ գցեց քննիչներին: Ընկերության որոշ անդամներ ու համակիրներ (Հ. Նասյան, Կ. Մատինյան, Աթանասյան և ուրիշներ) նույնպես կարողացան զերծ մնալ ժանդարմական ուղեկանից: Արխիվային փաստաթղթերից էլ երևում է, որ ցարական ժանդարմները հակառակ իրենց գործ դրած ջանքերին, չեն

կարողացել հասնել ցանկացած նպատակին: Կրիտյանին և ընկերներին հաջողվել է շատ բան թաքցնել, խաբել ու մոլորություն մեջ գցել ժանդարմներին ու ոստիկաններին:

Սակայն, ձեռք բերված տվյալներն էլ բավական էին, որպեսզի այդ ընկերությունները որակվեին «զաղանի ընկերություններ», իսկ նրանց գործունեությունը՝ «պետական հանցագործություն»:

Զոլոտովսկու ղեկուցագրերից, ինչպես և այլ փաստաթղթերից պարզվում է, որ Կրիտյանի հիմնադրած Բարենպատակ ընկերությունը ունեցել է 43 անդամ, դրանց թվում՝ Արսեն Կրիտյան, Պետրոս Հայկազունի, Ալեքսանդր Աֆրիկյան, Համբարձում Բալասանյան, Վաղարշակ Բալասանյան, Մելիք Զմշկյան, Գևորգ Ղասաբյան, Օհանյան Գորոյան, Կարապետ Օհանյանյան, Հարություն Օհանյանյան, Սենեքերիմ Լալայան, Արշակ Խանանուշյան, Ալեքսանդր Իսահակյան, Աբրահամ Սարաջյան, Սեդրակ Գրիգորյան, Խաչատուր Գրիգորյան, Կարապետ Մատինյան, Հաջիբաբ Բաղրամյան, Կոնստանտին Մելիք-Աղամյան, Հովհաննես Խալաթյան, Աստվածատուր Իսահակյան, Հովհաննես Տեր-Գավթյան, Գալուստ Նասյան, Հովհաննես Համբարյան, Միքայել Միրզոյան, Հովհաննես Նասյան, Մարգար Շահնաբաթյան, Աղաբեկ Շահինյան, Մկրտիչ Մուշեղյան, Հարություն Մովսիսյան, Բաբրդուղիմեսոս Հակոբյան, Հակոբ Հարությունյան, Միսաք Աթուլյան, Հովհաննես Տեր-Միրաբյան, Մահտեսի Հովակիմյան, Հակոբ Ավագյան, Հաջիբաբ Քոնեթովյան, Մահտեսի Ավագյան, Ավետիք Նալյան, Արշակ Նալյան, Հովհաննես Աթանասյան, Օհան Համբարյան և ուրիշներ¹ (տե՛ս ժանդ. 23—32):

Բարենպատակ ընկերության մեջ մտել են ուսուցիչներ, աշակերտներ, ծառայողներ, արհեստավորներ, երկրագործությունը զբոսնեղվել է դեմոկրատական առաջավոր ինտելիգենցիայի ձեռքում: Կրիտյանի մոտ գտնվել է ընկերության կանոնադրությունը, ըստ որի «Ընկերության բարի նպատակն է օգնել հայ ազգին»։ Ընկերության մեջ պետք է ընդունել գիտակից երիտասարդներ՝ «որոնք պետք

¹ «Հուլա» (Արմաշ-Նիկոմեդիա), 1875, հատոր վեցերորդ, էջ 652:

² Պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 103, Ն. Նիկողոսյանի ֆոնդ:

¹ Այս ցուցակում բերված մարդկանցից ոմանք հարցաքննությունների ժամանակ հայտնում են, որ իրենք ոչ մի մասնակցություն չեն ունեցել Կրիտյանի ընկերությանը: Քանի որ նման հայտարարություն անողների մեջ հիշվում է նաև Պետրոս Հայկազունու անունը, ուստի մենք հավանական ենք համարում, որ նրանք հրաժարվել են՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Հնարավոր է, որ իրոք դրանցից մի քանիսր ընկերության անդամ չլինեին, բայց մենք փաստեր չունենք ընկերության լրիվ կազմը ճշակու համար:

է աշխատեն լավ օրինակ դառնալ ժողովրդի համար»¹: Ընկերութեան անդամները պարտավոր էին շաբաթական 3 կոպեկ անդամավճար տալ, սրբովյամբ ու քաջութեամբ կատարել այն բոլոր պարտավորութիւնները, որ դրվում էր նրանց վրա: Այդ կանոնները խախտողները առաջին անգամ ենթարկւում էին հանդիմանութեան, երկրորդ անգամ՝ տուգանման, իսկ երրորդ անգամ՝ արտաքսման:

Բարենպաստակ ընկերութեանը ոմներ իր հատուկ սենյակը, որտեղ որոշված օրերին ու ժամերին հավաքվում էին ընկերութեան անդամները, կարողում ու քննարկում թերթեր, գրքեր, իրենց գրած կոչերը, ստանավորներն ու շարագրութիւնները, խորհրդածում «ազգի դրութեան բարեկաման միջոցների մասին»²: Այդ սենյակում պահվում էր նաև «Փառքի թագ» անունով մատչանը, որտեղ գրանցված էին ընկերութեան անդամների ազգանունները և մուծած անդամավճարները:

Զոլոտովսկու զեկուցագրերից երևում է, որ ընկերութեան անդամների մոտ իշխել է հայրենասիրական ոգին: Նրանք մեծ հետաքրքրութիւն են հանդես բերել դեպի հայ ժողովրդի պատմութիւնը, գրել են հայրենասիրական շարագրութիւններ և ստանավորներ, արտասանել են հայրենասիրական ճառեր: Նա նշում է Կրիտյանի 1869 թ. օգոստոսի 1-ին Ալեքսանդրապոլում կարդացած շարագրութիւնը³, 1875 թ. մայիսի 4-ին ընկերութեան վախճանված անդամի (հավանաբար Արշակ Նալչանի) զերեզմանի վրա նրա արտասանած ճառը, Մուրմալուի գավառի Կոլը գլուղում ընկերութեան անդամ Պ. Հաչկաղունու արտասանած ճառը, որտեղ «կոչ է արել ժողովրդին նվիրաբերութիւն անել Հայաստանի վերականգնման համար» և «ժողովուրդը հիացած է եղել այդ ճառից»⁴:

Այնուհետև Զոլոտովսկին տեղեկացնում է, թե ինչպես հայերը դրամ են հավաքում, դպրոց, տպարան հիմնում, գրքեր հրատարակում և այլն: Նա իր շեֆերի ուշադրութիւնն է հրավիրում Ալեքսանդրապոլում, Երևանում, էջմիածնում բացված տպարանների և Բաստամյանի հրատարակած «Բարոց» մանկավարժական ամսագրի վրա:

¹ Տե՛ս փաստաթուղթ № 7:

² Տե՛ս փաստաթուղթ № 6:

³ Տե՛ս փաստաթուղթ № 4, ցավոք սրտի մեզ ոչ մի կերպ չհաջողվեց գտնել Կրիտյանի այդ արժեքավոր շարագրութեան հայերեն բնագիրը:

⁴ Տե՛ս փաստաթուղթ № 6:

«Բաստամյանն ավարտել է Պետերբուրգի համալսարանը, — գրում է Ջա, — ազատ մտածողութեան տեր է և համարձակ քննադատում է ռուսական կառավարութեան գործողութիւնները»¹: Զոլոտովսկին առանձին գրութիւն է ուղարկում նաև Երևանի նահանգապետին՝ տպարանների վրա խիստ հակողութիւն սահմանելու համար:

Զոլոտովսկու զեկուցագրերը մեզ որոշակի գաղափար են տալիս Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գաղտնի ընկերութիւնների մասին: Սակայն, չի կարելի շնկատել, որ դրանք զրված են մեծապետական-շովինիստական ոգով և տենդենցիոզ մեկնաբանութիւններով: Վերջնակէթ թեկուզ այն փաստը, որ ըստ Զոլոտովսկու, կարծեք թե գաղտնի ընկերութիւնները հիմնվել են միայն և միայն ցարական կառավարութեան դեմ պայքարելու համար: Այնինչ, նրա բերած մի շարք փաստերից և այլ տվյալներից երևում է, որ Կրիտյանը և ընկերները Կրիտյանց նպատակ են դրել պայքարել ինչպես ցարիզմի, այնպես էլ սուլթանիզմի դեմ, ազատագրել Հայաստանը առհասարակ օտար բռնակալների լծից: Այնպես որ ազատագրական այդ ընկերութիւնները երբեք էլ միակողմանի չեն պատկերացրել Հայաստանի ազատագրութեան գործը և նրանց պայքարը միակողմանի չի եղել, ինչպես այդ ներկայացնում է Երևանի ժանդարմական վարչութեան պետ Զոլոտովսկին:

Այժմ տեսնենք, թե ինչ կոնկրետ մեղադրանքներ էին հարուցվում Կրիտյանի և նրա ընկերների դեմ:

Կրիտյանը և ընկերները մեղադրվում էին առանց կառավարութեան զիտութեան ու թույլտվութեան ընկերութիւն կազմելու, ժողովներ գումարելու, հասարակական-քաղաքական և ազգային-կոյտուրական բնույթի հարցեր քննարկելու մեջ և այլն: Յարական Ռուսաստանում գործող օրենքների համաձայն այդ ամենը համարվում էր անթույլատրելի, ապօրինի, գաղտնի գործունեութիւն և պատժվում էր օրենքով:

Բարենպաստակ ընկերութեանը, ինչպես և փաստորեն նրա մի ճյուղը հանդիսացող Հայրենիքի սիրո կանտորան, հիմնվել էին առանց համապատասխան թույլտվութեան և գոյութիւն ունեցող օրենքի տեսակետից, իրոք որ ապօրինի, գաղտնի ընկերութիւններ էին: Սակայն չի կարելի անտեսել այն փաստը, որ այդ ընկերութիւնների մասին ժամանակի լեզու մամուլում հայտարարութիւն

¹ Տե՛ս փաստաթուղթ, № 6:

ու հողավածներ են տպագրվել հենց դրանց ղեկավարների ու անդամների կողմից. հետևաբար իրենք իրենց ընկերությունը չեն համարել գաղտնի: Բարենպաստակ ընկերությունը նույնիսկ ցուցանակ է ունեցել դռան վրա փակցված: Ուտտի, Տիշտ կլինեք կարծել, որ Կրիտյանը և ընկերները նպատակ են դրել լեզու ընկերության ցուցանակի տակ տանել միաժամանակ լեզու և անլեզու աշխատանք: Ի դեպ, փաստորեն այդպես էլ եղել է: Ընկերության կուլտուր-կրթական, բարեգործական և նման բնույթի աշխատանքները ընթացել են լեզու, իսկ հայրենասիրական պրոպագանդան աղգային-ազատագրական պայքարը՝ խիստ անլեզու:

Կրիտյանը և ընկերները մեղադրվում էին ոչ միայն որպես գաղտնի ընկերություններ կազմակերպողներ, այլ որպես պետական հանցագործներ, Հայաստանի ազատության ու անկախության համար պայքարողներ:

Ահա, թե ինչ է ասված 1875 թ. հունիսի 5 (17)-ին թագավորին ներկայացված ժանդարմական մի զեկուցագրում.

«Նրանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա գրողում հայտնաբերված է «Հայրենիքի սիրտ գրասենյակ» անունով գաղտնի ընկերություն: Այդ ընկերությունը հիմնել են հայերը, նպատակ ունենալով իրենց հավատակիցների մեջ բարձրացնել հայրենասիրական ոգի և ձեռք բերել անկախություն...»

Ալեքսանդրապոլում գոյություն ունի մի այլ գաղտնի ընկերություն՝ «Բարենպաստակ ընկերություն» անունով, որի հիմնադիր հայ Արսենիկ Կրիտյանցի մոտ հայտնաբերվել են հայերին ուղղված կոչեր, որոնք հրավիրում են վերհիշել իրենց նախորդների ֆաշախի ոգին և իրենց արյունով ազատել Հայաստանը¹:

1875 թ. օգոստոսին, ավարտելով Կրիտյանի և նրա ընկերների գործի քննությունը, Զոլոտովսկին այն սուղարկում է Քիֆլիսի դատաստանական պալատի դատախազին: Վերջինս զեկուցում է փոխարքային, որը, ինչպես ասացինք, անձամբ եղել էր Ալեքսանդրապոլում, որտեղ և Կրիտյանի ծեր մայրը նրա ոտքերն էր ընկել և խնդրել ներողամիտ լինել իր երիտասարդ որդու նկատմամբ²:

Փոխարքան և դատախազը համաձայնություն են գալիս գործին դատական ընթացք չտալ, այլ լուծել հետևյալ կերպ.

¹ Տե՛ս փաստաթուղթ № 5. ընդգծումները իմն են.— Վ. Պ.:

² Այս մասին մեզ հաղորդել է Կրիտյանի կինը, իսկ մեր գիմումի մասին հիշատակվում է № 9 փաստաթղթում:

1. Արսեն Կրիտյանին բանտում թողնել ևս վեց ամիս, իսկ այնուհետև պահել ոստիկանության հսկողության տակ երկու տարի:

2. Համբարձում Բալասանյանին, Մելիք Չմշկյանին, Ալեքսանդր Աֆրիկյանին, Գևորգ Ղասաբյանին, Օհանջան Գորոջյանին, Կարապետ Օհանջանյանին, Սենեքերիմ Լալայանին և Հարություն Օհանջանյանին Ալեքսանդրապոլի գավառապետի միջոցով անել խիստ ներշնչում, որպեսզի այսուհետև չհամարձակվեն առանց կառավարության թույլտվության հիմնել որևէ ընկերություն և ոչ էլ պատկանել այդպիսի ընկերությունների՝ օրենքի առաջ պատասխանատու լինելով:

3. Գործի հետ կապված մյուս բոլոր անձանց ազատել պատասխանատվությունից¹:

Փոխարքայի և Քիֆլիսի դատաստանական պալատի դատախազի այս եզրակացությունը գործն ուղարկվում է Պետերբուրգ՝ Արդարադատության մինիստրության քրեական դեպարտամենտին (չորրորդ սեղան): 1876 թ. փետրվարի 12-ին Արդարադատության մինիստրությունը, 1871 թ. մայիսի 19-ի օրենքի 29-րդ հոդվածի հիման վրա, գործն ուղարկում է նորին կայսերական մեծության սեփական գրասենյակի երրորդ բաժանմունքին՝ եզրակացության: Երրորդ բաժանմունքը գեներալ-ադյուտանտ Պոտապովի ստորագրությամբ փետրվարի 23-ին պատասխանում է, որ համաձայն է փոխարքայի և դատախազի կարծիքին, պայմանով որ «Արսեն Կրիտյանը իրեն տեղում չափագանց վնասակար անձնավորություն, ենթարկվի ոստիկանական հսկողության ոչ քե երկու տարի, այլ առանց ժամանակի սահմանափակման»²:

«Ամենազոր» երրորդ բաժանմունքի կարծիքը դառնում է վերջնական: 1876 թվականի մայիսի 15-ին Ցարսկոյե Սելոյում Ալեքսանդր II կայսրը հաստատում է հետևյալ վճիռը.

Գործի հետաքննությունից պարզվել է, որ Արսեն Կրիտյանը առանց կառավարության թույլտվության ընկերություն է հիմնել, կոչեր է գրել և աշխատել է այդ ընկերությանը տալ հակակառավարական ուղղություն, բայց նկատի տանելով, որ իր այդ հանցավոր արարքը նա կատարել է տարվելով երիտասարդական հրապուրանքով և արդեն 11 ամիս բանտարկվել է, պահել բանտում ևս

¹ Տե՛ս փաստաթուղթ № 7:

² Տե՛ս փաստաթուղթ № 10:

6 ամիս և որպէս մի անձնավորութիւն, որ կարող է երկրամասում վնասակար ազդեցութիւն ունենալ, հանձնել ոստիկանութեան հըսկողութեան:

Ընկերութեան մնացած անդամներին՝ Հաշկազունուն, Բալասանյանին, Չմշկյանին, Աֆրիկյանին, Ղասաբյանին, Գորոյանին, Օհանջանյանին, Լալայանին և ուրիշներին անել խիստ ներշնչում, որպէսզի այլևս առանց կառավարութեան թուլտուութեան ոչ մի ընկերութիւն չհիմնեն և նման ոչ մի կազմակերպութեան մեջ չմտնեն¹:

Կրիտիանի և նրա ընկերների գործի հետաքննութեան ընթացքում ժանդարմական օրգանների գործադրած խիստ բռնութիւններից ու հալածանքներից հետո, սպասվում էր նաև խիստ պատիժ: Սակայն, ինչպէս տեսնում ենք, այդպէս չեղավ: Յարական կառավարութիւնը համեմատաբար մեղմ վարվեց «պետական հանցագործների» հետ: Մեր կարծիքով, այդ գործում որոշակի դեր խաղացին հետևյալ երեք կարևոր հանգամանքները:

Առաջին. հայտաբերելով և լիկվիդացնելով Ալեքսանդրապոլում և Ղարաքիլիսայում հիմնված գաղտնի ընկերութիւնները, հըսկողութեան տակ առնելով այդ ընկերութիւնների անդամներին, ցարական կառավարութիւնը այլևս լուրջ վտանգ չէր սպասում դրանցից, չէր կարծում, թե դրանք հնարավորութիւն կամ ցանկութիւն կունենան շարունակելու իրենց հակակառավարական գործունեութիւնը: Ըստ երևույթին չէր ամտեսվում նաև այն, որ այդ ընկերութիւնների պայքարը ուղղված էր ոչ միայն ցարի դմբ, այլև թուրքական բռնակալութեան դեմ, իսկ տվյալ մտմենտին ցարական կառավարութիւնը պաշտպանում էր ինչպէս բալխանյան, այնպէս էլ կովկասյան ժողովուրդների պայքարը թուրքերի դեմ:

Երկրորդ. Կրիտիանի և նրա ընկերների գործի վճիռը համընկալվ Արևելյան հարցի սրման և ռուս-թուրքական պատերազմի նախապատրաստութիւնների հետ: Այդ շրջանում (1875—1876 թթ.) բալխանյան ժողովուրդները ազատագրական պայքար էին մղում թուրքական բռնակալութեան դեմ: Բուլղարների ու սերբերի հերոսական օրինակը պայքարի էր կոչում նաև թուրքական լծի տակ հեծող հայերին: Յարական կառավարութիւնը, ելնելով իր արտաքին քաղաքականութեան շահերից, այս ու այն շափով հո-

վանավորում ու պաշտպանում էր այդ պայքարը: Հասկանալի է, շատ անհեռատես քայլ կլինէր, եթե ցարական կառավարութիւնը այդպիսի մտմենտում խիստ պատիժներ սահմաներ և նոր դժգոհութիւններ առաջացներ հայերի մեջ: Չհանդուրժելով հանդերձ ինչպէս բոլոր ժողովուրդների, այնպէս էլ հայերի ազգային-ազատագրութեան ուղղութեամբ կատարած յուրաքանչյուր քայլը, ցարական կառավարութիւնը տվյալ մտմենտին աշխատում էր միաժամանակ սիրաշահել հայերին, նրանց ոտքի հանել թուրքիայի դեմ: 1875 թ. մայիսին լինելով Ալեքսանդրապոլում, Կովկասի փոխարքան ակնատես էր եղել Կրիտիանի և ընկերների դեմ սկսված հալածանքների կազակցութեամբ ժողովրդի մեջ առաջացած դժգոհութիւններին: Այդ նրանց բնավ էլ ձեռնտու չէր, մանավանդ Ալեքսանդրապոլում, որը ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակութիւն ունեցող մի կետ էր ռուս-թուրքական սահմանագլխում:

Երրորդ. Կովկասի փոխարքան և պետական մյուս օրգանները պարզապէս չեն ցանկացել դիմազուրկ անել էջմիածնի կաթողիկոսին, որի իրավասութեան տակ գտնվող դպրոցների բուսուցիչներից ու աշակերտներից շատերը մեղադրվում էին այդ գործով: Յարական կառավարութիւնը, անցյալի փորձից ելնելով, և մանավանդ տվյալ պահին էջմիածնի կաթողիկոսին սիրաշահելու նկատառումով, որոշում է հաշվի նստել նրա հետ, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գաղտնի խմբակների մասին իրազեկ պահել նրան, վստահ լինելով, որ կաթողիկոսը հարկ եղած միջոցներ ձեռք կառնի, որպէսզի հոգևոր իշխանութեան հեթակա դպրոցներում և այլ հաստատութիւններում այլևս նման հակապետական և ապօրինի գործեր չկատարվեն¹:

Ահա թե ինչու մենք ասել ենք և պնդում ենք, որ պատժաւափից ելնելով չէ, որ պետք է գնահատել ազատագրական այդ խմբակների գործունեութիւնը: Ոչ միայն քաղաքական, այլև քրեական բնույթի գործերի պատմութիւնից շատ փաստեր ևն հայտնի, երբ հանցանքն ու պատիժը իրար չեն համապատասխանել:

Ինչևիցե, ցարական ժանդարմներին հաջողվեց հայտաբերել և լիկվիդացնել Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գաղտնի ազատագրական խմբակները: Ծիշտ էր նկատել նալբանդանը, թե «Երկիրը շատ անգամ բուսուցանում է դալար ծիլեր, բայց և շատ ան-

¹ Տե՛ս փաստաթուղթ № 11:

¹ Տե՛ս փաստաթուղթ № 13:

գամ հյուսիսի-ցուտար պաղեցնում է նորանց արեագալից առաջ...»¹։
Ամփոփենք.

Բարենպաստակ ընկերությունը և Հայրենիքի սիրո կանտորան XIX դարի 60—70-ական թվականներին արևելահայ առաջին ազատագրական խմբակներն էին, որոնք իրենց նպատակ էին դրել համախմբել ղեմոկրատական, առաջադիմական ուժերին, առաջին հերթին երիտասարդությունը, նրան դաստիարակել հայրենասիրական սովով և պայքարի հանել ցարիզմի ու սուլթանիզմի լծից Հայաստանը ազատագրելու համար։

Արևելահայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ դրանք առաջին գաղտնի խմբակներն էին, որոնց գործունեությունը, գոյությունն ունեցող օրենքների համաձայն, որակվում էր տրպես պետական հանցագործություն։ Մինչ այդ, ինչպես հայտնի է, պետական հանցագործ էր համարվել և դատվել Մ. Նալբանդյանը՝ ռուս ռևոլյուցիոն ղեմոկրատների հետ միասին ցարական բռնակալության դեմ պայքարելու համար։ Բայց Նալբանդյանի կենդանության ժամանակ արևելահայերի մեջ տրեղ գաղտնի կազմակերպություն չստեղծվեց։ Մեզ հայտնի չէ, որ Նալբանդյանը նույնիսկ այդպիսի փորձ կատարած լինի։ Այնպես որ Կրիտյանի խմբակը նալբանդյանական ուղղության պատկանող առաջին ազատագրական խմբակն է։

Կրիտյանը և ընկերները, ինչպես տեսանք, ազգային-ազատագրական պայքարը շաղկապում էին սոցիալական պայքարի հետ։ Նրանք չեղմորեն պաշտպանում էին ղեմոկրատական, աշխատավորական խավերի՝ գյուղացիների ու արհեստավորների շահերը և անհաշտ պայքար էին մղում նրանց ճնշողների ու շահագործողների դեմ։ Այս տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ընկերության անդամների մղած սուր պայքարը կղերա-ֆեոդալական վերնախավի, առևտրա-վաշխառուական պարագլիտային տարրերի, ազգային ցեղերի դեմ։

Ալեքսանդրապոլի բնակիչ Համբարձում Բալասանյանցը հայտնեց, որ 1874 թ. հունիսի 29-ի նամակն ինքը գրել է Արշակ Տեր-Ղազարովին, թե ինքը, Բալասանյանցը, 1874 թ. մի քանի ծանոթների հետ ծրագրում էր հիմնելու «Հայերնիքի սիրտ գրասենյակ» ընկերությունը, նպատակ ունենալով հավաքած փողերով դուրս գրել գրքեր ու լրագրեր, բայց որովհետև փող չհավաքվեց և ընկերությունը չիրականացավ, ապա ինքը, իբրև ծաղր Ղազարովի վրա, գրեց այդ նամակը, ուր նրան խնդրում էր հրապարակել այդ ընկերության մասին «Մշակ» լրագրում, դիտենալով հանդերձ, որ Ղազարովն անկարող է որևէ բան շարադրելու: Համբարձում Բալասանյանցի մոտ կատարված խուղարկումով վերցված են նրա եղբայր Վաղարշալի երկու նամակները և սրանց հետ միասին հայերեն օտանավորներ, որ երգվում է հայ ազգի անցյալ փառքը և կոչ է արվում հայ ժողովրդին` դիմադրել ազգի թշնամիներին:

«Փառքի թագ» մատյանի մեջ հիշատակված ընկերության անդամներից` Մելիք Չմշկյանցը, Ալեքսանդր Աֆրիկովը, Գևորգ Ղասաբովը, Օհանջան Գորոյանցը, Կարապետ Օհանջանովը, Սենեքերիմ Լալաևը և Հարություն Օհանջանովը ցուցմունք տվին, որ իրենք Կրիտյանցի հրավերով մի քանի տարի առաջ փող են մուծում գրքեր

ու լրագրեր ձեռք բերելու նպատակով և մի քանի անգամ հավաքվել էին խորհրդակցելու դրադարանի կազմակերպման մասին և ոչ մի ապօրինի գործի չեն մասնակցել:

Յուցակազմում մյուս անդամները հայտնել են, որ Վրենք չեն պատկանում Կրիտյանցի կազմակերպած ընկերությանն և նրա գոյություն մասին ոչինչ չեն լսել:

Արսեն Կրիտյանցը կալանքի տակ է առնված Ալեքսանդրապոլում, 1875 թ. մայիսի 11-ից:

Սիֆլիսի դատաստանական պալատի դատախազը կարծում է, այս գործին դատական կարգով ընթացք չտալով, այն լուծել հետևյալ կերպով.

1. Արսեն Կրիտյանցին պահել բանտում վեց ամիս և այնուհետև ենթարկել ոստիկանության հսկողության երկու տարի.

2. Համբարձում Բալասանյանին, Մելիք Չմշկյանին, Ալեքսանդր Աֆրիկյանին, Գևորգ Ղասաբջանին, Օհանջան Գորոյանին, Կարապետ Օհանջանյանին, Սենեքերիմ Լալայանին և Հարություն Օհանջանյանին անել խիստ ներշնչում, որ այսուհետև չհամարձակվեն առանց կառավարության թույլտվության հիմնելու որևէ ընկերություն, ոչ էլ պատկանել այդպիսի ընկերությունների՝ օրենքի առաջ պատասխանատու լինելով.

3. Գործի հետ կապված բոլոր մյուս անձերին ազատ համարել պատասխանատվությունից:

Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքան միանգամայն համաձայն է Սիֆլիսի դատաստանական պալատի դատախազի վերոհիշյալ կարծիքի հետ և իր կողմից կարգադրություն արեց ազատել Բալասանյանցին ոստիկանության հսկողությունից, իսկ գործի հետ կապված բոլոր մյուս անձերին ստորագրություններից, որ վերցված էին իրենց բնակավայրից չհեռանալու մասին:

Ե Չ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նկատի առնելով՝

1. որ Արսեն Կրիտյանցը կալանքի տակ է վերցված 1875 թ. մայիսի 11-ից.

2. որ այդ ձևերակալման ժամանակը դեռ շարունակվելու է անորոշ տևողությամբ, մինչև որ տեղի կունենա բարձրագույն հրա-

մանք գործը կարճելու մասին, որից հետո Կրիտյանցը պետք է նստի բանտում ևս վեց ամիս.

3. որ ներկա գործի հետ կապված մյուս անձերի մեղավորությունը չափազանց աննշան է, — հնարավոր է համարվում համաձայնել Սիֆլիսի դատաստանական պալատի դատախազի կարծիքի հետ, որին համամիտ է նորին կայսերական բարձրություն Կովկասի փոխարքան, այն է՝ կարճել ներկա գործն այն պայմաններով, որոնք առաջ են բերված դատախազի կողմից, բացառությամբ միայն, որ Արսեն Կրիտյանցը, իբրև տեղում չափազանց վնասակար անձ, ենթարկվի ոստիկանության հսկողության ոչ թե երկու տարի, այլ առանց ժամկետի սահմանափակման:

21 փետրվարի 1876 թ.:

Գազանի

Նորին Կայսերական
Մեծութեան Անվան
Գիվանատան 3-րդ բաժան-
մունք. 3-րդ էքսպեդիցիա
23 փետրվարի 1876 թ.
№ 682

Ն. Գ. հրամայել է
կազմել զեկզուցադրու-
մ 28 փետրվար, 1876 թ.

№ 10

ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ Պ. ՄԻՆԻՍՏՐԻՆ

3-е Отделение
Собственной
Его Императорского
Величества Канцелярии.
3 Экспедиция
23 февраля 1876 года
№ 682.

Секретно.

Его снят. приказал составить
всеподд. записку

28 фев. 1876 г.

ГОСПОДИНУ МИНИСТРУ ЮСТИЦИИ

Возвращая сообщение при отношении Вашего сиятельства, от 12 т. февраля за № 2584, отношение его Императорского Высочества Наместника Кавказского за № 472, представление прокурора Тифлисской Судебной Палаты № 152-й и производство по делу об учителе Арсене Критьянце и других, обвиняемых в государственном преступлении, имею честь уведомить, что я с своей стороны, согласно с мнением прокурора, разделяемым Его Высочеством Наместником Кавказским, признаю возможным дело по означенному предмету дальнейшим производством прекратить, на тех условиях, какие указаны в представлении прокурора, с тем впрочем, чтобы Арсен Критьянц, как личность крайне вредная для тамошнего края, подчинен был надзору полиции не на два года, а без ограничения срока.

Генерал-адъютант **Поташов**

ЦГИА (Л), ф. 1405, оп. 74.
л. 726л, л. 2.

Վերադարձնելով Ձեր պայծառապահայտությանս ս. թ. փետրվարի 12-ի № 2584 գրությունը, կցված՝ նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի № 472 գրությունը, Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի № 152 առաջադրությունն և Արսեն Կրիտյանցի ու այլոց գործը. որոնք մեղադրվում են պետական հանցագործության մեջ, պատիվ ունեմ հաղորդելու, որ իմ կողմից, համաձայն դատախազի կարծիքի, որին համամիտ է նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքան, հնարավոր գտա վերոհիշյալ գործի վարույթը կարճել դատախազի կողմից առաջադրված պայմաններով, միայն, որ Արսեն Կրիտյանցը, իբրև տեղում չափազանց վնասակար անձնավորություն ենթարկվի ոստիկանության հսկողության տշ թե երկու տարով, այլ առանց ժամանակի սահմանափակման:

Գեներալ-ադյուտ. ՊՈՏԱՊՈՎ

ВСЕПОДДАННЕЙШАЯ ЗАПИСКА

высочайше утверждено в Царском Селе
15 мая 1876 г.

В апреле месяце 1875 года до сведения начальника Эриванского губернского жандармского управления дошло, что молодые армяне учредили в сел. Караклис общество под названием «Контора любви к отечеству». Вслед затем было обнаружено письмо, писанное Амбарцумом Баласанянцем к Казарьянцу, о том, что армяне, прибывшие по разным делам в сел. Караклис, согласились учредить собрание под названием «Контора любви к отечеству» и постановили собираться три раза в неделю для чтения книг, газет отечественной истории и обсуждения дел полезных для нации.

Из собранных, при произведенном по сему поводу дознании, сведений, обнаружилось, что в 1868 г. в г. Александрополе было основано Арсеном Критьянцем без разрешения правительства «Общество с благою целью», для приобретения книг и составления библиотеки. Общество это после 1869 г. уже не существовало, хотя в 1875 году некоторые лица предлагали восстановить его.

При обыске у Критьянца между прочим было найдено несколько написанных им посланий к товарищам, в которых проводится мысль, что общество устраивается не только для составления библиотеки, но и с противоправительственной целью, разные книги, недозволенные цензурою и список членов общества.

Критьянец объяснил, что общество было учреждено для того, чтобы составить библиотеку и что во время собрания занимались чтением и обсуждением прочитанного; преступного же содержания статьи, найденные у него, были написаны им в молодости по необдуманности.

Внесенные в список члены общества, Чимишкянц, Априков, Касабов, Гороянц, Карапет Оганджанов, Лалаев и Арутик Оганджанов показали, что несколько лет тому назад они, по приглашению Критьянца, вносили деньги на выписку книг и газет и собирались несколько раз для обсуждения устройства библиотеки. Остальные же внесенные в список отозвались, что ни в каком обществе участия не принимали, но слышали о приглашении Критьянца составить общество для помощи бедным и для составления библиотеки.

Амбарцум Баласанянц, по поводу письма его к Казарьянцу, объявил, что он с другими знакомыми предполагал учредить общество для выписки книг и газет и для распространения образования, но денег на это не собиралось, почему он и просил Казарьянца напечатать об учреждении этого общества в газете.

Принимая во внимание, что произведенным по сему делу дознанием обнаружено, что Арсен Критьянец, основав без разрешения правительства общество с целью выписывать книги и газеты и заниматься чтением и обсуждением прочитанного, составляя потом воззвания, доказывающие его стремление придать этому обществу направление противоправительственное, что Амбарцум Баласанянц приглашал других устроить без надлежащего разрешения общество для приобретения и чтения книг, а Мелик Чимишкянц, Александр Априков, Геворк Касабов, Оганджан Гороянц, Карапет Оганджанов, Сенекерим Лалаев и Арутин Оганджанов участвовали в обществе неразрешенном правительством, я, согласный с мнением Его Императорского Величества Наместника Кавказского и генерал-адъютанта Потапова, полагал бы Арсена Критьянца в виду того, что означенное преступное деяние совершено им по увлечению молодости, а также и того, что он 11 месяцев содержится уже под стражею, подвергнуть тюремному заклю-

чению на шесть месяцев, и, как личность, могущую иметь вредное влияние в крае, отдать под надзор полиции; остальным же сделать строгое внушение, чтобы впредь не дозволяли себе ни учреждать каких-либо обществ без разрешения правительства, ни принадлежать к таковым под опасением ответственности по законам.

На приведение такового моего предположения в исполнение всеподданнейше испрашиваю Высочайшее Вашего Императорского Величества соизволения.

За Министра Юстиции товарищ
министра (подпись)

ЦГИА (Л), ф. 1405, оп. 521,
л. 392, лл. 84—87.

№ 11

ԱՄԵՆԱՀՊԱՏԱԿ ՁԵԿՈՒՅԱԳԻՐ

Բարձրագույնի կողմից հաստատված է Յարսկոյե Սելոյում
1876 թ., մայիսի 15-ին

1875 թվականի ապրիլ ամսին Նրևանի նահանգական ժանդարմական վարչության պետին տեղեկություն հասավ, որ Երիտասարդ հայերը Ղարաբաղիսա գյուղում հիմնել են «Հայրենիքի սիրո կանտորա» անունով ընկերություն: Այնուհետև հայտնաբերվել է Ղազարյանցին գրած Համբարձում Բալասանյանցի նամակը այն մասին, որ հայերը դանազան գործերով գալով Ղարաբաղիսա գյուղը, համաձայնություն են եկել հիմնել «Հայրենիքի սիրո կանտորա» և որոշել են շաբաթական երեք անգամ հավաքվել՝ գրքեր, թերթեր, հայրենասիրական պատմություն կարդալու և ազդողոտ գործեր քննելու համար:

Այս կապակցությամբ հավաքված տեղեկություններից պարզվել է, որ 1868 թվականին Ալեքսանդրապոլ քաղաքում Արսեն Կրիտյանցը, առանց կառավարության թույլտվության կազմակերպել է «Բարենպատակ ընկերություն», գրքեր ձեռք բերելու և գրադարան հիմնելու համար: Այդ ընկերությունը 1869 թվականից հետո գոյու-

թյուն չի ունեցել, չնայած նրան, որ մի քանի հոգի 1875 թվականին առաջարկել են վերականգնել այն:

Կրիտյանցի մոտ կատարված խուզարկության ժամանակ ի միջի այլոց հայտնաբերվել են ընկերների ուղղած նրա մի քանի գրությունները, որ այն միտքն է անցկացվում, թե ընկերությունը կազմվում է ոչ միայն գրադարան հիմնելու, այլև հակակառավարական նպատակով, ինչպես նաև գրաքննությամբ արգելված դանազան գրքեր և ընկերության անդամների ցուցակը:

Կրիտյանցը բացատրեց, որ ընկերությունը հիմնվել է գրադարան բացելու նպատակով և ժողովների ժամանակ զբաղվել են գրքեր կարդալով և կարդացածը քննարկելով: Նրա մոտ գտնված հանցավոր բովանդակություն ունեցող հոգվածները նա գրել է երիտասարդ հասակում, չմտածված:

Ընկերության անդամների ցուցակում եղածներից Չմշկյանցը, Աֆրիկովը, Ղասարովը, Կարապետ Օհանջանովը, Լալաևը և Արուտիկ Օհանջանովը ցույց տվին, որ մի քանի տարի առաջ, Կրիտյանցի հրավերով, նրանք փող են մտծել գրքերի և թերթերի համար և մի քանի անգամ հավաքվել են գրադարան հիմնելու հարցը քննելու: Ցուցակում եղած մնացածները հայտնեցին, որ ոչ մի ընկերության չեն մասնակցել, բայց լսել են, որ Կրիտյանցը հրավիրել է ընկերություն հիմնել աղքատներին օգնելու և գրադարան կազմելու համար:

Համբարձում Բալասանյանցը Ղազարյանցին գրած իր նամակի մասին հայտարարեց, որ նա ուրիշ ծանոթների հետ միասին ենթադրել է ընկերություն հիմնել՝ գրքեր և թերթեր դուրս գրելու և կրթություն տարածելու համար, բայց փող չի հավաքվել, ուստի նա խնդրել է Ղազարյանցին՝ այդ ընկերության հիմնադրման մասին գրել թերթում:

Նկատի ունենալով, որ սույն գործով կատարված հետաքննությունից պարզվել է, որ Արսեն Կրիտյանցը առանց կառավարության թույլտվության ընկերություն է հիմնել՝ գրքեր և թերթեր դուրս գրելու, ընթերցանությամբ պարապելու և ընթերցվածը քննարկելու նպատակով, հետո գրել է կոչեր, որոնք ցույց են տալիս այդ ընկերությանը հակակառավարական ուղղություն տալու նրա ձգտումը, որ Համբարձում Բալասանյանցը առանց պատշաճ թույլտվության հրավիրել է ուրիշներին ընկերություն հիմնելու, գրքեր ձեռք բերու և կարդալու համար, փսի Մելիք Չմշկյանցը, Ալեքսանդր Աֆ-

քիկովը, Գեորգ Ղասարովը, Օհանջան Գորոջանցը, Կարապետ Օհանջանովը, Սենեքերիմ Լալաևը և Հարություն Օհանջանովը մասնակցել են կառավարության կողմից շթուլատրված ընկերությանը, ևս համաձայնելով նորին Կայսերական Մեծության Կովկասի փոխարքայի և գեներալ-ադյուտանտ Պոտապովի կարծիքի հետ, կհամաձայնվեի Արսեն Կրիտյանցին, նկատի ունենալով, որ նշված հանցագործ արարքը նա կատարել է տարվելով երիտասարդությամբ և այն, որ նա արդեն 11 ամիս է ինչ կալանքի տակ է գտնվում, բանտում պահել ևս 6 ամիս և որպես մի անձնավորություն, որ կարող է վնասակար ազդեցություն ունենալ երկրամասում, հանձնել սասիկանություն հսկողությանը: Մնացածներին անել խիստ ներշնչում, որպեսզի այսուհետև իրենց թույլ չտան ոչ հիմնել և ոչ էլ պատկանել կառավարության կողմից շթուլատրված որևէ ընկերության, օրենքի առաջ պատասխանատու լինելով:

Իմ այս մտադրության իրագործման համար հարցնում եմ Ձերդ Կայսերական Մեծության բարեհաճությունը:

Ի. Տ. Արգարազատության մինիստրի
մինիստրի օգնական (ստորագրություն)

№ 12

Министерство Юстиции
Департамент отдел. угол.
стол 4.
22 мая 1876 г.
№ 8251
С.—Петербург

Секретно

**ГОСПОДИНУ И. Д. ГЛАВНОГО НАЧАЛЬНИКА
III ОТДЕЛЕНИЯ СОБСТВЕННОЙ ЕГО
ИМПЕРАТОРСКОГО ВЕЛИЧЕСТВА КАНЦЕЛЯРИИ**

По всеподданнейшему докладу моему об обстоятельствах дела по обвинению учителя Арсена Крительянца и др. в государственном преступлении высочайшее повелено: Арсена Крительянца подвергнуть тюремному заключению на шесть месяцев и отдать под надзор полиции, остальным же сделать строгое внушение, чтобы впредь не дозволяли себе ни учреждать каких-либо обществ без разрешения правительства, ни принадлежать к таковым под опасением ответственности по законам.

О таком высочайшем повелении мной вместе с сим доведенном до сведения его императорского высочества наместника Кавказского, имею честь уведомить ваше превосходительство вследствие отношения от 23 февраля 1876 г. за № 682.

За Министра Юстиции товарищ
министра (подпись)
И д. директора (подпись)

ЦГИА (М), 3 отд., 3 экспед.,
д. 120, л. 94.

Արդարադատ. Մինիստրութիւն
Քրեական
Բաժանմունքի գեղարտածեն ա
Սեզան 4
22 մայիսի 1876 թ.
№ 8251
Ս. Պետերբուրգ

Գաղտնի

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ
ԳԻՎԱՆԱՏԱՆ 3-ՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳՂԵԱՎՈՐ
ՊԵՏԻ ՊԱՐՈՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ

Իմ ամենախոնարհ զեկուցման հիման վրա՝ պետական հանցա-
գործութիւն մեջ մեղադրվող ուսուցիչ Արսեն Կրիտյանցի և այլոց
գործի հանգամանքների մասին՝ բարձրագոյնս հրամայված է՝ Ար-
սեն Կրիտյանցին ենթարկել վեցամսյա բանտարկութեան և ապա
ուստիականական հսկողութեան, իսկ մշուաներին անել խիստ ներ-
շնչում, որ ապագայում այլևս չհամարձակվեն ոչ կազմակերպել
որեւէ ընկերութիւն առանց կառավարութեան թույլտվութեան, ոչ էլ
պատկանել այդպիսիներին, օրինական պատասխանատվութեան են-
թարկվելու զգուշացումով:

Այդպիսի բարձրագոյն հրամանի մասին, որն այսու հաղորդել
են ի գիտութիւն Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասի փո-
խարքայի, պատիվ տւնեմ հայտնելու Ձեր գերազանցութեանը ի
հետևումն 1876 թ. փետրվարի 23-ի № 682 գրութեան:

Փ. Արդարադատութեան մինիստրի
մինիստրի օգնական՝ (ստորագրութիւն)
Պաշտոնակատար դիրեկտորի՝ (ստորագրութիւն)

Կովկասյան փոխարքայութեան
Գլխավոր կառավարութեան
Վարչիչի պաշտոնակատար
31 դեկտ. 1876 թ.
№ 12618
Տփլիս

Քարգմանութիւն

ՁԵՐԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ՝

Տփլիսի դատական պալատի դատախազը անցյալ նոյեմբերի
22-ին մեծ իշխան փոխարքային ներկայացրեց այն քննութեանը,
որ կատարել է Սրեանոմ նահանգական ժանդարմական կառավա-
րութեան ղեխավորը, Ալեքսանդրայով բաղաքի մասնավոր դպրոցի
դասատու Արսեն Կրիտյանի և ուրիշների մասին, որոնք մեղադրվում
են պետական հանցագործութեան մեջ:

Դատաստանական պալատի դատախազի եզրակացութեանից
տեսնելով, որի բաղվածքը ընդամին ուղարկվում է, որ քննութեամբ
պարզված հանգամանքները ցույց են տալիս, թե դպրոցում և դըպ-
րոցներում հնարավոր է դասավանդութեան վատ ուղղութեան տւնե-
նալը, ես նորին կայսերական բարեբարութեան փոխարքայի թույլ-
տրվութեամբ, պարտք եմ համարում այդ մասին ձերդ սրբութեան
հաղորդել հարկավոր տնօրինութեանը անելու ապագայում նման
ուղղութեան առաջն առնելու, ավելացնելով, որ Կրիտյանցի և մշու-
անցի գործին ընթացք վ՛ տրված բարձրագոյնս 17 դեկտեմբերի
1874 թվականի հաստատած օրենքով:

Կատարյալ հարգանքով և անձնվիրութեամբ
պատիվ տւնեմ մնալ ամենամտերիմ ծառա
իշխան ԲԱԳՐԱՏԻՈՆ ՄՈՒՆԵՐԱՆՍԿԻ

՝ Այս գրութիւնը և Կրիտյանի ու ընկերութեան գործից արված բաղվածքը

ՏՓԵՒՍԻ ԳՍԱՍՍԱՆԱԿԱՆ ՊԱՍՏԻ ԳՍԱՆԽԱԶԻ ՄԵՐ ԻՇԽԱՆ ՓՈ-
ԽԱՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ 22-ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 1875 թ. № 152 ՀԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՅՑ

Սույն թվի ապրիլ ամսին Նրևանի նահանգի ժանդարմերիայի գլխավորը տեղեկություն ստացավ, որ երիտասարդ հայերը հիմնել են Ալեքսանդրապոլ քաղաքում կամ Ղարաքիլիսա գյուղում մի գրասենյակ «Գրասենյակ (КОНТОРА) սիրո առ հայրենիքը» անունով: Գաղտնի հավաքած տեղեկություններից այդ առթիվ ի միջի այլոց ձեռք է բերված մի նամակ, գրված 29-ը հունիսի 1874 թ. Բամբակի հաշտարար շրջանի թարգման Համբարձում Հարությունյան Բալասանյանի կողմից Ալեքսանդրապոլի գավառական վարչության գրասենյակի ծառայող Ղասաբյանին¹:

Այդ նամակում Բալասանյանը հայտնում է, որ հունիսի 20-ին Ղարաքիլիսա եկան մի քանի հայեր, որոնք համաձայնեցին հիմնելու ժողով «Գրասենյակ առ հայրենիքը» անունով: Այդ նպատակի համար սենյակ գտան, որոշեցին շաբաթը երեք անգամ առավոտ և երեկո հավաքվել թերթ կարդալու և ազգային պատմությանը զբաղվելու և քննելու ազգի համար կարևոր և այդ գրասենյակի կառավարիչը ընտրեցին Գևորգ Խոսրովյանին, անդամներ Ալեքսանդր

1875 թ. դեկտեմբերի 31-ին ուղարկվել է Գևորգ 4-րդ կաթողիկոսին Առաջին անգամ այս փաստաթուղթը հրատարակել է Լեոն 1932 թ. «Նոր ուղի» հանդեսի № 1-ում: Նկատի ունենալով, որ «Նոր ուղի»-ում տպագրվել է բազմաթիվ սխալներով և կարևոր հատվածների կրճատումով, ուստի մենք տպագրում ենք լրիվ տեքստը, որը պահվում է ՀՍՍՌ մատենադարանում: Բացի այդ, որոշ փաստաթղթեր օգտագործված են նաև Մ. Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ» գրքում:

¹ Պետք է լինի Ղազարյանին:

* Սույն քաղվածքից մի օրինակ 1875 թ. դեկտեմբերի 31-ին փոխադրված է նաև Կովկասի դպրոցական օկրուգի հոգաբարձուին (տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 422, д. 812, лл. 1—12): Իսկ 1876 թ. հունվարի 15-ին Կովկասի դպրոցական օկրուգի հոգաբարձուն այդ մասին տեղեկացնում է Նրևանի պրոգիմնագրի տեսչին և Կրիտյանի վերաբերյալ հարցում անում (նույն տեղում, էջ 13—15): Այս մասին տե՛ս նաև Հայկական ՍՍՌ Պետական Պատմական արխիվ, ֆոնդ 56, օպ. 4, գ. 16, էջ 3—13 և ֆ. 115, օպ. 1, գ. 5, էջ 1—15:

Լազարյանին, Մկրտիչ Լազարյանին և Բաղդասար Չարխչյանցին, քարտուղար՝ Համբարձում Բալասանյանցին: Վերջում Բալասանյանը խնդրում է այդ մասին հայտարարել «Մշակ» լրագրում և ավելացնել որ այդ գրասենյակի ծախքերի համար պետք է մտցնել տարեկան երեք ոտրլի: Այս պատճառով բարձրագույնս 19-ը մայիսի 1871 թ. և 7-ն հունիսի 1872 թ. եղած հրամանների սկսվեց այդպիսի գործերի համար որոշված կարգով քննություն:

Հիշյալ անձնավորությունների մոտ կատարված քննության ժամանակ գտնվել է.

Համբարձում Հարությունյան Բալասանյանի մոտ երկու նամակ, իր էղբայր Վաղարշակի ուսանավորները հայերեն լեզվով և Վաղարշակ Բալասանյանի մոտ իր ստանավորները և «Պատմություն հայոց» ու «Պարտի ուսման» գրքերը տպագրված Կ. Պոլսում: Նրևաց, որ «Հայոց պատմություն» գիրքը պատկանում է Հայոց հոգևոր սեմինարիայի աշակերտ Ալեքսանդր Քանանյանցին, որը 1 ոտր. 60 կոպեկով գնել է սուուցիչ Արսեն Կրիտյանից: Արսեն Կրիտյանի տանը խուզարկության ժամանակ գտնվել է արտասահմանում տպագրված հայերեն գրքեր, դանազան թղթեր և թերթեր, իսկ նրա կառավարած դպրոցում հայտնի տեղում կախված է հայոց Հայկ թագավորի պատկերը, պատին կայքրած մի ցուցանակ հետևյալ գրությունով Բարի նպատակով ընկերություն. «Պսակ փառավոր» գիրք, ընկերության անդամների ցուցակով և ընկերության կանոնադրության մի քանի օրինակներ:

Խոսակցության ժամանակ բացի այդ գտնվել են արտասահմանում տպագրված «Պարտք հայրենասերի» գիրքը Օհան Համբարյանի մոտ և հայերեն «Փունջ», «Հայրենիք» ու «Մամուլ» թերթերի երեք օրինակ Պետրոս Հայկազունու մոտ: Խուզարկության ժամանակ գտնված այդ թղթերից ի միջի այլոց երևում է.

- 1. Կրիտյանի մոտ գտնված ընկերության կանոններից՝
 - ա) Որ ընկերության բարի նպատակին է օգնել հայ ազգին:
 - բ) Ընկերության անդամները 50-ից ավելի չպիտի լինեն, նրանք պետք է երիտասարդ լինեն, գիտակ և ցրոնք պետք է աշխատեն ժողովրդին լավ օրինակ լինել:
 - գ) Շաբաթը երեք կոպեկ պետք է մուծեն:
 - դ) Ընկերության ամեն մի անդամ պետք է սրբությունը և քաջությունը կատարի այն պարտականությունը, որը ընկերությունը կդնե նրա վրա. սրանից կարող են ազատ լինել նրանք միայն, սվ-

քեր հարգելի պատճառներ կունենան, որոնք ընկերությունը հայտնի կլինեն, իսկ նրանք, որոնք այդ պարտականությունները չեն կատարի առաջին անգամ կաշխատեն համոզել, երկրորդ անգամ կտուգանվեն, իսկ երրորդ անգամ կարտաքսվեն:

Այդ կանոնադրության մյուս հոդվածներում պարզված են անգամների ընտրության, դրամի մուծման և գրքեր կարգալու համար եղող ժողովների կանոնները:

2. Կրիտյանի մոտ գտնված ընկերության անդամների ցուցակներինց երևում է, որ 43 անձն կար, որոնք և հարցաքննության ենթարկվեցին, ինչպես ստորև կերևա:

3. Կրիտյանի մոտ գտնված թղթերից երևում է՝

ա) Իր ընկերներին, ուղարկվածներինց, որ բարի նպատակով ընկերությունը կազմակերպվում է նրա համար, որ հայերին հնարավորություն տրվի միանալու, անցյալ ազգային փառքի հիշողությունները վերականգնելով:

բ) Կրիտյանի մոտ գտնված է Կ. Պոլսում 1866-ին տպագրված հայոց պատմությունից արած քաղվածքներ:

գ) Կրիտյանի անհայտ եպիսկոպոսին ուղղված նամակից երևում է, որ նա նորին գերապատվություն հայտնում է բարի նպատակով ընկերության հաջողությունների մասին:

դ) Կրիտյանին 1875 թվի ապրիլին Երևանից ուղարկված ստորագրության թերթից երևում է, որ դրանով հավաքված է 44 ու գրադարանի համար, 1872 թվին Ղարաքիլիսայում հիմնված և որ դրամները պահվում են Տեր Արսեն քահանայի մոտ:

4. Բալասանյանի մոտ գտնված ոտանավորներից երևում է, որ գրել է Վաղարշակ Բալասանյանը, որ նրանցում երգվում է հայ ազգի անցյալ փառքը և կոչ է արվում հայ ժողովրդին որ դիմադրեն ազգի թշնամիներին:

5. Այս գործով քննության ենթարկված անձերի մոտ կատարած խուզարկությամբ գտնված գրքերից երևում է, որ գրքերը են ազգային պատմություն դասագիրք Փափազյանի, հայրենասերների ցանկությունները՝ հեղինակություն Միսակյանի, Բնար Հայկական, դասագիրք հայոց պատմության Չալոյանի, ձեռագիր՝ Ծաղկոց, ըստ ցուցակագրության № 43 ձեռագիրը ունի բացատրություն մտքերի, որոնք գրաքննական վարչության որոշումով թուլատրելի չեն:

Հարցաքննության ժամանակ ցուցմունք տվին.

Արսենիկ Վարոսի Կրիտյան 24 տարեկան, Ալեքսանդրապո-

լի մասնավոր դպրոցի ուսուցիչ և Ալեքսանդրապոլի դավառական դպրոցի ավագ ուսուցիչ, ամուսնացած է բայց զավակներ չունի. դպրոցին կից կար նրան պատկանող գրադարան, որից նա դասագիրք է վաճառում. հայոց պատմություն աշակերտներին նա չի վաճառել, այլ այդ ձևով է բերել աշակերտների համար Հաջիրար Աթարից: Այդ շենքում նա իր ընկերների՝ Նալյանցի և ուրիշների հետ, որոնց անունը կար ցուցակում, կիրակի օրերը հավաքվել են: Բարի նպատակով ընկերությունը հիմնել են նրանք 1868—69 թվերին. նրա համար, որ ընթերցանության համար գրադարան ունենան, հավաքել են ընդամենը 32 ու 50 կոպեկ: Պատշաճ կշխատության թուլատվություն չեն ստացել, որովհետև չգիտեին. ընկերությունը գրադարանի սենյակում ցուցանակ ունի, ընկերությունն ունի առանձին կանոնադրություն, որ խուզարկության ժամանակ վերցրել են: Ժողովի ժամանակ զբաղվել են թերթերի և գրքերի ընթերցանությամբ, կարդալուց հետո զրուցել են և ընկերները ինչ որ ասել են ինքը գրել է. այդ թղթերը խուզարկության ժամանակ վերցրել են. հակաօրինակի բան չեն խոսել. այն ինչ որ գրի էր առնվում կնքվում էր մասնավոր կնիքով Շ.Կ. նստեղով, վկայելու համար, որ բոլորն էլ համաձայն են. արտասահմանից թերթեր չեն ստացել, իսկ իր մոտ գտնվածները թողել է իրենից առաջ եղած Մարտիրոս վարժապետը: Սույն տարվա ապրիլին Աֆրիկյանը, Յանջանյանը, Ղասաբյանը, Բաղրամյանը և Միրզոյանը Վրենս առաջարկում են նորից հիմնել ընկերություն, որը անցյալի շարունակությունը լինի: Կիրակի օրը ժողովվելով քննել են նոր կազմած կանոնադրությունը բայց չեն համաձայնվել և ցրվել են: Ռուսաց կառավարության դեմ հանդուգն խոսքերը գրել է երիտասարդ ժամանակ լավ չկշռադատելով և խնդրում է իրեն ներեն:

Համբարձում Բալասանյան 35 տարեկան, ամուսնացած է, ունի զավակներ, Բամբակի հաշտարար շրջանի քարտուղարի օգնականի պաշտոն է կատարում: Նրան ցույց տված նամակը ինքն է գրել 29-ը հունիսի 1874 թ. գրել է Արշակ Տեր-Ղազարյանին, պատճառն ասել է եղել, որ անցյալ 1874 թվին ինքը ուրիշ ծանոթների հետ ծրագրել է հիմնել գրասենյակ առ հայրենիքը, գրքեր և թերթեր բեքելու հավաքած գումարով և կրթություն տարածելու, բայց որովհետև այդ ընկերության համար դրամ չհավաքվեց, ինքը Ղազարյանին նամակ է գրել, խնդրելով Մշակ թերթում տպագրել այդ ընկերությունը հիմնելու մասին. ընդհանրապես այդ ամենը գրել է

Վերոհիշյալ հանգամանքների կշռադատումից երևում է, որ կրիստյանի մոտ գտնված նամակից տւղղված հոգևոր անձի, հոգևոր դպրոցի աշակերտների ցուցմունքներից և սրանց մոտ գտնված ոտանավորներից պետք է հղրակացնել, որ ըստ երևույթին հայ հոգևորականության մի քանի անձինք հետաքրքրվել են այդպիսի ընկերության հաջողություններով, և որ երևիտներին դասավանդելիս, Հայաստանի անցյալ պատմությունն են ավանդել, անցյալ փառքի ասիստանքը վարթեցնելով և ներկա կարգի դեմ դժգոհություն հարուցանելով: Այդ կշռադատումից ելնելով, այդ անձնավորությունների պատասխանատվության ենթարկելու եղրակացուության և գործին ընթացք տալուն ես գտնում եմ.

Որովհետև այդ գործի հանգամանքներից պարզվում է դրպրոցներում դասավանդելու ուղղության վնասակար լինելու հավանականությունը, ըստ երևույթին այդ առարկայի վրա պակաս հակողություն ունենալու պատճառով և ոչ բոլորովին բարեհույս անձանց դասատուներ հրավիրելու հետևանքով, ժամոտի Երևանի բարձր հոգևոր իշխանությունը և նահանգական վարչությունը այդ մասին պետք է տեղեկանան ապագայում նման երևույթների առաջըն առնելու:

Ուղիղ է. գործավարի պաշտոնակատար՝
Վ. ԵՎԱՆԳՈՒԼՈՎ

№ 14

ՅԱՎԱԼԻ ԳՈՅԺ ՄԸ ԿԱՄ ՄԱՏՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԸ

Մեր ազգն կարծես բնության մեկ բառացությունն է, վիշտ կրելու, արցունք թափելու և մինչ գերեզման դժբախտ ապրելու համար միայն ստեղծված, և իբրև թշվառության հյուսիսներ՝ աշխարհիս շորս կողմն ցանված է.— արգահատելի վիճակ, և կարեկցության արժանի ժողովուրդ:

Ոչ ոք կրնա ուրանալ թե մեր ազգին ծագումեն ցարդ իր ամբողջ պատմական կյանքն այլ և այլ նկատմամբ՝ սրտառուչ ողբերգություն մ'է, բայց արդարությունը խոսելով՝ օտար թշնամիներն ավելի շատ անգամ անադորուն գտնված են խել մը հայրենասեր և ազգասեր ձևացող անձինք, որ թեև անոր գիրկն ծնած և անոր հացովն ու ջրովն կշտացած, բայց անոր աղետներուն վրա աղետներ բարդելու խիղճ չեն ըրած՝ միմիայն իրենց անձնական շահոն, փառասիրության և կենաց պահպանության համար:

Այն ազգայաց կարգեն կհամարվի ուսաստանցի մոլի վարդապետ մը, որ ինքը դատապարտութենե ազատ մնալու ակնկալությունամբ՝ Ալեքսանդրապոլի մեջ ազգօգուտ նորակաղմ ընկերության մը հիմնադիրներն կմատնե ծանր զրպարտություններ ընելով և Ռուսիո կառավարության կասկածելի ցուցանելով:

Այս ցավալի իրողության նկատմամբ մեզ գրված նամակը արժան կհամարինք հոս հրատարակել:

... Հայր խմբագիր

«Ալեքսանդրապոլի մեջ Արսեն անվամբ ազգասեր քարոցական պաշտոնի մը և տւրիշ մի քանի ազգասեր երիտասարդաց միջոցով ընկերություն մը կհաստատվի, ազգին օգտակար ծառայություններ ընելու գովելի նպատակով: Սուչն ընկերությունն ամեն

կարգի անձինք անգամ կընդունեն և կունենան, որոց մեջ կգտնվի վարդապետ մ'ալ»:

«Հիշյալ ընկերությունն օրինավոր արձանագրություններ կըբռնեն և ըստ օրենի իր նիստերն շարունակելով բավական քարուքանի և նյութական օգուտներ կսկսի ընել տեղվոյն հասարակության: Բայց քաղաքին հայ հասարակությունն մեծով մասամբ նըկատելով որ այդ անպաշտոն վարդապետն խոռոնագնաց կյանք մը կվարեն ի դայթակղություն հասարակության, կըողոքեն վեհապատ կաթողիկոսին»:

«Ի վերա այսր ամենայնի, հիշյալ վարդապետն վեհափառեն քանիցս եղած խրատական և հանդիմանողական ազդարարություններն առ ոչինչ համարելով, ոչ միայն չզղաստանար, այլ մինչև իսկ կհամարձակվի թե «ես ուս պիտի լինիմ»: Իրաց այս վիճակին մեջ տեղվոյն հասարակությունը հանրագրությամբ մը կլինդրեն վեհափառեն որ այս անպարկեշտ անձը վերցնեն իրենց մեջէն, որպէսզի հասարակության գայթակղյալ մտքերն ու խղճերն հանդարտին»:

«Այս անգամ վեհափառն ալ ուղղակի քաղաքապետին կիմացնէ գրով, որ էջմիածին ճամփե նույն վարդապետը: Քաղաքապետն ալ ըստ հրամանի վեհափառին վեց զինվոր և մեկ զբռնկա (կառք) շիտակ նույն վարդապետին տունը կղրկէ: Զինվորները երբ տունը կմտնեն կիմացնեն իրեն թե զինքը տանելու եկած են և եթէ չհնազանդի՝ բռնի տանելու ալ հրաման ունին»:

«Վարդապետի ճարը հատած կլինդրեն, որ եթէ կարելի է՝ ներկայացնելին անգամ մը զինքը քաղաքապետին և հետո երթան, հետևաբար զինվորներն ալ այս առաջարկության կզիջանին: Վարդապետը քաղաքապետին ներկայանալուն հիշյալ ընկերության վրա խել մը սուտ և անհիմն զրպարտություններ կնէ և ավելի առաջ երթալով կորուսյալ հայկական գահը կանդնելու հետամուտ կամբաստանն նույն ընկերությունն և թե ինքն (վարդապետը) ընկերության այդ նպատակին հակառակելուն հանիրավի բողոքած են իր դեմ առ վեհափառ կաթողիկոսն»:

Քաղաքապետն ալ իսկույն ծածուկ կհեռագրեն հարկ եղած տեղըն և քսանը շորս ժամվան մեջ ժանդարմ կոչված խուզարկիչ հանկարծ կուզա և տղղակի կերթա նույն Արսեն վարժապետի տունը: Հարկ եղած խուզարկություններն ընելով, կգտնա խել մը ազգասիրական և հայրենասիրական մատչաններ հայոց պատմություններ, Հայկա, Վարդանա և այլն պատկերներ, Նալպանտյանցի

և այլոց գրություններն, ասոնց հետ նաև նույն ընկերության ասենազրություններն: Ասոնք ամենն գրավելով, հիշյալ Արսեն վարժապետն և իր ընկերներեն մի քանիսն ալ ձերբակալելով ուղղակի բերդը կղրկէ և առանց քննության կբանտարկվին:

Չենք գիտեր թե այդ անձինքն տակավին բանտարկված են բերդին մեջ թե այլուր: Ոմանք կսեն թե ամեն քննություններն ըլալեն վերջն՝ ազատություն պիտի շնորհվի: Բայց մեզ ավելի հավանական կթվի առջի կարծիքն. վասն զի ազգության վերաբերյալ գրեանք կարդալն՝ այս հողին մեջ ոճիր մ'է, նմանօրինակ ամբաստանյալներն ալ Սիպիրո մեջ քաված են իրենց հանցանքները: Այս մասին տակավին նոր Ֆ նորտ խուզարկություններ կլինին Ալեքսանդրապոլի մեջ, անոր համար ամեն մարդիկ ստիպված են այսպիսի գրքեր՝ եթե ոճին՝ այրելու:

Եթե ձերբակալելոց նկատմամբ ուրիշ տեղեկություններ ալ ստանամ դարձյալ կզրեմ:

Լույս, հանդես շաբաթական, Պոլիս, 1875 թ.
սեպտեմբեր, էջ 152—154:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Ալեքսանդրապոլի ս. Փրկչի հայոց հոգևոր Վիճակային դպրոցի հիմնադրման տարեթիվը մենք համարում ենք 1839 թվականը, հիմք ընդունելով արխիվային որոշ փաստաթղթեր և այդ դպրոցին լավատեղյակ, նրա երկարամյա ուսուցիչ Մկրտիչ վարժապետ Աբարաջյանի վկայությունը (տե՛ս «Երասա», 1869 թ. սեպտեմբեր, էջ 113):

Արսեն Ղլաշյանը և ուրիշները դպրոցի հիմնադրումը համարում են 1840 թվականը (տե՛ս Ա. Ղլաշյան, Համառոտ պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր Վիճակային դպրոցի (1840—1912), Ալեքպոլ, 1912):

² Աղալյան Ղազարոս (1840—1911)— Նշանավոր գրող, մանկավարժ: 1871—1876 թթ. աշխատել է Ալեքսանդրապոլում, Ս. Բեզնազարյանի, Հ. Ղուկասյանի և ուրիշներին հետ աղտիվ մասնակցություն ունեցել տեղի հասարակական և կուլտուրական կյանքին: Այդ շրջանում ազդեցիկ կղերականներից ումանք վորձում են Աղալյանի նման աչքի ընկնող մի անձնավորություն ներգրավել իրենց շարքերը: 1874 թ. օգոստոսի 24-ին, կաթողիկոսի մտերիմ և խորհրդակցական Վահրամ վարդապետ Մանկունին, էջմիածնից հարցնում է Տեր-Հովսեփին, թե «Պ. Ղազարոս Աղալյանը կարո՞ղ է քահանա դառնալ, ունի՞ հարմարությունը», պապ ավելացնում է՝ «Իմ կողմանի պատվիրե՛ք, որ ձայնագրություն ուսանի տիրացու Հովհաննեսն»:

Հարկ է նշել, որ Աղալյանը ևս անհեռադական է լինում այս հարցում: 1880-ական թվականներին մենք հանդիպում ենք նրա վարդապետ դառնալու խնդրին, որը մի շարք անգամներ ձգձգվելուց հետո, վերջապես ուշքի է բերում Աղալյանին և 1888 թ. մայիսի 29-ին նա Տեր-Հովսեփին հղում է հետևյալ նշանակալից նամակը:

ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ՀԱՅՐ

Վարդապետ չեղա՛ս, որովհետև չուզեցին: Եվ ինչքան լավ եղավ որ չուզեցին: Իմ ոչ մի բարեկամս իմ այդ թշնամյաց չափ ինձ լավություն արած չէր: Ես երբ վաճեցի է՛ի, հոգեպես երկանդ, քախձուրջան մեջ բնկած, աշխարհից զզված: Այժմ առողջ եմ կատարյալ առողջ և ուրեմն վարդապետության համար անպետք: Պիտի ասնք «ուրեմն անպետք մարդիկ միայն պիտի վարդապետ լինեն»: Այդ չգիտեմ, միայն մենք տեսնում ենք, որ պետքականներին ևս անպետքացնում է «անպիտանությունը»: Երբ զլուխն անպետք է, ոտների մասին խոսք լինել չի կարող: (Ընդ-

գծումն իմն է.— Վ. Պ.): Ես այն եմ ասում, ինչ որ դուք ինձանից լավ գիտեք, այդ միևնույն է, թե որդիք հոր սովորեցնենք...

Այժմ ուրիշ բան տեսնելու Գուր նպատակ ունենիք ինձ օգնելու, որ ես վարդապետ դառնամ, և ես հավատացած եմ, որ կարող էիք հաջողացնել Քայց ես ինքս՝ տեսնելով նրանց հակակրօնությունը, զղվեցա էլ շուգեցա Ձեզ ձանձրություն տալ. այդ կնշանակի որ դուք ներս պրծնել անկող հյուրի պես: Իմ պատվասիրությունս թույլ չտվավ ինձ այլչափ նվաստանալ. սակայն սրանով չի նվազում իմ աչքում Ձեր լավությունը, որ միշտ էլ արել եք: Ես հիմա ապրում եմ իմ գրչով, իմ գրքերով, որքան որ մեր մեջ կարելի է ապրել մտավոր աշխատությամբ: Ահա մի արհեստ, որ ինչքան օգտակար է ազգի կրթության համար, այնքան էլ անօգնական և անապավեն է ազգի կողմից: Ամեն մի աղքատիկ ուսումնարան օգնություն է ստանում ժողովրդից, բայց օգնություն չի ստանում այն անձը, որ մեզ պես սնունդ է տալիս կրթվող սերնդին: Ահա ուղարկեցի Ձեզ մի նոր դասագիրք օժտումն մայրենի լեզվի՝ երկրորդ տարվա: Մեկ անգամ աչքի անցրեք, էթե կհավանեք, տարածեցեք ձեր ձեռքի տակ եղած ուսումնարաններում, որով թե մանուկները կլինեն շահված բարոյապես և թե ես՝ նյութապես: Այս հանգամանքի վրա դարձնում եմ Ձեր ուղարկությունը: Գրական շարչիները հարստահարում են ինձ, և կարող եմ Ձեզ պեսների բարեկամական օգնություն:

Ողջուն որդեական Ձերայնոց ամենեցուց.
Մնամ հայրությունդ խոնարհ ծառա
Ղազարոս Աղայան

Այս նամակից հետո, Աղայանը վերջնականորեն հրաժարվում է վարդապետ դառնալու հիվանդ մտայնությունից և շարունակում է իր բեղմնավոր գրական աշխատանքը:

3 Բեգնազարյան Սարգիս (1840—1903)— Մնվել է Ղազարի շրջանի Ուզուն-թալա գյուղում, շքավոր ընտանիքում: Պատանի հասակում նա ստիպված թողնում է գյուղը և գնում Թիֆլիս Ղազարոս Աղայանի միջոցով մտնում է Էնֆիսյանի տպարանը՝ գրաշար դառնալու նպատակով, բայց հիվանդության պատճառով դուրս է գալիս:

1861 թ. ընդունվում է Ներսիսյան դպրոցը. 1865 թ., հաջող ավարտելուց հետո, գնում է Մոսկվա՝ սովորելու, բայց կլիման շտանելով՝ փոխադրվում է Գերմանիա: Բեգնազարյանին օգնող անձի մահվանից հետո, նրա ծանոթները դադարեցնում են օժանդակությունը, և նա հարկադրված՝ Գերմանիայից վերադառնում է Պետերբուրգ՝ Հայաստան գալու մտադրությամբ: Պետերբուրգում նա իջնում է Ղազարոս Աղայանի մոտ և նրա խորհրդով էլ միջոցներ է փնտրում՝ ուսումը շարունակելու համար: Կարճատև Եզլանի միջնորդությամբ և օժանդակությամբ, Մանասարյանի միջոցներով նրան հաջողվում է գնալ Եվեյցաբիա և մտնել Քյունսթրասի ուսուցչական սեմինարիան:

1870 թ. փայլուն առաջդիմությամբ Բեգնազարյանն ավարտում է սեմինարիան և իրրե մասնագետ մանկավարժ, նշանակվում է Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցի տեսուչ և ուսուցիչ: 1871—1875 թթ. նա աշխատում է Ալեքսանդրապոլում, Ղազարոս Աղայանի և ուրիշների հետ, մանկավարժական փայլուն գործունեություն է ցուցաբերում, սպաքարելով դաստիարակության խալիֆայական փոսած ձևերի ու մեթոդների գեմ: Բեգնազարյանի իր դպրոցում մրտ-

ցընում է մի շարք «աշխարհիկ» առարկաներ՝ բնական պատմություն, երկրաչափություն, տեղագրություն, մարմնամարդություն, մարդակազմություն, կենդանաբանություն և գերմաներեն. նրա ակտիվ մասնակցությամբ հիմնվում է Մահակ-Մանուչյան ձրիավարժ դպրոցը, գումարվում են մանկավարժական ժողովներ, բնորվում են ուսուցման նոր ձևերի, դասագրքերի հարցերը և այլն: Գնահատելով Բեգնազարյանին՝ Ալեքսանդրապոլի գործունեությունը, առանց վարանելու նրան կարելի է դնել 1870-ական թվականների մեր նոր մանկավարժության ներկայացուցիչների շարքը:

1875 թ., ցարական օստիկանության հալածանքից խուսափելու նպատակով, Բեգնազարյանը գնում է Օդեսա, մտնում կայսերական համալսարանը: Օդեսայից Ղ. Աղայանին գրած իր նամակներից մեկի մեջ նա ասում է. «Համալսարանն էր իմ իղեալը, բայց այն էլ կորցրուց լուր նշանակությունը իմ աչքում, վասնզի 50 հատ պրոֆեսոր կա և սոցանից մինի դասը միայն կարելի է լսել, այն է՝ գերմանացի արևելագետ Բրուն պատմախոսինը» (ՀՄՍՀ Պետ. գրական թանգարան, ֆ. 139): Նա, իբրև ազատ ունկնդիր, հաճախում է միայն Բրունի՝ արեգակրի պատմության դասախոսություններին, իսկ գրանից դուրս հայ ուսանողներին շարաթը մի անգամ երեկոները հավաքում է և մայրենի լեզվով (Ն. Արտվյանի «Էկեր Հայաստանի» վեպի) ընթերցումներ կազմակերպում: Այդ առթիվ նա Աղայանին գրում է. «Բայց ինչպես եմ միտ ուսում, երբ տեսնում եմ, որ այդ պարզ գրվածը (խոսք Արտվյանի «Էկեր Հայաստանի» մասին է.— Վ. Պ.) անգամ, հասկանալու ուժ չունի հայ ուսանողը, մանավանդ, երբ նա բուն իսկ հայաստանցի է: Այս մի առանձին ցավ եղավ ինձ համար» (Ն. տ.):

1876 թ. Բեգնազարյանը վերադառնում է Երևան և 10 տարի շարունակ թեմական դպրոցում վարում է տեսչի պաշտոնը: 1886 թ. փոխադրվում է Թիֆլիս, մտնում է Ներսիսյան դպրոց, սկզբում որպես հայոց լեզվի ուսուցիչ, հետո նշանակվում է տեսուչ (այդ կապակցությամբ էլ ձեռնադրվում է քահանայ): 1888 թ. Մակար կաթողիկոսի հրամանով հեռացվում է տեսչի պաշտոնից, մեղադրվելով, որ կրոնի դասավանդությունն իր վարած դպրոցում թույլ է:

Թիֆլիսում Բեգնազարյանը մտտիկ է եղել Գրիգոր Արծրունու, Տիգրան Նազարյանի, Բաֆֆու, Սողոմոն Եղիազարյանի, Ստեփան Ջինխալու և ուրիշ աչքի ընկնող գործիչների հետ: 1880 թվականից սկսել է աշխատակցել «Մշակ»-ին «Կիրառա» ստորագրությամբ: Մասնակցել է 1882 թ. Թիֆլիսում գումարված հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովին և կենտրոնական դեր խաղացել:

Բեգնազարյանն իր կյանքի հետագա տարիներին, կղերա-պահպանողական շրջապատի ճնշման տակ, կորցնում է իր նախկին գործունյա և առաջավոր մանկավարժի գերքը:

4. Տեր-Հովհաննիսյան Գաբրիել (Քաչերունի) (1837—1920)— Մնվել է Ղազարի շրջանի (այժմ՝ Իջևան) Ուզունթալա գյուղում: Սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1860 թ. մասնակցում է Մոսկվայի հայ ուսանողական «Ժողովի» նիստերին, ծանոթանում է Ստ. Նազարյանի հետ: 1861—1862 թթ. աշխատակցում է «Հյուսիսափայլ»-ին, որտեղ տպագրում է «Տեր Սարգիս» վեպը, որը բարձր գնահատականի է արժանացել Մ. Նալբանդյանի կողմից:

Մոսկվայից վերադառնալուց հետո Գ. Տեր-Հովհաննիսյանը 1871—1875 թթ. աշխատում է Ալեքսանդրապոլում, Ղ. Աղայանի, Ս. Բեգնազարյանի և ուրիշների

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Տեր-Միրաքչյանը մեծ եռանդով լծվում է իր սիրած գործին: 1921 թ. Հայաստանի Լուսժողովուրդի հրավերով գալիս է Նրևան, ղեկավարում դասագրքերի հրատարակման գործը և զբաղվում մանկավարժական աշխատանքով: 1923 թ. փոխադրվում է Ալեքսանդրապոլ և դասավանդում է 2-րդ աստիճանի դպրոցում և մանկավարժական տեխնիկումում: Լենինականում Տեր-Միրաքչյանի ակտիվ մասնակցություն է ունենում անգրագիտության վերացման գործին: Իր երկարամյա մանկավարժական-մեթոդական-գիտական ընդմնավոր աշխատանքների համար Հայաստանի Կենտրոնական նրան տալիս է Աշխատանքի Հեռուսի կոչում:

Տեր-Միրաքչյանն աշխատակցել է «Նոր-դար»-ին, «Մուրճ»-ին, «Նոր դրպրոց»-ին (եղել է և խմբագրության անդամ) և սովետական մանկավարժական մի շարք թերթերի: Ձեռագիր վիճակում պահպանվել են նրա ընդարձակ հիշողությունները, օրագրերը, «Ծխական դպրոցները Արևելյան Հայաստանում», «Հայ մշակույթի պատմության նյութեր» և այլ աշխատություններ (տե՛ս Ժողովրդականության և Հ. Տեր-Միրաքչյանի ֆոնդը):

9. Զիվանի — Առնյան Սեոր (1846—1909) — Ծնվել է Ախալբալայի շրջանի Կարծաթ գյուղում. Կարդալ-գրել սովորել է տեղի դպրոցում: Հետագայում տեղափոխվել է և մշտական բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլում, որը դարձել է նրա երկրորդ հայրենիքը:

Զիվանին երիտասարդ հասակից Ալեքսանդրապոլում (Տալանների սրճարանում և այլուր) սկսել է երգել ու նվագել և ամենուրեք ջերմ ընդունելություն է գտել: Նրա վրա մեծ ազդեցություն են ունեցել առանձնապես Ղ. Աղայանը, Պ. Հայկազունին, Կ. Մատինյանը և մյուս առաջավոր գործիչները, որոնք ամեն կերպ զգենք են տաղանդավոր աշուղ-բանաստեղծին՝ բարձրացնելու իր մտահորեզոնը, երգելու ժողովրդի կյանքը: Զիվանու ստեղծագործության ղեմնորատական մոտիվները առաջավոր այդ շրջապատի ազդեցության արդյունք էին:

Իր խմբի հետ (աշուղ Զամալի և ուրիշներ) Զիվանին հաճախակի շրջում էր Հայաստանի և Կովկասի զանազան վայրեր, երգում Արուսյանի, Նալբանդյանի, Բաֆֆու, Պատկանյանի, Քումանյանի, Հովհաննիսյանի, Իսահակյանի և իր սեփական ստեղծագործությունները, իր իմաստուն խոսքերով ու քաղցրահնչյուն երգերով մեծ բավականություն պատճառում ժողովրդին:

Զիվանու երգերը սկսել են տպագրվել 1860-ական թվականներից «Արարատ», «Մեղու Հայաստանի», «Փարոս Հայաստանի», «Սոխակ Հայաստանի» և այլ պարբերականներում, իսկ հետագայում նաև առանձին գրքերով:

10. Տալոյան (Տալյան) Կարապետ — սրճարանատեր, աշուղ Քյամալի (Բաղդասար) տղան: Նրա սրճարանը Ալեքսանդրապոլում եղել է ամենամասնաշաղկանը. հաճախորդների համար ստացվել է «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Արարատ» և «Փորձ» պարբերականները:

Տալոյանը, ինչպես և նրա ժառանգներն ու ազգականները (Զամալ, Գրիգոր, Վարդգես, Ծարա) առանձին սեր են ունեցել ղեկի երգն ու երաժշտությունը և աշխատել են աշուղական արվեստի գծով:

11. Մալուլ (Մալիլ) — Աշուղ, Գալուստ Սարգսյան (Պարտիզպան), ծնվել է Ալեքսանդրապոլում 1823 թ.: «Սոխակ Հայաստանի» երգարանում տպագրվել են նրա մի քանի երգերը: Այդ երգերից մեկի մեջ նա ասում է.

Ամի հազար ութ հարյուր և յոթնասուն
երեքին, ժողովեցի երգերս հայկազուն.
Պարտիզպան Մալիլն եմ՝ տարիքս հիսուն,
ծվ Ալեքսանդրապոլ քաղաքն եմ ես:

(«Սոխակ Հայաստանի» 1888 թ., հ. 6-րդ, էջ 91):

12. Քարա (Հավասի, Քաթևոս Հովհաննիսյան) — Աշուղ. Ալեքսանդրապոլի բողոքականության քարտիչներին: Աշուղ Քաթևոս, ինչպես և Մալուլը եղել են նշանավոր բողոքական աշուղ Շիրինի աշակերտները և հետևորդները. երգել ու տարածել են բողոքական երգեր:

13 Միխայիլ Նիկոլայիչ — Մեծ իշխան, գեներալ-ֆելդցեյլսմեյստեր, 1862—1881 թթ. եղել է Կովկասի փոխարքա, իսկ 1881—1906 թթ.՝ պետական խորհրդի նախագահ:

14. Տեր-Մելիքիսեթևյան Գրիգոր (1848—1882) — Ծնվել է Եուլալիք գյուղում. սկզբնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում, ապա ընդունվել է Թիֆլիսի ներսիսյան դպրոցը, բայց հետագվելու պատճառով չի ավարտել: Մեծ եռանդով զբաղվել է ինքնազարգացմամբ, 1870-ական թվականներին պարապել է ուսուցչության: 1879—1882 թթ. Թիֆլիսում խմբագրել և հրատարակել է գեմնորատական ուղղության «Աշխատանք» շաբաթաթերթը հայերեն և ռուսերեն լեզուներով: Գրել է «Նվեր քյասիք գեղըցիներին» (Թիֆլիս, 1879 թ.) արժեքավոր գրքուկը, որտեղ հանդես է գալիս որպես աշխատավոր գյուղացիների շահերի պաշտպան: Նրա գերչին են պատկանում նաև «Թռչող միտք կամ մեր Կովկասի հիմնկվան լրագիրներ» (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, 1878 թ., Թիֆլիս), «Մի համառոտ հայացք XIX դարի հայ հոգևորականության վերա» (Թիֆլիս, 1874 թ.) և այլ աշխատություններ:

Գ. Տեր-Մելիքիսեթևյանը ունեցել է ազգային-գեմնորատական հայացքներ, նրա վրա նկատելի է նաև նարոգնիկության ազդեցությունը: Իր ժամանակին նա սուր պայքար է մղել աշխատավոր ժողովրդի կեղեքիչներին՝ բուրժուաների, վաշխառուների, հոգևորականների դեմ: Ամենայն հավանականությամբ հենց այդ պատճառով էլ Ալեքսանդրապոլի հոգաբարձուները մերժել են նրա դիմումը և չեն հրավիրել ուսուցչության:

15. Ամիրխանյան Աբրահամ — Կովկասում բողոքականության աչքի ընկնող քարտիչներից: Ծնվել է 1838 թվականին Եուզի քաղաքում: Սովորել է տեղի դավառական դպրոցում:

1857 թ. Կովկաս է գալիս Բազելյան ավետարանական ընկերության անդամ և քարտիչ Ֆելիցիան Զարեմբան. Ամիրխանյանը ընտանիքից փախչում է Զարեմբայի մոտ և նրա հանձնարարությամբ ուղարկվում է Բազել և մտնում քարոզչական ընկերության դպրոցը: Բազելում 6 տարի մնալով, Ամիրխանյանը սովորում է գերմաներեն, անգլերեն, հունարեն և եբրայերեն (մինչ այդ նա սովորել էր ռուսերեն, իսկ հորից՝ պարսկերեն և թուրքերեն): 1865 թ. վերադառնում է Եուզի, բայց է անում իր դպրոցը և ուսուցչությանը ու քարոզչությանը պարապում: Կարճ ժամանակից հետո կառավարությունը արգելում է Ամիրխանյանի դպրոց պահել. նա անցնում է Եամախի և ուսուցչություն անում մինչև 1868 թ.:

1870-ական թվականներին սկզբներին Ամիրխանյանը անցնում է Ալեքսանդրապոլ, աշխատում իբրև հոգևոր դպրոցի տեսուչ և գերմաներեն լեզվի ուսուցիչ, ղեկավարում է բողոքական շաբաթուրդ, որը տակավին 1850-ական թվականներին

սկսվել էր կույր աշուղ Շիրինի զլխավորութեամբ: 1874 թ. ղեկեմեմբերին էջմիած-
նի սինոդի հրամանով Ամիրխանյանը հեռացվում է պաշտոնից, իրրև օտարահը-
պատակ, «նուշպես և քստ բողոքականին կապածավոր անձինս»:

Հետագա տարիներին ևս Ամիրխանյանը մեծ եռանդով, գաղտնի ու բա-
ցարձակ ղեկավարում է բողոքական շարժումը. անձամբ շրջում է բազմաթիվ
գյուղեր և քաղաքներ (Բարու, Ախալքաթ, Շուշի, Շամախի, Ալեքսանդրապոլ,
Վաղարշապատ, Սամաղար և այլուր), կազմակերպում է առանձին բողոքական
ընկերություններ: Ամիրխանյանը ճանապարհորդում է նաև Եվրոպայի մի շարք
վայրեր և Արևմտյան Հայաստան, հայ բողոքական համայնքներ կազմակերպելու
նպատակով:

Ամիրխանյանը Գրիգոր Արծրունու հովանավորութեամբ և նրա հետ միասին
«Մշակ»-ի էջերում բանակոխվել է մղում պահպանողական «Մեղու Հայաստանի»
ղեմ, հայերեն (աշխարհաբար) թարգմանել է Առավածաշունչը, արաբերենից՝
Նուրանը, «Փորձ»-ում գրել է «Նյութեր Հայաստանի վիճակագրության համար»
աշխատությունը և այլն:

16. Պալասեյան Ստեփանոս (1837—1889)— Մնվել է Մոլդավիայի Բոդու-
լան քաղաքում. սկզբնական կրթությունն ստացել է տեղում, այնուհետև ընդունվել
է Փարիզի Մուրադյան դպրոցը: 1858 թ. Գ. Ալվադյանի (Ալվազովսկու) կողմից
հրավիրվում է Թեոդոսիայում նոր բացված Խալիբյան դպրոցի ուսուցիչ: Երբ
սկսվում է Խալիբյան և Հայրապետյան «կուսակցությունների» կռիվը, Պալասեյան-
յանը մի խումբ ուսուցիչների հետ լքում է Խալիբյան դպրոցը և աշխատանքի
անցնում Հայրապետյան «կուսակցության» ջանքերով Նոր-Նախիջևանում բացված
դպրոցում: Բայց, թեմակալ Գ. Ալվազովսկու և Խալիբյանի գործադրած միջոց-
ների հետևանքով, 1863 թ. Սևաստեբինապոլի նահանգապետը կարգադրում է նրան
24 ժամվա ընթացքում թողնել Նոր-Նախիջևանը:

Արտաքսվելով Նոր-Նախիջևանից, նա գալիս է Թիֆլիս, սկզբում պարապում
մասնավոր գրասիրով, ապա հրավիրվում է Ներսիսյան դպրոց իրրև ուսուցիչ:
1881 թ. հրավիրվում է էջմիածնի ճեմարան, իրրև հայոց պատմության և ֆրանս-
սերենի դասատու:

Բազմակողմանի և բեղմնավոր է եղել Պալասեյանի գրչը: Պարբերական
հրատարակություններում և առանձին գրքերով նա անդրադարձել է մեր պատ-
մության, գրականության, լեզվի, թատրոնի և այլ բազմաթիվ հարցերի: 1865 թ.
լույս է տեսնում ֆրանսերեն լեզվի նրա կազմած ձեռնարկը, 1870 թ.՝ «Ընդհա-
նուր սեսություն արեևիայան նոր գրավոր լեզվի հայոց», «Բանավոր գրականություն-
ներ» և «Հայոց պատմություն» գործերը: Պարբերականներից զլխավորապես
«Փորձ»-ում են տպագրված նրա բազմաթիվ մատենախոսությունները «Գրիչ»
ստորագրությամբ և հիմնական հրատարակախոսական, գիտական գործերը, ինչ-
պիսիք են՝ «Հայոց մտավոր շարժողությունը Ե գաղում»: «Մի հայացք հայոց
նախնական կյանքի վրա»: «XIX դարի նշանաբանը», «Հունաստանի անկախու-
թյունը» և այլն: Այս վերջին հոդվածում, օրինակ, Պալասեյանը խոսելով հու-
նական ապստամբության և հույների վիճակի մասին, գրում է. «Ոչինչ այնպես
հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա գարու ըն-
թացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գրած գրած հերոսական ջան-
քերը, քաղաքական անկախությունը ձևոք բերելու»: Մի այլ տեղ, նա միանալով
«Հունական ազատության հայր» Կոստանդին Րիգասի հետ, գիմելով հույներին,

բացականչում է. «Մի՞թե դեռ երկար ժամանակ առլուծների պես առանձնացած
սլոխի պարբեր մուժք այրերում և անտաններում, զարհուրելի դասն սարկության
մեջ և պետք է փախչել լուզսից... հիշեցեք, որ ավելի լավ է մի ժամ ազատ ապ-
րել, քան հազարավոր տարիներ անցկացնել ստրկության ճանր լծի ու բունակալի
իշխանության տակ» («Փորձ», 1877—78 թթ., № 2, էջ 163—230): Հույների ազա-
տագրության հարցում Պալասեյանի բունած դիրքը, անկասկած, բխում էր հա-
լույնի ազատագրության վերաբերյալ նրա ունեցած մտորումներից: Ինչպես երևում
է մեր աշխատության մեջ բերված փաստերից, Պալասեյանը որոշ կապեր ունե-
ցել է Ալեքսանդրապոլում հիմնված խմբակների հետ, բայց ինչպիսի՞ կապեր են
եղել, դժվար է ասել:

17. Արաբաշյան Մկրտիչ (1832—1895)— Մնվել է Ալեքսանդրապոլում, կըր-
թությունն ստացել է տեղական դպրոցում, որից հետո իր եղբոր՝ Ալեքսանդր
Արաբաշյանի հետ բացած մասնավոր դպրոցում ուսուցչություն է արել: Արաբաշ-
յանների մասնավոր-խալիֆայական դպրոցը երկար տարիներ շարունակել է իր
գոյությունը: Արաբաշյան եղբայրների մեծ մասն ուսուցչներ են եղել և Ալեք-
սանդրապոլում կոչվել են «Վարժապետներ»:

